ՆՈՒԻՐԱՏՈՒ
ՎԱՀԱՆ Մ. ՔԻՒՐՔՃԵԱՆ
Նիւ Եորք

Gift of
VAHAN M. KURKJIAN
New York

ՄԱՏԵՆԱՇԻՐՈՒԹԻՒՆ

ՆԱԽՆԻՑ

ՓԱԻՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԱՑԻ

ՓԱՒՍՏՈՍԻ

Ր Ո Ւ Յ Ա Ն Դ Ա Ց Ւ Ո Ց

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ի ՀԱՐՍ ԴՊՐՈՒԹԻՒՆՍ



Ի ՎԻՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԲՈՒԱՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄՍ 1832 ԹՈՒՆԻ

ԱՒ ՀԱՆԴԻՊԵԱԼՍ ՄԱՏԵՆԻՍ

Ո՞վ փաստեայ բուզանդացւոյ պատմագրէ երբեակ խնդիրք էն . նախ՝ Թէ յորմէ ազգէ էր , երկրորդ՝ Թէ յո՛ր լեզու պատմագրեաց , և երրորդ՝ Թէ արդեօք Թերի՛ եկէ մատեան նորա առ մեզ հասեալ է Թէ ամբողջ .

Ա՛յս ինքն ՚ի սկզբան վերադարձ գլխոյն (էջ 260.) խոստանալով ՚ի ստորոտ պատմուԹեանցս տալ զինքեան տեղեկուԹիւն , պատմէ ՚ի հինգերորդ գլուխ նորին (էջ 264.) զփաստոսէ ուռւիմնէ եպիսկոպոսէ . և ՚ի յաջորդ գլխին ասէ , Թէ " Ա՛յր եղեալը մի փաստէայ եպիսկոպոսի ... և էին լեալ ոքեա ազգաւ Հոռոմ ,, ։ Ո՞այս քան է Թէ զինքեանէ առեալ ոք մատենագրին ա ստացեալ , ահա յայտնի խոկ երևի ազգ նորա ։ Այլ ոմանք կարծեօք վարեցան . Թէ գուցէ ՚ի ստորեւն խոստանալով պատմել զանձնէ , չէին նա ինքն յիշատակեալն յառաջագոյն ։ Սակայն և այլ հաւաստիք

առ ձեռն կան մեզ։ Ո՛չ նոյն ինքն դարձեալ՝ի վախ-
ճան երրորդի դպրութեանն (էջ 58.) կոչի ժամանա-
կագիր Յունաց։ Նա մերոյս Ղազարայ վարպետից
կոչելովն զնա բուզանդացի, (էջ 8 և 12.) զնիկ քա-
ղաքն իսկ նորա Խուզանդիոն զկարծիս զայս հաստա-
տէ։ Այլ առ քննողս հաստատագոյն և վկայեն այժմ
կերպարանք բանից նորա, որով բազում ուրեք ջա-
նայ ընդ վայր հարկանել զաղգս Հայոց. զնախնիսն
մեր առ հասարակ եպերելով, որպէս ոչ՝ի սրտէ՝ այլ
կեղծաւորաբար անդամին՝ի սկզբանէ ընկալեալ նոցա
զՀաւատս (էջ 33.) և զիշխանսն կաթողիկոսաց ազ-
գիս սահմանելով յօրհնութիւն և եթ հացին սեղանոյ
աղբային (էջ 226.) և դարձեալ յաձախագոյնս յո-
գելով եպերանս զազգիս, որ մանաւանդ առելոյ են
բանք և ոչ համազգեայ։ Ո՛ւմն որոյ վարպետին կա-
րի ձարտարութիւն, իբր անբասիր առնելով զնա, զը-
պատշաճ կարծիսն տայ զնմանէ։ "Ընդ՝ի Խուզան-
դիոն, ասէ, յայնպիսումն քաղաքի և՝ի մէջ այնչափ
բազմութեն ուսելոյ վարժեալ այրն վաւաստոս, այնպի-
սի ինչ արդեօք անհաճոյս լսողաց բանս կարգէր՝ի
պատմութիւն իւրում. քաւ և մի լիցի։ Ուստի և անհա-
ւատալի իմում տկարամտութեն կարծեցեալ գործն,
ասեմ՝ եթէ գուցէ այլ ոք յանդուգն և անհրահանգ
բանիւ ըղբաբար ձեռն արկեալ լիներն, գրեաց զինչ
պէտս ըստ կամի. և կամ զի ուրուք անկարեալ դի-
պողս՝ այլաբանեալ ճնաեաց, և անուամբ վաւաս-
սին զիւրոյ յանդգնութեանն սխալանս համարեցաւ
ծածկել,,։

Այլ զի նոյն ինքն պատմագիրն յերրորդումն
դպրութեան՝ի գլուխն երկոտասաներորդ (էջ 29.)

առեալ պատմէ, և զի Փարպեցին նովին անուամբ
'ի Թուէն զնչխանս տոհմիչ հայկազանց, ընդ նոսա
համարի և զիւրն յաստէն. «Ոմերոյ տոհմի ազգի
իչխանն Ահահունեաց». Հարկ է ապա ասել, զի
յոյն գոլով յազգէ՝ Թերևս յազգականութենէ տանն
Ահահունեաց խառնեալ էր, կամ 'ի Ահահու-
նոյ ումեմնէ 'ի Կիւզանդիոն ծնեալ։

Ընդ զի յոյն էր սա ազգաւ, կարծեցեալն ոմանք
զնի և 'ի յոյն լեզու պատմագրեաց։ Այլ հմուտք
հայերէն բարբառոյ և ոչ մի ինչ հետս Թարգմանուե
'ի գիրս յայս նշմարեն. մանաւանդ զի և ոչ միշտ ազգ
շարադրողին զշարադրածոյն հաւաստեալ ցուցանէ
զբարբառ։ Ոչ ի ահաւասիկ և Ընդաթանգեղոս 'ի
հայ լեզու պատմագրեաց, այլ ինքն հռոմայեցի էր
ազգաւ. ընդ որ եթէ տարակուսեսցի ոք, զաներկ-
բայելի լուծումն տարակուսանացն գոցէ 'ի սկիզբն
Ընդաթանգեղեայ մատենին՝ որ ընդ հուպ եղեալ 'ի
լոյս։ Ընդաքին դժուարին Թուի յոյր օտարազգի ներ-
հուն հայկաբանութենէն 'ի գիրս յայս երևեալ. սա-
կայն և ընդ Ընդաթանգեղեայ հայկաբանութենէն նոյն
զարմանք են, զի հռոմայեցին հաւասար մերազնեայ
ընտիր մատենագրացս հայկաբանէ։ Ընդա ասելի է.
զի որպէս Տերենտիոս կարքեդոնացին առ հռոմայե-
ցիս վարժեալ՝ հրաշալեաղն օրինակ լատին բարբառոյ
գքերթածս իւր եթող, ըստ նմին օրինակի և Փաւս-
տոս այս յոյն և Ընդաթանգեղոս հռոմայեցի վար-
ժեալք 'ի մանկութենէ 'ի մերս բարբառ՝ կարօղք եղեն
որպէս բնիկ իւրեանց բարբառովն պատմագրել նո-
ցաւ։ Իսկ զի Պրոկոպիոս լիշէ գիրս լինի անուանեալ
Հացոց Պատմութիւն, յորմէ ինչ ինչ նման սմին

զգիրս զայս յորջորջէ, ապա ուրեմն եթէ չկայ այլ մատեան համանուն՝ զընթերցեալն նորա յոյն օրինակ թարգմանուածն հայ քնագրիս մարթ է համարել, և կամ զի սորին մատենագրի յերկաքանչիւր բարբառս իցէ պատմագրեալ։

Նայ արդ երրորդ խնդիրն իրաւապէս երկբայելի. զի՝ ի սկիզբն գրոցս գպրութեանն երրորդ արձանագրելով, երկու այլ դպրութիւնս նախագրեալս հարկ է վարկանել։ Սակայն և՝ ի հակառակէն նոյն ինքն մատենագիրն յայտ առնէ՝ ի յառաջաբանին՝ քառեակ գիրս գրեալ. և ահա չորք գիրք յերրորդէն մինչև ցվեցերորդն պահին։ Ապա մարթ է կարծել, զի երկու այլ նախորդ դպրութիւնք ոչ սորին պատմագրի իցեն, այլ այլոց՝ զորս նոյն ինքն՝ ի յառաջաբանին յիշատակէ, որք՝ ի քարոզութենէն Յովհաննէս մինչև ցհատարուածն Կրիգորի մերոյ Լուսաւորչին պատմագրեցին. յորոց մի և զԱգաթանգեղեայ գիրսն անշուշտ համարելի է, որուամ զհետ յաջորդեն գիրքս այս։ Յայն սակս իսկ Թուի յաւելուլ առնային գրչագրաց առ հասարակ, և կամ Թերևս մատենագրին իսկ, զբառս ՍԿԻԶԲՆ զհետ մակագրին երրորդի դպրութենէն, որպէս զի մի ոք տարակուսեալ՝ Թերի զմատեանս զայս համարիցի։

Նայց Թէպէտ և սկիզբն այսր ինքնուրոյն մատենիս ամբողջ և անթերի Թուի մեզ, այլ գոյ կասկածել նախ, զի Թերևս և այլ մատեան ուրոյն զնախնեացն մերոց իցէ սորա յօրինեալ, և նովին անուամբ կոչեցեալ զայն ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՑՈՑ, ուստի նորին Պրոկոպեայ իցէ առեալ զիրսն Աբգարու Թագաւորին մերոյ. զոր և ըստ օրինակագրիս առաստելախառն

ոչ՝ պատմագրէ։ Արդեօք ոչ և զմանուկն պատմագիրն, զորմէ անուն իմն յաղագս Հայկայ կակաղել առ Արտաշէսն, զսա կարծեցին ոմանք։ Այլ երկրորդ կասկածելի է, ոչ և քառեակ գիրքս այս մասամբ իմն՝ ի վերջ կուսէ Թէրի գտանիցին։ Վասնզի՝ ի սկիզբն վեցերորդի դարուն Քրիստոսի, որպէս ասացաք, խոստանայ պատմագիրն՝ ի ստորոտ ՌամՊատմուճէնն տալ զինքեանէ տեղեկութիւն. և մինչ չև՝ ի ստորոտն հասեալ՝ ի գլուխն վեցերորդ զԱաւստեայ ուսմունէ եպիսկոպոսէ Հարևանցի իմն պատմէ, յետ կոյս մահենին ոչ ինչ զանձնէ տալով տեղեկութիւն։ Աստի մարթի է կարծել՝ զի ստորոտ պատմուճէնն՝ ուր ստուգապատում առնէին զինքեանէ նմին գործառութեան իսկ հանդիպեալ, որում հանդիպեցան մերոյս քերթողահօր տաղքն լինքն և՝ ի Վահակ բազրատունի, յաւելեալք՝ ի վերջ կոյս երրորդ գրոց պատմութիւն, որ՝ ի ցանկս գլխոցն եթէ նշանակեալ՝ ոչ ուրեք՝ ի գիրսն երևին։ Արդ եթէ արդարև կասկածանքս այս լինէն տարապարտ, և ժամանակին օգնականութիւք լրացեալ Թէրին, յայնժամ Թէրևս լեալ մեզ ստուգագոյնս ինչ հաւաստել զմտածեցեալս. զի առ այժմ աւելի ինչ քան զայս ասել ոչ ունիմք։ Նոյն յաղագս չհամաձայնելոյ ժամանակագրութիւն սորա ընդ հաւատարմագոյնս՝ ի մերոց պատմագրաց՝ ոչ է մեզ անկ վիճել։

Հնգեակ օրինակաց բաղդատութիւք առաջնոյ տպագիրսարարաւ. յորոց միւն հնագոյն և անթուական՝ ի ներհուն գրչէ գրեալ, որում մանաւանդ ըզհետ ջերաք, զկարևոր զանազանութիւնս այլոց օրինակացն առ՝ ի ստորև իմէից նշանակեալ՝ ըստ մերումն

առ ՚ի բազմաց վկայեալ հաւատարմութեան ։ Քայց խոստովանիմք զի առ ձեռին գտեալ օրինակքս չեղեն բաւական յանսխալ տպագրութեի ։ քանզի բազում ուրեք և ՚ի յայտնի վրիպական ամենեքին հանձայնէին, թերևս անդստին ՚ի միոջէ օրինակէ գաղափարեալք ։

ԲՈՒԶԱՆԴԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԽՈՍՏԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՆԱԽԱԳՈՏԵԼԻՆ

Ես ինչ է՛ի գալոյ ինձ երկոցդ՝ պատմութիւնս. ժամանակագիրը կամ՚նք մատենից, և առնումն գալոյ թիւնք երեք, այս ինչքն են առքա չորք մատեանք. և չորեքին միոյ իրաց յիշատակարանք են, յիշեցուցիչք պատմութեց ազգացն Հայաստան աշխարհին որդւոց Հայկայ: Այս ինչքն կարգ անցելոց իրաց, գործք և վարք մինչև ցիւրաքանչիւր ելս յաշխարհիս քահանայապետաց սրբոց արանց ՚ոյ, և թագաւորաց տէրանց աշխարհայ արշակունեաց, և զօրավարաց՝ առանց անուանեաց քաջ նախարարաց, և խաղաղուե և պատերազմին և շինուածք և աւերածոյ և արդարութիւնք և անօրէնութիւնք և աստուածպաշտութեան և ամբարշտութիւն. ժամանակագիրը արարեալ՚ի Թագաւորութենէն Տրդատայ մինչև՚ի միւս վերջին ժամանակին վատթարելոյ թագաւորացն Հայոց, և՚ի քահանայապետութենէն Ս. Լուսաւորչի մինչև ցայսոսիկ՚ի վերջինսն՝ որք կային զվիճաւորքն եպիսկոպոսք Հայոց, մի ըստ միոջէ կարգաւք թուաւք և համարովք կանոնեալ դրոշմեալ նկարեցի իւրաքանչիւր գլխովք: Եւ ըստ խոստմանն ըստ ըստ եղբարցն գալոյ իւրաքանչիւր իւր գլուխս պատուաստեցի մինչև՚ի կատարած սորին, առ՚ի զգուշանալ՝ որք միանգամ կամին սրան մոռք Հասու լինել սմին զոր ասելոցս եմ:

ԽՈՍՏՈՒՄՆ ԵՐՐՈՐԴ

ԿԱՆՈՆԱԿ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ՄԱՏԵՆԻՑ ՄԻՆՉԵՒ ՅԱՐՈՒԱՆ ԵՒ ՄԻ

Ա. Յաղագս որ ինչ յետ քարոզութեան Թադէոսի Առաքելոյ յերկրին Հայաստան աշխարհին որդւոյ Թորգոմեայ։

Բ. Յաղագս մեծի առաջնոյ քահանայապետին Գրիգորի, և նոցունց շնորհացն։

Գ. Յաղագս թագաւորութեանն Խոսրովու որդւոյ Տրդատայ, և վրթանայ մեծի քահանայի որդւոյ Գրիգորի։

Դ. Յաղագս երկուց տոհմանցն՝ որք անզաւակեցան, մանաւանդ հաղեաց և Որդունիք, ի մէջ Հայաստան աշխարհին։

Ե. Յաղագս որդւոց քահանայապետին վրթանայ, որոց անունք էին երիցուն Գրիգորիս, և երկրորդին Յուսիկ։

Զ. Յաղագս Գրիգորիսի՝ որդւոյ վրթանայ, և նորուն վախճանին, և տեղին՝ ուր եդաւն։

Է. Յաղագս մարտի պատերազմին հինին եկելոց յարշաւանաց թագաւորին Պարսից յաշխարհն իշխանութեամբ Հայոց թագաւորին, և կամ որպէս սատակեցաւ նա զօրօքն իւրովք հանդերձ։

Ը. Յաղագս մայրենացն տնկելոց, և պատերազմացն ընդ Պարս, և աղգահատութեամբ տան նախարարացն տոհմին Բզնունեաց։

Թ. Յաղագս Բակուրայ բդեշխի, որ ապստամբեաց յարքայէն Հայոց. և թէ զնարդ սատակեցաւ ի զօրացն Հայոց, և փոխանակ նորա լինէր բդեշխ վաղինա սիւնի։

Ժ. Յաղագս Յակոբայ եպիսկոպոսին Մծբնայ։

ԺԱ. Յաղագս մեծի պատերազմին Պարսից և Հայոց ընդ միմեանս, և անկանելոյ ի պատերազմին մեծի զօրավարին վաչէի, և մահուան թագաւորին Խոսրովու, և փոխանցել յաշխարհէ հայրապետին վրթանայ։

ԺԲ. Յաղագս թագաւորելոց Տիրանայ յետ հօր իւրոյ ի վերայ Հայոց աշխարհին։ Սոփոկէս և Յուսիկ յետ իւրոյ հօրն վրթանայ կալաւ զաթոռ հայրապետութեան. և կամ որպէս սպանաւ ի Տիրանայ արքայէ վասն յանդիմանելոյ զթագաւորն։

ԺԳ. Յաղագս թէ զնարդ յետ մահուն Յուսկան անառաջնորդ լինէր երկիրս Հայոց. և ոչ որդիքն Յուսկան լինէին արժանի հօրն աթոռոյն։

ԺԴ. Յաղագս վարուց մեծին Դանիէլի՝ առն ՚ի, և կամ որ-
պէս յանդիմանեաց զթագաւորն Տիրան, և կամ ո՛ր-
պէս պատուհասեալ մեռաւ ՚ի նմանէ ։

ԺԵ. Յաղագս որդւոցն Յուսկան, եթէ ո՛րպէս ընթադրեալ
առ ոսն հարին զմեծ քահանայութե՛ն զնոյ զպատիւն ։

ԺԶ. Յաղագս փառինայ, որ կալաւ զաթոռ Հայրապետացն ։

ԺԷ. Յաղագս Շահակայ, որ էր ՚ի զաւակէ Աղբիանոսի և
պիսկոպոսի, որ յաջորդեաց զտեղի Հայրապետացն յա-
թոռոց. և թէ ո՛րպէս յայնմ ժամանակի երկիրն Հայոց
թողեալք զտէր և զպատուիրանս նորա ։

ԺԸ. Յաղագս Հայր մարդպետի, որ վատ խրատ տալով թա-
գաւորին՝ տայր կոտորել զազգս նախարարացն Հայոց ։

ԺԹ. Յաղագս որդւոցն Յուսկանն, Պապայն և Ա՛թանագի-
նէին, եթէ ո՛րպէս կամ զի՛ւրդ սատակեցան յանօրէ-
նութե՛ իւրեանց ՚ի տեղիան սուրբ ։

Ի. Յաղագս Տիրանայ թագաւորին, եթէ ո՛րպէս մատնե-
ցաւ յիւրմէ սենեկապետէն Խիխակայ սիւնոյ, եթէ
ո՛րպէս կորեաւ, և ՚ի խաղաղութե՛ ժամանակի յանկար-
ծակի գերեցաւ ՚ի Վ՛արդէ իշխանէն պարսկէ. և կամ
ո՛րպէս ամ՛ երկիրն Հայոց ընդ նմին կորեաւ և կործա-
նեցաւ ։

ԻԱ. Յաղագս թէ ո՛րպէս ժողովեցան միաբանութե՛ ամ՛ նա-
խարարքն Հայոց, և չոգան ածին զթագաւորն Յունաց
իւրեանց ՚ի թիկունս օգնականութե՛ն յերկիրն Հայոց.
և կամ ո՛րպէս եկն թագաւորն Պարսից բազում զօրօք,
և կոտորեալ լինէին զօրքն Պարսից ՚ի զօրացն Յունաց
և ՚ի մնացորդաց Հայոց. և Ներսեհ արքայն Պարսից
յերկրէն Հայոց միաձի ճողոպրեալ յերկիրն Պարսից
փախստական անկանէր ։

ԹՈՒՂԱՆԴԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ԵՐԲՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԻՍԿԻԶԲՆ

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս որ ինչ յետ քարոզութեանն Թադէոսի Առաքելոյ յերկիրն Հայաստան աշխարհին. կանոնք ժամանակագիր մատենից։

Ի ՔԱՐՈԶԱՒԹԵՆԷՆ Թադէոսի Առաքելոյ և նորուն յետիւ և՛ի մարտիրոսութենէն մինչև՛ի կատարումն վարդապետութեն Գրիգորի և իւրոց հանգստեանն, և յառաքելական Անատրիկոյ արքային մինչև յակամայ հնազանդելն Տրդատայ զանցեալ իրացն զառաջնոցն գվարսն լաւացն, և որ զնոցունն հակառակ ընդդիմակաց, այն ամենայն՛ի ձեռն այլոց գրեցան։ Այլ և մեք՛ի մերում աստ եդաք փոքր՛ի շատէ՛ի կարգի պատմութեե, ոչ զանց արարեալ Թողաք վասն պատշաճ իրաց կարգին։ Ա՝ ամն զի է ինչ մեր պատմութի՝ որ առաջինն է, և է ինչ՝ որ վերջինն է. իսկ որ միջինն ինչ եղև, այն՛ի ձեռն այլոց գրել գրեցաւ։ Այլ զի մի՛ի միջի մերոյ պատմութեանս ընդհատ երևեսցի հուն մի, նշանակեցաք. զոր օրինակ աղիւս մի կարգած՛ի մէջ որմոյն շինուածոյ, և՛ի կատարումն բովանդակութե։ Այս ինչ, որ ինչ յետ այսորիկ կարգի, աստ պատմի աստէն առաքին։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս որ ինչ վասն մեծի քահանայապետին Գրիգորի և նոցունց շնորհացն։

Ա՛յդ՝ ի թագաւորութենեան Տրդատայ՝ որդւոյն Խոսրովու, լուսաւորութիւք հաճոյական սիրով և աստուածպաշտութիւքն հաւատոյ, ծանօթութիւք՝ ի ձեռն Գրիգորի՝ որդւոյն Պնակայ, մեծի քահանայի. և ո՛ր ոչ ընդ նմին կրսեր որդին Աբիստակէս հօրն էր գործակից եպիսկոպոսակից յամ ընթացս վարդապետութեան զնա՛մ աւուրս կենաց իւրոց մինչև յօրն քրիստոսակոչ հանգստեանն իւրոյ։ Իսկ սոցա պատրաստեցան տեղիք բնակութե՛ն, և արժանի եղեալ շնորհք հանգստեան. և մեծին Գրիգորի՝ ի Գարանաղեաց գաւառին, ՚ի գիւղն՝ որ անուանեալ կոչի Գորդան. և սրբոյն Աբիստակայ որդւոյ նորա՝ յետ խոստովանութեան մահուն իւրոյ, և տարան զնա ՚ի Գոփայց գաւառէ, և եդին զնա յԱկեղեաց գաւառի ՚ի Թիլն աւանի, ՚ի կալուածս Գրիգորի հօրն իւրոյ։

ԳԼՈՒԽ Գ.

Որ ինչ վասն Թագաւորութե՛ն Խոսրովու՝ որդւոյ Տրդատայ. և վերջին Թանայ մեծի քահանայապետին՝ որդւոյ Գրիգորի։

Զոր յետ այսորիկ Թագաւորեաց Խոսրով Կոտակ, Թոռն Խոսրովու, որդի քաջի և առաքինւոյն Տրդատայ արքայի։ Յաւուրս սորա եկաց և եղև քահանայապետ յաթոռն հօրն, փոխանակ հօրն իւրոյ և եղբօրն իւրոյ, երէց որդին Գրիգորի Վրթանէս։ Խաղաղութի՛ւն և շինութի՛ւն, մարդաշատութի՛ւն և առողջութի՛ւն, պտղաբերութի՛ւն և ստացուածաշատութի՛ւն և շահեկանութի՛ւն, և մեծն աստուածասէրն պաշտօն ՚ի

հաձոյակատարն բարուքեր յամն յաւուրս սոցա ա-
ձել բազմացաւ ։ Եւ ուսաւորեր և առաջնորդեր նոցա
սուրբն Վ ըԹանէս իբրև զհայր իբրև զեղբայր իւր ։
Իքաւունք և սրդարուԹիւն ծագկեալ էին ի դարուն
յայնմ ։

Ո այնու ժամանակաւ երԹեալ հասաներ եպիս-
կոպոսապետան Վ ըԹանէս ի մեծն յաւաջին ի մայրն
եկեղեցեացն Հայոց , որ էր յերկրին Ծարճնու , ուր
նշանաւքն եղեալք կործանեցան բագինք մեհենից յայն
ժամ , վաղ ևս առ մեծաւն քահանայապետաւն Գրիւ
դորիւ ։ Ա՛ս երԹեալ կատարեր անդ , ըստ հանապազ
սովորուԹեան , զտեառնն զնաչական զպրկուԹեն զպա-
տարագն գոհուԹե , զհաղորդուԹե չարչարանաց յի-
շատակի , զկենդանարարն և զազատիչն զմարմին և
զարիւն աստուածորդոյն տեառն մերոյ Յես Վ Ի ։
Վ անզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն
Հայոց , հանդերձ Թադաւորաքն և մեծամեծօքն , նա-
խարարօքն և աշխարհախուժք բազմուԹեբք պատուել
զնոյն տեղիս , որ յառաջ էին տեղիք պատկերաց կո-
ռոյն , և ապա յանուն աստուածուԹեն սրբեցան , և
եղեն տուն աղօԹից և տեղի ուխտից ՝ամ ումեք ։
Վ՝անաւանդ յայն ի գլխաւոր տեղին եկեղեցին ժո-
ղովել ՝ի յիշատակ սրբոցն՝ որ էին անդ , կատարել
անդ ամ ամի եւԹն անգամ . որք զնոյն ունէին սո-
վորուԹե առաւել ևս ՝ի մեծի մարգարէարան մատ-
բանն Յովհաննու ։ Վ այնպէս և յառաքելարանս տն-
աշակերտացն , այնպէս և ՝ի վկայարանս մարտիրո-
սացն ամի ամի ժողովեալք , զոր տօնին յիշատակի նո-
ցա վարուց գործոց կենացց քաջուԹե խմբեալ՝ ցըն-
ծային ։ Իսկ զԷպ իմն լինէր ՝ի ժամանակին՝ յորում
մեծ քահանայապետն Վ ըԹանէս երԹեալ շրջէր ա-
ռանձինն սակաւուք , կատարել զպատարագն օրհնու-
Թեան ։ Ա՛րդ որք միանգամ զհնուԹի կռապաշտուե
հեԹանոսուԹե զնոյն սովորուԹի մինչև ցայսժամ
և ունէին զաղտնի , ՝ի մի միաբանուԹի ժողովեալք՝
հասանէին իբրև հազարք երկու , խորհուրդ եղեալ
ընդ միմեանս՝ սպանանել զքահանայապետն այ զՎ ըր
Թանէս ։ Ա՛յց ունէին և սակաւ մի խորհուրդ հա-
մարձակուԹե ՝ի կնոջէ Թագաւորէն , զայն գործել·

վան զի յանդիմաներ զնա սուրբն վասն գաղտնի ընու-
թեան կծծուքեն բարոյից պոռնկուե ։ Այլ հասեալ
պատիժն զմեծ քաղաքորին եկեղեցւոյն Հռոմայ ։
Ո՞ինչ դեռ նա ի ներքս մտեալ՝ զպատարագն կատա-
րեր , արտաքուստ բազմազօրուն փակեալ պաշարել
կամեցան ։ Որոց առ հասարակ ողբ ի գնդին էին բա-
զուկք իւրաքանչիւր՝ յետս դարձեալ ի վերայ իւ-
րաքանչիւր թիկանց , առանց իրիք կապելոյ՝ աքանչե-
լապէս կապեալ լինէին ։ Այսպէս պաշարեալք ըն-
կապճեալք գերեալք վանեալք կծկեալք , ամենե-
քեան առ հասարակ յերկիր անգեալք անբարբառ
կային , անխաղացք ի տեղւոջէն . որք էին տոհմք և
ազգք աշխարհակերք աշխարհաւերք ժանդագործք
քրմացն ։ Որդ այնպէս պաշարեալք , դիպեալ կային
ամբոխն ի գաւթի եկեղեցւոյն . զորս երեալ իւր իսկ
ինքնին Ա ընթանէս մատուցեալ հարցանէր զնոսա ,
եթէ գուք ո՞ք էք , կամ ուստի՞ գայք , կամ զո՞ իրն
դրէք , կամ ուստի՞ եկիք ։ Իսկ նոցա զարդարն սկը-
սեալ խօսել , խոստովան լինէին՝ եթէ եկաք զի աւե-
րեսցուք զտեղիս , և զքեզ սպանցուք , հրամանաւ հա-
մարձակեալ ակնարկելով մեծին Հայոց տիկնոջն .
այլ տեր ՚ած զզօրութիւն իւր յայտնեաց , և եցոյց մեզ՝
թէ ինքն միայն է ՚ած . և այժմ ծանեաք և հաւա-
տացաք՝ եթէ նա միայն է ՚ած ։ Որդ այսպէս կամք
աւասիկ կծկեալք , զի և շարժել անդամ ոչ կարեմք
ի տեղւոջէս ։ Իսկ երանելին Ա ընթանէս զբանն վար-
դապետութեան ի մէջ առնոյր , հաստատեր զնոսա ի
հաւատն ի մի տէր Յ՚ Վ՚ , շատ ինչ խօսեր ընդ
նոսա ։ Ապա աղօթս մատուցանէր , և խնդրէր յՅ՚ .
բժշկէր և արձակէր զնոսա յաներևոյթ կապանացն
և յանհնարին կծկութենէն տանջանացն ։ Այն նորա
իբրև փրկեցան յայնմանէ , ապա առ հասարակ անկա-
նէին առաջի նորա , և խնդրէին ապաշխարութեան
զղեղն . և նա տայր ժամանակ սահմանեալ ապաշ-
խարութենէ ։ Այն ուսեալք զՀաւատն միաբանական ըն-
երրորդութենէն , և ապա մկրտեր իբրև հազարս եր-
կուս . թո՛ղ զնայս իւրեանց և զմնկտի . և այս-
պէս ի հաւատ խառնէր , և արձակէր սրբեալս և
հաւատացեալս ։

Յաղագս երկուց տոհմիցն՝ որք անզաւակեցան ի մէջ Հայոցտան աշխարհին, վասն մանուածաղէնիցն և Ոլոմունոց։

Ի զայն ժամանակաւ յարեաւ խռովումն մեծ յաշխարհին Հայոց, զի մեծ նախարարքն և իշխանք երկու, գաւառակալք աշխարհատեառքն անգանգիին ընդ [1] միմեանս, մեծաւ ոխութեբ յարուցին կռիւ, և տային ընդ միմեանս մարտ պատերազմի առանց իրաւանց։ Եւ պղտորեին զմեծ աշխարհն Հայոց իշխանն մանուածաղեան տոհմին, և միւս ևս նահապետն Ոլոմունոց տոհմին։ Կռուեցան ընդ միմեանս մեծաւ պատերազմաւ և բազում մարդկան լինէր ծախումն կոտորածոյ։ Ապա առաքեցին Թագաւորն Խոսրով և մեծ եպիսկոպոսապետան Ա ըթանէս զպատուական զմեծ եպիսկոպոսն Ագբիանոս ի մէջ նոցա, խօսել ի հաշտութեբ խաղաղութեբ։ Երթեալ հասանէր ի մէջ նոցա երանելին Ագբիանոս, զնոսա ուղղել նուաստեալ՝ ընդ միմեանս հաշտեցուցանել։ Ընդդիմացին զնա, և ոչ լսեան բարեխօսութեանն եկելոյն. անգոսնեցին զդէմն, և մեծաւ թշնամանօք արձակեցին զեպիսկոպոսն, և առնուին աւերեին զտունն արքունի։ Եւ զայրացեալք խստութեամբ, հապճեպ տային ընդ միմեանս մարտ պատերազմի։ Ապա մեծ ցասմամբք և բազում սրտմտութեբ արձակեաց Թագաւորն ի վերայ նոցա զԱ աչէ որդի Ագատագեայ, զնահապետ մամիկոնեան տոհմին՝ յաղագ սպարապետութեբ Հայոց, զմեծ զօրավարն զօրաց խորոց, սատակել կորուսանել զազգն երկոսեան։ Ապա երթեալ հասանէր ի վերայ նոցա զօրավարն Ա աչէ. հարկանէր վանէր զազգսն երկոսեան, և ոչ թողոյր զերկոցունց տոհմացն զարձ կորիւն և ոչ զմի. և ինքն դառնայր առ արքայն Խոսրով Թագաւորն Հայոց, և առ եպիսկոպոսապետան Ա ըթանէս։ Եւ ետ զաւանն և զբուն

1 Յօրինակի միում ընդ դիմս։

գահոյից գետնէն նահապետին մանաւագնէից եպիսկո-
պոսին Աղբիանոսի յեկեղեցի. զմանաւազակերտ ամ
սահմանօքն և գաւառակաւն հանդերձ՝ որ շուրջ
զնոքօք էր, որ կայ ի կողմանս գետոյն Եփրատայ:
Եւ ետուն զգուն գետնէն Ողդոնտոց, որոյ անուն էր
Ողդորու. ուստի եպիսկոպոս Բասանու ամ սահմա-
նօքն հանդերձ, որ ինքն իսկ է յերկրին Բասանու:

ԳԼՈՒԽ Ե.

Վան որդւոցն Վրթանայ, որոց անուանքն այս են. առաջնոյն Գրի-
գորիս, երկրորդին Յուսիկ:

Այս Վրթանէս և Աբիստակէս որդիք էին մե-
ծի քահանայապետին Գրիգորի, և էր Աբիստակէս
կուսան՝ սուրբ ի մանկուենէ. զի Թէպետ և կրսեր
որդի էր, կանխաւ եհաս յաթոռ հայրենի եպիսկո-
պոսութենէ: Իսկ Վրթանէս էր ամուսնացեալ և ան-
որդի. և քազում ժամանակս խնդրեր նա չար, զի
մի զրկեսցի նա յօրհնութենէ զաւակի, այլ ի պաղատ
նորա կացցէ առաջի նորա ի պաշտօն տեառն: Եւ ի
ծերութենէ նորա լուաւ տէր աղօթից նորա. յղացաւ
ամուսինն նորա, և ծնաւ երկուս որդիս երկուտեակս,
և կոչեաց զանուն երիցուն յանուն հօր իւրոյ Գրի-
գորիս, և երկրորդին Յուսիկ: Ընդ մնան զառաջեաւ
Թագաւորին Հայոց, և ուսման գրոց փոյթ ի վերայ
կալան ուսուցանել զնոսա: Ապա երեց որդին Գրի-
գորիս եհաս յեպիսկոպոսութենէ կողմանց Աղուանից
և Վրաց, վասն հոգեկիր առաքինի արուեստացն,
բարեհասակ, և զգիտութիւն ոչ յանձին կրելով: Իսկ
ամուսնացաւ նա, այլ ի հնգետասանամենից եհաս
յաստիճան եպիսկոպոսութենէ աշխարհին Վրաց և
Աղուանից, այս ինքն սահմանացն Ատգբթաց: Իսկ
Թեալ նորոգեաց անդ զեկեղեցիսն լուսաւոր կար-
գօք, առաջնոյն Գրիգորի՝ հօրն գործօքն նմանեալ:

Իսկ զՅուսիկ մնուցանէր Տիրան որդի Թագաւո-
րին Խոսրովու. և ետ աղքայորդին Տիրան զդուստր
իւր կնութիւն Յուսկանն որդւոյ Վրթանայ։ Եւ
մինչ դեռ մանուկն էր, յետ միանգամ յառաջնում
գիշերին մնանելոյ՝ յղացաւ կինն։ Եւ իսկ և իսկ ե-
տես ՚ի տեսլեանն՝ զի երկու էին մանկունքն, և ոչ
հաձոյ ՚ի պաշտօն տեառն ՚այ. և զղջացաւ զամուս-
նանալն։ Ելայր, և աղաչէր զնա, և ապաշխարէր մե-
ծաւ տառապանօք։ Եւ յամենամանալն բռնադատե-
ցաւ ՚ի Թագաւորէն իբրև զմանուկ. սակայն և այն
ըստ ՚այ ընտրհաձոյ գործէր, զի ողբ առ յապայն և առ-
նելոց էին ՚ի նմանէ հովիւքն գլխաւորք, որք յօգուտ
աշխարհին և ՚ի շահ մշակութեանն եկեղեցեաց յաւե-
տարանական հրամանացն սպասաւորել։ Այլ սակայն
նա ըստ այն մի գիշերն այլ ոչ եմուտ առ կինն իւր.
և ծնաւ կինն երկաւորիս, որպէս և ետես ՚ի տես-
լեանն յառաջագոյն. և կոչեցին զանուն առաջնոյն
Պապ, և զերկրորդին Աթանագինէս։

Եւ յետ միոյ գիշերոյ ՚ի կինն մերձենալոյ այլ ոչ
ևս մերձեցաւ ՚ի նա, վասն առաքինութեանն մանկուն.
իբրև ոչ եթէ զամուսնութիւնն լինչ աղտեղի համա-
րեր, այլ կասկածեր նա ՚ի տեսլենէն՝ զոր ետես, և-
թէ ընդէր բնաւ ՚ի նմանէ այնպիսի զաւակ անպիտան
ծնանիցի։ Վասնզի ոչ երկրաւոր զաւակի ցանկա-
ցեալ էր, այլ այնպիսւոյն՝ որ ՚ի սպասաւորութիւն
սպասու պաշտամանն ծառայութեանն տեառն ՚այ կացցէ։
Եւ զնմա՛ իսկ զերկրաւորս առ ոչինչ համարեալ, ոչ
լաւ համարեցաւ զանցաւորս՝ այլ զվերինն. երկնա-
կեաց կենացն ցանկացեալ հայէր։ Այս առ համարեր
զծառայեալն միայն Աստի, անձին փառս համարեր.
ոչ լինչ ածէր ընդ միտ զսէր Թագաւորին կամ ՚ի նմա-
նէ կուսէ զպատուեալն, կամ զմեծութեի, կամ զընչ
դանութեի փեսայութեան Թագաւորին. այլ յամենի
ամէ ուրացեալ հրաժարեր, և օտարոտիս և գաղջե-
լիս և պատրանս համարեր։ Եւ յետ առաջնոյն այլ
ոչ ևս խաբեցաւ երբէք ուրեք իբրև զմանուկ. այլ
հայրական միտս զծերական հանճարոյն ստացեալ,
վերատես խմաստութեի անմահութեի։ Այս առ համարե-
ցաւ զնախատինսն Աստի, քան զմեծութեի Թագաւո-

բայց • զՀգուշս վարուց ընդրեալ անձին իւրոյ , յեր-
կոտասանամեկից և ՚ի վեր առաքինանայր : Որ իւրոյ
հարցն նմանեալ , և զեղբօրն իւրոյ Կոլիգորի զօրի-
նակ բերեր անձին իւրոյ • զքրիստոսեան լուծն առանց
ամ յապաղուլթե ձգէր մինչև ՚ի վաղձան :

Բայց վասն զի Թշնամանացեալ էր տուն Թագա-
ւորին ընդ նմա , և մինչ դեռ վասն այնորիկ զզուէին
զնա աներք նորա , մեռաւ կին նորա • ազատեալ լի-
ներ Յուսիկ ՚ի [1] բանէրոյն : Եւ մինչ նա հոգացեալ
վասն իւր ծննդոց ամացելոց զաւակին , և վասն այսո-
րիկ հոգալով կայր յաղօթս առ ամ , և երևեցաւ նմա
հրեշտակ տեառն ՚ի տեսլեանն , և ասէ ցնա • Յու-
սիկ , որդի Կոլիգորի , մի երկնչիր • զի լուաւ տէր ա-
ղօթից քոց , և ահա ծնցի ՚ի քո զաւակացդ այլ զա-
ւակ : Օ ՚ի լեցին նոքա ՚ի լուսաւորուլթե գիտուլթե ,
և աղբեւրք հոգևոր իմաստուլթե հայաստան աշխար-
հիս : Եւ ՚ի նոցանէ բղխեացին հնորհք պատուիրա-
նացն ամ • և խաղաղուլթե բազում և շինուլե և հաս-
տատուլթիւն բազում եկեղեցեաց ՚ի տեառնէ նոցա
տայի , բազում յաղթուլթե և մեծաւ զօրուլթե • և
բազում մոլեալք դարձեին ՚ի Ճանապարհս Ճշմար-
տուե • որով և Վէճ բազում լեզուաք փառաւորեսցի
նոքօք : Որք սիմնք եկեղեցեաց լինեին , և մատակա-
րարք բանին կենաց , և հիմունք հաւատոց • պաշտօ-
նեայք Վէճի և արբանեակք հոգւոյն սրբոյ • զի ուս-
տի հիմն եդեալ շինուածոյն , և կատարն անտի լինիցի :
Եւ բազում տունկք պտղաբերք և շայեկանք և օգ-
տակարք ՚ի հոգևոր դրախտին ՚ի նոցա մշակուլթեն
աճեցան տնկեսցին և ընկալցին զօրհնուլթե յամ : Ուս
որք ոչն կամիցին տնկել նոքօք , և ՚ի նոյն հոգևոր յա-
ղտն գիտուլթե ըմպել , խոտան գտանիցին՝ մերձեալք
յանէծս • և վաղձան նոցա լինի այրուամն հրոյն : Բա-
զում անգամ վասն տեառն լինիցին նոքա ՚ի հեռ և
՚ի նախանձ յանարժանացն • այլ կացցեն ՚ի հաւատս
անշարժ իբրև զվէմ , և յաղթեսցեն նոցա համբե-
րուլթեամբ բազմաւ : Եւ յետ նոցա Թագաւորեսցէ
ատուլթիւն , յապարատան յանձնասէր յարծաթասէր

1 Յօրինակի միւսմ ՚ի անէրոյն :

ի մտախոհ յանպատասխանս յանդիմանեն ի սուտակ և ի բանսարկու մարդկանէ. և ապա եթէ ոք գտցէ՝ որ և արասցէ ունել զուխտ հաստատութեանն հաւատոյ, հաղիւ հազիւ։ Այլ զայս ամ լուեալ մանուկն Յուսիկ ի հրեշտակէն, միսիթարութեամբ մեծաւ գոհանայր զտեառնէ ամ, որ արժանի արար զինա այսոցիսի յայտնութեանն պատասխանւոյն. և զամ աւուրս կենայ նա, մինչ գոհանայր եթէ չամ ժամ անդադար։

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս Գրիգորի վաղճանին։

*Ա*յն վասն Գրիգորի եպիսկոպոսի, որդւոյ Աղբեթանայ, եղբօրն Յուսկան, որ կաթողիկոս էր Կողմանցն Աղուանից։ իբրև եկաց սա յիւրում պաշտամանն, մինչ դեռ մանուկն էս էր, շինեաց նոր դռեցաց զամ եկեղեցիս կողմանցն այնոցիկ, և ձգեցաւ ի գաւառակողմանցն Ատրպատականի։ Վարող ձչմարտութեանն հաւատոյն Քրիստի լինէր նա, և առաջի իսկ ամենեցուն էր սքանչելի և զարմանալի. խստադոյն և դժուարագոյն անհամարիկ ծանրաբեռն վարուցն կրթութիւնք խստամբերութեն, պահօք և սրբութիւնք, տքնական հսկմամբ անձանձրոյթ աղօթիցն յերմութեանն առ Աստուած կանխելոյ վասն ամ մարդոյ։ Օ աւետարանական ընթացքն և զվերակացութիւնն եկեղեցւոյ սրբոյ ընդհօքն այ առանց պակասութեան տանէր. առաւել էս փութայր, գուն [1] եդեալ յորդորելով զաւետեսեան առ ի բարեացն քաջալերութիւն, զցայգ և զցերեկ պահօք և աղօթիւք և ուժգին [2] խնդրուածովք և բարձրակալ կատարման հաւատովքն՝ մերձաւորաց և հեռաւորաց զհոգևոր ընտանեացն ածէր. իբրև զպատերազմասէրն նահատակ

1 Ի կրկին օրինակս գոյն էդէաւ։ 2 Յօրինակի միում ուժգին։

միշտ զանձն ի կրթուլեի և ի պատրաստուլեի ունել ամ փորձուլեից և վշտաց, առ ի տալ պատասխանի ամ համարձակուլեի, վասն ձշմարտուե հաւատոյն մարտնչել որ վասն Քեի ։

Եւ իբրև ուղղեաց և նորոգեաց զամ եկեղեցիս կողմանցն այնոցիկ, եհաս նա մինչև ի Ճամբար բանակին արշակունւոց արքային Պազքեաց, որոյ անունն իւր Պանեայան կոչեր ։ Քանզի և նոցա և Հայոց թագաւորացն ի ազգաւորուլեի էր տոհմին ընուե ։ Եւ երեեալ յանդիման լինէր թագաւորին Պազքեաց, իշխանին բազմուլեի զօրացն Հոնաց . և եկաց առաջի նոցա , սկսաւ քարոզել և աւետարանել նոցա զՔն ։ Պսկ ցնոսա՝ Թէ ծաներ՛ուք զայծ . լուան և ընկալան զառաջինն և հնազանդեցան ։ Պպա սկսան քննել զօրէնսն Քեի , և ուսան ի նմանէ՝ Թէ առեւլի է ձայ աւարուլեի և յափշտակուլեի, սպանուլեի, ագահուլեի , այլազգկուլեի , զայլոցկերուլեի , ցանկուլեի այլոց ստացուածոց ։ Պպա այսպիսի լինի երջանիկ իբրև լուան , զայրացան ընդ բանս նորա և ասեն . Օչ ի ոչ յափշտակեսցուք , զի ոչ աւարեսցուք , զի ոչ առցուք զայլոյ , ի՛ կեցցուք այսչափ անչափ զօրաց բազմուլեիք ։ Եւ Թեպետ բիւրաւոր բանիւք քարեաց կամէր հաձել զսիրտս նոցա , ոչ ինչ կամէին ունկնդիր լինել , այլ ասէին ցմիմեանս . Եկեալ այսպիսի բանիւք կամի ի քաջուլեէ որոյն կենաց մերոց խափանել զմեզ . իսկ Եթէ սմա լսիցուք , և դարձցուք յօրէնս քրիստոնէուլեէ , ի՛ կեցցուք , զի ոչ յերկիւղ Հեծցուք ըստ ընուլեէ օրինաց սովորուլեից մերոց ։ Պյլ , ասէին , այս խորհուրդ Հայոց թագաւորին է . զսա յղել առ մեզ , զի այսու ուսմամբ խափան նեսցէ զմեր արշաւանս առպատակուլեէ հինի յաշխարհէն իւրմէ . այլ եկայք զսա պակասեցուսցուք ի միջոյ , և մեք ի Հայս արշաւեսցուք , աւարաւ զմեր աշխարհս լցցուք ։

Պպա շրջեցաւ Թագաւորն , և լուաւ բանից զօրացն իւրոց . և կալան ձի մի ամեհի , կապեցին կախեցին զմանուկն Գրիգորիս զագաց ձիոյն , և արձակեցին ընդ ծովեզեր դաշտին հիւսիսական ծովուն մեծի , արտաքոյ իւրեանց բանակին ի դաշտին Պատեայ։

Եւ այսպէս սպանին զառաքինի քարոզն Քրիստի զմահ-
նուէն Գրիգորիս: Եւ ապա բարձին զնա որք ընդ-
նմա երթեալ էին ի գաւառէն Աբանդայ, և բե-
րին ի գաւառն Իբերանց ի կողմանս Աղուանից ի
սահմանս Հայոց ի Աբանդ, ի գեօղն՝ որ անուա-
նեալ կոչի Ամարաս: Եւ եդին զնա առ եկեղեցեաւն,
զոր շինեալ էր առաքեալն մեծին Գրիգորի, հաւուն
Գրիգորիսի՝ քահանայապետին մեծի աշխարհին հայ-
ոցմանն երկրին: Եւ ամ յամէ աշխարհաժողովուրդք
ի մի վայր ժողովեալ կողմանցն այնոցիկ և աշխար-
հայ գաւառացն այնոցիկ, զսորա զօր տօնին զյիշա-
տակ քաջուքեն ցնծան:

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս մեծի պատերազմին հինին եկելոց յարշաւանաց արքային Մաղքթաց յաշխարհ իշխանուքեն Հայոց Թագաւորին. և թէ որպէս սատակեցաւ նա և զօրքն իւր:

ՅԱՅՆ ժամանակի Թագաւորն Մաղքթաց Այ-
նեան անհնարին նիւթեաց զօրամատուքեն ոխուքեն
ընդ իւրում ազգակցին Խոսրովու արքային Հայոց,
և գումարեաց ժողովեաց զամ զօրս Հոնաց և Վո-
խաց, Ծաւատպարաց, Հեփթաղաց, Խժմախաց,
Կաթաց, և Կղզուարաց, Կուգարաց, Շ ջաց և
Ա՛ղուանից և Տաղասձաց և Լդեերսուանացն, և այլոց
խառնաղանձ բազմուքե անթիւ անբնակին վայկատուն
զօրուքեանց, որում միանգամ լինքն իշխեր զօրացն
բազմաց: Լինն անց ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ
ընդ Կուր, և եկն տարածեցաւ ելից զերկիրն Հայոց
աշխարհին: Եւ չգոյր թիւ բազմուքե հեծելազօր
գնդացն, և ոչ համար շերտաւոր հետևակ զօրուն.
զի և ինքեանք զինքեանս զիւրեանց զօրսն Թուել ոչ
կարէին: Տայց ուր լինէր հանդէս, ի նշանաւոր տե-
ղիս գնդի գնդի, դրօշս դրօշս, վաշտուց վաշտուց,

յերևելի երևելի տեղեաց՝ մին մի բռնաքար առ այր հրամայէին, զի բերցեն ընկեացեն՝ շեղջ կուտել. զի որչափ լինի, այնու երևեսցի նշանակ բազմութեանն, առ իմանալ առ վաղիւ անցելոց իրացն ահաւորութեե նշանակ։ Եւ ընդ որ միանգամ անցանէին, այսպէս Թողուին յամ ձանապարհակից, ի վերայ անցից պո ղոտայից։ Եւ ելին լցին ծածկեցին զամենայն երկիրն Հայոց. քանզեցին, գերեցին, առ հասարակ աւերե ցին. սփռեցան տարածեցան զահմանօքն, լի և լի ծաւալեցան մինչև ի փոքր քաղաքիկն Աստաղու, և մինչև ի Կանձակ սահմանս ատրպատական. խաղա ցուցին ի մի վայր ժողովեցին, ի ժամադիր կողմանս յայրարատեան գաւառին բանակ մեծ լինելը։

Եւ խոյս ետ Թագաւորն Հայոց Խոսրով յիւրմէ եղբարցն, նոյն ի Սանէսանայ յարքայէն Աղբե Թայ. և անկան յամուր բերդն Վաղարշնից[1] յեր կիրն Կովկայ[2], և ընդ նմա ծերունին Ա ղթանէս ե պիսկոպոսապետն Հայոց։ Ասպա առնուին պահս պա հել, և խնդրել յայ՝ զի փրկեսցէ զնոսա յայնմ՝ ի դառն դահճէն, և սկսան խնդրել ի տեառնէ այ։ Եւ նա ծածկեալ բռնացեալ ունէր զերկիրն առ հա սարակ իբրև տարի մի։ Ասպա եկն եհաս Ա՛ձէ որդի Ա՛րտաւազդայ ի Ա՛ամիկոնէն տոհմէն, զօրավար Հա Հայոց մեծաց։ Օ՛ի երթեալ էր նա ի ժամանակին յայնմիկ զերկայն ձանապարհս ի կողմանս Յունաց։ Ասպա ժողովեաց նա զամ քաջս քաջս նախարարացն, և գունդ կազմէր բազում յոյժ. և հասանէր անկա նէր ի վերայ բանակին, յառաւօտուն ժամուն այգե նալոյն պաշտամանն. զի բանակեալ էին նոքա ի լե րինն՝ որ կոչի Ցլու գլուխ. և առ հասարակ ընդ սուր հանէին զամենեսեան, և ոչ մի ոչ ապրեցուցանէր, և գարձուցանէր զազգմունդն գերեացն։ Եւ յետ այ սորիկ առնոյր զաւարն, խաղայր գնայր երթայր ի ջանէր ի դաշտն այրարատեան գաւառին. երթայր գտանէր զԱնձևացն Թագաւորն Աղբեթայ բուն գնդատն, անթիւ անհամար զօրօքն հանդերձ ի Ա՛ձ զարշապատ քաղաքի։ Ա՛ձեալ զգունդն Ա՛ձէ, և յան

1 Ցօրինակի միում Տարծին։ 2 Ցայլ օրինակս Կովայ։

կարծակի յարձակեցաւ՝ի վերայ քաղաքին, և մատնեաց զնոսա ՚ի ձեռս նորա։

Եւ երբեմն տեսին զնա յարձակեալ՝ի վերայ իւրեանց, փախեան երթին՝ի քաղաքէ անտի յառաջարկն՝ի կողմն յ( )շական բերդին. և զանապատան, և զքաւրուտ տեղիսն ապաւէին իւրեանց համարեցան. և լինէր սաստիկ պատերազմ յոյժ յոյժ։ Եւ նիզակակիցք զօրավարին Հայոց, որ էին Խազբատ բագրատունի, Մերհունդակ և Վարդգիսն ըռըշտունիք, և Վահան՝ նահապետն ամատունեաց տոհմին, և Վարազ կամիսականն, հասանէին հարկանէին սատակէին զօրսն Եւլանացն, և Վազքթացն, և Հոնացն և զայլոց ազգացն, և ընդհարին զդաշտն առաջարացն առ հասարակ դիակամբ մեռելոց. մինչ զի երբեմն զգետ յարուցեալ երթայր արիւնն անհնարին, և ոչ լինէր թիւ զօրացն մեռելոց։ Եւ զնացեալսն սակաւս առաջի իւրեանց հալածականս տանէին մինչև յաշխարհն Խաղասճաց, և զդլուխն Անէսանայ մեծի Թագաւորին եկին բերին առաջի արքային Հայոց։ Վասէն երբեմն ետես, լալ սկսաւ. ասէ, Աղբայր իմ էր ազգաւ արշակունի։ Ապա եկեալ էր արքային՝ի տեղի Ճակատուն, և ընդ նմա մեծ եպիսկոպոսապետն Հայոց. և տեսին զկոտորածն զօրացն հարեալոց, զի նեխէր երկիրն՝ի հոտոյ մեռելոցն։ Ապա ետուն հրաման՝ դադարել հասնել յաշխարհէ, և անդէն ծածկել քարակարկառ վիմօք, զի մի՝ի շարաւոյ հոտոյն մեռելոտի ոսկերացն երկիրն պղծեսցի։ Եւ զադարեաց երկիրն՝ի խաղաղութեան ամն հարուստ մի. և այսպէս վրէժ սրբոյն Գրիգորի խնդրեցաւ՝ի Թագաւորէն Վանէսանայ, և՝ի բանակէ նորա. զի ոչ մնաց՝ի նոցանէ և ոչ մի։

1 Ցերկուս օրինակս Վահրան, և՝ի միւս այլ Վահրվան։

Յաղագս մայրեացն տնկելոց, և վասն պատերազմացն ընդ Պարս. և վասն աղգահատուածէ տոհմին Բզնունեաց նախարարուածէ։

Այն իբրև առ ժամանակ մի խաղաղացաւ երկիրս Հայոց, ապա ետ հրաման Թագաւորն Հայոց Խոսրով, տալ պարգևս արանցն քաջացն՝ որ վաստակեցին նմա, և փոխանակեցին զանձինս իւրեանց փոխանակ աշխարհին Հայոց մեծաց չար՝ ի մարտ ձակատուցն պատերազմաց։ Այս ետ Վաչէի զօրավարի զակաս ՚ի անջանակին, և զ՚ի բաբաշխիս, և զՅլոս գլուխ, ամ գաւառակօքն հանդերձ. նոյնպէս և այլոց նախարարացն մեծամեծ պարգևս։ Այս ետ հրաման Թագաւորն զօրավարին իւրոյ՝ հանել խաշար յաշխարհէն բազում, և բերել զվայրենի կաղին մայրեաց, և տնկել զայն յայրայրատեան գաւառին. և առեալ յամուր բերդէն արքունի, որում կոչէն Վառնի, մինչև ՚ի դաշտն Աեծամօրի ՚ի գլուխն՝ որ անուանեալ կոչի Վռուին, որ կայ ՚ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Ընտաշատու, զգետն խոնարհ մինչև յապարանսն Տիկնոջն՝ տնկեցին զկաղինն։ Այս կոչեաց զանուն նորա Տաճար մայրի։ Այս միւս ՚ի մայրեացն յեղեգնաբերանին ՚ի նմանէ ՚ի հարաւակոյս լերին զդաշտն կաղնատուն՝ տնկով. և կոչեցին զանուն նորա Խոսրովակերտ։ Այս անդ շինեցին զապարանսն արքունական, և զերկոսեան տեղիսն պարսպեալ փակեցին. և ոչ կցեցին ՚ի միմեանս վասն պողոտայի ճանապարհին։ Այս աձեաց բարձրացաւ. և ապա զամ երէս, և ըզդաշտնս հրամայեաց ժողովել Թագաւորն, և ընդ զքաղաքորմն, զի լցին նոցա տեղիք որսոց զբօսանաց ուրախութէ Թագաւորութէ նորա։ Այս զօրավարն Վաչէ կատարեր վաղվաղակի զասացեալսն արքայի։

Այս մինչդեռ նա յայնմ գործ զմայրեաւքն տնկէր, յանկարծակի գուշակ հասանէր առ Խոսրով ՚ի Հեր և ՚ի Օ արաւանդ գաւառ, թէ պատրաստեալ էն զօրքն Պարսից գալ հասանել ՚ի գործ

պատերազմի՝ ի վերայ քո։ Եւ պա հրամանն եւ արքայ Խոսրով Յատաբայնահապետի Ներսեհեայ, զուգազ հանել յաշխարհէ աւերել քան զչափն. և զհամար զօրուն մատենի[1] զնդաւն ընդ առաջ նոցա խաղալ հասանել՝ ի գիմի հարկանել, արգելուլ զթշնամին։ Եւ պա Յատաբէն երթայր ընդ առաջ զօրացն Պարսից բազմութիւք զօրօքն Հայոց։ Իբրև հասանէր Յատաբէն, խորհուրդ միաբանութիւն դնէր ընդ իշխանսն զօրացն Պարսից. կամեցաւ մնանել՝ ի ձեռս նոցա զաբքայն Հայոց զտէրն իւր, դարան հրամայեաց գործել թշնամեացն՝ ի վերայ իւրոց զօրացն, և անդրէն սուր ետ դնել՝ ի վերայ իւրոց զօրացն։ Յանկարծ յեղակարծումն տարակարծի՝ քառասուն հազար զօրուն Հայոց միանգամայն կոտորէին, և այլ զօրքն փախեան տական լինէին. և Յատաբէն չարագործ առնոյր զօրսն Պարսից, և կամէր անկանել՝ ի վերայ Թագաւորին Հայոց։ Եւ պա փախստականք զօրացն վաղ հասանէին՝ ի բանակ արքային Հայոց, զոյժ առնել զանհնարին կործանումն իրացն եղելոց, զչարագործութիւնն մատնութեանն անօրէնն Յատաբենայ։

Եւ պա անդանէր Թաւալէր խնդրէր յայլ բազում պա զաստանօք և ուժգին արտասուօք Թագաւորն Հայոց խոսրով, հանդերձ ողբանաւք քահանայապետիւն։ Եւ յետ այսորիկ աճապարեր կուտէր զօրսն առ ինքն իբրև երեսուն հազար, հանդերձ զօրավարսն ևս աձիւ. զայր հասանէր ընդ առաջ նոցա, ամ աւա զախտումբ մեծամեծ նախարարօք իւրովք։ Եւ զի պեցան միմեանց առ ափն ծովուն Ներսեհեայ, յա ռաստն աւանի, ի ձկնատեսանն արքունի՝ ի վերայ գետակին։ Եւ տեսին զօրսն Պարսից, զի ոչ զայր Թիւ բազմութեն. զի էին իբրև զաստեղս երկնից, և իբրև զաւազ առ ափն ծովու. զի եկեալ էին անթիւ փղօք և անչափ զօրօք։ Եւ սոքա հասին անկան՝ ի վերայ բանակին, յուսացեալք առ ամբ. հարին, սաստակեցին, կոտորեցին, և ոչ Թողին՝ ի նոցանէ և ոչ մի։ Եւ Թափէին աւար բազում, և զփիղսն և զամ այժ զօրութեն նոցա։ Զերբեակալ արարեալ զՅատաբ

1 Յերիս օրինակս Տաքենիւ։

քէնն Ա աչէ սպարապետն և քաջ Ա ահան ամատու-
նի , ածէին զնա առաջի մեծի Թագաւորին Խոսրո-
վու , և քարկոծ առնէին զնա քարամբ իբրև զայր , որ
աշխարհի և գնդի և զօրաց տեառն իւրոյ դաւաճան
լեալ էցէ : Եւ զազգ նորա և զկին և զորդիս գտա-
նէր յամրոցի անդ իշխանին ըռշտունեաց յանուա-
նեալն Ա ղթամար կղզեցի . ի նաւ ելեալ Ա աչէ սպա-
րապետն , անցեալ ի կղզին՝ առ հասարակ ոչ զէգ Թո-
զոյր և ոչ զարու : Եւ այսպէս բարձաւ ազգատոհմ
նախարարութենն այնորիկ . և զտուն նոցա յարքունիս
կալան :

Բայց յետ այսորիկ ոչ դադարէին Պարսք ի տալ
պատերազմ ընդ Խոսրովու արքային . և նա գնէր
օրէնս , զի մեծամեծ աւագանին , նախարարքն աշ-
խարհակալքն աշխարհատեարքն՝ որ էին բիւրաւորքն
և հազարաւորքն , կայցեն առ արքային , և ընդ նմա
ըմբէացին , և մի ոք երթիցէ ի նոցանէ ընդ զօրս ար-
քունի : Օ ի երկնչէր նա յերկմտութենէ նոցա , զի
գուցէ զնոյն գործ Վատաբենայն գործիցեն , և ապրա-
տամբ լինիցին ի նմանէ : Բայց վատահ լինէր ի ծե-
րունին Ա աչէ , ի քուն սպարապետն ի զօրավարն
Հայոց մեծաց , և ի քաջ Ա ահան յամատունի :
Վումարէր զօրսն ամ տանջն աւագանւոյն ընդ զօրսն
արքունի , և տայր զգումարատակն ամ ի ձեռս նոցա .
և հանապազ կայէն ի քաջութենէ ի մարտ պատերազ-
մի ի սահմանս Պարսից . և ոչ տայէին անխտիր ար-
շաւել աւերել զերկիրն Հայոց , և ոչ նայէր : Եւ
կայր արքայ ի հանգստի , և աշխարհ ի շինութենէ և
ի խաղաղութենէ զամ աւուրս կենաց նոցա :

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս Բակուր բդեշխին՝ որ ապստամբեաց յարքայէն Հայոց, և փոխանակ նորա լինէր բդեշխ Վաղինակ։

ՕՐԱՑՈՒՑ ժամանակաւ ապստամբեաց յարքայէն Հայոց մի՛ ի ծառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց, որ անուանեալ կոչէր բդեաշխն. որ էր մի՛ ի ջորից, զահէրէց բարձէրէց տաճարին արքունի։ Նա ձեռս յարքայն Պարսից. և մանեաց զարքունի տունն, որ յեց յինքն էր։ Նա էած զօրս արքային Պարսից՝ ի Թիկուռնս իւր, և հատաւ յերկրէն յիշխանութենէն Հայոց, և տայր պատերազմ ընդ արքային Հայոց՝ ուժով Պարսից Թագաւորութենէն. և սաստկանայր մարտ պատերազմին։ Այսպա առաքէր Թագաւորն Հայոց զբարեկիր զծառայս իւր, զվիշխանն Կորդուաց զՔ՚ոնն, և զվիշխանն մեծի Ծոփաց ըզՄար, և զվիշխանն Ծոփաց Շահէի Կերսեհ, և զվիշխանն Աւնեաց զՎաղինակ՝ և զվիշխանն Հաշտենից զԱդատ, և զվիշխանն Խասեոյ զՎանակ, հանդերձ բազում զօրօք։ Այսպա չոգան յաղթեցին զօրացն Պարսից, և առ հասարակ ընդ սուր հանին զնոսա. և սպանին զբդեաշխն, եղբարբք և որդւովք իւրովք հանդերձ։ Այլոց զաղջիկ մի զդուստր նորածին, և զգլուխն Բակուր բդեշխին բերին առ արքայ։ Նա իբրև այլ ոք ոչ էր ձեռագեալ յազգէն, ետ արքայ զաղջկին կնութ սիրելւոյն արքային Վաղինակայ սիւնւոյ, և զտունն Աղձնեաց. և արար զնա բդեաշխ և պայազատ տան նորուն։ Ամառանդն բազմացաւ, և հանդերձ աշխարհաւն և ամ ուժովն կայր բդեաշխն Վաղինակ՝ ի ծառայութենէ արքային հանապազ։ Այլոյ յորդւոցն Բակուր բդեշխի պատանեակ մի փախեաւ անկաւ առ զօրավարն Հայոց Վաչէ, և անդ ապրեցաւ Թագուցեալ՝ ի տան նորա։ Որ առ յապա ժամանակ տան նորա լինէր։ Որ յայլում ժամանակի դարձաւ կալաւ զտունն իւր. որոյ անուն կոչէր։

Ցաղագս Յակոբայ եպիսկոպոսի Մծբնայ։

Ոչ ոք ժամանակաւ խաղաց գնաց մեծ եպիս-
կոպոսն Մծբնացւոց, այլ աքանչելի ծերոյնի, վաստա-
կասէր ի գործս ձշմարտութեանէ, որոյ անուն Յա-
կոբ, փոխանակ ազգատն պարսիկ կոչէր, այլ ընտրեալ
յայ, յիւրմէ քաղաքէ անտի գալ հասանել ի լերինս
Հայոց, ի լեառնն Արարադայ ի սահմանս այրա-
րատեան տերութենն ի գաւառն Աղդուաց. այլ լի
ընդհակառակ Պարսից, որպէս զօրութենէ նշանաց և արուես-
տից լինելին ի ձեռաց նորա։ Այս եկեալ ցանկացեալ
փափաքեալ մեծաւ տենչանօք աղաչէր զնա՝ տեսա-
նել զփրկական տապանն Նոյեան չինուածոյն, զի յայս
լերինս հանգեաւ նա ի ջրհեղեղէն. քանզի զամ ինչ
որ հայցէր, առնոյր ի նմանէ։ Այսպա մինչդեռ ելանէր
ընդ դժուարին ընդ անջրդի ընդ ափափայտն անապա-
տին սարարատեան լերինն, աշխատեցան և ծարաւե-
ցան նա և որք ընդ նմայն էին։ Այսպա դնէր ծունր
մեծն Յակոբ ի վերայ երկրին, և կայր յաղօթս առ
Աստուած. և ի տեղւոջն՝ ուր եդեալ էր զգլուխս իւր՝ բղխէ
խեաց աղբիւր, և արբին նա և որ ընդ նմայն էին. որ
մինչև ցայսօր ասեն ազնիկ աղբեւր Յակոբայ։ Նա-
ւինքն ի նմին աշխատեալ դեգերէր՝ զնդրեվիլին տե-
սանել առանց յապաղուածի, առնէր աղօթս առ Աստուած։

Ընդ իբրև էր նա խոնջեալ ի վեր ի դժուարին
տեղւոջն մծտ ի կատարն, և կարի վաստակեալ էր,
ննջեաց նա. և եկն հրեշտակ ցայ, և ասէ ցնա. Յա-
կոբ Յակոբ։ Նա նա ասէ. Լսասիկ Աստուած։ Նա ասէ
հրեշտակն. Արդ ընկալաւ Աստուած զաղաչանս քո, և կա-
տարեաց զխնդրուածս քո. այդ, որ կայ ընդ մեզս
քո, է ի փայտից տապանակին. ահա բերի քեզ, ան-
տի է այդ. զի այլ մի ևս յաւելցես տեսանել զայն,
զի ետ այդպէս կամեցաւ։ Նա մեծաւ խնդութիւնք յոտն
կացեալ, բազում գոհութիւնք երկիր պագանէր տան, և
տեսանէր զտախտակն՝ իբրև զի կացնեաւ հատեալ

հանեալ Ձեղքեալ ՚ի մեծ ինչ վայտից : Կամ առեալ դառնայր անտի, հանդերձ ընդհատուր պարգևելովին, և որք ընդ նմանն երթեալք՝ իւրովքն Ճանապարհորդ լիներ : Կամ ոչ այնպէս մեծն Մովսէս զուարթագոյն ցնծայր յիջման սիրելական լեռնէն, քան եթէ առաւելովքն պակասագոյն : Վասնզի յայ առեալ և ածագիր հրամանաւք ՚ի բազում , այր ածատեսիլ ՚ի լեռնէն իջանէր : Կամ վասն վըրիժագործ ժողովըրդեանն , որոց զթիկունան ՚ի տէրունիան [1] և կործան յերեսս՝ տիրագրուժք իւրեանցակուռ ձուլեցին երկիր պագանելոյ, և նովին զհրամանաւբերն սրտառուչ սրտաբեկ կացուցանէին : Վասնզի ՚ի տախտակացն խորտակելոյն յայտնի երևէր բերելեացն Թագաւորութիւն : Նակ այս երանելոյս , վասն որոյ և Ճառեալքս յարդարին , ոչ բան այնմ՝ օրինակի՝ որ անդ գործեցաւ . այլ ինքն իւրովքն լցեալ հոգևոր մխիթարութեամբ , կարծեալ զընդունելեացն զյօժարութիւն յուսով դիտաւորութիւն զՃանապարհայ աւետաբերաց : Վասնզի յայտնեաք և ծածկելովք , քանզի միոյն միայն յամենազօրէն առ ամենայն ազգս երկրածնաց ընդհքն մատակարարելոյն :

Այսպա իբրև գայր բերէր այլն այ զածագործ մեծութեանն պատուհասին զկրատու՝ որ առ ամ ազգս բանաւորաց և ընչաւորաց՝ յաւիտենից զնշանակն զգփայտն ապրեցուցիչ , զնշանակն հայրենի գործոյն զնոցեան տապանին , ամ քաղաքն և գաւառքն՝ որ չուրջ կին զնովաւ՝ անպայման և անչափ խնդութիւնք և ցնծութիւնք ընդ առաջ ելանէին : Իբրև զառաքեալ Վեհ իբրև զհրեշտակ երկնաւոր տեսեալ զսուրբն , զնովաւ պատեին . գքաջ հովիւն իւրեանց իբրև զաստուածախօս տեսանէին . և զնովիմբ փարեալք , և զվաստակաւոր զօգտաբեր զգաշտապարտացն զշաւիղսն համբուրէին : Կամ զբերեալ պարգևացն զընծորս իւրեանց յօժարութիւք ընդունէին . որ մինչև յայսօր նշանակ սքանչելութեանն կայ պահեալ առ նոսա երևոյթ փայտն հայրապետական նոյեան տապանին :

Այսպա յետ այսորիկ լուր լուաւ յերկիրն հայաս-

1 Ցայմ օրինակս գԱրիմանեան փերուանիան :

տանէ սքանչելի եպիսկոպոսն Յակոբ. խաղաց գնաց առ մեծ իշխանն աշխարհատէրն մեծ ծառային աբքայիսն Հայոց առ Աննաձիրհ ռըշտունի, և եկն թագ փեցաւ յաշխարհն նորա: Ա այն ըլ լուեալ էր գնմանէ թէ այր չար և անզգամ է, և զուր տարապարտ ի ցասմանէ գառնութենէ սրտին իւրոյ կոտորէ անթիւ մարդիկ: Եկն ուսուցանել և խրատել զնա, զի յայնհէ ետն երկուցեալ գարձցի յընդհանութենէն բարս, և մեկուսի ի վայր դիցէ զանասնաբար գաղտնաժուռթէն մոլեգնութենէն իւրոյ: Ասէ իբրև եհես գնա, արհամարհեաց, ծաղր և այպն առնէր անօրէնն Աննաձիրհ զայրն Ա՝ն Յակոբ եպիսկոպոսն: Եւ առ վայրենի բարուցն իւրոյ՝ զոր ունէր յանձին իւրում, իբրև նմա հեձուկս առնելոյ, ուրթ հարիւր այր՝ որ կային ի կապանս առանց յանցման՝ ետ ածել առաջ ընդ նորա. և հրամայեաց ի գահձէ միոջէ ի ծով անդր հոսել. և զայնչափ հոգի առանց յանցման կո րուսանել, և կատակութէ ծաղու հրամայէր հալածել գնա յաշխարհէն իւրմէ: Եւ ասէ. Ո՞ւր քում բարեսացութիւնդ տեսէր գիմդրդ մեծարեցի գքեզ. դիւր արարի նոցա ի կապանացն, և ի ծովուն դեռ ղըղղին: Ասէ նա գնացեալ անտի մեծաւ տրտմութէ ըստ հրամանի պատուիրանին տեառն իւրոյ, թօթափ փեր գփոշի ոտից իւրոց ի վերայ նոցա: Ա՝այր հասա նէր ի լեառն երկաթահատացն և կապարահատացն, և որ ընդ նմանն էին, ընդ Ռըշտունիս: Եւ բաժանէր լեառն բարձր, ուստի երևէին գաւառքն բովանդակ, որում անուն Ընձաքիարս կոչէին: Իբրև հուպ եղև յայն լեառն ի ստորոտ լերինն. քանզի բազում աւուրք էին զի չէր ինչ քնաւ ամենևին ձաշակեալ, և ծարաւեաց խիստ ծարաւով: Եկաց յաղօթս առ Ա՝ն, գնէր ծունր, և եդ զգլուխ իւր ի վերայ երկրի, և բխեաց աղբիւր. ուստի արբ ինքն և որք ընդ նմանն էին: Եւ եղև այս ըստ առաջնոյն օրինակին. որպէս արար ի Ա՝արարադ լերինն, սոյնպէս և առ ոտին Ընձաքիարս լերինն ի ծովեզերն ըռշտունեաց ծովուն. որ ըստ առաջնոյն օրինակի կոչի և այս աղբեւր Յակոբայ մինչև ցայսօր ժամանակի:

Եւ ելանէր քահանայապետն Ա՝ն Յակոբ ի գլուխ

լերինն Ընձաքիարս. և նզովէր զաշխարհն, զի մի պա-
կասեսցէ անտի խառովութիւն մինչև ի սպառ, փոխա-
նակ տերունի խաղաղութեան՝ որ ոչ լռեաց։ Եւ սուրբ
աւետարանիչ եպիսկոպոսն գնաց ի տեղի իւր։ Եւկ
յայնմ գաւառի, յետ գնալոյ նորա անտի, յետ երբ
կուց աւուրց սատակեցաւ կինն Անանձերհայ եւ թն
որդւով իւրով. յետոյ և ինքն չարամահ ծակոտեալ
ելանէր մեծաւ ամենայնօք յաշխարհէն։ Եւ ըստ բա-
նին՝ որ ասացաւ, ոչ եղև խաղաղութիւն յաշխարհին
յայնմիկ յօրէն յայնմանէ և յապա։

Այլ այս Յակոբ գործէր սքանչելիս մեծամեծս.
և սա գիպեցաւ ի մեծ սիւնհոդոսին ի Նիկիա, որ
եղև յամն Կոստանդիանոսի կայսեր Հռոմայ, որ
ժողովեցան երեք հարիւր և ութետասն եպիսկոպոսք.
վասն անիծեալ աղանդոյն Արիանոսի աղէքսանդրա-
ցւոյ, որ էր ի նահանգէ անտի Եգիպտոսի։ Արդ-
ոյք եպիսկոպոսքն նատէին առաջի Կոստանդիանոսի.
և ի Հայոց էր անդ Արիստակէս, որդի Գրիգորի
սքանչելոյ՝ առաջի կաթողիկոսին Հայոց մեծաց։ Այն-
սաւ երևեալ սքանչելեօք նշանաց Հոգւոյն սրբոյ այնմ
Յակոբայ ծածկեալ գործք զարմանալի Թագաւո-
րին։ Նաեւս զի արքային Կոստանդիանոս քուրձ զգե-
ցեալ էր ի ներքոյ իւրոց ծիրանեացն և պատմուճա-
նին, և հրեշտակն կայր պահապան սպասաւորել նմա։
Զարմացեալ եպիսկոպոսն Յակոբ, ասաց այլոց բազ-
մութեամբ ժողովոյն եպիսկոպոսացն զիրս հրեշտակին, որ
ոչ հաւատային իրացն։ Եւկ նա ինդեալ վիճէր և
ասէր. Որովհետև դուք գիտէք զիրս ծածկեալս,
նախ զայդ յայտ արարէք, զինչ է այն որ զգեցեալն
է Թագաւորն ի ներքոյ պատմուճանին։ Որ ինքն ի
մէջ կացեալ, ի ձեռն Հոգւոյն սրբոյ յայտներ զնո-
նարհուածն կրօնազգեաց աստուածասիրութեանն նշանակ
Թագաւորին Կոստանդիանոսի. և զինեալ առաջի ա-
մենեցուն ցուցանէր, զի ի ներքոյ ընդ ծիրանեօքն
քուրձ զգեցեալ էր առ սեր ջերմեռանդ հաւատոցն՝
որ առ Աստուած ունէր։ Այսպա ետես և Թագաւորն Կոս-
տանդիանոս զհրեշտակն սպասաւոր երեսացն Յակո-
բայ, և անդաւ առաջի ոտից նորա, և մեծապատիւ
մեծապարգև մեծարեաց զնա։ Եւ արկ զաթոռ նո-

ըա՝ի վերոյ քան զբազումս՝ի նոցանէ, որք՝ի սիմհռ գոսին յայն էին։ Այլ ոսկերք նորա չնորհեցան քա զաքին ամփացւոց, ընդ այլ մեքենայիսն՝ի փոխել նո ըա անտի անդր՝ի մարտս պատերազմացն Յունաց Թագաւորացն ընդ Թագաւորին Պարսից։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս մեծի պատերազմին Պարսից և Հայոց ընդ միմեանս. և անկա նելոյ՝ի պատերազմին՝ զօրավարին Վաչէի։ Եւ մահուն խոսրովու արքայի, և փոխելոյ յաշխարհէ հայրապետին Վրթանայ։

Այն ժամ այսորիկ յաւել և լինել մարտ խստու թեամբ պատերազմի՝ի մէջ Պարսից և Հայոց ընդ մի մեանս. զի ժողովեցան հասին կուտեցան առնուլ զաշ խարհն հայաստան երկրին։ Այսպա ժողովեր սպարա պետն զօրավարն Հայոց մեծաց Վաչէ զազատախօսութիւ բանակ նախարարակոյտ զօրացն։ Այն ելանէր տայր ընդ զօրսն Պարսից պատերազմ, և լինէր անհնարին կոտորուած յերկոցունց կողմանցն, և բազում ծախ մեծամեծ աւագանւոյն կոտորելոցն։ Ընկանէր՝ի պա տերազմին յայնմիկ մեծ սպարապետն Հայոց Վաչէ. և լինէր առնայն աշխարհին սուգ անհնարին, զի բազում անգամ էր նոն փրկութիւն տուեալ Հայոց՝ի ձեռն նորա։ Այսպա ժողովեր եպիսկոպոսապետն Վրթանէս, միաբարեր զամենեսեան, և զինքնին Թագաւորն զՅոսորով, և զօրսն ամ, որք բազում անձկայրեաց տրտմութիւնք և արտասուականք ողբով և ծանրաթախիծ հոգով, մեծաւ կոծովք և անհնա րին աշխատանօք պաշարեալք, զգնացելոցն կարիս ինա ցելոյն համարեալ՝ սգային։ Ո՛ որս մատուցեալ սիո փէր զնոսա մեծն Վրթանէս, և ասէր.

Ա՛խիթարեցարո՛ւք՝ի Տէր. վասն զի մանաւանդ որք մեռանին, նոքա յաղագս աշխարհի և եկեղեցեաց և ա՛ծագործ օրինացն տուչքեն, զի մի գերեալ քան-

դէսցի աշխարհս, և սուրբ եկեղեցիքն անօրինեսցին, և կամ մարտիրոսք անարգեսցին, և կամ որ սպասքն ի ձեռս պղծոցն և անօրինացն անկցին, և որ ուխտն այլայլեսցի, և որդիք մկրտութիւնք զերութիւնք անկցին ի պէսպէս պղծութիւս անօրէնութիւնք կարգաց պաշտամանց։ Այլ եթէ զաշխարհս ունկնդիցին արդեւք Քրիստիքն, և զիւրեանց զանօրէնն զանկրծս զանաստուածկրօնսիցն զօրհնս, աստ արդեւք հաստատիցին. որ, զոր խնդրեմք, քան և մի լիցի։ Ասէ մեր բարեպաշտութեն նահատակք ի վերայ այսորիկ ձգնեալ պատերազմաւ, զջար պահեալ հեռացուցեալ հալածեալ յաշխարհէ մեռան, զի մի յայսպիսի աստուածապաշտ և աստուածասէր աշխարհ անօրէնութիւն մտեալ, չարի կամացն ի ծառայութիւն արկցէ, և զբազում ոգիս չերմեռանդն սիրով քնութեն ի միմեանց քակտեալ քայքայեսցէ։ Ասէ տոքա միտգեւս կենդանի էին, այլ դար վաստակօք ի վերայ այսորիկ վաստակեցան. և ի մահուն իւրեանց զփիամտութեն հաստատութեն զանձինս փոխանակ տալով ընդ ձգմարտութեն տէն, մատուցին ի վերայ եկեղեցեաց, և ի վերայ մարտիրոսաց, և ի վերայ ուխտին սրբութեն օրինացն, և ի վերայ կարգաց հաւատոցն, և ի վերայ ուխտին քահանայութեն, և ի վերայ անթիւ նոր ի Քրիստոս մկրտելոցն, ի վերայ բանակի տեառն աշխարհիս։ Որք այնմ ամի փոխանակ զանձինս իւրեանց ոչ խնայեցին, ընդ վկայս Քրիստի է նոցա համար պատուոյ։ Այլ մի լացցուք զնոսա, այլ պատուեսցուք ընդ ձգմարտութեն, առ նահատակն դիցուք ընդ աշխարհ օրէնս յաւիտեանս յաւիտենից, զի ամ որ զնոցա յիշատակ քաջութեն իբրև Քրիստի նահատակաց անխափան կատարեսցէ։ Այս մեք տօնս արասցուք, և ուրախ լիցուք. զի ահա այսորիկք հաձեսցի ընդ մեզ, յայսմ հետէ խաղաղութեն ընդ հորիզեսցէ։

Այս եղ օրէնս ընդ աշխարհ մեծ քահանայապետն Ղրիգանէս, զնոցա առնել զյիշատակն ամ յամէ. և որք փոխանակ աշխարհին իրկութեն մեռանիցին ի նմանութեն նոցա, եղ կանոն՝ յիշել զնոսա առ սուրբ սեղանն ձայ ի ժամ պատարագին. յորժամ զանուանս սրբոցն կարդիցեն, և ապա զնոսայն. և

ձնացելոցն յանցելոցն գումթ և խնամ կալցին : Օ՛ի սոքա , ասէ . 'ի նմանութե՛ Յուդայ և Ա՛ատաթեայ Ա՛ակաբեի անկան 'ի Ճակատ պատերազմի , և նմանութե՛ եղեալոց նոցա : Ապակայն զի աչեի զօրավարի փոքրիկ մանգիկ մի զնորուն զօրդի 'ի հայրենի բարձ գահոյն մատուցանէին , որուա՛ անուն էր յանուն հօր իւրոյ Ա՛րտաւազդ : Ա՛ռաջի Թագաւորին զՀօրն պատիւն 'ի գլուխն գնէին , և զպարապետութե՛ն նոր նուն տեղւ . զի կարի որդի վստահակաւորի էր , և 'ի վստահակաւոր ազգէ . զի այլ յազգին ոչ գտաւ հօժ կու , զի 'ի մեծ պատերազմին մեռան : Եւ զզօրավարութե՛ զգործ յանձն առնէին Ա՛րշաւրայ կամաւորականի՛ իշխանին Շ իրակայ և արշարունեաց գաւառին , և Ա՛նդովկայ իշխանին Աիւնեաց . զի նոքա փեսայք էին տանն մամիկոնէան տոհմին : Եւ հրաման ետուն մեծ եպիսկոպոսապետն Ա՛ղթանէս՝ հանդերձ Թագաւորաւն՝ Ա՛րշաւրայ և Ա՛նդովկայ մնուցանել զպատանեակն զԱ՛րտաւազդ , զի կացցէ 'ի տեղւ նախնեացն իւրոց և հօր իւրոյ , և գործ քաջութե՛ գործեսցէ ամենատեառնն Ա՛ստուած , և առաջի իւրոյ մարմնաւոր բնատերանց [1] արշակունեաց քաջ արանց , և տան և կենաց . և խնամակալ լինի այրեաց և որբոց , և զնորուն գործ քաջութե՛ սպարապետութե՛ անուանի զօրավարութե՛ն յաջորդեսցէն զնմ՛ աւուրս կենաց իւրոց :

Ա՛պա յետ այսորիկ փոխեալ լինէր քաջ արանցն աշխարհաշէնն Խոսրով , Թագաւորն Հայոց մեծաց : Ժողովեալ , աշխար եղեալ , լացին զնմ՛ սահմանք աշխարհաց գաւառաց Հայոց մեծաց . և տարան առ իւր նախնիսն Ա՛նին յեկեղեցագաւառն [2] Վարանա՛ղեաց : Եւ յետ սորա փոխեցաւ և յաշխարհէ մեծ քահանայապետն Ա՛ղթանէս . և ժողովեցան ամենայն աշխարհն Հայոց , և մեծաւ պաշտամամբ , սաղմոսիւք և երգովք հոգևորօք , կանթեղօք և մոմեղինօք և խնկածու հոտովք , արքունական կառօք զնոքն Ա՛ղթանէս , անհնարին բեկմամբ՝ վասն իւրեանց

1 Ցօրինակի միւսմ բնակ պե- 2 Ցերիս օրինակս յԵղիշէայ գտրանց : ասան :

յայնմ ընակ տեառնէն կամ ՚ի հոգևոր վարդապետութենէն որը մնալոց, մեծաւ ըլեայց տրտմութիւնվինչև ՚ի գետըն Ծորգան ՚ի Պարանաղեաց գաւառն յուղարկէին։ Եւ անդ առ մեծի հայրապետին Պրիւդոյն զսուրբ զսակերոն Տանդուցանէին. և ըզմշտակատար զսորա կենդանի յիշատակն ՚ի վերայ կատարեալ, գառնային։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս Թագաւորելոց Տիրանայ յետ հօր իւրոյ. և Թէ որպէս Յուսիկ յետ հօր իւրոյ ՚ի բժանայ կալաւ զաթոռ հայրապետացն, և Թէ որպէս սպանաւ ՚ի Տիրանայ արքայէ յաղագս յանդիմանութեան։

Եւ յանցանելոյ յաշխարհէ Թագաւորին Խոսրովու, Տիրան որդի Խոսրովու առ զԹագաւորութիւն իշխանութենէ աշխարհացն Հայոց մեծաց։ Եւ ընդ նմին սուրբն երանելի մանուկն Յուսիկ յաթոռ զտեղի հայրապետացն Հայոց։ Եւայց գումարեաց ընդ նմա Թագաւորն Տիրան զմեծամեծ նախարարսն ըստ սովորութեանէ օրինակին, զմեծ հազարապետսն ՚ի հազարապետութենէն։ Իսկ ՚ի տոհմէ ամ Հայոց մեծաց, զայ աղարշ, որ էր իշխան Կնձաց. և ընդ նմա Օ արեհ իշխանն, նահապետն մեծի Ծոփաց, և զայ աբրազ Շահունի իշխանն Ծոփաց աշխարհին, և զՆիթ իշխան Հաշտեենից գաւառին ՚ի կամինական տոհմէն. զայ որոթ իշխանն Աճանդայ գաւառին, և զՇահէն իշխանն անձևացեաց տոհմին, և զՓառամ իշխանն Պողթան, և զանասազ իշխանն կողբացոց. զՊորուԹ իշխանն Ձորոց աշխարհին, և ընդայնասայ զիսոխոռունեաց զիշխանն մաղխազունեան տանն։ Եւ զմերոյ տոհմի ազգի իշխանն սահառունեաց, և զԱրա իշխանն գնունեաց։

Ծնոսա զամենեսեան հրամայեաց երթալ ընդ մեծի հազարապետին Աղարշու, զի նստուսցեն զերա

նելին Յուսիկ յաղթունական կառան, և խաղացին գնացին ՚ի սահմանակից իւրեանց ՚ի մայր քաղաքացն Կամրից ՚ի Կեսարիա, հասուցանել զմանուկն Յուսիկ յառաքելական աթոռն հայրապետացն։ Կնաձ նացին եկին հասին ՚ի քաղաքն կեսարացւոց. եւտն ՚ի կաթողիկոսութէ ՚ի Յուսիկն ձեռնադրել, զորդին Վ ըթանայ։ Եւ նստուցին զնա յաթոռն Կեսարիոյն Մազեդոսի, և յաթոռ իւրոյ հաւուն մեծին Կրիգորի. և գարձան անդրէն մեծաւ խնդութէ, եկեալք առողջութէ, յաջողեալք հասանէին յայրատեան աշխարհն։ Եւ զնշխանսն երկոսին, և նոցն Նոփացն, յառաջ արձակէին աւետաւորս առ արքայն։

Կպա երբև լուաւ ինքն արքայն, ընդ առաջ ելանէր նմա ՚ի դաշտն յայն կոյս գետոյն Տափերն կամըրջի, ՚ամ բանակօքն բազմութեամբք։ Կպա ողջոյն տուեալ զցանկալի ողջոյնն միմեանց, անցեալ ընդ կամուրջն Տափերայ, մտեալ ՚ի քաղաքն մեծ Կարտաշատ, յերկեղեցին գառնայելին. և նստուցանէին զցանկալի մանուկն Յուսիկ յաթոռ հայրապետականն։ Սա զհետ հօրն իւրոյ Վ ըթանայ զառաքեալ կան յաջորդեր, հայրական չափոցն նմանեալ ծնունդ, ամենևին զ՚ամ յամի հրեշտակակրօն զանձն ցուցանէր, զ՚ամ ըստ պարգևացն ՚ոյ զընորհացն կատարեր։ Վարիստոսական բանաւոր խաչանցն հովուելով, աւետարանական պատգամաւորքն խրատելով ընձեռեռեցաւ։ Օ ի աւուրըք մանուկ, տիօք առոյգ, և բարձր հասակաւ. գեղով երեսաց պայծառ և քնաղ, զի այլ ոչ գտանէր ուրեք նման նմա ՚ի վերոյ երկրի։ Սուրբ և պայծառ հոգւով, ամենևին ոչ ինչ զբաղեալ ընդ աստիս. իբրև գքաջ սպառազէն Քրիստի, իբրև զախոյեան նահատակ ՚ի տղայութէ տիոց նչկահէր, աներևոյթ թշնամոյն յաղթութէ սպառնացեալ։ Կյն առնուլ կամ աչառել մարդկան բնաւ ամենևին ոչ գիտէր. այլ զբան Հոգւոյն սրբոյ սուսեր ածեալ ընդ մէջ իւր կրէր։ Իսկ ընորհատուր Հոգւոյն լցեալ զնա, գիտութեն էր աղբիւրացեալ զ՚ամ լսելեացն ցուցս ականջացն և սրտիցն երկրին։

Իսկ Թագաւորն Տիրան, և այլ մեծամեծ աւա-

զանկն նախաբարացն , կամ աշխարհն ամ, ոչ ինչ
բան այ կամացն վարս յանձն առեալ՝ իմաստուն ինչ
գնացեալ լինելին : Ոչան զամ մանաւանդ Թագա-
ւորն կամ իշխանքն սպանուԹիս՝ անխտիր ի հեղուլ
զարիւն արդար ի տարապարտուց՝ գործելին , և այլ
մեղս բազումս . և ոչ հայելին ի հրամանս վերնոյն ,
ի հանապազորդ լսելոյն ոչ խրատեալք ի յուշն նո-
ցա առնելոց զայ յոյն : Ո՝ ասն որոց հանապազ ընդ-
դիմացեալ լիներ երանելի հայրապետն Յուսիկն ,
վարժ բանիւքն համեստուԹեն քրիստոսական խրա-
տուն՝ հանապազ յերեսս յանդիմանուԹիւ հարկա-
նելով խրատելով կշտամբելով արկաներ , զսպանուսն
տանջանաց յաւիտենական բարկուԹեն անշէջ հրոյն
դատաստանին պատմելով, բողոքեր : Օ ի ԹԷպէտ
աւուրքք մանուկ եր , այլ զաւագուԹի ծերուԹեան
խրատուն յինքեան ցուցանէր , զհայրենի գործ խրա-
տուականն զառաւելուԹիւ քաջուԹեան կատարէր :
Հարցն նմանեալ ի մանկուԹէ իմաստուԹէ , զծե-
րուԹէ պատիւն պատուական պատուականուԹեամն
զհանձարոյն զուարԹուԹեն ուշուԹեն , իբրև զծա-
ղիկ ի դիտաւորուԹեն հասեալ , վասն ՁմարտուԹեն
մինչ ի մահ մարտնչեր . նախ զանձն ապրեցուցանե-
լոյ , և վասն այլոց հոգւոց զնոյն առնել կամէր : Ո՝ յր
չափ եր երկիւղած ի տեառնէ , զի ոչ զսեր և ոչ զահ
Թագաւորին առ ոչինչ համարեր : Ուակ գիտուԹիւն
այ , զպրուԹէ գրոց սրբոց արուեստաւն լի եր . և առ-
նոյր ի պատուհասել և յանդիմանել . արդելոյր ըզ-
Թագաւորն և զմեծամեծսն չտալ Թոյլ մտանել յե-
կեղեցին :

Ո՝ րդ եւեալ կապեր մեծապէս պատուհասիւք , քա-
հանայական իշխանական բանիւ յանդիմանուԹէն ,
վասն անօրէնուԹէ պոռնկուԹէն և արուագիտուԹէ
և արենհեղուԹէն , զրկուԹէ , յափշտակուԹէ , աղ-
քատատեցուԹէ և այլոց բազում մեղաց՝ որ այսմիկ
նման իցէ : Ո՝ ր ինքն վասն ահի սատիկ օրինացն Տն՝
Թշնամի համարեալ Թուեր որոց հանապազ անցա-
նել զկարգաւքն Ո՝ ծի , և հանապազ ի սմանէ սուրբ
բանիւն այ խոցոտեալ լինելին : Ո՝ ր այս մարտ պատե-
րազմի եր սորա առ հասարակ ընդ ամենեսեան յան-

զիմանուելՁ զամ աւուրս կենաց իւրոց : Որ երբև օր
մի յաւուրց տարեկան, զիմեաց գալ Թագաւորն Տի-
բան հանդերձ այլովք աւագանւովն մտանել յեկե-
ղեցին . իսկ նա ընդդէմ բարբառեալ ասէր . Ջես
արժանի , Տիմ գաս , մի գար ի ներքս : Ա ան որոյ
անդէն ի ներքս քարչէին զնա յեկեղեցւոջն . բրա-
ծեծ եղեալ Ջաղջախեալ քահանայապետան այ սուրբ,
երանելի մանուկն Յուսիկ, կիսամահ կոշկոձեալ ըն-
կեցեալ լինէր : Օ որ բարձեալ պաշտօնէիցն դրան
եկեղեցւոյն ի Բնաբեղ բերդէն արքունի՝ մեծ Ո-
փաց գաւառին , եկին բերին ի գաւառն Պարսից
ղեաց ի գեղն Մորդան . և անդ ոչ ինչ յետ բա-
զում աւուրց հանդեաւ, և եղաւ մօտ առ Պրիգորի
և ընդ հարս իւր :

Գ Լ Ո Ւ Խ ԺԳ·

Ցաղագս Թէ զնարդ յետ մահուանն Ցուսկանն անառաջնորդ լինէր
երկիրս Հայոց , և ոչ որդիքն Ցուսկանն արժանի եղեն հօրն աթոռոյն :

Ա Ւ յետ այսր անցեալ ժամանակաց, զկնի Թոսպա
մահն լինելոյ երանելոյն Ցուսկան, անառաջնորդք
եղեալ՝ իբրև զկոյրս մոլորեցան երկիրն լեզուին Թոր-
գոմական աշխարհին : Ռանզի տուաւ նոցա ոգի մո-
լորութեՁ , ասս՝ զի մի տեսցեն , և ականջս՝ զի մի լու-
ցեն , և սիրտ՝ զի մի խմաստցին գառնալ յապաշխա-
րուեՁ : Ա՛ւ զնաւարային խորխորատ կորստեան գտեալ
հարեալ իւրեանց անձանց Ձանապարհ , կործանե-
ցան անկեալք . զի ոչ այն ոք գոյր՝ որ նոցա մոլեգ-
նութեՁն պատկառուխս արկանէր ըստ մեղս գործելոյ,
այլ անհովիւք եկին : Օ կորստեան Ձանապարհն՝ հա-
մարձակեին ի չարիս՝ կամօք գնացեալք , և կամօք
լեալք որդիք բարկութեՁ . և առանց այ շրջեին յաշ-
խարհի կամակոր ազգ տանն Հայոց երկրին : Ա՛մա-
նեալք լինէին այնմ հօտի խաշանց , որ զպահպանուի

շանցն պահողաց պահապանացն ՚ի բաց մերժեցեալն, և
կամօք իւրեանց կերակուր գէշ թշնամութեամբ գայ-
լոյն մատնեցան, ըստ նմանութեամբ մեծին աթենացւոց
քաղաքին։

Յայսմ ժամանակի զթածաւորն իւրեանց օրինակ
չարի առնէին, և նովին օրինակաւ ձեւել սկսան, և
նոյնպէս գործել։ Օ ՚ի վաղիւզաց, յորմէ հետէ
առին նոքա զանուն քրիստոնէութեան, ըստ միոյն իբ-
րև զկրօնս իմն մարդկութեամբ յանձինս իւրեանց և ոչ
ջերմեռանդն ինչ հաւատովք ընկալան, այլ իբրև ըզ-
մոլորութեամբ իմն մարդկութեամբ ՚ի հարկէ։ Ա եթէ որ-
պէս պարտն էր գիտութեամբ յուսով կամ հաւատով,
բայց միայն սակաւ ինչ ոքք զհանգամանս գիտէին
հելլէն կամ ասորի դպրութեամբ, որք էին հասու ինչ
այնմ փոքր ՚ի շատէ։ Խակ ոքք արտաքոյ քան զգի-
տութեան արուեստին էին այլ խառնաղանձ բազմութեամբ
մարդկան ժողովրդոց նախարարացն և կամ շինակա-
նութեանն, եթէ զցայգ և զցերեկ նստեալ վարդապե-
տացն և ըստ նմանութեամբ ամպոցն իբրև զյորդահեղեղ
ինչ անձրեւաց սաստկութեամբ զվարդապետութեանն ՚ի վե-
րայ հոսեին, ոչ ոք ՚ի նոցանէն և ոչ մի ոչ, և ոչ մի
բան, և ոչ կէս բանի, և ոչ դոյզն յիշատակ ինչ, և
ոչ նշմարանս ինչ զոր լսէինն, և ոչ կարէին ինչ ու-
նել ՚ի մտի։ Ա ամն զի միաբ իւրեանց ընդ անպիտանս
ընդ անօգուտս նեթէ զբօսեալ էին. զոր օրինակ մանչ-
կունք տղայք ընդ մանգուածին և ընդ տղայութեանն
խաղալիկ խանկարեալք, և զպիտոյիցն և զկարեւո-
րացն ոչ ինչ փոյթ արարեալ, սոյնպէս և դեգերեալ
մանչին յանուղղայ կրթութեանն ընդ չքնոտի մտացն ՚ի
հնութեանն հեթանոսութեանց սովորութեանց, բարբարոս
խաւժադաւժ միտս ունելով։ Այս զիւրեանց երգս ա-
ռասպելաց զվիպասանութեանն սիրեցեալք ՚ի փոյթ
կրթութեացն, և նմին հաւատացեալք, և ՚ի նոյն հա-
նապազորդեալք, ՚ի հեռ և ՚ի նախանձ ընդ միմեանս
չարակնութեաբ, թշնամութեամբ ոխութեանց, զմիմեանս
խածատել, և նենգել այր զընկեր և զեղբայր։ Ա-
րիւնք սիրելեաց, և մերձաւորք մերձաւորաց, և ըն-
տանիք ընտանեաց, ազգականք ազգականաց, խոնա-
միք խնամեաց դնեին գայթակղութեամբ։

Ընդ եր տեսանել այր ընկերի արեամբք ծաղա-
ւեալք ըմպելով, ոգովք չափ գային ընտսուցն՝ ան-
խրատ վարս և անհանձար միտս ունելով։ Այս զդիմի
հնութեանէ պաշտամունս ի նմանութեան պոռնկութեան
գործոյն ընդ խաւար կատարէին. և ոմանք զնոյն իսկ
ցանգութեանէ գիշերութեանէ պոռնկութեանէ կատարէին յան-
ձինս իւրեանց։ Ալ ասն այսորիկ ոչ զերծատ իմաստուե
լսէին, և ոչ առաջնորդացն ասելոց զնոյ պատգամն
անսացեալք հնազանդէին. այլ վասն ի նոցանէն
յանդիմանութեանն, ատէին և հալածէին զնոսա և
սպանանէին։ Այս ըստ մարգարէական բանին առ նո-
սա ասելոց, թէ "Ատէին ի դրունս զյանդիմանիչս",
և զբանս սուրբս արհամարհէին։ Վասնզի ոչ էին թէ
որպէս այլոց ազգականացն և հաւատացելոցն կամ
իմաստնոցն ետ նոցա զգիտութեանէ ճշմարտութեանէ հա-
ւատոցն ածաբանիւ քարոզութեանէն, որպէս ոչք ընկա-
լանն՝ առին գոհութեամբ և հաւատացին և վայելեցին
ի չնորհս մարդասիրութեանէն արդեաք, այլ ըստ հրեա-
կան մտացն կուրացելոց և խաւարելոց և կաղացե-
լոցն ի ճշմարտութենէն։ Վերևս և առ այս ազգ մի
տէր բանն մարգարէական յաւագիտական, եթէ
"Ոգիք անմիտք, և ոչ որդիք իմաստունք. իմաստունք
են զբար գործել, և զբարի գործել նոքա երբեք ինչ
ոչ գիտացին"։ Այս դարձեալ ասէ. "Ոգիք եղջերիկք,
խստասիրտք, խստաշունչք, ոչք դառնացուցին զիս
նոքա և հարք իւրեանց"։ Խոպան լքեալք և սոքա,
զի ոչ իմացան և ոչ հաւատացին յաներևոյթն այ
երևելեօքս. յարարածոց աստի չիմացան՝ զարարիչն
և զկարգիչ և զինամիչն առնուլ ի միտ։ Յաճախեաց
զերևոյթ նշանս իւր և զսքանչելիս, մինչև զմարդկայ-
ին բնութենս շարժեաց ի կերպարանս անասնոյ. ուս
տի փրկութենէն նոցա լինէին պատճառք։

Այս մինչև յայս յանպիտան և յանմիտ թափուռ-
րութենէն իսկ, առ այն թափառորաւ Տիրանաւ, ընդ
նոյն իսկ ընդ այս նայեցեալք, անցուցին չարութիք
քան յայմ դարս։ Ալ անաւանդ քան զմա, զի զգլխա-
ւորն առաջնորդն թափառմամբ սպանին, և այնուհետև
ըստ կամաց գնային։ Վասնզի ոչ ոք այն ոք գոյր, յոր
մ խիթայինն յանդիմանութենէն՝ որ նոցա արգել ար-

կանէը գնալ յանօրէն Ճանապարհն ելանել։ Ապա բարձեալ Թողեալ եղէն նոքա ի ձեռանէ տեառն, երթեալք ըստ հետ կամաց սրտից իւրեանց. ապա վայր ոք առաջնորդ և ոչ գլուխ քահանայութեանն։ Սակայն փոյթք եղէն նոքա ոչ վասն Ճշմարտութեան ինչ խնդրել իւրեանց հովիւ կամ առաջնորդ՝ որ կայ ի գլուխ ժողովրդեանն հօտապետութենէն, այլ բանից ընկերք իւրեանց խնդրէին զայն ոք՝ որ ըստ նոցա կամացն վարիցէ։

Յայնժամ խորհուրդ արարեալ Թագաւորին և իշխանացն, և համօրէն խակ աշխարհին, Թէ զո՞ր ժամի այնմ իմիք գտանիցեն. քանզի երկու մնացեալք[1] երկուորիք երկու մանգունք, միումն Պասպ անուն, և միւսումն Աթանագինէս, Ճանաչէին ստահակք և անխրատք, որք ոչ ինչ ըստ իմաստութեէ աստուածճէղէն գրոց, և ոչ վարժ հրահանգօք առաքինութեէցն, և ոչ հօրն իւրեանց չափոց ինչ նմանեցեալին միտ եդեալ, և ոչ ընդ իւրեանց ծնիչսն հայրն Յուսիկ նայեցան, և ոչ մեծին Կրիգորի յառաքինութենն ուշ եդին, և ոչ զիւրեանց հոգևորն պատուականութեէ՝ յաւիտենական կենացն զպատիւ ինչ եդին ի մտի։ Այլ իւրեանց ժամանակի դարուն նմանեալք, և պանճացեալք յիւրեանց յանցաւոր մտոքի ի մարմնաւոր տոհմականութենէն ազգականութենէ, զինուորական զվարսն ընտրեցին։ Ա ման այնորիկ անընտիրքն եղեալք, ի հպարտութեանն խոտեցան ըստ յառաջագոյն տեսլեանն հօրն իւրեանց. ոչ մտին ի լուծ աստուածպաշտութենէն։ Այլ ոչ այլ ոք ի նմին տանէ զաւակին Կրիգորի գոյր ոք. զի այնչափ խակ կային մարմնաւոր զաւակին, և սոքա ինչ ոչ Թէ արժանի հարցն գնացեալ նմանեցին վարուց։ Այլ այլ ոչ ոք էր, որ զառաջնորդութենէ գլխաւորութենէ քահանայապետութենէն վեր[2] կացութենէն ոք տէրունական տանն հրամանատարութենէն կատարեալ, պաշտաման յաջորդէր։

1 ի չորս օրինակս գնացեալ։

Յաղագս վարուց և գործոց մեծին Դանիէլի առն Աստուծոյ, և թէ որպէս յանդիմանեաց զթագաւորն Տիրան, և կամ որպէս պատուհասեալ մեռաւ ի նմանէ։

Ի ԱՅՍ ժամուս դեռ էս կենդանի էր ծերունի սուրբն մեծն քորեպիսկոպոսն Դանիէլ, այր աքանչելի։ Ընակեր եղեալ էր սա մեծին Դրիգորի, վերակացու և գլխաւոր Եկեղեցւոյ Տարօնոյ, Դրիգորի ձեռակից՝ իշխանութեամն կողման մասին գործակալութեն մեծի դատաւորութեամն, ունէր զիշխանութիւն զայն առանձինն. այլ վերակացու և հրամատար տեսուչ և հոգաբարձու ամ եկեղեցեացն Հայոց մեծաց ընդ ամ տեղիս. այլ և ի կողմանս Պարսից յօտար տեղիս քարոզեաց սա, և անթիւս ի մոլորութենէ դարձոյց։

Նա էր սա ազգաւ ասորի. և ունէր սա զաստիճան աթոռոյն գլխաւորութե Տարօնոյ, ի մեծն և նախ զառաջին եկեղեցին ի մայր եկեղեցեացն ամ Հայաստանեաց։ Ընդ ինքն նախ և զառաջին և գլխաւոր տեղին պատուական. զի յառաջ նախ անդ շինեալ էր զսուրբ եկեղեցին, և ուղղեալ սեղան յանուն նոր։ Նոյնպէս և ի ներքոյ քան զնա մարգարէանոցն Յովհաննու, նոյնպէս մօտ ի տուն տեառն Յանգիստ առաքելոցն։ Ընդ այս տեղիք վանն յառաջակարգութե, կանոնաւ ի հայրապետացն և ի թագաւորացն պատուեալք լինէին. որպէս ի Պարսամաղեաց գաւառին եկեղեցին Թորդանու պատուին վանն գերեզմանացն հայրապետին Դրիգորի։ Նոյնպէս և զյիշատակս թագաւորին Տրդատայ թէ կամք թէ ակամայ, որ արժանին լեալ էր նախաճանօթ ի Քրիստոս հաւատոց։ Ո՛ ամն այսորիկ կամ եղև աշխարհին զնախնեաց ժամանակին հարանց եպիսկոպոսաց զայս տեղիս պատուել, ուր սոքա եդեալն էին. զի սիրելի էր աշխարհին, պատուել զյառաջընծայն Քրիստոսի զթագաւորն իւրեանց Տրդատ։ Նոյնպէս և զյառաջ-

եպիսկոպոսն զնախաւաստակն Գրիգորիս. սոյնպէս և ի գաւառն այրարատեան զնախաւկայն Վահէ, ուր Գայիանէն և Հռիփսիմէն կային, իւրեանց հանդերձ գործակցօքն. սոյնպէս առաւել և զնախեկեղեցին։

Այս տեղիքս սմա էին յանձն հանդերձ գաւառօքն յորս էին. հաւատարիմ էր սա այնմ գլխաւոր սեղանոյն, իշխանութեան աթոռոյն հայրապետացն, հաստատուն ուխտին կաթողիկէ եկեղեցւոյն։ Այս էր սորա ընկալեալ գքորեպիսկոպոսութեն ձեռնադրութեան աստիճանին ի ձեռաց մեծին Գրիգորի, յաւուրս յորում կործանեաց զբագինս մեհենից Հռոմայեցւոյ այս կնքեն Աղաղնի, որում տեղոյ Աշտիշատն կարդացեալ. որ նախ եդ զհիմունս եկեղեցւոյ սրբոյ։

Այս էր սա այր զարմանալի, առնէր նշանս և զօրութիւնս մեծամեծս յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Ապա և կօշկօք քայլելոյն գնայր ի վերայ ջուրց գետոց, և ոչ թանային. և ոչ հանէր սա։ Այս յաւուրս ձմերանոյն՝ յորժամ կուտեալ դիզեալ զմեծութիւնն բազմութիւն թանձրութեն ձեանցն կուտակեալ հիւսեալ ձեանցն ի վերայ ձմերայնոյն լերանցն՝ յայնպիսի լերանց ի վերայ ընդ այնպիսի ժամանակի կամէր ուրեք երթալ ի պետս ձանապարհի, յանկարծօրէն ձիւնն ցամաք արջն լինէր առաջի նորա։ Այս զի կամէր ի հեռաստան ուրեք երթալ, իբրև զփայլակն սլացեալ լինէր անաչեսատ. իբրև թռուցեալ յոր կամէրն երթալ ի տեղին, յանկարծօրէն անդ գտանէր։ Յարուցանէր զմեռեալս, առնէր և բժշկութիւնս հիւանդաց, և այլ ևս մեծ նշանս և զօրութիւնս քան զնոյնս գործէր, զորս ոչ քաւեսցէ ընդ գրով նշանարանաց փակել։ Այս բնակութեն իւրոց կայենից էր յանմարդի լերինս, այլ զտեսչութիւնն մարդկան պիտոյից ոչ երբեք անփոյթ առնէր։ Ի հանգերձ մաշկանափորան սանդաղաւոր, և կերակուր իւր արմատք բանջարոց, և գաւազան անգամ ընդ ինքեան ոչ ունէր։ Այս առ բանն այ այնչափ էր հզօր, զի զինչ հայցէին յայ՝ առնոյր, և զոր ինչ ասէր՝ այն լինէր։ Այս կայեանք տեսչութեան իւրոց, յորժամ

յանապատաց ՚ի շէնս իջանէր վասն գործոյ ՚այ , ՚ի գլխաւոր տեղիսն յհռոմէական լինէր : Եւ յաձախ յայն աղքերն ՚ի ներքոյ սարաբարձր մեհենատեղոյն Հերակլայ , որ կայ դէմ յանգիման լերինն մեծի՝ ո՞ր զուարճանալ կարդան , ՚ի բազնին տեղոջէ ՚ի բացագոյն իբրև քարընգէց մի ՚ի ներքոյ կողմն , ՚ի դոյզն ծործորակին ՚ի սակաւ անտառակին ՚ի հացուտ պուրակին՝ որում անուն տեղոյն իսկ Հացեացն դրախտ կոչեն : Այս այն աղբերն է , յորում առնէր յայնժամ Լա վաղ մեծն Գրիգոր զմկրտութիւնն զօրացն բազմաց : Յայնմ տեղոջ էր սորա կայեանք խցկան սրբոյն Գանիէլի . էր դարափոր աբարեալ քնակութիւն . և յայնմ տեղոջ զդիտաւորուն այցելութիւն կատարէր :

Ընդ միաժողով եղեալ մեծամեծք նախարարացն , և ՚ի մի վայր եկեալք , խորհուրդք խորհեցան . հանեցուցին զթագաւորն , ածել զծերունին զԳանիէլ յիւրեանց քանակն , զի ածցեն կացուցցեն զնա իւրեանց գլուխ առաջնորդ , զի նոտցի նա յաթոռն հայրապետական : Եւ յղեցին առ նա Օ՞ոմն իշխանն Ահառունեաց տոհմին , և զԲրտաւան զիշխանն Ամանդայ , և զԱրիէն իշխանն Մատունեաց տոհմին , և զԱրազ իշխանն Գիմաքսենից տոհմին : Եւ եկին նախարարքն հասին գտին զնա Հռիփսեաց գաւառին , ՚ի գեղն եկեղեցւոյն ՚ի Վաղրշ . զի գեռ իմն զգործ միաբանեալ ՚այ գործեր : Եւ առին զնա և ածին առ թագաւորն Տիրան , ՚ի գաւառն Աղձնեաց ՚ի Խառաձոր յաւան : Եւ իբրև մտանէր առաջի թագաւորին Տիրանայ քորեպիսկոպոսն մեծն Գանիէլ , անդէն ՚ի ձեռն առնոյր զկշտամբութիւն յանդիմանութեանն :

Ակսեալ խօսել , յառաջ մատուցեալ , ասէր՝ եթէ ընդէր մոռացարուք դուք զայծ զարարիչն ձեր , և ըզդութ նշանացն և խրատուց , և զաքանչելեացն՝ զոր արար առ հարսն ձեր և առ ձեզ . և դուք դարձայք ՚ի մոլորութիւն կռապաշտութեանն նախնեացն ձերոց , և յաստեղութիւնս և յագահութիւնս և ՚ի զրկութիւնս և յաղքատակերութիւնս , ՚ի պոռնկութիւնս , ՚ի նենգութիւնս և ՚ի միմեանսզրկութիւնս և ՚ի սպանութիւնս : Գործանեաց

ցայք լքեայք կասեցէք կաղացայք յարդարութեան
Ձանապարհաց, և Թողէք դուք զբարեբարին ձեր զՅԾ՝
որ զձեզ յոչընչէ արար և հաստատեաց, և՝ի մոլորու-
Թիւնս ձեր անծանօթք եղերուք դուք՝ի նմանէ։
Ո՞ինչ դուք զձեր անձինսդ անպիտան արարեալ էիք
՝ի կորստեանն, նա եկն՝ի ինդրել զձեզ. զի Թէպէտ
և ինքն իսկ միածին որդին ՅՍ, եկն էջ ուսուցանել
զՀայր իւրոց արարածոց. զի Թէպէտ և ոչ լսեան նմա,
և չարչարեցին և մինչև՝ի մահ, և համբեր, սակայն
և ոչ նա զիւր զօրութիւնն ոչ Թագոյց յուժեքէ, զի
պատՃառք կենաց լիցի ամենեցուն։ Ո՛չ զորս եգիտ
արժանիս և պատրաստականս իւրում յարութեանն,
ընտրեաց, ուսոյց, և արձակեաց քարոզս և կոչնա-
կանս և հրաւիրակս՝ՙի փրկութե՛ լոյս հրաւիրել
զձեզ։

Ո՛ակայն և դուք յայնմ՝ փոխանակ երախտեացն
սպասիս հատուցէք. զորմէ դուք իսկ նախ զձեր
զքարոզն և զՀրաւիրակն զառաքեալ առ ձեզ եկեալն
սպանէք. զայն՝ որ եկեալ զձեզ կոչեր՝ՙի փրկական
ընտրհս արքայութե՛ տեառն մերոյ ՅԻսի Ո՛ՀԻ։ Ո՛ՀՙԻ
Թէպէտ և դուք առ ձերում անմտութե՛՝ տիրապետ
ազգին խորհրդոյն հաղորդեցայք Հրէից. զի նոքա
զտէրն կարծեցին սպանանել, հարքն ձեր զնորին ա-
ռաքեալն սպանին. և զՀետ նորա նորին նմանին չար
չարեցին վասն նոյն նորին իրաց։ Ո՛սկ զկնի սորին ի
թացս այսոցիկ եկին բազմութե՛ք սրբոց վկայիցն ՅՍ,
նոցին Ա՛ռաքելոցն Ճգնակիցք. որք մինչ՝ի վտանգ
չարչարանացն Ճգնեաքք, մինչ յիւրեանց մահն, պըն-
դեալք ցուցանեն ձեզ զՀաւատարմութե՛ն, զի Թերևս
նոքօք զառնայցէք յիմաստութե՛ զիտութե՛ որդւոյն
ՅՍ։ Ո՛ակայն և առ նոսա լցէք կատարեցէք բովան-
դակեցէք զսովորութե՛ սպանութե՛ց ամբարշտութե՛ն
համայն ձերոց։ Ո՛ակայն նորին արեամբն՝ զոր ասացի՝
բազում և պեսպես նշանօք խրատեաց զձեզ, և՝ի մահ
ոչ մնանեաց վասն բազում ողորմութե՛ն. և իւր մեր
ձաւորս արար զձեզ, և խառնեաց զձեզ՝ՙի քնակութե՛
կենդանութե՛ ընտանութե՛ վարդապետութե՛ն իւրոյ,
ուղղութե՛ օրինացն, յառաւելութե՛ որդւոյն սիրե-
լոյ իւրոյ։

Եւ յետ այսորիկ եթող ձեզ զայմ ինասս ձեր, և ետ ձեզ վարդապետս զսիրելիս իւր։ Այլ դուք և ոչ զմի զայն ոչ յիշեցէք, ոչ եդիք ի մտի, ոչ կալայք ի սրտի, այլ յետս դարձայք հրէական ազգին նմանեալք. առէք զնոյն յանձինս ձեր զնոցուն օրինակին գործոց։ Օ՜ի պարտ էր ձեզ յիշել զերախտիսն Տեառն ձերոյ Աստուծոյ, որ ոչ յիշեաց զմեղս Հարցն ձերոց, և ոչ զանօրէնութիւնս ձեր։ Եւ ձեզ անպարտ մոռանալ զձգնութիւնն Հարցն սրբոցն խորատչացն և վարդապետացն ձերոց, որք ուսուցիչքն էին ձեր, որք հանապազ տքնէին վասն փրկութեան ոգւոց ձերոց. և արժան էր ձեզ ունել գութ ընդ նոսա՝ որք հոգեպէս բանին վարդապետութեն երկնեցին և ծնան զձեզ վերստին, և ըստ ձերում եղծման անդրէն դառնալոյ՝ դարձեալ միւսանգամ վերստին ընդերոյ չարեացն ապաշխարելոյ ինքեանք իւրեանց խնդրուածովքն երկնեցին զձեզ դարձեալ, մինչև կերպարանեսցին ընդ Քո՝ ի ձեզ, զի արժանի լինիջիք մտանել յերկինսդ յաջորդութեին անդր։ Պատշաճ էր և ձեզ խնամել զնոցին որդիսն և զաշակերտսն, որ ըստ հոգևոր բանին ըստ ճաճային ծննդեանն էին որդիք, առաջնորդք և վերակացուք ձեր ի տէր. Թող Թէ որ մանրմնապէս իսկ էին նոցա ձեռք, և հոգևոր նոցին գործոց ոչ ինչ պակաս քան զՀարսն իւրեանց։

Ընդ ձեր Թողեալ զնա, և յիշեցուցէք զչարիսն ձեր զառաջինս, և լցէք զչափ մեղացն Հարցն ձերոց։ Որ զի նոքա սպանին զՀարսն սուրբս չարչարանօք՝ վասն բարւոյն չկամելոյ լսել զոգատակարն խրատ ի նոցանէն, և դուք զորդիս և զժառանգս և զգործակիցս և զմանուղս նոցին սպանէք, որք ոչ հաւանեալ գործոց մեղացն ձերոց, առաքս մանուկն Յուսիկն ընդ հայրապետն զաթոռակալն զվիճակակալն զվիճակին Յոաղէոսի առաքելոյն և զնորին նմանոյն Պրիսկոսի։ Եւ դուք զհրէական բարուցն բերէք զօրինակն յանձինս ձեր, սպանումն եղեալ սուղորումն զրկումն. որ պէս և նոքա անխրատք զիւրեանց զառաքեալսն կամ զմարգարէսն կոտորեցին, նոյնպէս և դուք ըստ նոցին օրինակի կատարեցէք։

Ընդ վասն այսչափ ստումն ձերոց և պղծուեց,

բարձցէ ՚ի ձէնջ. բարձցէ և զքահանայութիւնդ ՚ի ձէնջ։ Յրուեսջիք և բաժանեսջիք, և ցրուեսցին սահմանք ձեր որպէս և Իսրայէլ, և անտէրունչք և անխնայ և անխնամք լինիք. և լինիք դուք իբրև զնաչինք, զի ոչ դուցէ նոցա հովիւք։ Ամանեսջիք իբրև զՀօտ ՚ի ձեռս գաղանաց, և անկիջիք ՚ի փառաց ձերոց. և ՚ի ձեռս օտար Թշնամեաց մնանեսջիք դուք ՚ի գերութիւն և ՚ի լուծ ծառայութեան, և ոչ բարձցի երբէք կամ պակասեսցէ լուծ ծառայութիւն ՚ի ձէնջ. և ոչ երբէք պակասեսցէ լուծ չար սարկութիւն ծառայութենն ՚ի պարանոցաց ձերոց. Հաշեսջիք և մաշեսջիք ՚ի ցանկութիւս ձեր։ Որպէս պատառեցաւ Իսրայէլ, և ոչ կարկատեցաւ, սոյնպէս և դուք ցրուեսջիք և կործանեսջիք. և այլք վայելեսցեն ՚ի վաստակս ձեր, և այլք կերիցեն զօրութիս ձեր. և ոչ ոք գտանիցի, որ փրկեսցէ զձեզ. և ոչ հաձեսցի ընդ ձեզ տէր, և ոչ նայեսցի և ոչ փրկեսցէ այլ զձեզ։

Այլ զի կոչեցէք զիս ելանել գալ առ ձեզ, զայս ՚ի համի կամիք լսել դուք լինին։ Այթէ իմ էր զայս ՚ի պատմել ձեզ, սակայն այս ՚ի լինելոց էր ձեզ վասն սպանման արդարոյն մեծին մանգանն Յուսիան առաքինւոյն առաջնորդին ձերոյ. որ էր ՚ի տանէն զաւակին Լևիպորոյ. զի այս ՚ի լինելոց է ձեզ, զի այսպէս եղոյց լինէ ՚ի։ Այլ զի յղեցէքդ առ իս, եթէ ևկ կաց մեզ գլուխ և առաջնորդ, զիաՓրդ լինիցիմ առաջնորդ այնոցիկ՝ որք ոչ դառնայցեն զկնի տեառն. կամ զիաՓրդ կայցեմ գլուխ ազգի, զորս եթող տէրն ՚ի ձեռանէ։ Կամ զիաՓրդ բառնայցեմ զձեռս իմ առ ողթիւք առ ՚ի վասն այնոցիկ, որոց ձեռք իւրեանց շաղախեալ են արեամբ սրբոց տեառն. կամ զիաՓրդ մատուցանեմք աղօթս պաղատանս այնոցիկ՝ որք դարձուցին զերկուսիս առ տէր, և ոչ զերեսս իւրեանց։ Կամ զիաՓրդ եղեց բարեխօս վասն այնոցիկ, որք նըւաճեցինն. կամ զիաՓրդ խօսիցիմ ՚ի հաշտութիւն վասն այնոցիկ, որք փախուցեալն են և ոչ կամին դառնալ. որոց ինքնին տէր նիւթեաց պատրաստեաց զՒմ չարիս ՚ի վերայ նոցա վասն այսորիկ, զի ասացիք Թէ ոչ տեսանէ տէր զայս ՚ամ, և որ ինչ նման է սոցին բանիցս։

Ո՛չ այս բանս խօսեցաւ սուրբ Ծերունին Դանիէլ քորեպիսկոպոսն առաջի Թագաւորին Տիրանայ, և առաջի իշխանացն, պետացն և ամ զօրացն։ Այլ մինչ դեռ խօսէր նա զայս ամ, հիացեալ զարմացեալ Թագաւորն միտ դնելով լուա ևեթ կայր։ Այլ եղև իբրև զայս ամ լուաւ, բորբոքեալ ՚ի բռնաւորութիւն դառնութեամբ ամբարշտութեամբ ցասման իւրոյ. զոր տայր հրաման անդէն խեղդամահ առնել զնա։ Ո՛ր իբրև լուեալ անդէն սպասաւորացն, կատարեցին զգործ հրամանին վաղվաղակի։ Բայց մեծամեծք նախարարացն աւագանին շատ եդին ՚ի մտի արքային, զի մի՛ կատարեսցէ զչարութիւն կամացն իւրոյ. առ դառնութեամբ սրտին ցասման, առ զայրուցս բարկութեանն, ոչ ինչ անասց նոցա. այլ Ճոպան ՚ի փողս եդեալ, խեղդամահ արարին զնա։ Ա՛յսպէս կատարեցաւ սուրբն Դանիէլ։

Այս բարձին զմարմին նորա բազմութեամբ մարդկան, որք տեղեակ էին նմա, և գիտէին զնա. և կամեցան մեծարել զնա ընդ ոսկերս սուրբ վկայիցն Քրիստոսի։ Ա՛պա ինքն յայտնեալ երևեցաւ առն սրբոյ աշակերտին իւրում, որոյ անուն կոչէր Աւիփան, զի մի՛ ՚ի պատիւ առցեն զոսկերս նորա իբրև զայլոցն. այլ տարցեն ՚ի տեղին՝ ուր ինքն հրամայեաց, և ծածկեսցեն ընդ հողով։ Ո՛չ այսպէս յայտնեալ բարբառեցաւ նոցա. զի եթէ տերունական մարմինն, ասէ, ՚ի գերեզմանի ծածկեցաւ աւուրս երկուս մինչև ցօրն երրորդ՝ յորում յարեաւ առ հայր իւր, որչափ ևս առաւել պարտ է մերում հողեղէն մարմինս ընդ հողով ծածկել։ Ա՛պա բարձին զմարմին նորա որ սիրելի աշակերտն, որոյ գլխաւորին անուն էր Շաղիտա, որ ՚ի նմանէ իսկ աշխարհին Կորդուաց վարդապետ տուեալ էր. և երկրորդին անուն Աւիփան, որ գաւառին Աղձնեաց և մեծաց Ծոփաց ՚ի նմանէ իսկ վարդապետեալ էր, և ընդ նոսա պաշտօնեայք բանակին։ Այլ գնացին տարան. եդին զմարմինն ՚ի տեղւոջն՝ ուր յառաջագոյն էր կայեանք խոյկանն իւրոյ յերկրին Ցարօնոյ, որ էր մայր եկեղեցեացն Հայոց, մօտ յակն աղբերն՝ ուր առնէր Վրիպոր զմկրտութեան աշխարհազօր բազմութեանն, ՚ի տեղւոջն՝ որ

անուանեալ կոչի Հայեցաց պլսական ։ Յայնմ տեղւոջ ծածկեցեալն զմայրն սրբոյն Գանիէլի ընդ հողով, ըստ յառաջագոյն տեսլեանն ըստ հրամանի նոցա տուեալ ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս որդւոյն Յուսկանն, թէ որպէս ընթագրեալ ընդ ոտն հարին ղքահանայութեանն ոյ զպաշիւ ։

Ապա խորհուրդ արարին մնատուցանել զորդւն սրբոյն Յուսկան ՚ի քահանայութեն հարցն վարդապետութեն ։ Այլ առանց իւրեանց կամացն ըմբռնեցան, և բռնաբարեցան ՚ի միաբանութեն եպիսկոպոսացն . զի կալեալք , ակամայ առեալք զձեռնադրուն սարկաւագութեն՝ հարկեցան Պասին և Գաթանագենէս ։ Որոց հարեալք զաւանդն հոգևորն պատուի , անձամբ զանձինս իւրեանց խստրատուր [1] յարուեստն զինուորութեն զինեցան , և յերկիր կործանեցան ։ Նա ընտրեցեալն զերկրաւոր կեանս , և առին և ս իւրեանց կանայս զքոյր Թագաւորին, և մերժեցեալն զանձինս իւրեանց ՚ի ժառանգութէ այ ։ Այլ անուանք կանանց նոցա, անուն կնոջն Պապայ՝ Գ արազդուխտ , նոքա անորդիք անղաւակ եղեն յաշխարհէ . անուն կնոջն Գաթանագենի՝ Խամբիչն , ՚ի սոցանէ ծնաւ այր աքանչելի և զարմանալի ՚Ներսէս , որ առ յապայն է կաց քահանայապետ ։

Այլ յայնմ ժամանակի ոչ ոք գոյր , որ առաջնոր դէր նոցա զքահանայապետութէնն ։ Ապա խորհուրդ արարին՝ թէ զի գոցեն իւրեանց առաջնորդ . ապա կամ եղև ամենեցուն առ հասարակ , զի ՚ի նմին տանէ իշխանութէնն Կրիգորի գոցեն , որ կալցի նա զաթոռ հարցն ։

1 Յերկուս օրինակս խոստատուր ։

Յաղագս փառհնայ , որ կալաւ զաթոռ Հայրապետացն :

Յայնմ ժամանակի համարեցան արժանի զփառն ոմն երիցս , ի գաւառէն Տարօնոյ , ի մեծէ մարզարէանոցէն Յովհաննու , որ էր նախ շինեալ տուն աղօթից և խնդրուածոց ի հանգիստ սրբոցն , զի տեղին այն նման էր հաւատացեալ : Այսպա կոչեցին զնա առ արքայն . և առաքեաց զնա պատարագօք թագաւորն , և հրովարտակօք և ձոխ իշխանօքն՝ որ ընդ նմա առաքեցանն : Մեծ զօրավարն Հայոց՝ որում անուն էր Վասակ , ի մամիկոնեան տոհմէն . և Մերհենդակ ըռըշտունի , և Գնդովիկ սիւնի . և Գրշաւիր կամսարական , մեծք և գլխաւորք նահապետք . և տասն այր այլ , արք պատուականք , առնին զնացին զփառն ձգ ի մայրաքաղաքն Կամրջոց ի Կեսարիա , և անդ ձեռնադրեցին զնա ի կաթողիկոսութիւն Հայոց մեծաց : Եւ գան դարձեալ յիւրեանց աշխարհն խաղաղութիւն :

Եւ նստաւ փառհն յաթոռ հայրապետական սակաւ ժամանակս . և այլ ինչ չհամարձակեր նա կամ խրատել ինչ , կամ յանդիմանել զմոլորութիւն ինչ զուրուք կամ զամբարշտութիւնս : Այլ միայն զիւր անձն սուրբ պահէր , և ի հարկէ ընդերկր անօրէնն Թագաւորին , և ըստ նորին կամացն երթեալ հնազանդէալ : Եւ յետ այսորիկ հանգեաւ , և յաւելաւ առ հարս իւր . և առեալ պաշտօնէիցն եկեղեցւոյ բանակին զմարմինն , գնացեալք ի գաւառն Տարօնոյ՝ տարան ի յագարակն մեծի մարգարէանոցին Յովհաննու , որ էր ինքն ի կենդանութեանն իւրում յառաջագոյն բնակեալ . և անդ գեղեցիկ շիրիմ գործեալ , և զսորա ոսկերս ծածկեցին :

*Յաղագս Ընտակայ՝ որ էր ի ջաւակէ Աղբիանոս եպիսկոպոսի, որ յա-
ջորդեաց զտեղի հայրապետացն աթոռոյն. և կամ որպէս երկիրն Հայոց
առ Թողեալք զիւր և զպատուիրանս։*

Ա՛ՊԱ յայնմ ժամանակի միաբան խորհեցան աշ-
խարհօրէն խորհուրդ, եթէ ուր պարտ իցէ զՀայ-
րապետութենն զկաթողիկոսութենն ունել։ Ա՛պա իբ-
րեւ ոչ ոք գոյր ի տանէն Գրիգորի այնմ արժանի, ա-
պա նմանեցուցին զընտակայն որ անուն ի տոհմէ զա-
ւակին Աղբիանոս եպիսկոպոսին։ Եւ տան զնա ի
ձեռս իշխանին մարզպետութենն, որում անուն իւր
Հայր կոչէր. և յաւագաց գումարեն ընդ նմա զնշ-
խանն Վարդմանայ ձորոյն. և առնեն ընդ նոսա այլ
տանն նախարարս. և յուղարկեցին զնա մեծաշուք
պատուով յերկիրն Դամրաց ի մեծ քաղաքն Կեսա-
րիա։ Ընդ ձեռնադրեն զընտակայն ի կաթողիկոսու-
թիւն Հայոց մեծաց, և պատուով դառնան առ թա-
գաւորն։

Եւ յաջորդեաց զտեղի հայրապետացն Ընտակայն.
և սա նմանեաց վարուցն Գառնեայ։ Ընդ այնոցիկ
սա աշխարհի ըստ նմին օրինակի։ Բայց որոց հո-
վուէրն՝ չեզեալք ունէին ինչ խրատու ձշմարտութենէն,
այլ յանդիմանեալք՝ հոլանեալ գործէին զմեղս հա-
մարձակութեամբ՝ առանց խիթի յամ չարիս դարձեալք,
Թողեալք զտէր և զպատուիրանս նորա առ հասարակ
Թագաւորն և նախարարքն և իշխանքն։ Եւս չար
քան զնոսա առ մարդիկ մարդկանն ամբարշտեալք,
ի հնութենէ առաջնոյն գործոցն հարցն իւրեանց դար-
ձեալք, ի փոքրկանց մինչև ցմեծամեծս ի չայս էին
հարեալք և ի սոյն կանխեալք։ Վ՚ան այսորիկ ամի
բարկացեալ տէր ածէ ի վերայ նոցա՝ եթող ի ձե-
ռանէ, արար զնոսա կոխան ի չարուչորեցոյն ի վերայ
նոցա թշնամեաց նոցա։ Վ՚անզի ի ժամանակաց ի
Թագաւորութենէն Տրդատայ, յորմէ հետէ զնորն
Ճանաչելոյ՝ արար խաղաղութիւն, և լուեցոյց չարչ

զԹշնամիս նոցա, զի ցածոյց տէր զմարտ պատերազմացն ի սահմանաց նոցա, և մինչև յայն ժամանակ ոչ ընդ ումեք բանք գոյին ամբոխի կամ խռովութիւն, և ի մեծի խաղաղութիւն էին բնակեալք։ Այսպ ի ժամանակին յայնմիկ յարոյց զօրացոյց զգրգռութիւնս սահմանակցօք շուրջ յիմ կողմանս զԹշնամիս նոցա. և ոչ ի ոք ի Թագաւորացն Հայոց ոչ ոք գտանէր նոցա բարեկամ, այլ ամենեքեան Թշնամիք։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Ցաղագս Հայր մարդպետի, որ տայր կոտորել զազգս նախարարացն։

Բայց յայնմ յամսիտ Թագաւորութիւնն ժամանակի ոչ միայն Թշնամիք Թշնամեաց, և բարեկամք բարեկամաց և ընկերք ընկերաց դաւաճանութիւնս մահաւորութիւս սկսան յարուցանել ի մէջ հայաստան երկրին, և բեւր ազգի ազգի Թշնամութիւս գործէին։ Այն զի անկաւ ի նոսա խռովութիւն ի տեառնէ, այս պղծութիւն և ոգի մոլորութիւն. զի նախ միմեանք քանդեալք աւերեցան վասն անօրէնութիւն իւրեանց։ Բայց քան զամենեսին աւելի այր մի անօրէն և այսամուտ, որ աւելի ընդ ազգս նախարարացն գրգռէր զԹագաւորն Տիրան։ Այս ինքն որ ունէր զպատիւն մեծի մարդպետութեն, այր նենգքինի՝ չարասիրտ չարախորհուրդ չարագործ, որում Հայր կոչէին։ Օ քաջ զուսմն ի նախարարացն եւս քաւութիւ առանց ինասու կոտորել, և խանգարեաց զմեծ տէրութիւն Թագաւորութեանն։ Այնաւանդ աւելի զերկու տոհմին զաւազս տայր իւրով չարախօսութիւն հանել ընդ սուր, և անհնդ առնել միահաղոյն զտոհմին Ուշտունեաց և զտոհմին Գնծրունեաց. քառնայրին ի միջոյ առանց ամ ինասու և յանցման, մինչ անդամ և զէգն կոտորելին ազգացն։ Յայնմ ժամանակի ի գայթակղի գտանէին ի դայեակս մանկունս փախստեայս, զԹա-

չատ որդի Աբէլընդակայ ըռըշտունեաց. և միւս ևս Շաւասպ որդի Վաչէի արծրունեաց. տղայք ստէպ դիմեալք, զոր ածէին առաջի Թագաւորին: Իբրև տեսանէր, տայր հրաման հանել փողոտել զմանկունսն. զի նոքա ևեթ ձեռք մեացեալ էին յազգացն: Նա անդ դիպեալ Ներսեհազդ և Վասակ, արք՝ի մանկունեան տոհմէն, որք էին զօրավարք համ զօրացն Հայոց, որք յարուցեալք անկան՝ի վերայ մանկանցն տղայոց, մէն մի յանթի հարեալք՝ի դուրս գնացին. զկնի՝ի վեր առեալք, կոտոր պատրաստէին՝ի վերայ այնց մանկանց մեռանել: Օ՛ի թէպետ և մնուցանէին նոքա զորդին զարքային զԵրշակ, սակայն զարեալք ընդ գործ ժամանակին՝ Թողին զանձն իւրեանց զԵրշակ, և գնացին՝ի բաց՝ի բանակէն արքունի: Նա չոգան յաշխարհն իւրեանց յամուրս Տայոց. և անդ նստան առն քաղուամ ընտանեաւք իւրեանց, և Թողին զայլ զտուն իւրեանց: Նա մնացան նէին զայն մանկունսն, զՇաւասպն և զՏաճատ. և ետուն նոցա զդաստուրս իւրեանց՝ի հնութեան, ուստի դարձեալ միւսանգամ ազգն այն սերեցան. և ոչ խառնէին նոքա՝ի խորհուրդս Հայոց մինչև՝ի բազում ամս:

ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս որդւոցն Յուսկանն, Պապայ և Ամանագենին, թէ զինչ կամ որպէս սատակեցան յանօրէնութենէ իւրեանց:

Ազէ որդիքն Յուսկանն, Պապն և Ամանագենն, յաճախեցուցեալ զկեանս իւրեանց վարեցին. յանօրէնութենէ և յամբարշտութենէ շրջէին: Նա զամ աւուրս կենաց իւրեանց՝ի մեծի յանդգնութենէ էին, և ոչ երկեաւղ ոյ առաջի աչաց նոցա. և՝ի բազում անառակութենէ և՝ի գինւոյութենէ գնային, և զկարգն ոչ արհամարհեալ այսպանէին: Նա էին նոքա յերկրին

Տարօնոյ Աղկեղեցւոջ յաւանին Աշտիշատ. ուր զառաջինն էր շինեալ զեկեղեցին ի Հաւոյն նոցա Գրիգորէ: Յայն գետւ երկոքեան եղբարքն երթեալք հասանէին Պասին և Թանագէնէս: Եւ բազում հատեալ յարքշտուքէ, զնոյ զտաճարատն այսին առնէին. և երթեալք երկոքին եղբարքն մտանէին յեպիսկոպոսանոցն՝ որ էին անդ, և ընդհեին անդ գիւնի բոզոք և վարձակօք և գուսանօք և կատակօք. զսուրբ և զնուիրեալ տեղոքն քամահեալ, կոխան առնէին:

Եւ մինչ էին յուրախութէ մեծի, բազմեալք էին ի ներքս եպիսկոպոսանոցին ուտելին և ըմպելին, յան կարծակի հրեշտակ տէն երևեցաւ ի նմանութէն փայլատական, և հարեալ սատակեր զերկոսեան զեղբարսն միանգամայն ի բազմականէն անդ: Եւ այլ մարդիկն՝ որք էին անդ, որք տաճարակիցք էին ուրախակիցք և բազմականակիցք էին, որք միանգամ անդ դիպեցան, առ հասարակ Թողին և փախեան, և երկին առ տաքս ի տաճարէ անտի: Եւ յահէն մեծէ այլ ոչ եւս ոք ի նոցանէ դարձաւ անդրէն. և ոչ ոք իշխեաց բնաւ այլ մարդ ի մարդկանէ մտաբերել մտանել ի ներքս, և ոչ ի դուրսն հուպ երթալ և դնել, քանզի ի բաց մնաց ի փախչելն նոցա. և ոչ յայլ աւուրս ոք առ դրօքն իշխեր անցանել:

Եւ Պասին և Թանագէնէս երկոքեան եղբարքն այսպէս սատակեցան. անկեալ դնէին ի ներքոյ եպիսկոպոսանոցին ի տեղւոջն բազմականացն: Եւ դրունք տաճարին ի բաց կային, և ոք հուպ չիշխեր երթալ. մինչև նեխեցան մարմինք նոցա և կողոպտեցան, և յաղկեցան. քակեցան լուծան ի միմեանց, ցրուեցան ոսկերք նոցա: Եւ բազում ամիսք անցանէին ի վերայ իրացն, ապա իշխեցին մտանել ժողովել բառնալ հանել անտի զոսկերս նոցա. և գտանէին զնոսա լոկ ցամաքեալ զկձղացեալ զոսկերս նոցա. և հանէին յայգւոջն եկեղեցւոյն, որում Աբարակին կոչեն: Բայց մնաց Թանագէնէի որդի ի Բամբշնէ ի քեռէ Թաւգաւորէն, և անուն նորա Ներսէս. որ եկաց յաթոռ հայրապետացն առ յապայ ամ երկրին Հայոց: Բայց Պապայ ի բուն ի կնոջէն ոչ մնաց, այլ էր նորա հարճ մի ի գաւառէն Տարօնոյ, ի Հացեաց գեղջ

կարձապատասխան. և մնաց որ ի հարձէ անտի ի Հայոց եկեալցոյն, որում անուն իւր [1] որդւոյ հարձին Ալբիկ կոչէր։

ԳԼՈՒԽ Ի.

Յաղագս Տիրանայ Թագաւորի, թէ որպէս մատնեցաւ յերկմէ սենեկապետին Փիսակայ սիւնւոյ. և որպէս կորեաւ և գերեցաւ ի Վարազայ, և կամ որպէս ամ երկիր ընդ նմին գերեցաւ։

Ընդ դէռ բարեկամութիւն էր ի մէջ Թագաւորացն երկոցունց, ի մէջ Թագաւորին Հայոց և Պարսից։ Ապա յետ յաշխարհին ատրպատական որում ասի նուն կոչեր բարձագահին իւրում՝ Շ ապուհ Ալ արազ։ Ընդ մինչ դէռ ևս յոյժ խաղաղութիւն էր ի մէջ Թագաւորացն երկոցունց, անկաւ ի միտս խոհուեմութիւն ոմինչ բանիւք՝ արամբ միով անարգաւ, որ ոչ ինչ պակաս քան զդէմ էր մոլորութիւն, որոյ անուն Փիսակ կոչիւր. որ սենեկապետն էր արքային Տիրանայ, ազգաւ սիւնի։ Այս դէսպանագնացեալ էր առ Ալ արազ Շ ապուհ, զոր Թողեալն էր սահմանապահ արքային Պարսից յատրպատական աշխարհին։

Օ այնու ժամանակաւ ձի մի էր երիվար արքային Տիրանայ, զորմէ կարի զարմանային։ Այս էր ձին գունով ձարտուխ ձանձկին. սա լի էր քաջութիւն, անուանի և հոյակապ, մեծ և բարձր երկայն քան զնամ ձիս, և տեսանելով քան զայլս գեղեցիկ, զանազան՝ որ համեմատ նմա այլ ոչ գտանէր։ Օ որմէ յերթալն իւրոյ դէսպանութենէն՝ սենեկապետն արքային Փիսակ մատնեաց զձին Ալ արազայ, վասն զի բարեկամացեալ էր ընդ նմա. և ի նմանէն ինքն Թուղթ առեալ, քեռեալ մատուցանէր արքային Հայոց։ Օ որմէ չկանանալ, տալ ոչ առնոյր յանձն։ Այլ վասն զի կասկածէր յառնէն զի գոյժ խոհուեմութիւնչ ի մէջ Թա-

[1] Ցամ օրինակս որում անուն էր որդւոյ։

գաւառացն երկոցունցն արասցէ, ՚ի խնդիր անկանելոյ զնոցա գոյն ձի, զնոցա նշան, զնոցա պատկեր, բաց ՚ի մեծ ծուլթենէ՝ զի այնչափ ուրեք ոչ գտանէր, զնոցա նման զնոցա կերպարանս ձարտուկ ձանձկին գտեալ, և հանդերձ հրովարտակօք և պատարագօք ՚ի ձեռն մեծ լեկան փիսակայն առ իշխանն Հ[այոց] տրպատական առ Վարազն արձակէր։ Եւ միտս դնեալով խորհուրդ առնէր. զի առասցես, ասէ, եթէ այս ինքն է զոր խնդրեցեր, զի առ սէր ոչ խնայեաց ՚ի քէն։ Իսկ նա յորժամ հասեալ առ Վարազն, յայտ առնէր զիրս խնայութեանն, ՚ի գրգռութենէ ջանացեալ՝ ոչ կամէր բժշկել զնենգախօսութիւնն իւր. այլ ևս քան զևս սրեալ զչարախօսութիւնն իւր, ասելով եթէ այնչափ ՚ի հեռ և ՚ի նախանձ, ՚ի չարակնութենէ և ՚ի թշնամութենէ, ՚ի յատելութենէ և ՚ի չկամութենէ, յերկմտութենէ և յաներկիւղութենէ առ Թագաւորն Պարսից և առ ամ զօրսն Պարսից արքայն Հայոց Տիրան, մինչ անգամ վասն կաշոյ միոջ խնայ արարեալ՝ Թագոյց, և զքեզ ծաղր արարեալ, և այլ ընդ այլոց զմիտս գողացեալ քո. զոր յիմ ձեռն ետ ածել, առ քեզ առաքեաց։ Եւ ոչ այդ միայն է, ասէ. այլ ՚ի կայսր և ՚ի զօրս նորա յուսացեալ, խորհի հանել զթագաւորութենէ Պարսից յազգէն Վասանայ. զի ասէ, Թէ մեր լեալ է և հարցն մերոց այն տէրութենին։ Զդէպ ասէ, Թէ չեմ ծուլալոց՝ մինչև զարձցի պատիւ հարցն նախնեաց. զնախնի զթագաւորութենին այսրէն առ որ դի և առ զաւակ նոցա յազգս իմ և ՚ի տունս իմ և յանձն իմ դարձուցանեմ։ Եւ այսչափ և այսպիսի բանիւք գրգռէր զնա փիսակն անօրէն ՚ի վերայ նոցն իւրոյ քնակի, և նիւթեր զմահ ՚ի վերայ իւրոյ թագաւորին։

Այսպա երբեմն զայս ամ լուաւ Վարազ Շ ապուհ ազգպատական մարզպան ՚ի կատաղասիոս ՚ի շնաբերանն փիսակայ, վաղվաղակի նամակ ամբաստանութեան գրեալ Վարազայ յարքայէն Հայոց մատուցանէր Հ[երսեհ] արքային Պարսից։ Եւ այնչափ զայրացոյց գրգռեաց յուզեաց գրգռեաց սրտմտեցոյց բարկացոյց զթագաւորն Պարսից ՚ի վերայ արքային Հայոց, որ ապա առ հրաման ՚ի նմանէ, զի չև է հնար գտանել

մարթել Հանապարհս, մեքենայիւք գայթակղուԹիս դնել՝ որսալ ըմբռնել զարքայն Հայոց։ Եւ մինչ դեռ խաղաղուԹիւն էր ի մէջ Թագաւորացն երկոցունց, բարկուԹեն ետն դրդռեաց յուղեաց զվրէԺս, զի խնդրեսցին սուրբ արիւնք մահուան երկուց մեծացն քահանայիցն առաջնորդացն յանօրէնն Տիրանայ։

Ապա յայնմ ժամանակի Ա արաքն արձակէր դեսպան առ արքայն Հայոց, ի հաշտուԹիւն խաղաղուԹիւն դաւուղ խօսել ընդ նմա. զանձուկ սիրոյ պատճառեալ, համարձակուԹիւն խնդրէր՝ զալ նմա առ նա։ Իսկ իբրև լուաւ զայն Տիրան արքայն Հայոց, փութապէս վաղվաղակի մեծաւ ուրախուԹիւ առ ինքն կոչել հրամայէր։ Եւ մինչ չև նա եկեալ էր, խորհեր արքայն ընդ իւր ծառայն ներքինին ասացաւորն իւրոյմ սենեկի. ասէ. Արժան է մեզ, այր որ գայ առ մեզ՝ զբօսուցանել և ուրախ առնել որովք և բաղմականօք, և ամ պէսպէս վայելչուԹիւք։ Արդ ոչ ելիցէ այնպիսի ինչ արժան է զմեծ ինչ որսոյ տեղիս ի մերում երկրի ատ նմա տեսանել՝ վասն չաբանուԹիւ յաչաղանաց չարաբարուԹիւ նենգուԹեն ազգին պարսկաց. այլ նմանեցուցեալք տեղիս դոյզնա-դիւտ որսոյ ինչ՝ որով լոկ զբօսուցուք զնա, և մի որ սասցուք զառատ ինչ որսոյ զտեղիս, և զի մի մեծ ինչ նախաձիրս որսոյ կոտորեալ առ ի ցոյցս առնելոյ։ Արդ վարկպարազի արասցուք, ասէ, վասն դառնացող ջուր ազգին չարուԹեն դառնացող ազգին։ Արդ յերկրին Պահունեաց, յոտինն մեծի լերինն Ա՝ասեաց, տեղին զայն որսասցուք. տեղւոյն՝ որում ասնուն կոչի քաղաք Ղևորսք։

Ապա եկն ետ Ճ ապրիլ Ա արաքն երիւք հազարօքն, և յանդիման եղև Թագաւորին յերկրին Պահունեաց. և մեծապէս մեծարեցաւ ի նմանէ։ Եւ այն բանքն, որ վասն որսոյն ի Թագաւորէն ասացաւ, վաղվաղակի յոտինն զօրավարին Պարսից հասանէին ի բերանոյ շորիկն շոգմոգն տիրանենկն և տիրադրուժն տիրասպանուն տիրամանկէն Փխակայ, յայն յաշխարհակորոյս յատնէ անտի. և աւուրս սակաւս ուրախ լինէին ի միասին։ Արդ իշխանն Պարսից զՃշնամուԹիւնն, զոր ունէր ի ներքոյ, խորամանկ

գեալ ծածկեալ մեքենայեալ առագաստեալ բերեր , և առներ սպաս զգաստ կատարել :

Այլ ի ժամանակին յայնմիկ այնպէս դիպեցաւ , յայնմ ժամանակի զօրավարքն չէին անդ , այլ սարտուցեալ էին . և այլ մեծամեծք նախարարացն , և աւագ տանուտերք ազատանէին . սոյնպէս և զօրքն արքունի յիւրաքանչիւր տունս յիւրաքանչիւր կայեանս յիւրաքանչիւր գաղարս գաղարեալ էին : Այս ոչ ոք էր՝ որ մնացեալ էր առ Թագաւորին , և ոչ գունդ և այրեվէի . բայց միայն սակաւ սպասաւորօք Հանդերձ , և որոցն պառականօք , և ռահվիրայ մարդկան , և խառնաղանջ խորանապահ զօրուն , և ռամիկապատ զօրօքն , և տիկնանն Հանդերձ և արքայորդին Մանուէլն Կրշակ : Այսպէս սակաւուք դիպեալ ի ժամանակին յայնմիկ , զի Թէպետ և տեսեալ Հարուստ գնդաւ եկեալ զօրավարն Պարսից , զի էին ընդ նմա սպառազէնք վառեալք արք իբրև երեք հազարք , ոչ ինչ խիթացեալ զգուշաւ անկասկած լինէր : Վասնզի տեսանէր զնա իբրև ի պատճառս խաղաղուէ եկեալ , մեծաւ պատարագօք և պատուական ընծայիւք և մեծաշուք մեծարանօք :

Այս իբրև ոչ ինչ բազում աւուրք ընդ միջ եղեն , յընթերիս կոչեն ի հայ հրաւիրեալ զարքայն . ի սպատիս մեծարանաց կոչեր : Այսպ իբրև ընդ գինիս մտին , քաջ արբեալ լինէին Թագաւորն և որ ընդ նմայն էին , զօրն դարանակալ յանպատրաստից յանկարծօրէն յայլակարծուց զնոսա յանկարծուստ յիւրաքանչիւր բազմականի ի վերայ հասեալք ըմբռնէին , և զահանափակ շերտաւորացն պատէին զԹագաւորն Տիրան : Այս կալեալ կապեալ զոտս և զձեռս նորա ի կապս երկաթիս , և զանասէն՝ զոր դահանէր՝ աւար Հարկանէր . և զգանձս և զտաճարաւածս զկին և զօրդիս Թագաւորին , զոր գտին ի բանակին , խաղացուցին յերկրէն Պարսից :

Իբրև եկին հասին ի գեղ մի , որում անուն Պալարիս կոչէին , յորժամ եկին եմուտ զօրավարն Պարսից ի ներքս ի գեղն Պալարիս , ածէր կապեալ զարքայն Տիրան ընդ իւր : Այս ասէ Վարազ . Զի՛ տեսիք ածուղ , որով երկաթ շղացուսցուք , զի զայս

խարեացուք զարքային Հայոց։ Նա անդէն բերին առ Ծուղ, որով խարէին զԱյան Տիրանայ։ Ապա ինքն խօսել սկսաւ Տիրան, և ասէ. Փոխանակ զի իմ երկու աչքս լուսաւորքս խաւարեցան յայս տեղւոջս, արդ փոխանակ Դալարեացս անուան, Ծուղ անուն լիցի սմա մինչև ցյաւիտեանս ժամանակաց. և այս եւ բևեռք նշանակս մնասցեն յիմ յիշատակի։ Ապա ինձ յուշ եղև և գիտեմ թէ այն զի խնդրեցաւ յինէն վրէժ չարեաց մեղացն իմոց, փոխանակ զի խաւարեցուցի ես զաշխարհս՝ որում թագաւորեալ էի՝ յերկուց լուսաւոր վարդապետացն, և կարծեցի շինօւցաւնել զայն ձգմարտութեն քարոզութեն երկուց հաւատարմացն, վասն այսորիկ խաւարեցաւ լոյս տեսաւ նեղեաց աչացս իմոց։

Նա յայնմ ժամանակի վաղվաղակի փութանակի չուս առնէր Ա՛Ծուղ գեղջէն, խաղայր գնայր ձեռով իշխանն արքային Պարսից հանդերձ Տիրանաւ արքայիւ և ամ գերութեն յերկիրն Պարսից. և երթայր յաստրեստան առ տէրն իւր յարքայն Պարսից։ Ա՛ու եղև այս ամ կործանումն գուժի չարեացն յանկարծօրէն թշուառութեն հասելոյ։ Ապա ժողով լինէր նախարարացն և իշխանացն, գործակալք և զօրագլուխք, պետք և ամ աշխարհաժողովք բազմութեանն եկելոց կուտելոցն։ Ամենայն և ժողովեցան կազմեցան գունդ եղէն, պատրաստութեբ զհետ կըրթէին Ա՛արազայ, ոչ ինչ կարացին հասանել։ Ասկայն հասանէին առնուն զկողմ՛ի Պարսից աշխարհէն. առ հասարակ մնորդակոտոր առնէին, և զաշխարհն յայրեաց և յաւար դարձուցանէին։ Նա ինչ քանք գառնային, և՛ի մի վայր ժողովէին, կոծ եւ դեալ աշխարանօք լային զիւրեանց բնական տերն զարքայն Հայոց. սոյնպէս և զկորուստ աշխարհին, և զանձանց անտէրջութիւն կործանմանն վարանացն աղիողորմ գործէին։

Յաղագս Թէ ուրպէս Ժողովեցան միաբանութիւն նախարարքն Հայոց, և չոգան առին զԹագաւորն Յունաց՝ Իւրեանց ի Թիկունս օգնականութեան ի յերկիրն Հայոց. և Թէ ուրպէս եկն Թագաւորն Պարսից բազում զօրօք, և միաձի ճողոպրեալ փախչէր յերկիրն Պարսից:

Այն առաւել ժողովեցան ի մի ժողով միաբանութեն մարդիկ աշխարհին Հայաստան երկրին. նախարարքը մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք. բայց ի զօրավարացն, այլ և ի շինականաց անգամ ոմանիկ մարդկանն: Այսպա խօսել սկսան այր ընդ ընդերս, և ասեն. Օ՞ւր է այս, որ ի սուգ մտեալ եմք. Թշնամիք այսու գամագիւտ լինին. այլ քան սակաւ ժամանակք են, այսօրէն արշաւեսցեն Թշնամիքն: Այլ եկայք, ասեն, զանձինս անձամբք մխիթարեսցուք. անձանց և աշխարհի պահ կալցուք, և զտեառն քնակի վրէժ խնդրեսցուք: Այսպա առ հասարակ ամ մարդիկ աշխարհին ի մի միաբանութիւն և ի մի խորհուրդս ժողովեցան վասն օգնականութեն և ի Թիկունս իւրեանց գտանելոյ:

Յայնմ ժամանակի առաքեցին ի մեծ նախարարաց անտի աւագանին Հայոց հանդերձ պատարագօք առ Թագաւորն Յունաց, զի՝ ի նա ձեռս տուեալ՝ ծառայեսցեն նմա հնազանդութեք, և լինիցի նա նոցա Թիկունք օգնականութեք խնդրել վրէժս ի Թրշնամեաց նոցա: Այսպա առաքեցին զՆդուռվիկ նահապետն Վիւնեաց, և զՊրշաւիրն կամսարական, նահապետն Պշարունեաց: Որք երթեալ հասեալ էին յաշխարհն Յունաց ի կայսերական պաղատն Թագաւորացն. և տային զհրովարտակն, և ունէին զպատարագսն քերեալ առաջի, և մատուցանէին զաշխարհապազատ պատգամսն առաջի Թագաւորին: Օ՞ր իբրև լուաւ կայսրն զկրսն գայնոսիկ, մեծաւ փութով և բազում պատրաստութեք ի խնդիր ելանէր իրին հասեալոյ. և օգնական և Թիկունք լինէր աշխարհին

Հայոց ։ Ա՛նասանդ զի զօրսն յիշեալ զգաշանցն կռելոց զերդմանցն հաստատութե՛ն, միջնորդութե՛ն մէջ կայսերն Կոստանդիանոսի և՛ ի մէջ Թագաւորին Տրդատայ եղեալ էր ։

Ա՛րդ մինչ դեռ դեսպանքն երթեալք յերկիրն Հայոց՝ի կայսերական պաղատն չև էին անդրէն յիւրեանց աշխարհն դարձեալ, ՚ի կողմանց արեւելից խաղաց գնաց ինքն Ա՛ղբատհ արքայն Պարսից, գալ առնուլ այրել և աւերել, կորուսանել և միահաղոյն իսկ յիւր վտարել զսահմանս հայաստան երկրին ։ Նա առեալ զնեմ զօրս իւր քաջիւ աղխիւ և՝ամ մեծաւ կարաւանաւ, փղակոյտն բազմութի՛ն հանդերձ, անթիւ վաճառօք և քնիւն մաշկապատճէնօքն, և՝ամ կանանօքն, և հանդերձ տիկնանց տիկնաւն, եկն եհաս ՚ի սահմանս Հայոց. խաղողեաց եղեալ զերկիրն առ հասարակ ։ Յայնմ ժամանակի աղատաղօրքն նախարարացն Հայոց առեալք զիւրաքանչիւր ընդանիս, լինէին փախստականք, ՚ի կողմանս Յունաց անդանէից, զոյժ տային կայսերն բազմագունդ բանակին նախարարացն ։ Ա՛պա երբեմն զայս ՚ամ լսեր Թագաւորն Յունաց, նոյնօրինակ և նա զիւր զօրսն գումարէր. և չու արարեալ գայր հասանէր յերկիրն Հայոց ընդդէմ Թագաւորին Պարսից ։ Նա եթող զիւր զբանակն զԱատաղ քաղաքաւն. և ինքն ընտրեաց իւր արս երկուս գլխաւորս, արս ի մասատունս Հայաստան բանակէն, այս ինքն զԱ՛ղշաւիրն և զԱ՛նդովիկն. զի այս արք էին, որ չոգան առ նա դեսպանութի՛ն յառաջնում նուագին ։ Նա այսպէս հանդերձ նոքօք ինքն իսկ կայսրն ՚ի շինականութե՛ն կերպարանս, ՚ի կաղամբաւշաճառի օրինի, մնանէր ՚ի բաց նակն Պարսից ։

Իբրև էր նա բանակեալ ՚ի գաւառին Բասենոյ, ՚ի գեաղն՝ որ անուանեալ կոչի Ոսխայ, եկին մտին ՚ի բաց նակն արքային Պարսից, դիտեցին քննեցին զչափ առին զնոցա զօրութիւն զօրացն ։ Նա անտի դարձան յիւրեանց բանակն, կազմեցան պատրաստեցան. գայլին հասանէին գտանէին զբանակն արքային Պարսից ՚ի նմին տեղւոջ բանակեալ ՚ի պղերգութե՛ն յանհոգութե՛ն յանկասկած խաղաղութե՛ն ։ Ա՛պա հասեալ ՚ի տուընջեան ժամուն, անկանէին ՚ի վերայ Թագաւորին

Պարսից, ընդ սուր զնա՛ր բանակն հանեին, և ոչ զմի ոչ ապրեցուցանէին։ Նա առին զկապուտ զաւար բանակին, և զկանայս Թագաւորին և զբամբիռն, և զբանական ընդ նոսին, և զինչս և զստացուածս նոցին ընդ նմին ՚ի գերուԹի վարեին, զկանայս նոցա և զդանձս և զկեանս և զկազմած նոցա։ Այլ միայն Թագաւորն պրծեալ մազապուր, պեշատիկ[1] մի սուր հանդակ առաջի, պրծեալ ելանէր փախստական. հազիւ ուրեմն կարէր անկանել հասանել յաշխարհ իւր։ Ապա կայսրն մեծաւ շքեղուԹի՛ անուանի պերճացեալ՚ի մէջ բանակին երևեալ. զայր ՚ի ձախ հասեալ առ հասարակ կոտորէին, և զայլ նա՛մ ՚ի գերուԹի՛ վարեին յերկիրն Յունաց։ Նա ՚ի վերայ երկրին Թողոյր զիշխանսն վերակացուս զՆդուվկ և զԱրշաւիր, մեծապարգև մեծապատիւ մեծարեր. և յանձն արարեալ զնոսա նա՛մ իշխանացն և զաշխարհն նոցա, և ինքն կայսրն չոՒ արարեալ զնաց յերկիրն իւր յերկիրն Յունաց։

Նա աղբայն Պարսից գնացեալ փախստական յերկիրն իւր. և իբրև եՀաս անդր՝ ժողովեր առ ինքն զնա՛մ ծնացեալս իշխանուԹե՛ իւրոյ, և ՚ի խոյզ և ՚ի խնդիր անկաներ։ Լսորհուրդ ՚ի մէջ առնոյր, հարցաքնին առնել. հրամայեր վերստին, զի տեսցեն և յայտ արասցեն՝ Թէ ուստի՛ եղև սկիզբն պատերազմացն և մարտին։ Ապա ՚ի վեր եկին և յայտնեցան իրքն առաջի նորա. զի յոչինչ իրաց և վատԹար բանից համարեցան զերան եղեալս, վասն ձիոյ միոյ կարծիս առնել զայն ամբոխ խռովուԹե՛ ՚ի մէջ եկան առնէն Շ ապուհ Ա արաբացւոյն։ Ապա հրաման ետ հանել զպատիժն ՚ի բաց՝, և մերկանալ ՚ի նմանէ զպատուականն պատմուճանն, և մեծաց հարուածոց արժանի առներ զԱրաբն։ Ետ պարակի օրինակին հրամայեր զմերձե՛ն ՚ի բաց հանել, և խոտով ընուլ, և ՚ի հրապարակի իւրում ՚ի տեսիլ ծանականաց կանխել հրամայեր։ Նա ինքն ՚ի զղջումն եկեալ վասն իրացն եղելոց, ապա արձակեր զիշխանսն պատուականս ՚ի հնազանդուԹե՛ խաղաղուԹե՛ վասն գերեդարձ առ-

1 Ցօրինակի միում պէլասպի։

նել ՚ի կայսերէն միւսանգամ, և այնուհետև աղօ-
թակերս արձակել ՚ի հաշտութիւն խաղաղութիւն. խօ-
սել ընդ կայսերն, զի գոնեայ զկնայս իւր արձակես-
ցէ ՚ի գերութենէն, և բարձցէ ՚ի նմանէ զծանակու-
թեանցն զդառովութեցին նախատինս։

Ապա դառնայր հրովարտակ Թագաւորն Յունաց
առ աղէս առ արքայն Պարսից. Նախ դու, ասէ,
դարձուսցես զգերութիւն առեալ յերկրէն Հայոց, և
զԹագաւորն Տիրան ինքնին դէմովին, և զամ ինչ
զոր առեալ իցէ անտի. ապա յորժամ զայդ արաս-
ցես, և ես զնմանէ դարձուցից զոր առեալ եմ. զի եթէ
ոչ՝ նախ դու զնոցա զառարն դարձուսցես, և ես ապա
զքոյդ դարձուցից։ Նոյնպէս լուաւ զայն հրամանն
արքայն Պարսից, վաղվաղակի զիերսն կատարէր. հա-
նէր զկապեալն Տիրան ՚ի տանէն քանդի կապանայց,
խօսէր ընդ նմա ողջոյն, զի Թագաւորեցուսցէ զնա
անդրէն յիւր աշխարհն արձակելով, զի երթիցէ նա
պատուով։ Ապա տուեալ պատասխանի Տիրանայ, և
Թէ անօգուտ է ինձ և անպատշաճ է, կուրութիւն, ան-
մարթի խակ է կարի, ունել զԹագաւորութիւն. բայց
փոխանակ իմ Թագաւորեցո զՈրշակ զորդի իմ։

Յայնմ ժամանակի Թագաւորեցուցանէր զՈրշակ
որդի նորա ՚ի վերայ աշխարհին Հայոց. և զկնայս
Թագաւորին և զայլ գերին ամ, դանձիւք ընձայիւք
և ստացուածովք հանդերձ, և միանգամայն դարձ
առնէր ամ գերութիւն։ Նոյնպէս զինքնին Տիրան Թագա-
ւորն Պարսից հանդերձեաց կազմեաց մեծաւ կազ-
մութեամբ, և արձակեաց յիւր աշխարհին յերկիրն
Հայոց. և կատարեալ հաւատարմացոյց զսասցեալսն
հրամանաց Թագաւորին Յունաց։ Նոյնպէս զնոսա
՚ի Հայս յուղարկէր, ապա և զ՚ի Թագաւորէն Յու-
նաց զառ ինքն եկեալսն դեսպանն արձակէր յիւր-
մէ, զի երթիցեն պատմեսցեն Թագաւորին Յունաց՝
Թէ որպէս և կամ զինարդ նա զհրամանն կատարեաց
զԹագաւորին Յունաց, զի և Թագաւորն Յունաց
դարձուսցէ զգերութիւնն՝ զոր առեալ զԹագաւորին
Պարսից։ Նոյնպէս եղև իբրև լուաւ զայս ամ Թագաւորն
Յունաց՝ եթէ կատարեաց ՚ի գլուխ եհան զայս ամ
՚ի նմանէ զտուեալ հրամանն Թագաւորն Պարսից,

և զարձ արար զերուձեանն Հայոց և Տիրանայ արքային, հաձեցաւ։ Յայնմ ժամանակի և Թագաւորն Յունաց առնէր զերկդարձ զերուձէ արքային Պարսից։ Իւ հանդերձեաց կազմեաց Թագաւորն Յունաց զկանայս Թագաւորին Պարսից մեծաւ պատուով, և զնա զերուձիս նոցա ընդ նոսին յերկրէն Յունաց յերկիրն Պարսից դարձուցանէր, և բարեաւ առ Թագաւորն յուղարկէր։

Պատարեցաւ երրորդ գարձ, զոր և մի պատմուձեց գպրուձիկ, ձամանակագրէր կանոնս ձախաձեայս Ռէ-պանդրեայ ձամանակագրէր մեծի պատմագրի, որ էր ձամանակագրէր Յունաց։

ՁՈՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԻՒՂԵՆԴԻՑ

ՁՈՐՐՈՐԴ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ
ԶՈՐ ԱՍԵԼՈՑ ԵՄ ԿԱՐԳԵԼ ԶԴՊՐՈՒԹԻՒՆ
ԿԱՆՈՆԻ ԴԱՐՁ ԵԻ ԴԱՐՁ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ԶՐՈՒՑԱՑ

ԽՈՍՏՈՒՄՆ ԽՈՍՏԱՑԵԼՈՑՍ

Ա. Յաղագս Թէ ՛որպէս յետ բազում շփոթի պատերազմաց ընդ Ներսհ՛ի արքային Պարսից, Թէ ՛որպէս Թագաւորեցոյց զԱրշակ որդի Տիրանայ, և արձակեաց յաշխարհն Հայոց հանդերձ Տիրանաւ հարբն Լուսաւ, և ամ դերուԹիւն հանդերձ:

Բ. Յաղագս շինուԹիւն կարգաց և յօրինուածոց աշխարհին Հայոց, վարուց և կարգաց նուաճուԹիւն, և յօրինելոյ և նորոգելոյ ԹագաւորուԹեն:

Գ. Յաղագս սրբոյն Ներսէսի, Թէ ուստի կամ ՛որպէս ընտրեցաւ լինել կաԹուղիկոս Հայոց մեծաց:

Դ. Յաղագս Թէ ՛որպէս առին զնացին տարան զՆերսէս ՛ի Կեսարիա. և կամ ՛որպէս աքանչելիքն այ եղեն:

Ե. Յաղագս Ներսէսի կաԹողիկոսի Հայոց, Թէ զնա՛րդ ԱՀրշակայ արքայի Հայոց առաքեցաւ առ Վաղէս Թագաւորն Յունաց հանդերձ նախարարօքն, և Թէ զնա՛րդ աքսորեցաւն, և կամ զնա՛րդ զայլ նախարարսն հանդերձ այլովքն պատարագովք արձակէր յերկիրն Հայոց:

Զ. Յաղագս և Թէ զնա՛րդ իբրև աքսորեցաւ նա՛ն Ներսէս, և ընկեցաւ ՛ի կղզին Յանապատ, և Թէ ՛որպէս և կամ զնա՛րդ կերակրեցաւ, և յայ եղեն աքանչելիքն զամս ինն:

Է. Յաղագս այ աքանչելիքն, որ երևեցուն ՛ի Ներսէս կամ ՛ի Բասիլիոս. և վասն նախանձու Եւսեբի եպիսկոպոսին Բասիլիոսի:

Ը. Յաղագս և Թէ ՛որպէս Թագաւորն Յունաց, հալածեաց զամ ուղղափառս զՀաւատացեալսն, և կամ ՛որպէս կամեցաւ փայքար առնել ՛ի մէջ Ճշմարիտ Հաւատացելոցն և ՛ի մէջ ձախող աղանդին արիանոսաց: Եւ կամ ՛որպէս այ աքանչելեացն տեսլեամբն Բասիլիոս կոչեալ լինէր ՛ի կայսերէն ՛ի փայքարէ, և ամ զօրուԹիւն յաղԹէր ախոյանին առ եպիսկոպոսին Եւսեբի: Եւ կամ ՛որպէս եպիսկոպոսապետն Կեսարու Եւսեբիոս վճա-

ըեալ լինէր ՚ի բանդին, և կամ որպէս Բարսիլոս արձակեալ։

Թ. Յաղագս և կամ որպէս արարին զԲարսիլոս եպիսկոպոսապետ Կեսարու, և կամ զինչ նշանք եղեն յայնպատճէնէ. և կամ որպէս Թագաւորն Հրամայեաց յափրշտակել զամ ինչան որ ՚ի Քէ հաւատացելոցն. և կամ Թէ որպէս խնդրեաց Թէ որք բերէին տային ՚ի դուրս վասն իւրեանց հաւատոցն, և կամ որպէս և որպիսի խրատուածովք խնդրէին յայ ՚ի վերայ իւրաքանչիւր եպիսկոպոսացն։

Ժ. Յաղագս Թէ զնաւրդ կոչէր կայսրն Վաղէս զսուիեստէան յանդիմանութիւնն ընդդէմ Ճշմարտութիւնն հաւատոցն. և կամ զնաւրդ եռես սուիեստէն զպատճէնելեացն տեսիլն, և Թագաւորն Վաղէս սատակեցաւ նշանաւքն եղելովք, և բազում խաղաղութիւն եկեղեցեացն լինէր։

ԺԱ. Յաղագս դարձի իշխանացն յերկրէն Յունաց յերկիրն Հայոց անդրէն, որք ևս երթեալք ընդ հայրապետին Հայոց Ներսէսի առ Թագաւորն Վաղէս, և եկին դարձան անդրէն առ արքայն Արշակ Թագաւոր։ Եւ Թէ որպէս ըմբռնացեալ Արշակ արքայն Հայոց, ապա տակաւ մեղանչել տան Թագաւորին Յունաց։

ԺԲ. Յաղագս Խադայ եպիսկոպոսի բազբաւանդացւոյ, զոր էր Թողեալ յիւր տեղւոջն հայրապետին Հայոց Ներսէսի. Թէ սա որպիսի այր էր կամ որպիսի նշան և աբանելիս առնէր, և կամ որպէս կայր ՚ի ճշմարտութեանն, և ոչ առնոյր ակն Թագաւորին մեծի Արշակայ արքային Հայոց, և կամ որպէս դիմանայր ընդդէմ նորա վասն անօրէնութեանն զոր գործոց. և որչափ սիրէր զաղքատս իբրև զհայրապետն Հայոց զՆերսէս։

ԺԳ. Յաղագս Թէ որպէս գաբձաւ նբ կաթուղիկոսն Հայոց Ներսէս յերկրէն Յունաց. և կամ որպէս յանդիմանէր զմեծ Թագաւորն Հայոց զԱրշակ. և Թէ որպէս յայ հասանէին հարուածք ՚ի վերայ աւանին Արշակաւանին, և սատակէր առ հասարակ յանկարծօրէն ամբաղմութիւն մարդկան՝ որք միանգամ ժողովեալք էին յայնմ տեղւոջ։

ԺԴ. Յաղագս Հայր մարդպետին, որ եկն էջ ՚ի գաւառն Տարօնոյ. և Թէ զնաւրդ եկեալ էր ՚ի տեղին աղօթից յԱշտիշատ, և կամ զնաւրդ գատապարտեալ գնաց անտի յիւր բերանոյն խօսից. և կամ զնաւրդ մահու պարտ եղեալ՝ սատակեցաւ ՚ի Շաւասպայ արձրունոյ։

ԺԵ. Յաղագս Թագաւորին Արշակայ, Թէ զնաւրդ կամ որպէս սպան զեղբօրորդին զԳնէլ ՚ի չարախօսութենէն Տիրիթայ, կամ որպէս կշտամբեալ և յանդիմանեալ եզև ՚ի յառնէն այ ՚ի Ներսէսէ. և կամ որպէս սպան զնոյն Տիրիթեն. և կամ որպէս զնին սպանելոյն Գնելոյ

առնոյր իւր կին Արշակ Թագաւորն. և կամ որպէս
ի վերայ այնր կանանց միւս ևս այլ կին առնոյր Արշակ
Թագաւորն, զոր ած ի Յունաց աշխարհէն, որում ա-
նուն Ողեմբին կոչէր: Եւ կամ որպէս երկոցն զրան
արքային, Մրջնենիկն, զմահուն դեղն տալով ընդ օ-
րինսն՝ սպանանէր զՈղեմբին խորհրդով նենգաւորէն
փառանձեմայ:

ԺԶ. Յաղագս թէ որպէս կամ ղևարդ կոչեաց Շապուհ Թա-
գաւորն Պարսից զԱրշակ Թագաւորն Հայոց. և կամ
ղևարդ մնծարնցաւ ի նմանէ: Եւ կամ թէ ղևարդ
Վասակ մամիկոնեան սպարապետն Հայոց սպանանէր
զորակալն ասպաստանին Թագաւորին Պարսից: Եւ
կամ ղևարդ Արշակ Թագաւորն Հայոց, աւետարա-
նաւն երդուաւ Թագաւորին Պարսից, ուխտէր նմա.
և կամ թէ ղևարդ յետոյ ստեաց, և փախեաւ ի նմա-
նէն. և կամ թէ ղևարդ յաղագս այնորիկ արս եւթա-
նասուն զայ պաշտօնեայսն կոտորէր Շապուհ:

ԺԷ. Յաղագս թէ ղևարդ յուղարկեաց զՀալածեալսն Շա-
պուհ Թագաւորն Պարսից ի վերայ քրիստոնէութեանն
հաւատոյ:

ԺԸ. Յաղագս մահուանն Վարդանայ ի Թագաւորէն Ար-
շակայ նենգաւորէ իւրոյ եղբօրն Վասակայ:

ԺԹ. Յաղագս թէ ղևարդ անմոռնելիք յանդգնութիք գնայր
ի սպանուիլն նախարարացն անխիղճ Արշակ Հայոց
արքայ:

Ի. Յաղագս թէ ղևարդ պատերազմն սաստկացեալ էր ի
մէջ Յունացն և Պարսից. և թէ ղևարդ արքային Հայոց
Արշակն զօրաւիգն լինէր Թագաւորին Պարսից, և հա-
նէր ընդ սուր զզօրսն Յունաց. և կամ ղևարդ դաւա-
ճանութիք սիւնոյն Անդովկայ լինէր փախստական Ար-
շակ ի Շապհոյ Թագաւորէն Պարսից:

ԻԱ. Յաղագս թէ ղևարդ եղև պատերազմ ընդ Շապուհ
Թագաւորն Պարսից և ընդ Արշակ Թագաւորն Հայոց.
և կամ թէ ղևարդ յաղթեաց Արշակ արքայն Հայոց:

ԻԲ. Յաղագս որ յետ այսորիկ որ ընդ երիս տեղիս եղեալ
ճակատ յերկրին Հայոց ի միում ամենեանն, ի միում
աւուր, ի միում ժամանակի ընդ զօրավարսն Պար-
սից, երեցունց նշանն յաղթութենն Հայոց կանգնէր:

ԻԳ. Յաղագս Մերուժանայ արծրունւոյ, որ ապստամբեաց
յարքայէն Հայոց Արշակայ, և անկաւ առ Թագաւորն
Պարսից, և նա առաւել զրգռէր զպատերազմունսն. և
թէ ղևարդ ուրացաւ յայ, և թէ ղևարդ եղև խոչընդո-
ակն և խոչընդոտն երկրին Հայոց մինչև յայսդ:

ԻԴ. Յաղագս Մերուժանայ, թէ ղևարդ ապստամբեաց. զըր-
գռէր զԹագաւորն Պարսից զՇապուհ, և առնէր ստէպ
ստէպ պատերազմունս: Եւ կամ ղևարդ լեալ էր ա-

ռաջնորդ Թադեաւորին Պարսից Շապհոյ. ածէր զՀինն ի հայաստան աշխարհն, և դերէր զոսկերս Թադեաւոս բացն Արշակունեաց. և կամ Թէ զիարդ զօրավարն վասակ Հայոց Թափեաց զդերութիւնն, և յաղթեաց Թշնամեացն:

ԻԵ. Յաղագս Թէ զիարդ արշաւեաց Արշակ Հայոց արքայն յերկիրն Պարսից, և աւերէր զատրպատական երկիրն. և քանդէր հարկանէր աւերէր, առնոյր զբանակն Շապհոյ արքային ի Թաւրէժն:

ԻԶ. Յաղագս վնաս պարսկի, և չորեքհարիւր հազարին՝ որ եկեալն էին ի պատերազմի, և նկուն լինէր ի զօրացն Հայոց:

ԻԷ. Յաղագս միդավարին Պարսից Անդիկանայ, որ քառասուն բիւրու հասանէր աւար առնուլ զերկիրն Հայաստանեաց. և Թէ զիարդ վասակ սպարապետն ելանէր ընդ առաջ նոցա երկոտասան բիւրու հանդերձ Հայոց զօրօքն, և կոտորէր զզօրս Պարսից հանդերձ զօրագլխաւն իւրեանց:

ԻԸ. Յաղագս Հազարուխտոյ, որ է մի ի նախարարացն Պարսից. զոր առաքեաց Շապուհ արքայ ուԹսուն բիւրովն հարկանել զերկիրն Հայոց. եԹէ զիարդ եղ ընդ առաջ նոցա վասակ մետասան հազարաւ, և հարկանէր սատակէր զնա և զզօրս նորա ի սահմանս Աղձնեաց:

ԻԹ. Յաղագս Դմայունդ վաեմականայ, որ ինն սուն բիւրուն տապրիկ զօրօքն՝ զոր առաքեաց ի վերայ Արշակայ արքային Հայոց արքայն Պարսից, ապա ելանէր վասակ սպարապետն Հայոց, հասանէր սատակէր զնա և զզօրս նորա:

Լ. Յաղագս վահրիճի կահրիճայ, որ յարքայէն Պարսից չորեքհարեւրն բիւրու գայր հասանէր, տայր պատերազմ ընդ Թադեաւորին Հայոց. և կամ զիարդ մատնեցաւ ի ձեռս վասակայ սպարապետին, և նա և զօրքն իւր անկանէին ի ձեռս զօրացն Հայոց:

ԼԱ. Յաղագս Գումանդ Շապհոյ, որ մեծաւ պարծանօք պարծեցաւ առաջի Թագաւորին Պարսից Շապհոյ, և հարեւր հազար զօրօքն գայր հասանէր մինչև ի Հայս, և նկուն եղեալք մերժէին յերկրէն Հայոց:

ԼԲ. Յաղագս Գեհկայ նահապետի, որ առաքեցաւ ի Շապհոյ արքայէն Պարսից ի վերայ Արշակայ արքային Հայոց զօրօք բազմօք. ապա հարկանէր սատակէր զնա, և զզօրս նորա զօրավարն Հայոց վասակ:

ԼԳ. Յաղագս Սուրէնայ պահլաւի, որ եկն ի վերայ Հայոց. ապա և սա ևս նկուն լինէր իբրև զառաջինսն:

ԼԴ. Յաղագս Ապական վաեմականայ, որ եկն եհաս անթիւ և անհամար զօրօք հանդերձ յերկիրն Հայոց ի պատերազմ. ապա և նմա ևս ձախողեցաւ որպէս և առաջինացն:

ԼԵ. Յաղագս Զրկայ նուիրակապետի Պարսից, որ առաքե-
ցաւ ՚ի Թագաւորէն Պարսից ՚ի Շապհոյ ՚ի վերայ Հայ-
ոց ՚ի պատերազմ, հանդերձ բազում զօրօք. և նա և
խորտակեցաւ իբրև զառաջինան։

ԼԶ. Յաղագս Սուրենայ պարսկի, որ յետ Զրկայն և սա
եկն ՚ի պատերազմ. և նա ՚ի բուռն անկեալ վ ասա-
կայ սպարապետին Հայոց, հանդերձ զօրօքն՝ որ ընդ
իւրն էին՝ սատակեցան։

ԼԷ. Յաղագս Հրեշշաղոմայ, որ առաքեցաւ ՚ի Թագաւորէն
Պարսից ՚ի վերայ Հայոց լննսուն բիւրուց. և այն ան-
դամ և լինէր յաղթութիւն, և նշան յաղթութեան
Հայոց կանկնէր։

ԼԸ. Յաղագս Ալանոզայն, որ չորեքհարեւր բիւրուն զայր
հասանէր ՚ի Թագաւորէն Պարսից՝ տալ պատերազմ
ընդ Թագաւորին Հայոց. և թէ զնա՛րդ և սա նկուն
եղեալ պարտեցաւ ՚ի ձեռս վ ասակայ։

ԼԹ. Յաղագս Խոյականայ և քառասուն բիւրուն, զոր հար-
կանէր ընկէր սպարապետն Հայոց վ ասակ։

Խ. Յաղագս վ աչական պարսկի, որ եկն ՚ի Հայս ուղիու-
տասն բիւրուն, և կամէր ասպատակել աւար առնել
զերկիրն. ապա և զնա վանեաց վ ասակ սպարապետն
Հայոց, և զամ զօրս նորա ճարակ սրոյ տայր զնա՛ր։

ԽԱ. Յաղագս Մշկանայ և երեսուն և հինգ բիւրուն, որք ար-
շաւեցին յերկիրն Հայոց. և կամ զնա՛րդ կոտորեցան
՚ի վ ասակայ և ՚ի զօրացն։

ԽԲ. Յաղագս Մարուճանայ և վաթսուն բիւրուն, եթէ զնա՛-
րդ եկեալք ՚ի վերայ Թագաւորին Արշակայ յերկրէն
Պարսից, և եթէ զնա՛րդ հարկանէր սատակէր զնոսա
վ ասակ զօրավարն։

ԽԳ. Յաղագս զնդակապետին, որ լննսուն բիւրուն եկն յեր-
կիրն Հայոց. ապա հարկանէր սատակէր զնոսա վ ա-
սակ հանդերձ զօրօքն։

ԽԴ. Յաղագս որդւոյն Արշակայ աքբայի, որոյ անուն էր
Պապ, եթէ զնա՛րդ էր լն դիւաք ՚ի ծննդենէն իւրմէ.
կամ զնա՛րդ յայտնեալ լինէին դևքն ՚ի նմա, և հան-
դերձ նոքօք գործէր պղծութիւն։

ԽԵ. Յաղագս Սակստան հանդերձապետին, որ առաքեցաւ
՚ի Շահպոյ արքայէն Պարսից, հանդերձ չորեքհարեւր
բիւրուն. և փախոյց ևս զնա վ ասակ զօրավարն, հան-
դերձ զօրօքն Հայոց։

ԽԶ. Յաղագս Շապստան տակառապետին Պարսից, որ եկն
հինգ հարեւր բիւրուն ՚ի վերայ աշխարհին Հայոց. ա-
պա զնոսա հարկանէին սատակէին զօրքն Հայոց։

ԽԷ. Յաղագս մոգուցն հանդերձապետին, որ ութ և տասն
բիւրուն եկն եհաս՝ տալ ճակատ ընդ Թագաւորին
Հայոց. և սա կործանէր իբրև զառաջինան։

ԽԸ. Յաղագս Համբարակապետին Պարսից, որ ինքնասուն բիւրուն եկն մարտնչէր ընդ զօրս Թագաւորութեն Հայոց. և սատակեցաւ ի Սաղամիս ի զօրսն Հայոց ի գնդէն Վասակայ։

ԽԹ. Յաղագս Մռկանայ, որ քառասուն բիւրու եկն ի Պարսից՝ կռուել ընդ Թագաւորին Հայոց, և սատակեցաւ զօրօք իւրովք հանդերձ ի գնդացն Հայոց, և ի զօրավարէն Վասակայ ի Մախազան։

Ծ. Յաղագս քակտելոյ և քայքայելոյ Թագաւորութեն Հայոց, թէ որպէս բազում նախարարքն Հայոց ապստամբեցին յարքայէն Հայոց, և ձեռս ետուն ի Շապուհ արքայէն Պարսից. և կամ զնաւրդ հապ այսր անդր յղբուեցան, և մեծապէս Թագաւորութիւնն Հայոց նուազէր։

ԾԱ. Յաղագս թէ զնաւրդ միաբան համօրէն աշխարհօրէն որք միաբան մնացեալք էին աշխարհին՝ ժողովէին առ իւրեանց հայրապետն Ներսէս. և թէ որպէս զօրօղք հարկանէին առաջի նորա, և ձեռնթափ լինէին և Թողուին ի ձեռաց զնւրբեանց Թագաւորն Արշակ։

ԾԲ. Յաղագս Թագաւորին Պարսից, թէ զնաւրդ ի ժամանակին լուեցոյց զպատերազմ տալ ընդ Արշակայ Թագաւորին Հայոց, և նենգաւոր առ ինքն կոչէր ի հաշտուին։

ԾԳ. Յաղագս կրկին անգամ կոչելոյ Շապուհ արքայ Պարսից զԱրշակ արքայ Հայոց, և նորա երթալոյն առ նա, և միհանգոյն[1] կորնչելոյն։

ԾԴ. Յաղագս թէ որպէս դարձեալ զդիւթեան և զբաւղեայն և զկախարդն հարցեալ Շապհոյ հմայիւք՝ փորձէր զնւրմիտան Արշակայ, և տայր զնա յԱնուշ բերդն ի պահպահ. սոյնպէս և զսպարապետն Հայոց ջրամահ առնել հրամայէր։

ԾԵ. Յաղագս աշխարհին Հայոց գերութեն և հարուածոց, և գերութե ի Պարս վարելոյն տիկնոջ Փառանձեմայ. և քաղաքացն Հայոց աւերելոյ, և աշխարհին ի հինանց տապալելոյ։

ԾԶ. Յաղագս վկայութեն Զուիթայ երիցուն, յԱրտաշատ քաղաքէ, յերկրին Պարսից։

ԾԷ. Յաղագս աղօթքն ի ժամ մահուն Զուիթայ։

ԾԸ. Յաղագս գալոյն Շապհոյ արքային Պարսից յերկիր Հայոց, և միանգամայն սատակելոյ զմնացորդ երկրին Հայոց։

ԾԹ. Յաղագս Մեհրուժանայ և Վահանայ, թէ իբր մնային յաշխարհին Հայոց. և թէ զնչ շատ գործեցին ընդ աշխարհն, և կամ թէ զնաւրդ սատակեցան Վահան և կինն յերեանց որդւոյն։

1 Յերիս օրինակս միահանգոյն։

ԲՈՒԶԱՆԴԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ԶՈՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆԱԿ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՏԵՆԻՑ ՏԱՆ ՈՐԴՒՈՑ ԹՈՐԳՈՄԱՑ ԱՀԽԱՐՀԻՆ ՀԱՅՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս Թէ սկսեալ յետ բաղում շփոթի պատերազմացն Կերսեհ արքայն Պարսից Թէ սկսեալ Թագաւորելոյ զԱրշակ որդի Տիրանայ, և արձակեաց յաշխարհն Հայոց հանդերձ Տիրանաւ հարբ իւրով և ամ դերուճքն հանդերձ։

ՅԱյնմիջոցի եղև հաձուճի և բաղում խաղաղուճի ի մէջ Թագաւորին Յունաց և Կերսեհի արքային Պարսից, հաւանեցան մեծաւ սիրով առնել զկամս միմեանց. և դարձուցանէր կայսրն Յունաց զդերուճն արքային Պարսից։ Ապա և Թագաւորն Պարսից Կերսեհ Թագաւորեցոյց զԱրշակ որդի Տիրանայ և հարբ նորին և հանդերձ կանամբք իւրեանց և ամ դերուճքք հանդերձ և գանձիւք իւրեանց և ստացուածովք արձակեաց մեծաւ փառաւք։ Այսպէս գնաց Արշակ արքայ Հայոց մեծաց. Թագաւորեաց յերկրին Ասորեստանեայց հանդերձ հարբն իւրով և ամ ընտանեօքն իւրով. եկն եհաս յերկիրն Հայոց, և ժողովեաց զզօրուեալս երկրին, և Թագաւորեաց ի վերայ նոցա։

Նա եղև խաղաղութեի մեծ ի ժամանակին յայնմիկ ։ Ոսոզովեցան ամ թագաւորեալքն փախուցեալք կորուսեալք երկրին Հայոց. և էին անկասկածք ընակեալ ի խաղաղութեե մեծի ընդ հովանեաւ արքային Ա.րշակայ ։ Ապա կարգեցան կազմեցան յօրինեցան խաղաղացան աշխարհն Հայոց ի մէջ երկուց թագաւորացն . և յայնմ հետէ ընակեալք խաղաղութե վայելեալք յիւրաքանչիւր յարարս իւրեանց ։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս շինութե կարգաց յօրինելոց աշխարհին , նուաճութե յիւրաքանչիւր տեղիս վարուց կարգաց , նորոգելոց աշխարհին թագաւորութեան Հայոց ։

Յաջոց ժամանակի խնդիր ելաներ արքայն Ա.րշակ տոհմին զօրավարաց ազգին քաջացն մամիկոնենից . մանաւանդ զի իւր դայեակս և մտուցիչք էին ։ Ապա երթեալ գտաներ զնոսա յամուրս աշխարհին Տայոց յիւրեանց աշխարհին , և դարձուցաներ զնոսա յընդանութեին . զի պատակտեալք և քակտեալք էին յընդանութենէն և յամ գործոց Հայոց ի ժամանակս խուլութեեն Տիրանայ ։ Նա կացոյց արքայն զվ արդան զերեց եղբայրն ի նահապետութեեն ազգին իւրեանց , և զվ ասակ զմիջին եղբայրն զիւր դայեակն ի սպարապետութեեն զօրավարութե յիւրս պատերազմացն . որպէս և զկրտսերն ի պետս զօրացն կացուցաներ ։ Այնպէս և զամ ազգան զօրացն մեծամեծացն նահապետացն , որպէս առաջին թագաւորքն նուաճեալք յիւրաքանչիւր չափու ։ Նա հնազանդեր զմեծամեծսն , զիւրաքանչիւր զօրս բաժանեալ յամ կողմանց , սահմանացն Հայոց սահմանապահս կացուցաներ ։

Նա նորոգեցաւ զուարթացաւ տէրութեին թագաւորութեն Հայաստան երկրին որպէս և զառաջինսն .

մեծամեծքն յիւրաքանչիւր գահս, և գործակալքն յիւրաքանչիւր չափս։ Այս սկիզբն գործակալութենն հազարապետութենն աշխարհատեաց խնամակալութենն, աշխարհաշէնն աշխարհատած դեհկանութենէ, շինակատնէն ազգն Պտունեաց՝ հազարապետն ամ երկրին։ Այոյսպէս ստրատելատութենէ սպարապետութենն զօրավարութենն մարտի կռուելոյ, գործոյ ըստզմիկ ձագատամուղ նիզակին, իրափառն[1] աղանաղգիք աղանադրօշք արծուէնշանք վարժնականիշք աներկիւղք քաջասիրտք նահատակք քաջանունք, բարեհնշանս բարեհամբաւք բարեգործք յայոցդակք ի գործ պատերազմաց ի բուն ի նախնեացն կարգաց ի մամիկոնեան ազգին, ի վերայ իշխանութենն բուլանդակ՝ ի վերայ ամ զօրաց զօրավարութենն բազմաւեն Հայոց մեծաց, հանապազ յամ ժամ յաղթող ազգին պարզ գնեալ յերկնից բարիանուն իրաքաջ ի մեծի նահապետութեան պատերազմի։ Այս այլ յայսմ ազգաց և ի խոնարհ որ գործակալս անուն բարձիւք առաջի արքային պատիւ ի գլուխ բազմելին. Թող զնահապետս մեծամեծս և զտանուտեարս՝ որք գործակալք միայն էին, լինն հարեւր բարձ՝ որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց. Թող զտանկայս գործակալութենէն սպասու։

Գ Լ Ո Ւ Խ Գ.

Ցալագս սրբոյն Ղեւոնդեայ, Թէ ծրագիս կամ ուսումն էր, կամ օրինի կամ զնծրդ ընդրեցաւ եպիսկոպոս լինել Հայոց աշխարհին։

Ա՛պա ի մի ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծք նահապետք ազգաց ազգաց, տոհմից տոհմից, գնդից և դրօշուց տեարք. ամ սատրապք նախարարք և աղատք, պետք և իշխանք, զօրավարք և

1 Ցերկս օրինակս իրաւաբան։

սահմանապահք, ՚ի մի հաւանութիւն միաբանական խորհուրդք, զի եկեսցեն տեսցեն և խորհեսցին վասն իւրեանց առաջնորդի, թէ ուր արժան իցէ նստել յաթոռ հայրապետութեանն և հովուել բանաւոր խաշանց Քրիստի: Այսպա յաղթեաց կալաւ այս բան խորհրդի ամենեցունն առ հասարակ որ անդ էին, զի ՚ի ձեռն ցորդաց տանն Կրիգորի, յայնմ ազաւակէ գտցեն զառաջնորդութիւն: Օ՜ի ամենեքեան ասէին ցաղքային. վասն զի նորոգեաց Ա՛ծ զթագաւորութիւն ձեր, սոյնպէս պարտ է ՚ի յայնմ ազաւակէ նորոգել զհոգևոր նահապետութիւն: Օ՜ի ընդ նորոգել այնր աթոռոյ, ասէն, նորոգեսցին պայծառ վարք աշխարհիս Հայոց:

Այսպա յակամէ յանուանէ իսկ խնդրեցին աշխարհաժողով զօրքն բազմութեան զայն, որ անուանեալ կոչէր Ներսէս, զորդի Աթանագինէի, զթոռն քահանայապետին Գրիգորի, որդւոյ Պարթևի, որ զոյն Կրիգորի մեծին առաջնոյ քահանայապետին. և մեր սորա Խամբիճն անուն, քոյր արքային Տիրանայ: Այա լեալ էր ամուսնաւոր յաշխարհակեաց կեանս նախ յաստիս մանկութէ. ՚ի տղայուէ մնեալ և ուսեալ ՚ի կեսարացոց քաղաքին Կամրջոց ընդ հաւատարիմ վարդապետաց. և ցանկալի եղեալ իւրոյն համարուեստն զուգակցայն: Այլ ՚ի ժամանակին յայնմիկ էր ՚ի վարս զինուորութէ ՚ի գործակալուէ, սիրելի սենեկապետ արքային Արշակայ, հաւատարիմ ՚ի վերայ ամ կարգաց կենաց թագաւորութեանն ՚ի ներքոյ և արտաքոյ:

Այլ էր սա մեծ և բարձր ցանկալի հասակաւ, և վայելուչ գեղով. զի ոչ գտանէր ուրեք նման նմա գեղկութէն ՚ի վերայ երեսաց երկրի, տեղեալ ցանկալի և զարմանալի և ահագին ամ նայեցողաց տեսողաց, և նախանձելի յարութեանն ՚ի զինուորական կրթութէն: Երկիւղած ՚ի Տէնէ Ա՛ծոյ, յոյժ աւանդապահ պատուիրանաց նորա. մարդասէր ըստ ղգաստ, սաստիկ խնամատուն և առանց ակնառութեան. իրաւանց իրաւարար, ցածուն քաղցր խոնարհ աղքատասէր, ՚ի սրբութիւս ամուսնութէնցն օրինաւոր, և կատարեալ սիրոյն Ա՛ծոյ: Այս առ իւր ընկերս ըստ պատուիրանին սիրել զնմա ընկեր իբրև զանձն. զի ՚ի զի-

նուորութիւն այսպէս կատարեալ էր վարուք լուսոյ, որ մինչդեռ մանուկ իսկ էր՝ գնայր նա ամ պատուիր բանօքն տեն և արդարութիւք, անարատութիւք և ամ պաշտամամբք առ ընկերս իւր։ Նշանաձրոյթ էր, և ունէր գնախանձն այ, և եռայր սուրբ հոգւովն. այս պէս իսկ էր ամիս կատարեալ յամի։ Նա զաղքատս և զտառապեալս այսպէս սիրէր և ակն ածէր ի վերայ նոցա, զի զիւր ինչ զհանդերձս և զկերակուր հաստարակէր ընդ նոսա։ Նա նեղելոց և տարակուսելոց օգնական և վերակացու, և ջատագով ամ զրկելոց լինէր նա։

Ո՛ինչ դեռ ևս զգենուորական ձեւն յինքեան բերէր, և զարդարեալ էր գեղեցիկ պատմուճանաւ և զարդ վայելուչ, և ցանկալի գեղով իւրով երկայն հասակաւ, և չքնաղատես հերօք վարսից իւրոց, կայր ի սպասու Թագաւորին մծտ ի մեծս ազգային, զարքունական սուսերն զպողովատիկն զոսկեպատեանն հանդերձ ականակապ մարգարտազարդ կամարաւն ի սպասու նորա բարձեալ ունէր, առ հասարակ ատենին զբողոք բարձեալ աղաղակէին՝ եթէ Ելեսիս լեզի մեր հովիւ։ Ո՞ր իբրև լուեալ, զբողոք բառնալով՝ զանձն անարժան համարեալ, չկամէր չառնոյր յանձն։ Ոսկ յորժամ տեսանոյր զամենեսեան ի նոյն յառաջին բանին վերայ պնդեալ, զի զնոյն աղաղակէին առաջի Թագաւորին. ասէին, Ել ոք լեզի մեր հովիւ, բայց ի դմանէ. և ոչ ոք նստի այլ յայնմ աթոռ, բայց դա։ Ոսկ նա իբրև զանձնն չկամէր արժանի իրին առ յոյժ խոնարհութեան իւրում, ապա ի մէջ եկաց, ակօսս ստել սակաւ մի, խօսել զանձնէ իւրմէ զանօրէնութիս և զամբաստանս մեղաց՝ որ իւր չէր գործեալ։

Ո՞ր իբրև լուան բազմութիքն, գիտացեալ զստեղն նորա վասն անձինն, ամենեքեան առ հասարակ հանդերձ Թագաւորաւն Թալացեալ եկին ի ծաղուէ։ Ոսկ զօրքն աղաղակէին առ հասարակ. Ո՛ մեզ և ի գլուխս մեր դարձցին այն մեղք՝ զոր գործեցեր. ի վերայ անձանց մերոց և ի վերայ որդւոց մերոց լեզին գործքն, բայց դու զգործս չօրն քո Կրիգորի, զնոյն առաջնոր դութիւն նորոգեա մեզ։ Ոսկ նա իբրև այլ ինչ ոչ եդիտ տալ նոցա բանիւն պատասխանի, զի թէնամանս

լիներ զօրացն , և ասէր . Աչօրինք էք և պիղծք , ես ոչ կարեմ ձեզ հովիւ կալ , և ոչ զձեր մեղադ լնդ առ ձամբ առնուլ . ապա ոչ կարեմ աչառել , և ոչ ձերում չարութեդ համբերել : Եւ այսօր տարապարտուց սիրեք դուք զիս տարապարտ , և վաղիւ առեալ և թըշնամի և թանին զգլխոյ ձերմէ կոշկոճիչ կապեք զիս . այլ թո՛յլ տուք ինձ , անհոգուբէ ըստ իմում չափուս անարժանութեբէ զկեանս իմ տառապանօք , և մեղօք հանդերձեալ դատաստանին յաւիտենից ակն ունել լով , անցուցանել թերևս կարացից : Աչպա զբողոք բառնային բազմութեբէք զօրացն , և ասէին՝ եթէ այդ մեղաւորդ լեցիս մեզ հովիւ . զի այնչափ պնդեալ մարդկանն , չայ տեսչութենէն լիներ այնպէս : Աւ սրտին դազանութենն և յոյժ ցասմանն թագաւորին Աըշակ էնքն ձգտեալ զսուսերն արքունական կամարան , զոր նմա Աերսէսն բարձեալ ունէր ի սպասու թագաւորին ըստ օրինաց սենեկապետութենէն , ի բաց հանել ի նմանէ : Եւ հրամայեր զնա կապել զնուրով առաջև . զհերմն գանգրագեղս զվայելուչ թագադանդուր վարսիցն , զի ուրեք երբեք նման նմա ոչ գտանէր , զայն ի բաց խզեալ հրամայեր . և ընդ նմին զվայելուչ պատմուճանն , զայն ի բաց պատառեալ հրամայեր : Հրաման տայր , և բերին զՀանդերձս կղերիկոսաց զգեցուցանէին նմա . ետ հրաման , և կոչէին զծերունի եպիսկոպոսն՝ որում անուն էր Փաւստոս , և տայր զնա ձեռնադրել ի սարկաւագութենէ : Աայց յորժամ զհերմն դեռ վիրային ի նմանէ , առ յոյժ զեղեցկութենն բազումք յարտասուս հանեան՝ որք լուանն կամ տեսին , ի գեղն աւեղկեալ՝ զկերպարանն փոխելոյն : Այլ յորժամ տեսին զնա քեռան գեղոյն զարդարեալ՝ բազմաց լիներ ուրախութիւն , յորժամ ընորհք բարերարք կոչեցին զնա լինել հոգեբարձու տանն Վրթի :

Յայնժամ եդ ՝ի միտս ամենեցուն խնդրել իւրեանց հովիւ զայն , որ նոցա կարող լինել զառաջնորդութիւնն կենացն Ճանապարհին ցուցանել : Եւ մինչ դեռ իսկ զձևս զինուորուբ յինքեան բերեր յերևելիս , ներքին մարդոյն զՎէտ եր զգեցեալ յանձնիւբ , և աղնուական վարս եր յինքեան կերպարա-

նեալ։ Այլ յուսային՝ զոր ունէր խաչեալն ըզդ Ա՛ստի, և Թաղակից եղեալ էր ընդ նմին. և սիրով հաւատոյ մեռեալ էր մեղացն, և յարուցեալ յուսոյն արդարութիւնն սպասէր։ Ո՛ան այսորիկ յիրաւի արժանի եղև սա աւետարանի Հայրապետաց և տեղւոյ հարցն իւրոց առաջնոց, զաթոռն Թադէոսի Ա՛ռաքելոյ, և ժառանգութիւնն հօրն մարմնապէս՝ ի նոյն հոգևորին Դրիգորի. այլ իբրև՝ ի ՚ռնէ եղև կոչումն նմա գալ յիւրա այսպիսի, և էարկ՝ ի միտս ամենեցուն խնդրել զսա արժանի այնմ իրին։ Իսկ նա յոյժ առ Երկիւղածութիւնն և բազում խոնարհութեամն զանձն իւր անարժան համարեալ իրացն, մեծ կարգաց աստիճանին այ, յոր ձգեալ էին զնա։ Ա՛յլ բնաբարութի և միաբանութիւն և հրաման այ, մանաւանդ առ նախնեաքն, վասն նորա խիկ ասացեալ էր՝ ի տեսլեանն այ առ Յուսիկն՝ եթէ այր լինելոց է՝ ի սորա զաւակէ, լեցի լոյս աշխարհի։

Գ Լ Ո Ի Խ Դ.

Զաղագս թէ որպէս առին գնացին և տարան զնիհրսէս՝ ի կեսարիա. և եթէ զինչ շատ աքանչելիք եղեն յայ, և կամ թէ որպէս հովուեաց իւրոց հօտին առաքելոցն։

Ա՛յն գումարեցեալն զիշխանան մեծամեծս, զի առցեն զցանկալին Ա՛ներսէս, և գնասցեն ուր սովոր էին զՀայրապետսն օծանել։ Ա՛յս և բազմութիւն եպիսկոպոսացն Հայոց ժողովեցան առ Թագաւորն վասն նորին խնդրոյն. խոնարհել ամենեցուն միով միաբանութիւնք զնա ընտրել Հաճոյ Թուեցաւ ամենեցուն, զի նստցի նա յաթոռ գլխաւորութենն։ Ա՛մենեցուն միաբանութիւնք եպիսկոպոսացն և Թագաւորին և աշխարհախորհ ձուլիւք հաւանութիւնք՝ ի միասին արձակեցան և գնացին։ Ո՞չ հայր մեծ իշխանն մարդպետութենն, և զՆագարատ մեծ իշխանն սպարապետութենն, և

զԱնանիէլ մեծ իշխանն Հռոփից, և զԱբեհանդակ ոըշտունի, և զԱնդովիկ իշխանն Սիւնեաց, և զԱբշաւիր իշխանն Շիրակայ և Աըշարունեաց, և զԱղձն իշխանն միւսոյ Հռոփից, և զՊարգև իշխանն տանն Ամատունեաց. զնոսա զամենեսեան կազմեցին և արձակեցին բազում ընծայիւք և մեծամեծ պատարագօք և հաւատարիմ հրովարտակօք կաթողիկոսաց առ կաթողիկոսն Աւսեբիոս յերկիրն Պամբից, և ի մայրն քաղաքացն Նոցա ի Կեսարիա, զի ձեռնադրեսցեն անդ զուսրբն Աերսէս կաթողիկոսութիւն Հայոց մեծաց։

Աւ եկին աճին նորա ցնծութիք ուրախութիք, և տեսին անդ զկաթողիկոսն կաթողիկոսացն զսուրբն զմեծանունն զերանելին զՀոյակապն զքաջն Աւսեբիոս։ Աւ տային զհրովարտակն արքային Աբշակայ նմա. և ունէին առաջի նորա զպատարագս բերեալս։ Աւ նորա սիրով ընկալեալ զնոսա և բազում մեծարանօք, և ըստ կանոնաց օրինակի Հոգովեր առ ինքն մեծ եպիսկոպոսապետն Աւսեբիոս զբազմութի եպիսկոպոսացն սրբոցն ըստ առաքելական օրինացն, զի ձեռնադրեսցեն զսուրբն Աերսէս լինել եպիսկոպոսապետ Հայոց մեծաց։ Աւ եղեն մեծ աբանչելիք. զի մինչ դեռ այն ինչ մնեալ էին յեկեղեցին, էջ աղաւնի սպիտակ ի վերայ սեղանոյն յանդիման քահանայութեն և յանդիման ամ Հոգովըդեանն։ Աւ իբրև եմուտ Աւսեբիոս արքեպիսկոպոսապետն և երիցունքն ընդ նմա, և երիցապետ մի սուրբ՝ որում անուն Խաղ սիղնոս կոչէր, թռեաւ աղաւնին ի սեղանոյն և հանդեաւ ի վերայ նորա, և յամեաց բազում ժամս։ Ապա իբրև եհաս ժամ՝ յորժամ կամեցան զԱերսէս ձեռնադրել, վերացաւ աղաւնին ի սրբոյն Խարսեղէ, և նստաւ ի վերայ գլխոյն Աերսէսի։

Իբրև այս աբանչելիք և նշանք յայ լինէին ի վերայ առնս այսորիկ, կային հասարակ ամ Հոգովուրդն զարմացեալք, և մեծ արքեպիսկոպոսն Աւսեբի։ Աբ հասարակ աղաղակէին ի վերայ նորա, թէ Հաճոյ է, ղեր դու այ, և հոգի այ հանգեաւ ի վերայ քո. զի

1 Ձամ օրինակ ի Խորենացւոյն։

նմանութեի եղև ամենասուրբ Հոգին, որ ի վերայ առաքեալն երևեցաւ։ Այսպա ձեռնադրեցին զնա, և հաստատեցին յաթոռ եպիսկոպոսութեանն, և պատուէրն զնա. և բազումք ասէին նմա Էնկոմիա, որ ասի՝ թէ Հոգի սուրբ հանկեաւ ի նա։ Այլ նա և զան զևս զանձն իւր անարժան համարեր երացն եղելոց։ Եւ մեծաբանչեւշուք յուղարկեցին զնա. նոյնպէս և զմեծամեծ նախարարսն սատրապն Հայոց։

Եւ եկին հասին նոքա մեծապարծ երևելի հոգևոր ազգեաց փառաք ի հայաստան երկիրն. և ալքայն Աշխակ ընդ առաջ երթայր նոցա մինչև ի լեառն, որ անուանեալ կոչի Արեւծ։ Եւ անդ պատահեալ միմեանց մեծաւ լըջմտութեբ, լցեալք օրհնութեբ ողջունիւն, անդուստ յաչխարհն դարձան։ Եւ նստաւ նոքա Գերսես յաթոռ հայրապետութեե. ի հովուէն նորա բազում խաղաղութեե լինէր աշխարհին։ Օ ի ի վարս կարգաց գնացից իւրոց՝ նմանեաց իւրոց հօրն մեծին Գրիգորի, արդարև հայրաբարոյ գտաներ ա մենաբարի. զնոյն հարցն նորոգեաց զառաքելաշնորհս, նոյն գործ երևեալ անշնաս պահելոյ յաներևոյթ թշնամեացն և յայտնեացն։

Այս և առաւել ևս առաջին ծառոյն նմանեալ. որ զնոյնազգեաց զնոյնահաս պտուղս վարդապետութե բերեալ սկսեալ վերակացութեն հովուութեն՝ անկարօտ մատակարարեր զօգտակարսն, զհոգևոր ածրօտն ջամբելով։ Օ ի զնորհքն այնպէս հանդեան ի նմա, զի մեծամեծ նշանս և բժշկութիս առնէր հիւանդաց, ուր դեպ լինէր. զմոլորութիս դարձուցաներ։ Դևերն և զայսպիսի աքանչելիսս. զոր կարի յաճառեալ տեսանէր, ահ արկանելով հաւանեցուցաներ. իսկ հլուացն, որոց ականջք սրտիցն բացեալ էին, զնոսա բանիւք քարոզութեն ածէր ի հաւատուն։

Շինէր և զաւերեալ եկեղեցիսս, և կանգնէր զսեղանս կործանեալս. և հաստատէր ի կատարումն ապաշխարութե զթերահաւատս, զի հաւատացեալք յաճ՝ ապրել կարասցեն։ Այխիթարէր զհաւատացեալս յաւիտենական յուսով բարութե մինչև ի ջրհեղեղ պարգևացն. զթագաւորական աթոռն միւսանգամ եւից, և իւրոց հարցն նմանեալ որդի եղև։ Եւ ջա-

բախօսացն ընդդիմացեալ ըմբերամբերը , խափաներ և զանօրէնութիւնս և զխօսս և զգործս զայսպիսեացն միանգամայն : Այլ վասն ձշմարտութեն միւնչ՝ի մահ մարտընչեր , և զաջողակ արդարութեն քաջալերեալ խնդացուցաներ . և իւրով վարդապետութեն անձրևաւն պարարեր մնուցանել զշայեկան արդարութիւն օրհնութիւնսընդալոյս : Այլ ընդ այմ տեղիս սահմանացն Հայոց մեծաց , ընդ որ էր յառաջագոյն նորուն հարցն սերմանեալ զքարոզուն քանիկն կենաց , զնոյն և սա ոռոգեաց անձրևովն : Ո՛չ քոյն աձեցոյց մշակն հնձող , եղեալ գործակից սերմանողաց . և քաղմացոյց գյորդաբուխ արդիւնսն՝ի շտեմարանս արքայութեանն , կարգացն առաջինն հարցն մշակացն փոխանորդ եղեալ՝ գործակից լինելով :

Այս և քազում զօրութիւնս անպատում յանձին իւրում քարձեալ քերեր . նա և կարի իսկ զղջմանծութե կարգացն փոյթ արարեալ ցուցանելոյ , նախ ինքն առնելով առ իւր անձն քարի , և ապա այլոց օրինակ քարեաց դնելով , առ հասարակ վարդապետական քանիւն զամենեցուն զփակեալ դրունս մտացի քարին յորդորելով քանայր : Ո՛ ամենաքարի ուսուցաներ զսէր գյոյս գհաւատս գյորքութիւն գքաղցրութե գհեզութե զանտխակալութե զինամ ունելով դարմանոյ աղքատացն տանելոյ , և յոյս հատուցման՝ի խոստացեալ աւետիսն Քրիստ . և՝ի դատաստանացն ամենին անչէջ հրոյն՝ յիշատակօք յաւիտենականն չարչարանօք սպառնալով , անսպառական գալստեամբն Աղբդւոյն այ Յիսի Քրիստ : Այս այնու երկեցուցեալ , մինչև ամենեցուն՝ որք՝ի սահմանս Հայոց եկին քնակեալ՝ ամենեքեան հաւատացեալք ընդ աղքատս իւրեանց գիւրեանց ինչս մատակարարեալ հաւանութե հաւատարութե , և ինքեանք լըմնտութե զուարթութե գործեին :

Այս ինքն երթեալ հասաներ՝ի կողմանս Տարօն գաւառին . և ժողովեր առ ինքն զնմ եպիսկոպոսունս Հայոց աշխարհին : Ժողովեցան՝ի գեւղն Աշտիշատ , ուր զառաջինն գեկեղեցին եր շինեալ . գի նա եր մայր եկեղեցեացն , և՝ի տեղի լեալ նախնեացն ժողովոց սիւնհոդոսին : Ի ժողով հաւանութե ե-

կեալ ամենեցուն, և խորհուրդ բարեաց ՚ի մէջ արկանէին, կատարել անդ զաշխարհական կարգս եկեղեցւոյն և ժողովին հաւատոյն հաւասարուբե։ Յայնմ ժամանակի կարգեցին կազմեցին կանոնեցին յօրինեցին, և արարին զայժմ ժողովուրդս երկրին Հայոց իբրև կարգ միաբանութեանց վանականաց համաչխարհի, բայց միայն յամուսնութենէ օրինացն։ Բայց միայն զառաքելակարգ կանոնսն ՚ի վերայ ամենեցուն կացուցաներ ՚ըզ եպիսկոպոսապետսն Ղերսէս. ամենեցուն խրատտու և առաջնորդ յորդորիչ և նախանձաւոր լինէր գործոց բարեաց։ Ղ՚ամէ լինքն առնէր, և ամենեցուն զնոյն ուսուցանէր. առ հասարակ զնոյն օրինակ առնել հրամայէր յայմ աշխարհս և ՚ի գաւառս և ՚ի կողմանս կողմանս, ՚ի կոյս կոյս, ՚ի խորշս խորշս սահմանացն Հայոց. յայտ արարեալ զպատեհ պատեհ տեղիսն զատուցանել, շինել աղքատանոցս, և ՚ի ժողովել զախտաժէտս և զօրկունս և զմարմնաւալարս և զայմ ցաւոտս. և նոցունն կարգեցին օրկանոցս և դարմանոց և ռոճիկս, և պատանս աղքատաց։ Ո՚ի այսպէս ետ հրաման մեծ եպիսկոպոսապետն Ղերսէս, և սոյն կամ եղև ամ սուրբ ժողովոյն, զի այնպիսիքն միայն նստեալ լինկին յիւրաքանչիւր կայեանս, և մի՛ ելանել ՚ի մուրոյն տառապանս, և մի՛ քնաւ ելանել ըստ իւրաքանչիւր դուրս, այլ զի ամ ոք պարտապան է նոցա։ Հարկ իսկ է զի մի՛ կարգ աշխարհի, ասէ, եղծցի. այլ արժան է զի ամենեքեան առ հասարակ ողորմածութենէ և երկիւղիւ տարեալ նոցա զգարմանան, և զպիտոյս նոցա վճարեսցեն։

Ճ՚ինեաց սոյնպէս, կարգեաց կազմեաց և հաստատեաց, բազում և այլ ողորմութիս ուսուցանէր աշխարհի. բազում կարգս կանոնաց հայրենիս կարգեր։ Ա՚ւ առ յոյն յարուբե ցուցանէր ունել ահիւ կալուբե. և զի մի՛ զմահ մարդկանն առանց դարձի միւսանգամ կենդանանալոյ համարիցին, և անյուսութե՚ի վերայ գնացելոցն օձիրս գործիցեն լաւեացն կոծոյն, զանառակութիւնս աշխարհին գնելոյ. այլ յուսով ճշմ գալստեանն ակն ունել և յարուբենն նորոգութե, և իւրաքանչիւր գործոցն զյաւիտենական վճռատուցումն առնուլ իւրաքանչիւր յոյս ունելով ա-

*ւսուր գալստեանն Տեն սպասել։ Եւ զի լինիցին յա-
մենասուրբ օրինաւորք . մի ստել և մի դաւ քերել
իւրեանց ամենասուրբունըդալ կողմանց . և փախչել
աւելի ի մերձաւոր և յապգին տոհմակից խոտնա-
կութե ամենասուրբենէն . և մանաւանդ ի մերձա-
ւորական ի նուազ , և որ գամ մի այսմ նման լեալ
էր լինչ։ Եւ կանոն , հրաժարել ամենևին ի մեռեալ-
ուսյ և յարբենէ ուսեալց , և ի գաշտանիկն մերձե-
նալոց . զայդ ամ պիղծ համարէր առաջի Տեն ։*

*Եւ զնենգութեան և զքսութեան և զագահութես
և զբարակնութես , զցանկութես և զզրկութես , զա-
րուսագիտութես և զիգութես և զամբաստութես , և
զանառակ արբեցութես և զորկորստութես և զյա-
փշտակութես և զսպանկութես , և զվրէժս ի Թըշ-
նամեաց , և զսուտ և զերկնամութես և զանողոր-
մածութես և զսուտերդմնութես , և զարիւնհեղութե
սպանութես և զանամադիտութե պղծութես , որ
ոչ ակն ունէին յարութե , և որ անյուսութեն լան
զմեռեալս , ընդ մի օրինակ զամենեսեան ի միում
խորխորատ կորստեանն համարէր ։ Եւ ամ աշխար-
հին պատուիրէր , և գլխովին Թագաւորին , առ հա-
սարակ ամենայն մեծամեծացն , և ամենեցուն՝ որ ոք
ի վերայ ընկերին ունիցին իշխանութե , գութ ու-
նելով ընդ իւրեանց ծառայս և ընդ կրսերս և ընդ
աշակերտս , և սիրել իբրև զընտանիս , և մի անար-
ժանս և աւելի տարապայմանս հարկօք նեղել քան
զչափն . յուշ առնելով , զի և նոցա Տէր դոյ յերկինս ։
Այոյսիկս և ծառայից պատուիրէր՝ կալ յարդարն
հնազանդութե իւրեանց տերանց , զի ի տեառնէ լի-
նիցի նոցա վարձք ։*

*Եւ եղև խաղաղութե և նորոգութե յաւուրս նո-
րա ամ եկեղեցեաց . և յամենայն շուք պատուի ամ
եպիսկոպոսացն ընդ ամ տեղիս Հայոց մեծաց ։ Եւ
լուսաւորութիւն կարգի եկեղեցւոյ ամենապայծառ
ծաղկեաց ամենամեծ լիուք . կարգեցան կարգք կա-
Թողիկէ եկեղեցեաց ամ վայելչութե , և բազմացան
կարգք սրբութե պաշտամանցն , և պաշտօնեչին յա-
ճախուի ։ Եւ բազմացոյց զկարգս եկեղեցեաց ի շէնս
և յանշէնս . սոյն օրինակ բազմութիւք կրօնաւորաց ։*

կարգէր և ՚ի տեղիս տեղիս զպրոցս յօժարէին և ասորերէնն յայտ գաւառս Հայոց . և բազում նեղեալ և տառապեալ գերեաց փրկուածէ և գերիդարձ առնէր , զորս ահիւ քարոզուածէ փառացն Ա֊ծոյ զկէս , և զայլս զնովք փրկանօք ազատէր , և յիւրաքանչիւր տեղիս դարձուցանէր : Ա֊յրեաց և օրբոց և չքաւորաց հանդիստ և դարման առնէր , և աղքատք զօրհասնապազ ընդ նմա ուրախ լինէին . և տաճար իւր և սեղան զօրհանապազ աղքատաց և օտարաց էր և հիւրոց : Այս այսպէս առ յոյժ աղքատասիրութեանն , զի թէպէտ և չինեաց զայդ աղքատանոցս ընդ այդ գաւառս , և կարգեաց նոցա անդէն դարմանս , այսպէս զի ըստ իւրեանց անկողինս մահճացն մի ուրեք աչխատ լեային ելանել , սակայն և զիւր տաճարն առանց նոցա ոչ առնէր . այլ կաղք և կոյրք և մարմնահարք , խուլք և հաշմեալք և ցանկանեալք և կաթօտեալք ընդ նմա և ՚ի նորա ակըմբիռ դարմանէին բազմեալք : Այս ինքն իւրովք ձեռօքն լուանայր զամենեսեան . օճանէր պատէր , և ինքնին իսկ ջամբէր նոցա զիւրաքանչիւր կերակուրս , և զայդ ինչ ՚ի պէտս նոցա ծախէր . և այդ օտարք ընդ նմա , հովանեաւ նորա հանգուցեալք , դադարէին :

Այս ամենեցուն զոր ինքն առնէր՝ զայն ուսուցանէր . և ինքն ՚ոչ և զգաստ և արթուն , և զայդ մարդ պատրաստական առ բանն այդ առնէր : Այս ինքն ամենեցուն ըստ մարդարէիցն և կամ ըստ Առաքելոցն նմա նուիրեալ զաղօրմածուածէս ուսուցանէր . և եթէ զմեզս ձեր ողորմուածք պարտ է քաւել ձեզ , և զանօրէնութիս ձեր գթուածք և տրօք աղքատաց : Այս սոյնպէս տարաբ եցոյց՝ զառաքեալն յուշ առնելով , որ պաշտօն աղքատաց , զմեծն և զնախաւկայն գյառաջնորդ կաւագն Ա֊տեփաննոս և զընդգերս նորա՝ զորս ընտրեցին , որ զերկինս եբաց , և զԱրդին ընդ աջմէ Հօր այդ այս գործով արժանի եղև տեսանել :

Ա֊յնպէս և զԱ֊յծեմիւիկն իւր ողորմածուածինքն և խանդակաթ այրեացն ողբումն , ՚ի ձեռն մեծին Պետրոսի , և զհրաժարեալն զգնացեալն զմեռեալն միւսանգամ այսրէն գարձուցանէր ՚ի կենդանութիւն : Ա֊յնպէս և մեծն Պօղոս , ասէր , պատմէ՝ թէ երբև

տեսին զընորհսն , որ տուեալ էին ինձ , Յակոբոս և Կեփաս և Յովհաննէս՝ որ բուն սիւնքն էին , իբրև տեսին՝ թէ հաւատարիմ եմ ես յաւետարանն ան- Թլփատութէ , որպէս նոքա ՚ի Թլփատութեանն , ևս քաջ համարձակեցին . ձեռն ետուն հաւանութէ ինձ և Բառնաբայ . զի մեք ՚ի հեթանոսս , և նոքա ՚ի Թլփատութիւնն : Բայց միայն պատուիրեցին ինձ , ասէ , զի աղքատաց յիշատ կալցուք . զոր ես ինքնին իսկ , ասէ , փութայի ջանալ կատարել :

Այնպէս ևս առաւելագոյն զտէրունականն դնէր առաջի , որ մեծատունն էր՝ որ զնմա պատուիրանն կատարեալ էր , ապա լուաւ ՚ի Տեառնէ՝ եթէ վաճառեա զինչս քո և տուր աղքատաց , և գտցես քեզ դանձս յերկինս . և որ զինի սորին՝ եթէ դիւրին ե մտանել ընդ ծակ ասխան , քան մեծատան ապահի յարքայութէն այ : Այլ դարձեալ՝ եթէ արարիք ձեզ բարեկամս ՚ի մամոնայէ անտի անիրաւութէ , որ ընկալցին զձեզ ՚ի յարկս իւրեանց յաւիտենից : Կամ որպէս նոյն իսկ Պօղոս բարեաց գործոց նախանձաւոր լինէր , ստիպէ ամենեցուն ասելովն՝ եթէ զՀետ երթայք սիրոյ , և նախանձաւոր լերուք հոգևորացն : Որոյ գործարութէն աքայեցւոցն վասն պաշտման սրբոցն ՚ի Մակեդոնիա պատմեալ՝ նախանձեցուցեալս յորդորեաց . այլ և համարձակութէ իսկ տայ անխափան ՚ի բարեացն առաքինուէիս , թէ լաւ է յամ ժամ նախանձել ՚ի բարիս : Պարձեալ փութայ ամենեքումբք հանդերձ ըստ Քրիստի հետոցն վարել : Հայեցարուք , ասէ , ՚ի զօրագլուխն հաւատոց և ՚ի կատարիչն Յս . դարձեալ՝ թէ յիշեցէք զառաջնորդս ձեր և զվերակացուս ձեր ՚ի ձեր , որք խօսեցան ձեզ զբանն կենաց . հայեցարուք յելս գնացից նոցա , և նմանողք լերուք հաւատոց նոցա : Այլ միանգամայն՝ թէ զայս խորհեցի իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ , որ ՚ի Քս Յս . և դարձեալ՝ թէ սկսաւ Յս առնել և ուսուցանել : Իսկ ցանկալի եղբայր ետն Յակոբոս զհամօրէն իսկ զգունդս սրբոցն հանդերձ սրբասէր տեսոմբն յօրինակ առեալ ՚ի Թղթին իւրում , ասելովն՝ եթէ օրինակ առէք , եղբարք , զչարչարանաց երկայնմտութէն զմարգարէսն՝ որք խօսեցան յանունն ետն .

զՀամբերութիւնն Յոբայ լուարուք, և զկատարումն Տեառնէ տեսէք։

Ո՞չ այս և այսպիսի ինչ, և որ ինչ այսմիկ նման էին բանք, խօսեր Հանապազ. զտիւ և զգիշեր ոչ դադա ըէր ՚ի խրատելոյ և ՚ի բողոքելոյ։ Եւ իմաստութիւնք Հոգւոյն սրբոյ, որ քնակեալ էր ՚ի նմա, ըստ ամ աւուրց իւրոց ժամանակացն ամաց կենաց իւրոց երա նելի եպիսկոպոսապետն Հայոց ՚Կերսէս այսպէս առ ամենեսեան զխրատ վարդապետութեն առ Հասարակ իբրև զՀայր բազմագութ իբրև զմայր գթած յուցա նէր. զՀոգևոր սիրոյն եռանդն ածէր առ ամենեսին, առ մեծամեծս և առ մանկունս, առ պատուականս և առ անարգս, առ հարուստս և առ աղքատս, առ ազատս և առ շինականս։ Եւ զվերակացութիւնս աշ խարհի ամ հոգաբարձութիւնք, առանց ամ ծուլութե և ամ յապաղութե, տանէր մինչև ՚ի վախճան իւր, և ոչ երբեք ուրեք եղև նման նմա այլ ոք ՚ի հայաս տան երկրին։

ԳԼՈՒԽ Ե.

Ցաղագս Կերսէսի Հայոց կաթողիկոսին, Թէ զնարդ ԱՌՐՇակայ արքայէ առաքեցաւ առ Վաղէս կայսեր Հանդերձ նախարարօքն. Թէ վասն որդւոյն կայսերն զինչ խօսեցաւ շատ բանս Հաւատոյ, և կամ զնարդ կապեցաւ և աքսորեցաւ, և զայլ նախարարսն արձակեաց Հանդերձ պատարագօք։

Զայն վասն խաղաղութե ուխտին միաբանութեան դաշինն, որ էր աշխարհին Հայոց ընդ կայսերն Յու նաց, դէպ եղև առաքել անդր կազմութե մեծաւ արքային Հայոց. զի ինքնին մեծ կաթողիկոսն Հայոց ՚Կերսէս, և ՚ի մեծամեծացն Հայոց սատրապս տասն ընդ նմա առնել, զի երթիցէ. ՚ի մէջ կայսերն և ՚ի մէջ իւրեանց զուխտն Հաւանութե և խաղաղութե նորոգեացեն։ Այսպա չոգան գնացին Հասին ՚ի կայսե րական պաղատն Թագաւորացն Յունաց։

Ո այնու ժամանակաւ Թագաւորն մեծ Յունաց Կ՚աղէս՚ի խոտորութենէն հերետիկոսութեանէ աղանդու Թեանն արիանոսաց եր՚ի հաւատս։ Կ՚երդ իբրև ետես զնոսա Թագաւորն, զառաջինն մեծապայծառ փառօք մեծաւ շքով մեծարեաց զնոսա։ Կ՚ապա դէպ եղև՝ զի որդի միամօր կայսերն, այն իսկ գտանէր նո րա զաւակ, անդեալ դնէր յախտս սաստիկ հիւան դութեան. ապա Թագաւորն վասն աղօթս առնելոյ՚ի վերայ մանկանն ստիպէր զսուրբ կաթողիկոսն Հայոց զՆերսէս։ Իսկ նա՚ի մէջ մատուցեալ, խօսեալ սկսաւ և ասէ.

Կ՚ԹԷ հաւատասցես՝ եթէ տայ Քս Կ՚որդի և ծը նունդ այ միածին, լինքն յինքնութենէ և իսկ յիսկուէ, յորովայնի հօր ծնունդ և ոչ արարած, ծագումն հօր, լոյս փառաց էականին, և նկարագիր էութեան նորա. զի այն ծնունդ է և որդի՚ի քնութենէն նորա. զի որպէս հայրն՝ նոյնպէս և որդի՚ի քնութենէն յա ւաղ քան զամ յաւիտեանս՚ի հօրէ ծնեալ, յառաջ քան զլինելն արարածոց՝ ծնունդ, գործակից արար չակից յամի առ հօր՚ի սկզբանէ. զի ամ՚ի հօրէ նո վաւ եղև յերկինս և յերկրի. զի միւտ ընդ հօր՚ի սկզբանէ յառնելն զամ արարածս, և՚ի քնէ և՚ի սկզբանէ ընդ նմա ունէր զհամեմատ կերպարանս զիւ րոյ ծնողական տալոյն նմանութենէն՝ հանգոյն զուգակ ցութենէն. որ՚ի սկզբանէ աշխարհի կրել զամ քանիւ զօրութենէ, և իւրով քնական իշխանութենէն վարել ուղ ղէ և առաջնորդել ամ արարածոց. որ՚ի սկզբանէն արար և հաստատեաց զհիմունս երկրի, և ձգեաց զերկինս որպէս զխորան. որոյ ձեռքն արարին և հաս տատեցին զամ երեսս երկնից. որ արար զմարդն իսկ՚ի հողոյ, և կարգեաց զբանաւորս զխօսունս իմաս տունս անձնակամս։ Կ՚ի իբրև անձնիշխան կամաք ա պականեցան մարդիկ, ոչ ծանեան զարարիչն և ոչ զպատուիրանս նորա, որդի՚ի քնէ՚ի սկզբանէ նատեր ընդ աջմէ հօր, և աթոռակից ծնողին իւրոյ էր. իսկ իբրև ետես եթէ արհամարհեալ կայր հայր՚ի մարդ կանէ, խաղաց եկն էջ յաջմէ աթոռոյ անտի. ամիռ փեցաւ փոքրկացաւ, և՚ի կուսէն մարմնացաւ. մարդ դացաւ, և զանձն ունայնացոյց. և մարդ եղեալ, կա

մք կրեալ զվիշտն, մեռաւ և յարեաւ և կեցոյց զա-
մենեսեան առ հասարակ. և վերացաւ և նստաւ յա-
թոռ իւրոյ քնուԹեն, ընդ աջմէ Հօր՝ իւրոյ ծնողին:

Ընդ եԹէ զայս այսպէս հաւատասցես եԹէ Ա՛ն
որդի և ծնունդ է այ, որովք և բազմօք և անԹիւ
վկայուԹիք կարեմք հաձել զքեզ, և լուանալ զքեզ
'ի սուտ և 'ի սիրտ մկրտուԹենէ հերետիկոսուԹեն
հաւատոյ: Այս ընկալ դու զմկրտուԹի սրբուԹեն
հաւատոյն 'ի ջուրս յանուն Հօր արարչին, և 'ի
խոստովանուԹի ծննդեան Որդւոյն 'ի Հօրէ, որ է
յառաջ քան զյաւիտեանս և զժամանակս, որ է ըստ
քնուԹեն զոյացուէ իւրոյ. և 'ի մարմնանալ 'ի կոյս
նէ, որ եղև 'ի վաղջան ժամանակաց, որ եղև վասն
մերոյ փրկուԹե և կենդանուԹե. 'ի մահն և Թա-
ղումն նորուն Որդւոյն Հօր Ա՛ստ. և 'ի խաղաղուԹի
և 'ի միաբանուԹիւն և 'ի պարզևս նորուն Հոգւոյն
սրբոյ: Ա՝կրտեաց դու 'ի սոյն յայս խորհուրդս աքան
չելի կենաց ԹողուԹե և նորոգուԹե. և զմանուկն
քո այսմ սրբուԹեն երանուԹե լուսոյ ԹողուԹեան
մկրտուԹեն արժանի արասցուք. և խնդրեսցուք 'ի
Ա՛ստ ՀոգՀ մերմէ, զի Թողցէ զմեղս անհաւատուԹե
հերձուածողուԹեն, և ողորմի. վասն որոյ ցաւք և
տանջանք եղեն 'ի սկզբանէ և լինին: Այդմ ես լինիմ
երաշխաւոր վասն Հն ողորմածի՝ զի զմանուկն ողջ
անարատ առաջի քո կալայց, եԹէ դու յուղղափառ
եկեսցես, և իբրև զայլ որԹողոքս խոստովանեսցիս
ընդ մեզ:

Այսպա Թէ ոչ խոստովանեսցիս 'ի Ա՛ստ միածին Որ-
դին այ, զոր նախ յառաջ քան զամ՝ Հայր 'ի քնուԹէ
իւրմէ բաւական իւրոյ քնուԹե ՀայրուԹեանն ծնաւ
ծնունդ կատարեալ միածին, նոյն նման զուգակից,
և աԹոռակից և արարչակից. որ վասն սիրոյն նորա
սիրեաց զմեզ, առ սէր մեր առաքեցաւ 'ի Հօրէ 'ի
կոյս նէ Ա՝արիամ, և երևեցաւ մարդ 'ի հնոջէ այն՝
որ նման էր քնուԹե իւրոյ ծնողին, և 'ի քնուԹենէ
ունէր զքնուԹ Հօրն կերպարանաց Հօրն իւրոյ, մարմ-
նովն վասն մեր եղև իւրովք կամօք 'ի կերպարանս
ծառայի: Այս քանզի անկան մարդիկ ընկճակամ կա-
մօք 'ի ծառայուԹե, արդ ընդն նոր եղև 'ի կերպա-

բանս ծառայութենէն, զի ՚ի ծառայութէ ազատեսցէ զմեզ։ Զի ՚ի սկզբանէն յորժամ առնէր Աստ զարարածս, յետուստ արար զմարդն՝ յերևոյթ և յանեզրևոյթ իւրոյ զօրութեցն ՚ի մի և նոյն ժողովեալ. և այսպէս զնա ՚ի նոյն պնդեալ ձուլեաց զարարածս, զոր և ըստ նմանութէն պատկերի կերպարանաց իւրոց արար. և եդ զնա իշխան անճնիշխան իւրոց կացմաց։ Ոմն որոյ նախանձու սատանայի ապականեալք հնացան ՚ի բանսարկութիւն խարդախութէ պատրանացն։ Իսկ որ էին յայց ելեալ կորստական նէին, ճնաւ ՚ի կուսէն ՚ի մարդկան կերպարանս, զի արասցէ խաղաղութէ յերկինս և յերկրի, և ածցէ զնովը հայրն ճնող ՚ի հաշտութէ ընդ արարածս իւր՝ մարդակերպ պատկերացն, զի յանդիմանն լսցին ամ մերժեալ արարածքն աներևոյթն այ։

Պպա յիրաւի ուրեմն ՚ի նորոգմանն արարածոց, զնամ վերստին նորոգէ. զի եթէ իցէ ոք ՚ի Քս, նոր արարած։ Զի այն, որ հինն էր, էանց. արդ աւասիկ եղև նոր ամ. զի էին էառ զմարդկան կերպարանս, և ինքեամբ դարձեալ զնամ նորոգեալ հաստատեաց։ Ինքն եղև օրինակ մերոյ կենդանութէս, անդրանիկ ամի մեռելոցն՝ մեռանելոյն. և նախ ՚ի մեռելոցն յարութէն, զի յայտնի արասցէ ինքեամբ զնամ. զի ըզմեզ առանց փոխման արասցէ հոգւով, և անմահ մարմնով. զի մի միայն մարդիկ յանփոփոխումն հոգւոյն կայեսցուք, այլ յանմահութէ մարմնոյն. զի և աներևոյթքն դարձեալ և բանաւոր զօրութիւնքն ամ անփոփոխմանս այսիկ ընդ մեզ ակն կալցին։ “Քանզի ամ արարածք ազատեսցին ՚ի ծառայուէ անտի ապականութէ՝ յազատութէ փառաց Որդւոյն այ”։ Զի առ այն, ասեն, որ ՚ի մէնջ ՚ի կուսէ անտի մարդ ճնաւ աճն, որ մեք աստ առ ժամայն ՚ի հաստատութէն թօթափեալք, և հանդերձեալ ժամանակին ՚ի լաւագոյնն հասեալք ամենեքին, հայեցեալք սպասեալք ակն ունիմք ՚ի սկզբանէն յարարիչն և յառաջնորդն նորոգ արարածոց։ Քանզի ճնունդ և կերպարանք է նա աներևութէին այ, միածին ճնունդ Որ, արարիչ ամ արարածոց. ուստի և զհանգամանն թարգմանեալ, աճէ Թափէ Պա-

քեալ միանգամայն և ասէ՝ թէ "Լսովաւ հաստատեցան ամ որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, եթէ երևելիք և եթէ աներևոյթք, եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ իշխանութիւնք, եթէ պետութիւնք, եթէ զօրութիւնք ,, : Այս խոնարհագոյն յայտնագոյն առնէր զաստացեալսն. "Օ ի ինքն ես անդրանիկ ի մեռելոց, զի եղիցի յամի ինքն յառաջացեալ. զ՝ի նմա հաճեցաւ ամ լրութիւն բնակել, և կամ նովաւ կատարել զամ, զի արասցէ խաղաղութիւն արեամբ խաչին իւրով, նովաւ ամ որ ինչ յերկինս, և որ ինչ յերկրի ,, : Օ ի չարչարանօք ճեռն Վիճակ միածնի Աղուանից աշ, ամ՝ի նոյն ժողովեցաւ որ յերկինս և որ յերկրի :

Վհանգի մեծութիւն այ արար զամ, և կացոյց ըզմարդն ներ ամի. հրամայեաց և բազմացան : Այլ կաց ցոյց իշխանս և կարգեաց առաջնորդս : Ոսկ յորժամ՝ի պատուիրանաւանգութիւնն գործեցին առ գամ մի, անկան յիշխանութիւն՝ զոր առեալ յառաջն ունէին : Ոսկ յերկրորդին՝ լոկ միայն վասն կարօտութիւնն պիտոյից եւ իմիք իշխել, և իմիք չիշխել. զի գոնեայ ապա յետոյ յետուստ իշխելոյն ծանիցուք զշնորհն, և չիշխելոյն զամենաշինն տէրութիւնն գիտասցուք : Ոսկ ոմ՝ի՞ իցէ, որ ոչ ցանգանայ մեծութիւնն և կամ մարմնոյ առողջութիւնն, և կամ կամարարուհին կարօտիցի, որ միայն միւամ միածնի Աղուանից աշ վայել է : Ոսկ մարդկանն, ոչ առ ամենեսեան մեծութիւն, և ոչ առ քնաւ աղքատութիւն. և ոչ միշտ մեծք, և ոչ՝ի սպառ աղքատք, կամաւ մեծացեալք և կամաւ աղքատացեալք : Ամենց ծնեալ, և ոչ մնուցեալ. ՝ի չափ հասուցեալ, և անարգեալ թշնամանօք : Ա՞ի իցէ, որ սիրեաց զհիւանդութիւնն և առեաց զառողջութիւնս. յամի պակասեալք, և ոչ կարօտեալք : Կեսք՝ի կռապաշտութիւնէ և՝ի սպանութիւնս, ՝ի պոռնկութիւնէ և՝ի բազմազգի չարիք կաշկանդեալք զմածեալ կան. կեսք մոլորեալք և դանդաչումս մտօք ընդ պատահարօք[1] կապեն զամ, եթէ զբարի և եթէ զչար :

Ոսկ յորս արեգական արդարութիւնէ զլուսաւորութիւն

1 Ցերկուս օրինակս ընդ պապա- միւսում ընդ պապրոպիօփ, և՝ի րօփ, ՝ի միում ընդ պապրապիօփ, ՝ի միւս այլ ընդ պապրօփ :

հաւատոյն ծագէ, և զմեզ տգիտութենն խաւարին սեւութենն հալածէ, նոքա հանապազ յանդիմանեն զտուութիս և զմոլորուիս։ Եւ նախ իբրև գործով և օրինակ բարեաց յանձինս ցուցանելով, և ապա զայլս ուսուցանելով զնոյն. նախ ոչ երկմտելով 'ի հաւատոյն յերրորդութենէն զօրութենէ արարչութեն, և ապա զանձինս սրբութեբ և զգաստութեբ և պարկեշտութեբ պահել յաշխարհի։ Եւ կեալ ամ հանդարտութեբ ըստ կամացն Աստուծոյ, մերոյ արարչին, Որդւոյն այ. և արհամարհել կոխել զամ անցաւորս, և վերամբարձ 'ի թևս որ Հոգւոյն թռչել անցանել 'ի վերայ աղբախուսքն զօրութեանցս՝ որ աստէն առ մեզ պատաղիչքն. և այնչափ խորշել և մերժել և յանպիտոյիցս, մինչև զկերակուրս աւուրն ոռնկին արհամարհել, թող թէ զմիս կամ զգինի ձաշակել, որ զնախձաձկէ պարն յուղացուցեալ մանկացուցանէ և զձարպն, և զերիկամանքն պատեալ. ուստի բոյր և ազգի ազգի ելանեն անթիւ անօրէնութենքն։ Որ տայ այնպիսեացն, որ զայն սիրեն, ապագնաչն ըստ կամն անձանց իւրեանց։

Այլ մեզ ընդ այսր լինի վայել 'ի չնորհս մարգասիրութենն բարերարութենն, յոր ամ աղգ և ազինք խոստովանին զոր Ես Աստ ծնեալ 'ի Հօրէ, ծնեալ և ոչ արարեալ, խակակից Հօր և քնակից ծնօղին իւրում. ծագումն, լոյս փառաց Հօր, կերպարանակից իւրոյ ծնօղին։ Եւ որոց իցեն աչք մտաց, և չեն կուրացեալ 'ի հաւատոյն ձշմարտութենէն, նոցա նայելիս ցուցանէ, որոց ամ կողմանքն հայելիք են։ Ի լուսով նորա է ամ երկինք և երկիր և ամ աշխարհք, և ամենեցուն լսելիս որոշի՝ որ ամենայնիւն լսելիք են. և ամ ծածկեալք սրտից և խորհրդոց մտանեն 'ի լսելիս նորա, և զինք զամ շունչս մարմնոյ։ Եւ իւրովք կամօք երեւեցաւ մարմնով հաստակաւ անձամբ կերպարանօք և պատկերաւ, գթութենքն իւր արարչին. և ոչք սիրեն զնա, սէրն իւրեանց կերպարանէ զնա 'ի սիրոս իւրեանց, և երկիր պագանեն նմա հոգւովն ձշմարտութեբ. սրբեալ զսիրտս իւրեանց և զմարմինս իւրեանց, առնեն տաձար որ Հոգւոյն. և հաղորդք և հաւասարորդք և բաժանորդք առնին մեր

երանուելեա, զոր եամ ՝ուր և ասէ՝ եթէ "Նշանի՛ որ հաւատայցեն ձշմարտուհին,,. եթէ "Որ ետեամ զիս, ետես զՏ՚այրն իմ,,. և եթէ "Նշանի՛ որ ոչն տեսին զիս, և հաւատասցեն յիս. զի նորա զՏ՚այր տեսցեն,,: Նս միտք՝ որ յաճախուելիցն հաւատոցն անմասն եղեալ հն, ՚ի կերպարանացն Թափուր և ունայն լերև ախերակք[1]:

Իսկ որք լուսաւորեալք են տեսանելեաց աներևոյթ սրտին աչօք, որպես ասէ մարգարէն. "Ի՚ քեզ ասաց սիրտ իմ, և խնդրեցին երեսք իմ զերեսս քո,,. դարձեալ ասէ. "Նդէմ զՙոր առաջի իմ յաՙմ ժամ, զի եր ընդ աջմէ իմմէ, զի մի սասանեցայց,,. և դարձեալ ասէ. "Ուրախ եղէց յուրախութիւն երեսաց քոց,,: Ոյք այժմ ՚ի ծածուկ լուսաւորութենէն խորհրդովքն տեսանելին զնա ըստ նորա կամացն, ապա ՚ի վաղձանի դէմ յանդիման երևեսցի. որպէս երանելի Պաւղոս ասէ՝ եթէ այժմ ընդ հայեղ ի օրինակաւ տեսանեմք, իսկ յապա առ յապա յորժամ գայցէ՝ քերիցէ ինքն տալ մեզ զիւրոց փառացն զամմահութենէն և զանեղծութենէ. և յորժամ առանց նմանուեցին և առակացն գայցէ երևեալ Որդի ՙօր և Ոգւովն, յորժամ հրամայեսցէն ամենեցուն՝ եկեալ անմահութեքն՝ որք զՙծծն տեսանիցեն առաջել առ բազմացն արժանեացն ակնկալութէ, կամի երևեցուցանել զփառաւոր զգալուստն իւր, որպէս վասն երկայնմտութեանն համբերողացն և յուսալից սպասելոցն գայցէ երևեալ ՙՎՙտ ծնունդ ՙայ ՙօր: Որ ՙամ արդարոցն գայ պարգևատուն վասն վկայելոցն ՚ի հաւատոց անտի: Որոց չև ընկալեալ զաւետիսն, ՙայ վասն մեր լուսազգին խորհեալ՝ զի մի առանց մեր կատարեսցին: Օ՚ի եթէ քննեսցէ ոք զգիրս ՙաբս, յՙամ ՙածաշունչ մատեանն զսոյն և զՙծնդեղէն յաձախութէն հոգևոր պատգամացն գտանէ ոք. վասն զի կան պահլն արդարոցն և հաւատացելոցն լուսաւորք և թագքն արքայուէն յաւիտենից ժամանակին, և թէ բահաւատիցն ժխտողացն և անհնազանդիցն ժպրծհուէն պատիժք, ձարակ լինել նոցա անշէջ հրոյն յա-

1 Ցօրինակի միում առերպ:

վիտենից դատաստանին յանուն նոր, յանապատ յանսահման առանց թուոյ և առանց չափոյ ժամանակին տանջանաց զերհենին, խաւարին դատաստանին՝ որ գալոցն է։

Այլ վասն որդւոյն քո, եթէ դու՛ի ձշմարիտ հաւատս ուղղուիս եկեսցես, խնդրեսցուք՛ի նոր և դիցուք զձեռս մեր՛ի վերայ նորա, և ասասցուք՝ թէ ըստ հաւատոյն ձերոյ բժշկէ զսա Քրիստոս ծնունդ ձայ, և բարեմիտ ողջմտամբ յարիցես նա առաջի քո. և հանդերձ արքայութեանն նորոգութեանն՝ անմահութեանն յաւիտ բարեաց և արժանի արասցէ զձեզ։ Այլ եթէ ոչ հաւատասցես, զիսկզբ արդեւք լինելոյն Թողութեի և բժշկութեի. և կամ մեք զիսկզբ արդեւք իշխելոյնմք յանդիմանել կամ համարձակել և խնդրել, և կամ առնել աղօթս վասն այսոցիկ՝ որք քնաւ իսկ ոչ ձանաչէին զնր, զի բարկութիք նոր վախձանէ զայնոսիկ՝ որք ոչ ուղղուիք զնր խոստովանին. և կամ որ ոչն մարթիցէք խնդրել զնա, որք ոչ հաւատայք գիտուե պատուիրանացն նորա, և ոչ՛ի միտ առնուլ զօրինս նորա։ "Օ՛ի օրինք նոր ամբիծ են, դարձուցանեն զոգիս. վկայութիւն նոր հաւատարիմ է, իմաստուն առնէ զտղայս։ Արդարութիք նոր ուրախ առնէ զսիրտս. պատուիրանք նոր լոյս են, և լոյս տան աչաց. երկիւղ նոր սուբ է, և մնայ յաւիտեան։ Դատաստանք նոր ձշմարիտ են, և արդար է՛ի նոյն. ցանկալի է նա քան զոսկի, և քան զականս պատուականս բազում. և քաղցր է նա քան զմեղր խորիսխ"։ Ասէ որոց զանձինս իւրեանց յապականութեի տուեալ, և նիւթ հրոյ պահէ զնոսա, "Ձէ են բանք և ոչ էն խօսք, որոց ոչ լսին ձայնք նոցա. այլ նոցա ընդ ամ երկիր ել բարբառն, և մինչև՛ի ծագս տիեզերաց են խօսք նոցա"։ Ասէ որք ոչն լսենն, և որք լսենն, պատհ նոցա նր զհատուցումն նորա։

Օ՛այս ամ բանս, և որ ինչ այսմ և սմին ինչ նման էին բանք, խօսեցաւ նր Տէրն ամենայնի ընդ կայսերն. և զայն յաւել՝ եթէ յօրէ յայսմանէ ինչ յաւուրս հրնչ գետասան վասն ողորմածութեի բարերարուեն վասն ներելոյն անսացեալ քեզ, ակն ժամանակաց այնչափ աւուրց անսացեալ քեզ, եթէ ոչ ուղիղ եկեսցես՛ի

հաւատան, նշան քեզ այս լիցի. որ մինչև յայն օր ի հաւատան ոչ հաստատեսցիս, յետ ընդ եդեալ կի- տին՝ մեռցի մանուկն. զի գիտասցես եթէ հաւատա- րիմ է այս ամ, զոր խոստեցայ առաջի քո։

Այլ իբրև լուաւ Թագաւորն զայս ամ, զի մինչ դեռ խոսէրն առաջի նորա՝ նա լուռ եւթէ կայր, ոտն զո- տամբ արկեալ, արմունկն ի ծունգ և ձեռն ի ծնօ- տի՝ նստաւ այնպէս, մինչև կատարեաց խոսեցաւ ցամ զբանս իւր։ Այլ գրէին զայս սեմիոնք նոտարացի արք քային, որք կային առաջի Թագաւորին։ Այսպա մե- ծապէս ի ցասումն բզդեալ լինէր Թագաւորն, և տայր հրաման՝ երկաթի կապանօք մեծապէս կապել զնոր եպիսկոպոսապետան Հայոց զԱերսէս, և արկա- նել ի փիւղակէ. զի մինչև տեսեալ ուշ ունիցի մանւ- գանն, եթէ կեցցէ՞ եթէ ոչ. ապա յետ այնորիկ տես- ցէ զինչ արժան իցէ առնել։ Այսպա յետ ընդուլ աւուրցն հնգետասանիցն անցելոցն, սատակեցաւ մանուկն որ- դի Կայսերն. և ընդ ամ այն ժառանգ գտանէր նո- ցա։ Իբրև եղեալ և կոծեցաւ որչափ կոծեալն էր, ա- պա ետ հրամայն և ածին առաջի իւր զնոր Ա՛երսէս։ Ա՞օտ առ ինքն կոչեալ հարցանէր, եթէ ի ձէնջ քրիստոնէիցդ եղև մանկանն մեռանել։ Նոյն նա ետ պատասխանի, և ասէ. Հնգետասան օր յետ բանիցն եղեալ երկարեաց Վ՛ռ, Թերևս դարձջիք. իսկ իբրև ոչ դարձայք, սատակեցայք։ Նոյն դու այժմ եթէ հա- ւատացես, կարող է Աստուծ այ Յ՛ռ Վ՛ռ յարուցանել զնա, և հանդերձ որդւովն քո և ամ ընդանեօքն։

Այսպա զայրացեալ ընդ բանսն Թագաւորն, կամե- ցաւ զնա չարամահ առնել. ապա մատուցեալք առ Թագաւորն աւագք իւրոյ դրանն և խորհրդականք, և ասեն ցկայսրն՝ եթէ յօտար և՛ի հեռաստան երկ- րէ վանն որոյ յղեալ զդոսա հզօր Թագաւորէ, և մեծի ոմն հրեշտակք են, մի՛ ինչ լիցի դոցա զնաս ի մէնջ. եթէ ոչ, մեծ պատերազմ յառնելոց է ընդ մեզ և ընդ մեծ Թագաւորն Հայոց, և մեծ թշնա- մութիւն ի մէջ անգամելոց է. զի ոչ եթէ նորա բա- նիւ մանուկն կեցոյր կամ մեռանէր։ Այլ Թէպէտ այսպիսի քաղցր ինչ ասէին, ոչ կարէին զսրտմտութ- բարկութիւնն շիջուցանել զԹագաւորէն։

Այլ երբև յանհնարին մտանէին իրքն, և պէս-
դեալ յամառէին առնոյն բազմութիւնքն՝ զի մի զայրն
սպանցէ, ապա ուրեմն հազիւ հազիւ կարացին իւր
զօրքն ի հատան ածել զթագաւորն. այնչափ առ-
նել, զոնեայ մի՛ սպանցէ: Այլ սակայն արձակել
տալ ոչ կարացին. այլ արկին յայն չափս, զի աքսո-
րեսցի միայն: Օ՜ի այսպէս մեծապէս ձգնեալ խորհ-
հեցան իմաստուններքն, զի առ գամ միայն աքսորելովն
ապրեսցի, զոնեայ ապա առ յապա դարձ լինցի առնն,
զի մի՛ ի խռովութիւն և՛ ի պատերազմ՛ ի մէջ թագա-
ւորութեանն երկուցուննց լինիցի: Օ՜ի ասէին. Ոչ երբ-
եք ուրեք եղեալ է, և ոչ՛ ի մէջ թշնամեաց ուրեք,
և ոչ՛ ի մէջ պատերազմի թարամատար հրեշտակաց
ինչ կալևկաս և ոչ բանք, թող թէ մահ. զի ոչ երբ-
եք ուրեք՛ ի հնոց ժամանակաց հետէ, թող թէ այր
մեծ և աւագ և աշխարհի միոյ գլուխ: Օ՜ի թագա-
ւորն դոցա աշխարհին և դա, որպէս ասեն, ընդ մի
համար են. և ասեն՝ թէ աշխարհն այն, ուստի դո-
ցա եկեալ են, սիրեն զայրդ զայդ. և երևելի է դա
անդ: Այս որպէս ետուն զրոյց որք ընդ նմա եկեալ
էին, թէ ազգակից համարին զսա և մերձաւոր թա-
գաւորին. և իւրեանց աշխարհն սիրեն զայրդ զայդ:

Ասէ թագաւորն տայր նոցա պատասխանի. Ա-
րիք ոք ասացէք՝ եթէ այդ այդպէս իցէ, ով արք իմաս-
տունք. զի եթէ տէր նորա տուեալ էր ինձ՛ ի ձեռն
նորա զանարգութիւն թշնամանս, ոչ գոյր նորա մեղ
դնել բանբերելն, և ոչ պատիժ և ոչ բանք: Ասէ նա
իւրովք կամօք թշնամանեաց զիս, և իւրովք կամօք
եղև երաշխաւոր մահու որդւոյն իմոյ. և ասաց՝ բայ
ես իսկ սպանի զնա: Ասէ եթէ նորա թագաւորն զնա
առ սէր յղեաց, նա էկեն կոտորել զմեզ, վասն այսո-
րիկ առ իւր թագաւորն իսկ է զնասակար: Այլ փո-
խանակ զի ինքն անձամբ զանձն իւր կալաւ, պարա
ինչ է այնմ իմիք. ես ինձէն գիտեմ թէ չեղև՛ ի
նմանէ, մեհապարտ է:

Այսպա ոչ ինչ անսաց նոցա թագաւորն, այլ հրա-
ման ետ աքսորել զերանելին Ներսէս, և տանել զին
կենուլ զնա՛ ի կղզի մի՛ ի ծովուն մեծի, յայնպիսի
յանապատ տեղի՝ ուր ոչ մարդ կայցէ, և ոչ ջուր զմ-

պելոյ , և ոչ կերակուր . բայց սոսկ միայն անապատ էին , զի սովամահ սատակեսցէ զնա : Եւ ժողովեաց զամ իւրոյ իշխանութենն քաղաքաց զամ որթոդոքս զեպիսկոպոսս զերիցունս զսարկաւագունս , որ միանգամ յուղղութենն էին և ի հաւատս . և մեծ ժողով առ հասարակ իշխանութենն ժողովեցան : Եւ խօսեր ընդ նոսա , զի առնէքեան յանձն առցեն դառնալ ի խոտորութենէ հաւատն աղանդուրենէն արիանոսաց , և դարձցին անդրէն երթալով յիւրաքանչիւր վիճակս , և շրջեսցեն զիւրաքանչիւր ժողովուրդս յարիանոսաց հաւատն : Իսկ երբեմն ոչ ոք ի նոցանէն այսմիկ յանձն առնուլ հաւանեցան , ապա աքսորեաց զնոսա , և ընդհեց յաշխարհս օտարս , զի մի ոք ի նոցանէն դարձցի յիւր տեղիս : Եւ փոխանակ նոցա զանօրէնութենէ հովիւս կացուցանէր , յամ քաղաքս արիանոսս չեպիսկոպոսս յղեր . և եղև մեծ շարժումն և խռովումն և հերձուածք յամ եկեղեցիս տիեզերաց :

Եւ մեծ եղև ընդ ամ տիեզերք փորձութենէք նեղութեց վտանգի քան զառաջինն թագաւորացն . և այս ըստ , որ ի հերձանոսացն պատերազմին և խռովուենքն յառաջագոյն յառնէր առ այլովք դիցապաշտ մեհենաէր թագաւորօք : Մինայն Ճշմարիտ ուղղափառհաւատոք վարդապետք մերժեցան յիւրաքանչիւր ժողովրդոց , և զնոցա տեղիսն կալան մշակք սատանայի . և ամ հաւատացելոց ի Քն հասանելին բազում նեղութիւնք , և առ հասարակ ամ ժողովրդոցն լինէր սուգ և տրտմութենէք : Օ ի կալան զեկեղեցիսն ամ պաշտօնեայքն սատանայի , և հեռացան հովիւքն յիւրաքանչիւր հօտից , և եղէն խաշինք ցրուեալք . զի ոչ դոյր նոցա առաջնորդ , և ոչ ինոց տեղի աղօթից հաւատացելոց ժողովրդոց : Մ.յլ զի մի հրեշտակացն սատանայի հաւանեսցին , նոքա ի բացատ յանյարկ տեղիս՝ արտաքս և քաղաքաց և շինուց ասէին կալ յաղօթս . և ի կատարել զաղօթսն իւրեանց՝ խնդրէին ուխտիւք յայ , զի փոխեսցէ զանցուսցէ զչար ժամանակն , և դարձուսցէ զՃշմարիտ իւրաքանչիւր վիճակացուս յիւրաքանչիւր ժողովուրդսն , և յիւրեանց վաստակս ի շինեալ եկեղեցիսն՝ ուստի մերժեցանն , Թերևս դարձ լիցի նոցա այսրէն :

Իսկ յայն յիշեսանաց՝ որ ընդ սրբոյն Ներսէսի եր-
թեալ էին յերկրէն Հայոց, զնոսա բազում գան-
ձիւք լցեալ արձակեր, կաշառակուրծս կաշառաւէակս
առնէր առ հասարակ՝ որ միայն անդ էին. և բազում
գանձս ոսկւոյ և արծաթոյ, և ականց պատուակա-
նաց՝ ի ձեռն նոցա՝ արքային առաքէր, իբրև այնու
կամէր հաճել զմիտս թագաւորին: Օ՜ի ոչ գոյր չափ
և ոչ թիւ, զի անհամար գանձս առաքէր արքային
Հայոց. զրեր առ նա գիր ամբաստանութե՛ն զսրբոյն
Ներսէսէ, իբրև թէ սպան զորդի նորա: Նա արձա-
կեաց և զպանդանդան զՊրշակունեան թագաւորին
Հայոց, որ կային և ի կայսերական պաղատանն.
զի էն նորա եղբօրորդիք արքային Պրշակայ, զի մի-
ումն անունն Ճանաչէր Կնեւ, և միւսումն անունն
Տիրիթ, եւ ի ձեռս սատրապացն Հայոց, և զնոսա
զայս օրինակ անդուստ յուղարկեր:

ԳԼՈՒԽ Զ.

Ցաղագս եթէ զնարդ, իբրև աքսորեցաւ սուրբն Ներսէս և ընդեցաւ ի կղզին Յանապատն, թէ արպէս կամ զնարդ կերակրեցաւ, և կամ արպէս յայ եղեն աքանչելիք զամն ինն:

Պան իբրև սրտմտեալ թագաւորն Վաղէս յա-
րոյց հալածանս ի վերայ եկեղեցեաց սրբոց ընդ ամ
կողմանս իւրոյ իշխանութեանն, և զամ եպիսկոպոսս
մեկնեաց ե՛ւ զան յիւրաքանչիւր ժողովրդոց և ընդէց
զնոսա յօտարութի՛ն, առաւելիւր նիւթեալ մեծաւ
բարկութե՛ ի վերայ սրբոյն Ներսէսի. վասն զի պատ-
ճառք մահուան միամօր որդւոյն սիրելոյ իւրոյ եղև
նա, ապա չարապէս չարութի՛ն դառնութի՛ն մահուան
կամէր վճարել զնա: Որում մեծամեծքն և ամենայն
խորհրդականք թագաւորին չհաւանեալք չառնուին
յանձն, այլ հազիւ հազիւ կարացին թափել ի մա-
հուանէ: Պայա ետ հրաման ընդհանուր զնա ի կղզին

մի մեծ ովկիանոս ահագին ծովու, յանապատ յան-
ջուր տեղի մի՝ ուր ոչ բոյս ինչ դալար, և ոչ արմատ
ինչ, և ոչ այլ ինչ ամենևին՝ որ ինչ ՚ի պետս մարդ-
կան լինիցի. բայց միայն քար և աւազ ապառաժ, և ոչ
ձանապարհ ուրեք ընդ այն, և ոչ գնացք ինչ նաւաց:

Ապա անցուցին զնա ՚ի տեղին հրամայեալ, և ընդ
նմա արս եւթանասուն. այլ արքն որք կէսքն եպիս-
կոպոս էին յայլոց քաղաքաց, կէսք կղերիկոսք յայլոց
եկեղեցեաց: Յոկ նա խնդայր և ուրախ էր ընդ այն,
զի եհաս նմա կրել չարչարանս վասն անուան Յի-
սուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ: Եւ էին նորա այն որք ընդ նմանն
աքսորելոցն յիւրոցն՝ երկու. անուն միոյն Յաստոմ
սարկաւագ, և երկրորդին՝ Տիրանամ. և այլքն եւ-
թանասունքն որ ընդ նոսա, զորս ուստեք ուստեք
ընդ նոսա ամացեալ ՚ի նաւն՝ ՚ի կղզին խաղացուցին:
Եւ գնաց մեհենեցաւ նաւն՝ որ զնոսայն տանէր, և
ըստ հողմոյն յաջողութեամբ ՚ի հնգետասան օր հասա-
ներ ՚ի հրամայեալ տեղին. և թափեաց զնոսա նաւն
՚ի կղզին, և ինքն այսրէնն դարձաւ:

Եւ յայնմ կղզւոջ ոչ գտաներ ոչ ջուր ըմպելոյ և
ոչ դոյզն ինչ արմատ, զի անարմատ աւազ միայն էր.
զի վասն այնորիկ իսկ տարեալ էր զնոսա անդր, զի
սովամահ արասցեն զնոսա ըստ խստութեամբ Թագաւո-
րին հրամանին: Եւ եղև երբեմն եհաս նոցա յամել
ամսօրեայ մի ժամանակս, որ տակարագոյնքն էին ՚ի
նոսա՝ սկսան նքողել ծարաւել նուաղել և ներկանել
դորսովքել ՚ի քաղցոյ կամ ՚ի ծարաւոյ: Ապա մխիթա-
րել և քաջալերել սկսաւ զամենեսեան Եղերսէս, և
ասէ. Պինդ կացէք, հաստատուն լերուք, և մի երկըն-
չիք. զի այն որ մեր Քն Յն որ հրամայեաց ծառոյն
սաթեկայ բերել զնոցին պտուղ, և ընկալաւ զՅսահակ
կենդանի զոհ, և օրհնեաց զՅակոբ ՚ի պանդխտութե,
և ապրեցոյց զՅովսէփ ՚ի ծառայութենէն և տիրացոյց,
հրամայեաց և մորենւոյն հրով տերևել ծաղկել, և
օդոյն հրամայեաց քաղցրութեն հացին կերակրոյ ՚ի վե-
րուստ ցօղել, և զլորամարգին ՚ի Թուխնոց տալ ապրս-
տամբող և դառնացող ժողովրդեանն, և ինքն Քն
վկայ եղեալ՝ ընդ նոսա շրջէր յանապատին յանչրդին,
և զքաղցրութեի ջուրցն ՚ի ծարաւ նոցա մատուցա-

նեը , և խորհուրդ հանդերձելոյն՝ որ առ յապա լի-
նելոյն էր՝ գուշակեր գաւազանաւն ՚ի ձեռն Աովսէ-
սի , վէմն խոցեալ՝ հոսեր նոցա ջուր , զնոսա անդ զա-
ռաջինն օրինակաբար կեցուցանելոյ , և ինքն կերակրեաց
՚ի սակաւ հացէ զժողովուրդն յանապատի անդ , և
ըստ ծառոյն՝ որ զկոյն եբեր՝ ինքն զնաչէն պրկեալ
կախեալ խաչեցաւ , և օրինակաւն ըստ նմանութեանն ՚ի
կողն խոցեցաւ , և եհան մեզ անտի ջուր փրկութե-
՚ի լուացումն սրբութեանն ապաշխարութե՝ յաղագս կե-
նաց մերոց , և ինքն վասն մեր հաց եղև , և զարիւնն
իւր ըմպել ետ մեզ , զի զմարմնին ՚ի մարմնին խառ-
նեսցէ և արիւնն յարիւն , զի զնծութեամբ յոգիս մեր
միացուցեալ , զմեզ ընդ Որդւոյն , և ՚ի վախճա-
նի զմեզ բնակիցս ՚ծութեանն արասցէ . արդ որ այս-
չափ երախտիս առնէր մեզ , մինչև մեք անգամ բանս
գոհացողութե փոխարէն ընծրհս ոչ հատուցանեաք
նմա , իսկ արդ զիա՞րդ վասն անուան նորա արժանի
եղեալք սակաւիկ մի թ-ենամանաց՝ սովամահ լինչ կար-
ծիցեք լինել : Ա՛յդպէս . այլ հաւատով խնդրես-
ցուք , և տացի մեզ կերակուր : Իսկ արդ նշա՞ն խընդ-
դրեմք , ոչ . այլ նշան թերահաւատից պիտոյ է , և
առ զչարան դարձուցանելոյ յուղղուն . այլ մեզ , զի-
տէ ՚ձր զպիտոյսն մեր և զօգտակարսն , և ըստ այմմ
պատրաստէ զինչ և պիտոյ է մեզ : Իսկ մեք ոչ այն-
պէս , որ քա՛ւ և մի՛ լիցի , որպէս ասացաւն . ասէ ,
“ Ո՛չզ չար նշան խնդրէ ,, : Իսկ մեզ կարևորքն ա-
ռանց ուրոյն ՚ի մարդկան աղնդէն չիք հնար լինել :
Իսկ ՚ձրն կարող է և առանց կերակրոյ պահել զմեզ
կենդանիս , և կարող է տալ կերակուր . և արդարա-
ցուցանել կարող է , և արժանիս առնել՝ վասն իւրոյ
անուանն պատրաստել մեզ մեռանել . տալ մեզ զսո-
վորական ընդունելութե քնութե մահուն , որ չեր-
թայ ուրեք ՚ի մարդկանէ , այլ պատճառս միայն առ-
նէ զանուն իւր ՚ի վերայ աներևոյթ մարմնոյն . մահէ ,
և իւրոյ արքայութեանն զմեզ բազորդս բաժանորդս
առնէ : Կարող է և ՚ի խաղաղութե վաղճանել , և
առնել արժանիս արքայութե կարգացն :

Ո՞այս և այսպիսի և որ երթայր զՀետ սորին՝ իբ-
րև խօսեցաւ , արդ՝ ասէ՝ դի՛ք ծունր աւետեքեան , զի

արժանի միայն լինցուք մարդասիրութեան Աստի : Այս
՝ի գնել նոցա երիցս անգամ ծուխը և կալ յաղօթս ,
և յարեաւ ՝ի ծովու անդ հողմ սաստիկ , և սկսաւ
ընկենուլ ՝ի կղզի անդր ձուկն սաստիկ յոյժ , մինչև
շեղջս շեղջս կուտեր ՝ի ցամաքի կղզւոյն . և ընդ նմին
փայտ սաստիկ յոյժ : Իբրև հանին կուտեցին զփայտն ,
խորհէին թէ հուր պիտոյ է , որով զփայտն լուցցուք :
Յանկարծակի ինքնին լուցեալ փայտն հրով վառեր ,
և նոքա յարուցեալք գոհացեալ , զաղօթսն կատա-
րեցոյ՝ մատեան արկին ՝ի խորովս , և բազմեցան և մա-
տեան յուտել : Այս իբրև կերան յագեցան , և պէտք
եղեալ ըմպելոյ ջուր՝ յոտն եկաց Պօղոս ՝Աերսէս , և
մատուցեալ փորեաց զաւազն ՝ի կղզւոջ , և բխեաց
աղբեւր՝ ջուր քաղցր անոյշ , և անտի ըմպէին ողք հա-
նապազորդք էին ՝ի կղզւոյն :

Յայնմ կղզւոջ գայս օրինակ կերակրեալ լինէին
՝ի ծովէ անտի . և հանապազ մխիթարէր զնոսա Պօղ
՝Աերսէս , և ասէր . Ակսպէս յիշեցէք և ՝ի մտի կա-
լարուք զգանն Տէն զոր ասաց , Թէ " Ակնդրեցէք զար-
քայութիւն Այ և զարդարութիւն նորա , և այն ամ տա
ցի և յաւելցի ,, : Ցեսէք , եղբարք , զի ահաւասիկ
իբրև հայր յորդիս մատուցեալ է առ մեզ Աստ՝ խրա-
տել զմեզ , զի զմեզ պիտանիս արասցէ , և զանուն
քաջութեան ժառանգեցուսցէ մեզ , և զմեզ մեծաց
վարձուց արժանիս արասցէ : Օ՛ի զպատճառս սա-
կաւիկ առաքինութեանէ ՝ի մէնջ լինդրէ . այնչափ միայն ,
զի սիրեսցուք զնա . և ապա զանթիւ զանչափ զան-
կշիռ զանհամեմատ բարեացն առնէ զբարերարութիւնս
աքանչելեաց իւրոց . և ցուցանէ զբարիատուր զերախ
տապարգև Տատուցմունս վասն իւրոյ մարդասիրու-
թեանն : Ոչ անզի և զանձն իւր ոչ խնայեաց դնել ՝ի
վերայ մեր . այլ կերակուր և ըմպելի և ս եղև մեզ :

Այ այսպէս Տանապազ Տանդերձ եղբարբք գոհա-
նալ և օրհնել զնոր Յս Աստ , զցայգ և զցերեկ կային
՝ի պաշտաման Տէն անդադար : Ազբեգական մտանե-
լոյ կային եղբարքն , և ապա տէրունատուր կերակ-
րութիւն ուրախ լինէին , յընդհնուլ ալեացն ՝ի պատ-
րաստել զկերակուր : Իսկ Պօղ ՝Աերսէս յերեքն ա-
ւուրն ՝ի կերակէին Տասեալ միայն , ապա Ձաշակէր :

Ա. յլ զայս օրինակ համակ տայր նոցա զքաջարութիւնն ՚ի Հերսէս ամս լինն, որ եղեն յայն կղզւոջ։

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս ՚ի սքանչելեացն՝ որ եղեն ՚ի Հերսէս և կամ ՚ի Բարսիլիոս. և վասն նախանձուն Եւսեբի եպիսկոպոսի առ Բարսիլիոս։

Իսկ եպիսկոպոսն Կեսարու Եւսեբիոս յորժամ ետես զզարմանալին զնախ իջանել զաղաւնոյն՝ որ եկն ՚ի յերկնից, և հանդչել նախ յերիցապետն Կեսարու որն Բարսիլիոս, ՚ի դժկամակ միտս լինելոր ընդ նմա. և տեսանելոր զնա իբրև զօր հակառակորդ և զթշնամի։ Վասզի հուչակ հարեալ էր ընդ երկիր ամ. ասէին և պատմէին՝ թէ յորժամ ձեռնադրէին զնոր կաթողիկոսն Հերսէս, էջ հանդեաւ ՚ի նմանօրէ աղաւնոյ ՚ի վերայ՝ նախ յերիցապետն ՚ի որն Բարսիլիոս. և ապա յարուցեալ նստաւ ՚ի քահանայապետն Հերսէս։ Եւ այս հուչակ հարկանէր զնոցանէ. մանաւանդ յաշխարհն Կամրաց։ Վեծապէս թուէին մարդկանն սքանչելիքն ամ. և ամ մարդ պատուէին զնոր որ Բարսիլիոս։ Մանաւանդ վասն սրբութիւն վարուցն նորա, և կարգացն Աշմարտութիւն, և բազում խոնարհութիւն նորա, և վասն ածախսս ջերմեռանդն աղօթիցն նորա, և վասն վարուց կարգաց պարկեշտութիւնն. և կամ վասն աղքատասիրութիւնն և վասն տառապելոցն ՚ի վարուցն, և պատուիրանակատար միտակիր հանապազորդութիւն նորա, կամ վասն բազում գիտութիւնն, զի աղբեւր էր անպակաս իմաստութիւն. և վասն ուսուցիչ հաւատարիմ վարդապետութիւն նորա, զի փիլիսոփայական արուեստիւն խնայր արկանէր հանապազ զնոմ զուր բացեալ զբերանս հերետիկոսացն, և զհաւատս Աշմարիտ ամենասուրբ երր-

1 Յօրինակի միւմ փառապասէր։

ղորդութեանն ամենեցուն հաստատեր ։ Ա՛ստ այսր
ամի նայելին ընդ նա իբրև ընդ առաքեալ Քրիստի, իբ-
րև զհրեշտակ երկնաւոր. և ամ ոք վկայէր՝ թէ ար-
ժանի իսկ էր նա ՚ի ոգւոյն ։

Իսկ նա զանձն կարի ՚ի խոնարհութիւն ունէր, և
անարժան համարէր, թեպէտ և ամ ոք վասն գիտու-
արուեստին կարօտեր առ նա գալ. մանաւանդ ար-
տաքինքն իսկ ձարտարապետք փիլիսոփայիցն առ նա
ընթանային վասն իւրեանց արուեստին ։ Ա՛յլ նա զա-
զումն գարձուցանէր ՚ի պէսպէս յիւրաքանչիւր կար-
ծեացն խոտորութիւնէ ՚ի ճշմարտութիւնն հաւատոց, եր-
կրպագուս Քրիստի անթիւս մարդկան կացուցանէր ։
Նա ամ երկիր սկսան ՚ի նա նայիլ, որպէս թէ ան-
դուստ յերկնից ՚ի վերուստ իջեալ էցէ. այնչափ՝ որ-
պէս զի թէ կամիցի ոք պատմել, ոչ կարասցէ ։ Ա՛յլ
յորժամ խոժոռադէմ երեսօք տեսանէր զիւր եպիս-
կոպոսն ընդ ինքեանս՝ զԱրսիլիոս, տեղի տայր նմա,
թողոյր զքաղաքն, և գնայր նա անտի, եւ՛եալ քնակէր
ամի ՚ի չինացն՝ ուր և նմա պատշաճ էցէ կալ անդ ։

Գ Լ Ո Ւ Խ Ը.

Յաղագս թէ որպէս կայսրն Վաղէս հալածեալ զամ ուղղափառ հա-
ւատացեալս. և կամ որպէս կամեցաւ յանդիմանութիւն առնել կայսրն
՚ի մէջ ճշմարտութեանն հաւատացելոց, և ՚ի մէջ ձախող աղանդոյն
արիանոսաց, և կամ որպէս աքանչելեացն տեսլեամբն սուրբն Բարսի-
լիոս կոչեցեալ ՚ի պայքարն, և յաղթեր՝ այ զօրութեն՝ ախոյենիցն առ
եպիսկոպոսաւն Եւսեբիս. և թէ որպէս Եւսեբիոս վճարեր ՚ի բան-
դին. և կամ որպէս Բարսեղ արձակեալ լինէր ։

Ընդ այն ժամանակս անօրէնն կայսրն Վաղէս մե-
ծաւ բարկութիւն դատեր ընդդէմ ճշմարտութեանն միշտ
կայր. այս ինքն որ միանգամ զհաւատան Քրիստի արժա-
նապէս հաւատացեալն՝ թէ ճշմարիտ արդարև Աստուած
այ էցէ, և ծնունդ ՚ի քնութենէն Հօրն այ ։ Ա՛ստ այս-

սրբիկ կամէր հալածանս տանջանս չարչարանս միա-
հաղոյն [1] յարուցանել, և սաստիւ իշխանութիւն առ
ամենեսեան գրեալ և տալ հրամայն։

Ապա ՚ի մի վայր եղեալ՝ խորհեցան մոլեկան արիա-
նոսացն աղանդոյն վարդապետք. զի ասէին, թող
ընդ նոսա պայքար յանդիմանութիւն հակառակութիւն
լիցի, ազքայ. և որ կողմն յաղթեսցէ, յայտ լիցի. զի
մի զնա բռնադատ, զրադատ ինչ երևեսցի յաղթու-
թիւնն։ Այս Թագաւորն Ա աղէս զայս լուեալ խըն-
դալից լինէր. ընտրեաց իւր արս ձարտարս և պատ-
րաստաբանս, զորս կարծէր դպիրս բանիբունս, որ ա
նուանեալք էին ՚ի եպիսկոպոսունս աղանդոյն արիանո-
սաց։ Այս յղեաց առ եպիսկոպոսն Կեսարու Այսե-
բիոս. և ժամ խնդրէր ՚ի նոցանէ բանիցն քննութիւն,
զի ՚ի հանգէս ածիցէ առ նա զնովաւ, և որ ճշմա-
րիտն լիցի՝ յայտնի երևեսցի։ Ապա իբրև սահմանե-
ցաւ ժամադրութիւն, առեալ եպիսկոպոսն Այսեբիոս
զկղերն զՅամ, և ՚ի մեծ հոգս մտանէր. ուստի՞ կար-
ծիցես բանիցն պատասխանիս պատրաստել. զի և բա-
նիւ ոչ ինչ կարի էր առաւել։ Ապա հաստատեցաւ
այս բան ՚ի խորհրդեանն, զի յղեսցեն հաւանեցուս-
ցեն զերանելին Յարսիլիոս, զի եկեսցէ նա։ Օ ի
նա, ասէ, կարող է բանիւ զօրութեն. նա մեծ է,
ասեն, ՚ի նմա ընտրչքն խափանել զնենգութիւն դա-
ւաճանութեն սատանայի. զի խորհի նա ՚ի վերայ սրբոյ
եկեղեցւոյ նորա, զոր ինքն արեամբն ստացաւ։

Դրեաց Թուղթ աղաչանաց եպիսկոպոսն Այսե-
բիոս առ երիցապետան Յարսեղ, և մեծաւ պաղատա-
նօք որ ինչ վասն պատուին պաշտամանն. զի մի դիցէ
ինչ ՚ի մտի զառաջինն եղեալ բանիցն գժտութիւն. այլ
վասն զի առ ոճ հաւատոց են [2] բանքն և քննութիւնքն,
վաղվաղակի փութասցի գալ առանց դանդաղանաց։
Ընկերն և կղերքն Յամ ձեռնադիր աղաչանաց, զի մի
ինչ դանդաղեսցի գալ, այլ յարուցեալ փութանա-
կի երթիցէ։ Այս արս հաւատարիմս պատուականս
յղեցին վասն վաղվաղ գալոյ։

Այս այն ինչ արքն յուղի անգամ, որ երթային

1 Յերիս օրինակս Ֆահաղոյնս։ 2 Յոմ օրինակս հաւատոցին բանքն։

ածել զնա անդր. արդ մինչ դեռ յուղի անգեալ էր Թայլին արքն՝ ելին ի ձանապարհի, ըզն Խարսիլիոս ուր էրն՝ մինչ դեռ ի պաշտամանն ետն կայր, անկաւ նմա քուն ծանր Թանձրամած, և տեսանէր ի տես լեան, զի այդի մի էր մեծ և վայելուչ, քաջաբեր լի պտղով. և խոզք երեք անգեալ ելին յայգին, և մըտեալք ի ներքս ի յայգին՝ ապականէին զայգին և բրէին։ Պատառէին զաղուամ ունջս որթոյ, արմատաքի խլէին և զտաշտն գլխովին և զաղուկ ընջովին, և մեծամեծ ապականութիւն ի ներքս գործէին։ Եւ մնատուցեալ էին այսիգործքն, զանային և ոչ կարէին հանել զինասակար խոզն յայգւոյ անտի։ Ապա զաղաղակ հարեալ գոչէին առ Խարսիլիոս, և ասէին. Աթէ ոչ դու, Խարսիլիոս, եկեսցես, ոչ ոք կարէ հանել զխոզս յայգւոյ աստի, և ոչ մեծ ապականութիւն դադարեսցի. աճապարեա եկ հասիր, զի տակաւին աւասիկ ինասս մեծամեծս առնեն։ Ապա մնատուցեալ Խարսիլիոս հանէր զինասակարս զխոզն յայգւոյ անտի, և կազմէր զնախատածն։

Եւ զարթեաւ սքանչելին Խարսեղ, և զարմացեալ ընդ այն տեսիլն, էր մտախոհ. և խորհէր ընդ միտս իւր վասն տեսլեանն՝ Թէ զինչ լիցի. և անդէն հասեալք մնատուցանէին նմա զԹուղքն առաքեալքն ի կեսարիայ քաղաքէ Եւսեբի եպիսկոպոսի։ Ա՛յլ երբեմն ընթերցաւ, խնդայր և ուրախ լինէր. զի գիտաց Թէ յայ պատրաստեցաւ կոչել զնա ջատագով ճշմարտութեն առ ի տալ պատասխանի։ Յարուցեալ վուԹամանակի գնաց զհետ կոչելեացն ԹղԹին. և ջոգաւ առ եպիսկոպոսն Եւսեբիոս։ Եւ երբեմն խորհեցան ընդ միմեանս զարժանն, ասաց Խարսիլիոս եպիսկոպոսն Եւսեբիոս, զի խնդրեսցէ ի կայսերէ իշխանութիւն՝ զոք կերիցանց տանել ընդ իւր։ Եւ մնաներ Եւսեբիոս առ կայսրն, խնդրեր ի նմանէ և ասեր. Երկուս ածեր ինձ ախոյեանս, Թոզ եկեսցէ մի ոք ընդ իս յերիցանց իմոց։ Եւ հարցաներ կայսրն յարիանոս եպիսկոպոսն, և յանձին կալան նոքա Եւսեբի քանի՝ ածել ընկերս ընդ ինքեան, յորժամ գայցէ յատեանն։

1 Յերիս օրինակս չի տուի։

Ւսկ իբրև ժամ առնին հասանէր , առեալ կայսերն զեպիսկոպոսն Կաեբիոս , և ընդ նմա երանելին Ղասիլիոս երիցապետն , և երկու ախոյեանքն հակառակուածին՝ որք ի կողմանէն կուսէ սատանայի էին , այս ինքն արիանոսք եպիսկոպոսքն , և մնին ի բանից ի քննուածէ հակառակուածէ վասն ահ մերոյ Յեսի Քրեսի Աստուծոյ այ , եթէ իցէ ծնունդ և որդի ի ննուածէ Հօր այ , եթէ ոչ : Ապա Հոգւով սրբով լցեալ լինէր երանելին Ղասիլիոս , որ կայր զնիա գոյն եպիսկոպոսին Կաեբի . և սա գրեր վկայուած ի գրոց Աստուածոց ի սկզբանէ յօրինացն և ի մարգարէից և Աւետարանչաց և յայմ ծաշունչ գրոց . յայտ առնէր և ցուցանէր , և զերկոսեան ախոյեանսն սատանայի կարկեալս ըմբռնեալս ամենասպառեալս հանդերձ Թագաւորաւն կացուցանէր :

Ապա նայեցաւ Թագաւորն Ա աղէս ընդ եպիսկոպոսն , և ետես զի քրտնեալ էր , սկսանէր խօսել և ասէր . Այդ զի՞ է , զի զայդչափ հոսին ի քէն քրտունքդ . զի ի բանս Աշմարտուածէ քննուածէ վարձականագրչաւդ յաղթեցեր : Նա պատասխանի Ղասիլիոս Թագաւորին և ասէր . Երկուս խոզս և մի հէր վարեալ այնչափ ընդ երկար Ճանապարհ , և դու ասես . Օ՛ի՞ ես քրտնեալ այդչափ : Ապա զղջացաւ Թագաւորն Թէ ընդէր զԱսրսիլիոսն հրամայեցին օժանդակ քնաւ Կաեբի Թողուլ ի նեղսն : Ապա յոտն կացեալ ամենով արիանոսքն ասացին ցԹագաւորն , Թէ ընդէրն այս աշխատուի քննուածեց են . այլ տիրապար տուր հրաման . զի որք քո կամացդ ոչ լուիցեն , անկցին ի տապնապ նեղուած : Նա լուծեալ զատեանն վճարեցաւ :

Նա ետ հրաման՝ զի զԿաեբիոս արկանել ի բանդ , և ընդ նմա զքաղուման , և նեղուածէ ի վերայ ուղղահաւատ որթոդոքսաց քրիստոնէից հասուցանէր . և ետ հարկս ի վերայ եկեղեցեացն տուժիւք մեծաւ ծանրուածէ տուգանօք : Յայնժամ ի դառն կապանացն պատուհասէն մեռանէր եպիսկոպոսն Կաեբիոս ի նեղսն ի բանդին : Ւսկ վասն սրբոյն Ղասիլի ասէին ժողովուրդքն Աեսարու . Նթէ ոչ արձակէք զդա ի բանդէդ , այրեմք զքաղաքս զամ՝ Յո-

*ժամ ամենեքեան միաձայն զայս աղաղակէին , Թո-
ղացոյց Թագաւորն , և արձակել հրամայէր զերանե-
լին Բարսիղիոս ։*

ԳԼՈՒԽ Թ.

*Յաղագս Թէ որպէս արարին զնոքն Բարսիղիոս եպիսկոպոս , կամ որ-
պէս եղեն յետ գանձանն որ ի քն հաւատացեալ էին ժողովուրդն ժողովել , և նոքա խնդուե-
բերեին և տային ի դուրս վասն կենարարին մեծին Աստուծոյ . և կամ զի-
արդ խնդրեին ուխտիւք և խնդրուածովք ի վերայ իւրաքանչիւր եպիս-
կոպոսաց ։*

Այն ժողովեցան ամ եպիսկոպոսք իշխանութեն Կեսարու , և ընտրեցին զնոքն Բարսիղիոս առնել զնոք եպիսկոպոս Կեսարու ։ Այլ իբրև ժողովեալք էին ի միահամուռ հաստարակ միաբան ամ եպիսկոպոսք ի ձեռնադրել զսուրբն Բարսեղ , էջ աղաւնին յերկնից և հանգեաւ ի վերայ նորա , որպէս յառաջնումն յառնելն զեպիսկոպոսապետն Ղերսէս ։ Այլ եղեն զարմանալիք մեծապէս յայս ամենեցուն . սկսան գոհանալ զմարդասիրէն Աստուած , զի որ յանձն իւր յայտնեաց զնոքանս աստուածուքեն , զայն և ոչ ի ծառայիցն և ի սրբոցն արդելոյր ։ Այլ եկաց Բարսեղ յաթոռ կաթողիկոսութեն Կեսարու ։

Այլ Թագաւորն Պ աղէս նեղեր զքրիստոնէից ժողովուրդն . Օ , ասէ , որ քրիստոնեայ անուն յիշեաս նուքե իմում կայցէ , մի գոցի նորա արծաթ և ոսկի , զի տայցէ յաղքունիս ։ Այլ սկսան ժողովել ի զօրաց ի զօրավարաց և ի քաղաքաց քաղաքաց երդմամբ , զի որ զայն անուն ունիցին , մի գոցի ոսկւոյ կամ արծաթոյ զանակ առ ումեք . ապա եթէ առ ումեք գոցի , մեռցի ։ Այլ ամ որ խնդրութիք բերէին տային ի դուրս վասն անուանն Քրիստի , կամեցեալք խնդութիք կրել ցպատուհաս ։ Այլ ստիպել սկսան

և գործակալքն Թադաւորին ժողովել արծաթ և ոս. կի ՚ի ժողովրդոյն կեսարացւոց քաղաքին . ապա քա. ջալերել սկսաւ զնոսա երանելին Բարսեղիոս, զի խրիւ դամիտ սրտիւ բերցեն : Կսկսաւ ասել ցնոսա այսպէս՝ Թէ Կերէք ՚ի ձեռն իմ, ես լինիմ այդմ երաշխա. աւոր . զի նոյն ինքն ՏՀՆ միածին Որդին այ , վասն որոյ նա խրոխտացեալ է ՚ի մարտս , սատակեսցի ՚ի նմանէն : Կայլ դուք վասն ՏՆ ձերոյ զափշտակուածն ընչից ձերոց խնդութեաբ ընկալարուք . զի ձեզ յերկինս պահի գանձն՝ որ ոչ անցանէ , այլ զի զայս գանձս ես տաց ձեզ դարձուցեալ ձեռն ՚ի ձեռն ՚ի հուպ ժամանակի : Կպա ՝ամ ժողովուրդք քաղաքին Կեսար. րու եկին բերին ՚ի մի վայր ժողովեցին որ մի անգամ ոսկի կամ արծաթ ուրուք գտաւ . լցին զեկեղեցի , և ածին զնշխանան Թադաւորին զՀաւատարիմն . կրկ. քեցին զդուրս եկեղեցոյն :

Յետ այսորիկ ետ հրաման Թադաւորն Կաղէս կապել կրկին զեպիսկոպոսապետն Կարսեղ , արկա. նել ՚ի բանտ ՚ի նեղուածն . սոյնպէս զ՚ամ եպիսկոպո. սունս ընդ ՚ամ քաղաքս : Կայլ ՚ամ ժողովուրդն յուխ տս և ՚ի խնդրուածս լինէին վասն քարկուածին Հա. սելոյ , զի դադարեսցէ , և դարձ լիցի Հնմարիտ Հո. վուացն յիւրաքանչիւր տեղի և յիւրաքանչիւր ժողո. վուրդս :

ԳԼՈՒԽ Ա.

Թէ զնարդ կոչեաց կայսրն Կաղէս զսուիէստէան ՚ի յանդիմանուածն ընդդէմ Հնմարտուածն , և Թէ զնարդ եաես սուիէստէան զքաջանչելին . տեսանելով զքաջմուածն վկայեին ՚ի նեղքս ՚ի վկայարանին . կամ զնարդ կայսրն Կաղէս սատակեցաւ Նշանաւքն եղելուք յայ . և կամ զնարդ խաղաղուածն լինէր եկեղեցեացն այ :

Կպա խնդիր հրամայեր առնել Թադաւորն Կաղէս , զի տեսցեն զտացեն այր մի Հարտար , որ կարող լիցի դնել զբով բանս դիմադարձուածն ընդդէմ Հա.

ատող քրիստոնէութեանէ։ Այս պատմեցին նմա, զի էր այր մի սուիետաէս Ճարտար ի քաղաքի միոջ։ Այդ առաքեաց կայսրն առ նա մագեստրիանոս, զի երթիցէն փուլթուլ և անզքաղապէս զայրն առ նա ածցեն. և առեալ ածին փուլթապէս։

Իբրև գնացեալ գայր օթևանս երկուս, դէպ եղև նոցա դիպել այլ քաղաքի միոջ. և արտաքոյ քաղաքին վկայանոց մի սուրբ տիկնոջն Ծոկղի։ Իբրև պատահեաց այնմ, էջ սուիետաէս, և իւր վանս ունէր ի ներքս ի վկայանոցի անդ. իսկ մագիստրիանոսքն ուղնէին վանս իւրեանց ի քաղաքին։ Այս իբրև կերաւ հաց սուիետաէսն, էարկ անկողնին, և փակեաց զդուրս վկայանոցին. և ինքն ի նիստ եղեալ ի վերայ անկողնին, կամէր լինել ի կողին. մինչ դեռ արթուն էր, աչօք բացօք տեսանէր, զի յանկարծ բացան դրունք վկայանոցին, և եղև ժողով մեծ բազմութեանէ վկայիցն, որ երևեցան մեծապէս փառօք։ Այս եւս ներ ընդ առաջ նոցա սուրբ տիկինն Ծոկղէս զարդարեալ մեծապայծառ, զի նշոյլք որպէս ի լուսոյ հատանէին ի նմանէն. և առնէին միմեանց ողջոյն, և ասէր ցնոսա տիկինն Ծոկղ Թէ Քարի եկիք, սիրելիք բարեկամք, և վաստակաւորք Քրիստի։ Ցուեալք միմեանց ողջոյն, արկեալք զիւրաքանչիւր զաթոռան, նստէին կարգաւ։ Այդ սկսանէին սուրբքն խօսել, և ասէին. Սուրբքն ետն, որ չև էն հրաժարեալ յերկրէս, դեռ ևս աստէն ի նեղուէ էն. էն որք ի կապանս էն, էն որք ի փիւղակէս էն, էն որք յաքսորս, և էն որք յայլ բռնութեանէ էն ի զրպարտութեան ի հարկս և ի խոշտանգանս չարչարանաց։ Այս մեք փութապէս ժողովեցաք, զի մի անտեսութեանէ անփոյթ առցուք նախանձախնդիր լինել ետն հաւատացելոց։ Այ ասն զի մանաւանդ բազում մշակք ետն խափանեալ կան, և բազում անդք ի դերև ելին, և բազում այգիք խոպանացան. պարտ է մեզ զխափանիչս մշակացն զայ աղէս խափանել, զի ետ մշակ ի գործ իւր կանխեսցէ։ Այ քաջ մշակն Քասիլիոս յիւրմէ գործոյն կայր խափանեալ։ Այդ եկայք առաքեսցուք ի մէնջ երկուս, որք երթիցեն վճարիցեն ի կենացս զչարագործն Այ աղէս։ Այդա միւմ անուն էր Սարդիս ի

նոցանէ , և միւսումն Յակոբոսոս . արձակէին զնո-
սա , դնէին ժամ և ասէին . Ի սոյն ժամ եկեսջիք
դուք և մեք : Եւ յարուցեալ գնացին և մեկնեցան :

Եւ զայս ամ լուեալ սոփեստէն , որ էր ի վկայա-
նոցին , և տեսեալ զայս տեսիլ աչօք բացօք , և կայր
զարմացեալ , և անքուն լինէր մինչև յառաւօտն զը-
ցայգն : Եւ ընդ այգս այգոյն եկին հասին մագիս-
տրիանոսքն , և ասեն ցսոփեստէն . Երի գնասցուք
զձանապարհս : Եւ խօթապատճառս լինէր , և ոչ կա-
րէր ի տեղւոյն խաղալ : Յորմէ սկսան նոքա ստիպել
զնա , իսկ նա Թալանայր , հանէր զոգին , ոգի զոգւով
աճէր , և ոչ կարէր բանիցն տալ պատասխանի մինչև
յերեկոյ : Ապա յորմէ երեկոյ եղև , Թողին զնա մա-
գիստրիանոսքն ի վկայանոցին , և գնացին ի քաղաքն
ի վանս իւրեանց : Եւ սոփեստէն փակէր զդուրս
վկայանոցին , և ի կողմն եղեալ յիւրում տեղւոջն ,
յանկարծակի դարձեալ երևեցաւ նմա , զի բացան
դրունք վկայանոցին , եկին կուտեցան , և լի եղև վկայ-
անոցն նոքիւն վկայիւք : Եւ ելանէին միմեանց ընդ
առաջ մեծաւ ուրախութիւ , և տային միմեանց ող-
ջոյն . ապա արկանէին զաթոռս իւրաքանչիւր կար-
գաւ յօրինեալ բոլորէին կարգէին ի նստել : Ապա
գային սուրբքն Սարգիս և Յակոբոսոս երկոքեան ի
գործոյն՝ յոր առաքեալ էին , և մտանէին ի ժողովս
սրբոցն : Ապա հայեցան բազմութիւն ժողովոյ վկայիցն ,
եթէ Որպէս յոր գործ երթեալ էիք՝ վճարեցէք :
Պատասխանի տուեալ ասէին . Թէ Որ իսկ յորժամ
ի ձիոջ գնացաք , սպանաք զթշնամին Քրիստոսի
զայ աղէս . և ի սոյն ժամ առ ձեզ դարձեալ եկեալ
եմք առաւել առ ձեզ : Եւ յարուցեալ գոհանային
Քրիստոսի զնոսանէ մերմէ Յոհ ՎՀոհ .
և ինքեանք մեկնեցան յիւրաքանչիւր տեղիս : Եւ յա-
րի մեծի լինէր սոփեստէն մինչև յայգ յառաւօտն :

Ապա իբրև այգ եղև , եկին մագիստրիանոսքն , ա-
սեն ցսոփեստէն . Երի գնասցուք առ կայսրն : Յորմ
պատասխանի տուեալ , ասէ . Կայսրն մեռաւ , արդ
մեք առ ո՞ երթիցուք : Եւ բազում վիճումն ի մէջ
եղեալ նոցա վասն այսր բանիս , և գրաւական եղեալ
ի մէջ վասն այսր բանիս մինչև յերիս աւուրս : Եթէ

ոչ, ասէ, հարցին աւար վաճառք, և քաղաք յա-
փշտակեացին, եա՝ եթէ կայցէ նոյն կայսրն՝ գվնա-
տեցայց, զի իշխեցի զայս Ճառել: Այսպա Թոյլ տային
նմա մագիստրիանոսքն մինչև յերիս աւուրս. և յետ
երից աւուրցն ատուգեցաւ զբոյցն, զի մեռեալ էր
կայսրն:

Այսպա յետ այսորիկ արձակեցան ամ, որ միանգամ
ոք կայր ի պատիժս կամ յաքսորս. և դարձան ու-
րուք ուրուք որ միանգամ ինչք էին յափշտակեալք:
Նոյնպէս և զկեսարացւոցն հրամայեաց տալ զիւ-
րաքանչիւր իրաց. և կոչեցեալ սրբոյն Խարսղի, զի
զիւրաքանչիւր առցէն, և ոչ կամէին հուպ լինել: Օ՜ի
Թէպէտ և ասէր ցնոսա Խարսեղ՝ եթէ ահաւասիկ
երաշխաւոր իմ Թափեցաւ ձեզ, զի ասացի, Թէ և
ասց ձեզ ձեռն ի ձեռն ի ձեռս ձեր: Նա ոչ ինչ կա-
մէին ունկնդրել լինել, այլ ասէին. Այդ ի գանձ ան
երթիցէ, որ դատեցաւ զդատաստանս մեր, և խըն-
դրեաց վրէժ ազ եկեղեցւոյ ուխտի իւրոյ: Նա ոչ ոք
ի կեսարացւոց անտի հպեցաւ յարծաթ իւր, և ոչ
մի ոք. բայց Թողին զայն ի գանձ եկեղեցւոյն: Այսպա
էառ զայն արքեպիսկոպոսն, արար աւազանս մկրտուե
ինքոյ տալոյ. և կան հաստատեալ աւազանքն արծա-
Թիք ի տուն լուսարարին մինչև ցայսօր ժամանակի:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս գարձի իշխանացն անդրկն յերկիրն Հայոց, որք երթեալք
էին առ կայսրն Վաղէս, զի եկին գարձան առ տէրն իւրեանց Ար-
շակ. և կամ ոչպէս տրամեալ Թագաւորին Արշակայ ընդ կայսրն,
ոչբաւ ինչ ՀնաԱեաց ասպատակաւ կողմանց իշխանուԹենէ Թագաւո-
րուԹեան Յունաց:

Այսոքիկ էն իշխանքն, որք չոգան ի Թագաւո-
րէն մեծէ Արշակայ ի Հայոց աշխարհէն առ կայսրն
Յունաց առ Վաղէս: Ինքնին մեծ եպիսկոպոսա-

պետն Հայոց Ներսէս. և մեծ նահապետն մանկա-
նեան տօհմին, որում անուն Ա արդան կոչիւր. եղ-
բայր սա մեծի ստրատելատին Հայոց որում Ա ասակն
կոչեր. որ դայեակք և մնուցիչք էին Թագաւորին
Ա.րշակայ: Նա ընդ նմա Ա երհեն նահապետն Ա.րշա-
տունեաց, և Ա երհաւ նահապետն Ընձևացեաց, և
Վարչջալ Աղխազ նահապետն Խոռխոռունեաց, և
Ա ուշկ նահապետն Սահառունեաց, և Վեմեան նա-
հապետն Վնթունեաց, և Կիշկէն նահապետն Բա-
գէնից, և Սուրիկ նահապետն Հրսիձորոյ, և Ա ղ-
կէն նահապետն Հաբուժենից. սոքա չորեքտա-
նեքեան սէր միաբանութեամբ առ կայսրն Ա աղէս: Իսկ
Թագաւորն Ա աղէս արգել աքսորեաց զմեծ քահա-
նայապետն Ներսէս, և փոխանակ սորա արձակեաց
զեղբօրորդի զԹագաւորին Ա.րշակայ զՎռնել և զՏի-
րիթ. և գանձս բազումս և անթիւս վասն զիմաս հա-
ճել Թագաւորին Ա.րշակայ, ի ձեռս Ա արդանայ և
ոք ընդ նմա էին, առաքեր: Նկէն հասին դեսպանքն
երթեալք ի կայսերէն առ Թագաւորն Հայոց մե-
ծաց Ա.րշակ. և մատուցանէին նմա զհրովարտակն
կայսերն. և ընդ նմին գիր տրտնջելոյ և ամբաստա-
նութ: Օ ի գրեալ էր կայսրն զսրբոյն Ներսիսէ առ
Թագաւորն Հայոց Ա.րշակ, Թէ նա սպան զորդին
իւր զիմաքօր, վասն այսորիկ արգելաւ աստէն. զի մի
մեղադիր ինչ լինիցիս, ընկալ և զպատանեակդ ա-
ռաքի զարձակեալդ զերկոսեան զեղբօրորդիսդ Ա.ր-
շակայ, զՎռնէն, և զՏիրիթն: Ընդ նէին և զանթիւ
կարասի գանձուցն առաքի Թագաւորին:

Իսկ Թագաւորն Ա.րշակ, իբրև լուաւ և տեսս զայս
ամենայն, անչնորհ առնէր զտալիսն և զբերելիսն կա-
րասոյն: Ի ցասումն մեծապէս բարկութեամբ ընդ
կայսերն նուիրեաց, եթէ զիարդ իշխեաց արգելուլ
զայնպիսի այր զմեծ և զպատուական, զգուշս և զ-
վարդապետ զառաքինորդ աշխարհն և զԹագաւորութե-
միոջ: Վհարինք բազումք, ասէ, ի վերայ կայսերն,
և ձեր ի բերելդ. քարինք և մեր շատ կան ի Թափել
զատամունս նորա ի տալն, և ձեր ի բերելդ. զմեր
վատթարուիս յո՛ տարայդ. արդ այդմ երախտեացդ
ես դարձուցանեմ: Ցայր հրաման Ա ասակայ ի-

րում զօրավարին զօր ժողովել, զգունդս վանդակել, ելանել հարկանել և աւար առնուլ զկողմանս Կամրաց։ Իսկ զօրավարն սպարապետն Վասակ, վաղվաղակի զտուեալ հրամանս նորա կատարէր. զզօրս բազմութիւն իբրև զերկերոյր և զվաթսուն հազարաց ՚ի մի վայր կուտէր. հարկանէր աւար առնոյր զկողմանս Կամրաց մինչև ՚ի քաղաքն յանկուրացւոց. զվեց ամ զմիմեանց զհետ աւերեր զաշխարհ սահմանացն Յունաց։ Այն աւարաւ բազմաւ և պէսպէս մեծութիւք, բնութիւք սաստիւ մեծաւ թշնամութիւք ընդ կողմանս ընդ այնոսիկ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս Խադայ եպիսկոպոսի բագրեւանդացւոց, զոր էր ձեռնադրեալ և Թողեալ էր Կերսէսի եռեղապահ յիւր տեղի. և Թէ որպիսի այր էր, և կամ որչափ նշանք կամ զօրութիւք որ ՚ի նմանէն լինէին, կամ Թէ որպէս կայր ՚ի Հշմարտութեանն, և ոչ առնոյր ակն Թագաւորին մեծի Արշակայ, և ընդդիմանայր ևս ընդդէմ նորա վասն անօրէնութեանն գործոց նորա. կամ որպէս խնամ տանէր աղքատաց իբրև զեպիսկոպոսապետն Կերսէս։

Այս խադ բուն էր սա ՚ի Կարին գաւառի, ՚ի գեղջէ Պարագայ. ձեռնասուն էր սա եպիսկոպոսապետին Կերսէսի, զառաջեաւ իւրով զսա էր մուծեալ։ Իւր իբրև ՚ի միոս աջողակս եբեր, և յառաջադէմ եղև ՚ի հաւատս, և հաւատարիմ յիմ գործս գտաւ, իսկ իբրև յայնմ ևս առաւել ՚ի պաշտօնն՝ զոր ունէր զսէրն ընդ եկեղեցին ՚այ, ապա աղքատաց ևս տեսչութի՚ն ՚ի սրբոյն Կերսէսէ սմա հաւատացաւ. իսկ յայնմ ևս առաւել զբարեխնամութի՚ն ցուցանէր։

Այսպա եպիսկոպոսապետն Կերսէս յորժամ երթայր յուղեգնացութի՚ն յերկիրն Յունաց, ձեռնադրեաց զայս Խադ յեպիսկոպոսուն Բագրեւանդայ և Կուշարունեաց, եթող զսա իւր փոխանակ եռե-

ղապահ, և գնաց։ Իսկ աշխարհ ամ Հայոց լեզուին, ի գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, տեղեաց տեղեաց մեծամեծք աշխարհակալք գաւառատեղք նահապետք մեծազգեացք և ամենայն ուխտ քահանայութեան, ժողովք միաբանական ժողովրդոյն, ի սուգ տխրութիւն ընկղմեալ էին վասն իւրեանց հօտաւ պետ գլխաւորին, զի հեռացաւ ի նոցանէ։ Իսկ ոչն Իսդ եպիսկոպոսն առ հասարակ աշխարհի տայր հրամանն ի պահս և յաղօթս մնանել և ի խնդրուածս, զի դարձ լինի սրբոյն Ներսէսի։ Այս ցամ ժամանակս, որչափ և արգելաւ նա անդ, համակ խնդրեին պահօք ժողովուրդքն. և ամի իսկ Իսդն առաքնորդեր նոցա, ոչ ինչ պակաս քան զիւրեանց բուն գհովուապետն Ներսէս, մինչև ի գալուստն նորա. մինչև կատարեաց ոչ զաշխարհի խնդրուածս, և դարձաւ ոչն Ներսէս ի տեղի իւր։

Այնու ժամանակաւ Իշխակ արքայ Հայոց ոչ ինչ կարի ի Հանապարհ այ գնացեալ լինէր. զի որչափ ի մատաղութենն հասակին ըստ ածային խմաստուածենն գնացեալ լինէր, նոյնչափ յաւագութենն ի լկութե ի շաղաշատութե հատաւ[1]. զոր ոչ հովիւն Իսդ բազում անգամ յանդիմանեալ կշտամբէր, ոչ ըստ ոչ ինչ անսացեալ լինէր։ Այնու ժամանակաւ շինեաց իւր արքայն դաստակերտ մի ի հովիտն անուանեալ ի Կոզ գաւառի։ Եւ ետ հրաման ընդ ամ գաւառս իշխանութե իւրոյ, և հրամայեաց կարգել քարոզ ընդ ամ տեղիս աշխարհացն հրապարակին իւրոյ. և ամ կողմանս գաւառաց իւրոց լի առնէր հրամանաւն արքունի, զի եթէ ոք ումեք ինչ պարտիցի, եթէ ոք ուրուք ուստեք ինչ ձեռնեալ իցէ, կամ ոք ումեք ինչ գատ պարտիցի, ամենեքեան եկեսցեն ի դաստակերտն շինեացին։ Եթէ արիւնահան ոք իցէ, կամ ձեռս ուրուք ումեք արարեալ իցէ, կամ զկին ուրուք տարեալ իցէ, կամ պարտապան իցէ, կամ ոք զուրուք կարասի ունիցի, կամ ոք յումեքէ երկիւղած ինչ իցէ, և եկեսցէ յայն տեղի, գատ և իրաւունք մի լիցին։ Իսկ եթէ ոք ումեք ինչ

1 Ցամ օրինակս հատաւ։

պարտիցի և որում պարտիցին, եկեալ յայն տեղին՝ առանց դատի և իրաւանց կալցին, և՚ի դուրս տարցեն։

Իբրև եղ հրաման յարքայէն, ժողովեցան այնու հետեւ յայն տեղն ամ գողք և աւազակք, արիւնահանք, սպանողք, սուտք և մարդեղողք, ձիաօսակարք, գանձահատք, զրկողք, ստադատք, զրախօսք, գերփողք, յափշտակողք, ժլատք։ Բազում ձիաոս ձիաոս առնէին, և անդր անկանէին. բազում կանայք զարս Թողուին, և անդր անկանէին. բազում արք զիւրեանց կանայս Թողուին, և զայլոց կանայս առեալ՝ անդր անկանէին. բազում ծառայք զիւրեանց տերանց զգանձս ըմբռնեալ, փախուցեալք անդր անկանէին. բազում աւանդաւուք զաւանդս լի զպահեստս բարձեալ, անդ անկանէին. գերփէին աւերէին զերկիրն ամ։ Օ՚ի Թէպէտ և կարի յոյժ բազմացաւ աղաղակն, դատ չկայր, և իրաւունք ումեք յարքունուստ ոչ ելանէին։ Ա՚ան այսորիկ ամ մարդ հառաչելով վայէին, և ասէին՚ի հաւանել բանիցն իւրեանց. այս բանք ըստ այսմ օրինակի պաշտէին, առ հասարակ ամենեցուն ասելով Թէ իրաւունք մեռան, և վասն այսորիկ ոչ դատանէին. այլ Թէ էր, և կորուսեալ էին, ուր և էր չանայաք խնդրէաք գտանէաք։

Ոսկ տեղին աւանանայր, քաղաքանայր. մեծացաւ բազմացաւ և եղեւ զՀովիւեան ամ։ Ա՚պա տայր հրաման արքային Ա՚ըշակ դնել անուն դաստակերտին յիւրաքանչիւր անունն Ա՚ըշակաւան. և շինեցին և՚ս անդ ապա բանս արքունի։ Ա՚յլ յայնմ հետէ ոչ ինչ երկնչէին՚ի ոքէ ամենևին. և ամ մարդ զրկեալ էր իրօքն այնու քիւք, և բազմանգ կառաչ աղաղակի տրտնջելոյն յաճախեալ բազմանայր։ Ա՚յն ատեն որոյ բազում անգամ ընդդիմանայր նմա և յանդիմանէր զնա Ոսդ եպիսկոպոսն. մանաւանդ յորժամ ստիպէին զնա, Թէ Ե՚կ ուղեւս սեղան յեկեղեցւոջն յաւանն յԱ՚ըշակաւանն։ Ոսկ նա բազում անգամ կշտամբէր և յանդիմանէր զԹագաւորն Ա՚ըշակ և զամ մեծամեծս և զիշխանս։ Ասայր ես, ասէ, հոտեղապահ եմ. և ոչ ինչ առանց այնորիկ, որ Թողն զիս հայրն, ունիմ իշխանուԹի գործել ինչ։ Ա՚պա կամեցեալ Ա՚ըշակ Թագաւորն պատուաւ և ագահուԹիւ կարասոյն մեքե-

նայիւ խոսել ընդ եպիսկոպոսն Յատդ, բազում ոս-
կի և բազում գանձս արծաթոյ, և բազում նժոյգս
զարքունական ձիոյ՝ արքունի օձառովք, ոսկիվարա-
ւանդ ապրդումիվ, տայր նմա. պատրել Հաձել վիտա
նորա, լինքն յանդուցանել: Ոսկ նա զկարասին, զոր
առնոյր յարքայէն, յանդիման նորա աղքատաց բաշ-
խէր. և զյանդիմանութինն ոչ ինչ Թուլացուցանէր,
մինչև հրամանն տայր Հալածել զեպիսկոպոսն Յատ-
դ'ի քանակէ անտի:

Ոսկ նա առ ընդել ընդ աշխարհն, կարգել և խրա-
տել, ուսուցանել և դարմանել զաղքատսն, որպես
էր նմա յանձն արարեալ սրբոյն Ղերսիսի, և իւր
գնացեալ: Յազում նշանք և արուեստք և զօրութինք
բժշկութինք հիւանդաց լինէին 'ի ձեռս նորա. բա-
զում յոյժ առնէր աքանչելիս մեծամեծս: Յայց իբ-
րև պաշտէր զաղքատսն, և սպառէր Թափէր զնմ
յուրանս և զնորամանս և զմառանս գինւոյն, և զկա-
րասս Յամ մառանացն տայր բաշխել աղքատացն, եր-
Թայր յայլում աւուր տեսանէր լցեալ լինքնին իբրև
'ի հրամանէ Յայ. և դարձեալ օր ըստ օրէ մատակարա-
րէր աղքատացն, և Յամ ստէպ ստէպ լցեալ լինէր:

Ղայսպիսի աքանչելիք մեծամեծք լինէին 'ի ձեռն
առնս այսորիկ. էր սա զարմանալի անուանի և հոյա-
կապ 'ի մէջ Յայոց. ընդել էրքատէր և ուսուցա-
նէր զեկեղեցիս Յայոց ընդ Յամ տեղիս իբրև վար-
դապետն զՂերսէս: Յայց 'ի ժամանակեան միոջ
եկին գողք, և գողացան զեզինս եկեղեցւոյն սրբոյ
զՅատդայ եպիսկոպոսին, առին և գնացին: Ոսկ 'ի
միում աւուր աչք կուրացեալ եղեն գողոցն, և ին-
քեանք յանիմաստս առ խարխափս եկին ածին 'ի
դուրս սրբոյն Յատդայ զՅամ եզինան: Ոսկ ինքն սուրբն
Յատդ եղեալ տեսանէր զնոսա, և գոհանայր զՅոնէ՝
որ այնչափ վերակացու և այցելու եղև հաւատացե-
լոց իւրոց: Կայր յաղօթս եպիսկոպոսն Յատդ, և բո-
ժշկէր զաչս գողոցն. և հրամանն տայր լուանալ զանձն
նոցա, և դնէր Ճաշ առաջի նոցա, և քաջ ուրախ առ-
նէր զնոսա մեծապէս: Ղպա օրհնէր զնոսա, և տայր
նոցա զեզինան՝ զոր իւրեանցն էր գողացեալ, և ար-
ձակէր զնոսա զիւրեանց Ճանապարհն. և գնացին:

Ա յսպէս քաղցր համբերութիւնս յամ գործս իւր ցուցանէր. և բազում առնէր նշանս և զքաջանչելիս։ Այլ էին նորա երկու դստերք. և ետ զմինն Աբրկոյ ումեմն կին, և զմինի աներոյն իւր՝ նա կալաւ զաթոռն Ստաչայ։

ԳԼՈՒԽ ՃԲ.

Յաղագս որ ինչ իբրև դարձաւ սուրբ կաթուղիկոսն Ներսէս յերկրէն Յունաց, թէ սրպէս կշտամբեր զաղքային. կամ սրպէս լինէին նշանք ահագինք ի վերայ աւանին Արշակաւանի, և սատակեցան առ հասարակ յանկարծօրէն ամ բազմաւի մարդկան՝ որք յայնմ տեղւոջ էին։

Այն իբրև սատակեցաւ կայսրն, դարձան ամ հովիւքն եպիսկոպոսքն՝ որք աքսորեալք էին, և կեցեալք էին յիւրաքանչիւր քաղաքս։ Յայնժամ դարձաւ և նոր կաթողիկոսն Ներսէս յամառատ ի կղզւոյ անդի, ուր էր զնոսա արգելեալ. և համաշխարհի էին ինդրուածք. միաբանգամ աշխարհի ընդհեցաւ։ Որ րև էին յաշխարհն Հայոց, ընդ առաջ երթային նմա ի գաւառաց գաւառաց եպիսկոպոսք հանդերձ իւրաքանչիւր ժողովրդովք, և նախարարք ամ և ամ գաւառակալք։ Այլ քերէին առաջի նորա զիւրաքանչիւր հիւանդս, և բժշկէր զնոսա. ուր և բազում խակ և կարի յաճախեր գոհութիւն ի փառս Այ, և ամ մարդիկն առ բազում գութ հովուապետին՝ համարէին զանձինս իւրեանց թէ ինքեանք իբրև զնոսա ի գերութէ դարձեալ իցեն։

Այս առնէին ուրախասէր բազում հոգևորս մեծաւ ցնծութիւ։ Համաշխարհ ամ որ իւրաքանչիւր ետն այ զեղեալ ուխտս կատարէին, որ ի վերայ հոգևոր գանձին հայրապետին՝ որ առաւ նոցա. և կատարեաց նոցա զինդրուածս նոցա, և զորբութիւ արտառութիւ անձանցն սրտակեղ ցաւոցն սրտաբեկութիւն, միաբանգամ սիրով գթով վարդապետութիւ հոգևոր հարցն

մխիթարեաց զամենեսեան ։ Ա՛մենեքեան ՚ի ժ՚ինէ տրտմութենէն զուարթացեալք , յուրախութե՛ դառնային ։ Ինքն իսկ Թագաւորն Ա՛րշակ երթայր ընդառաջ նորա , մինչև ՚ի կողմանս Ատաբասերոյն , և անդի մեծաւ զուարթութե՛ դարձան ։ Եւ սկսան նորա գել և պայծառանալ վարք աշխարհի և կարգացն և օրինացն եկեղեցեացն ։

Ա՛յլ իբրև եկն հայրապետն Ներսէս ՚ի Հայս , ՚ի վերայ հասանէր իւրում եռեւելապահին սրբոյն Սահակայ , զի էր կացեալ ՚ի ձմեռնատունե և յուղղութե , և գնացեալ էր զձմեռանայրն ՚ան այ , և ոչ էր թիւրեալ յաջ կամ յահեակ , բազում գոհութե՛ մատուցանէր այ , զի զլաւագ գործևոր որդեաին իւր եդիտ ըստ կամացն՝ որպէս ինքն կամէր . զնա անձկով տեսանէր ։ Ա՛յլ յորժամ լսեր ՚ի Սահակայ զնա՛ զանօրինութե՛ն չարութե՛ն ծուռ գնացից թագաւորին , տրտմէր լայր ողբայր և կոծէր մեծամեծ հեծեծանօք . մանաւանդ վասն քաղաքին Ա՛րշակաւանին , զի անօրէնութե՛ և չարութե՛ և յափշտակութե՛ չինեցաւ քաղցր մեղօք ։

Ա՛պա ՚ձե հայրապետն Ներսէս մտանէր առ թագաւորն , խօսէր ընդ նմա և ասէր՝ եթէ ընդի՞ր մոռացար զնո՛ր , և թողեր զպատուիրանս նորա . զարացրիչն՝ որ զնա՛ յորմէ՛ն արար , որ հայրն է որբոց և դատաւոր այրեաց , որ վասն մեր էջ յաղքատութե՛ս , որ ոչ թողու զաղքատս ՚ի ձեռանէ , այլ իւրով մարդասիրութե՛ն բուծանէ զնոսա , այլ ՚ած դատաւոր արդար և հզօր և երկայնամիտ՝ որ ամենայն տառապեալց ունկնդիր է , և զարհամարհանս ուրուք ՚ի չանձն ոչ առնու ։ Եւ զի՞րդ կամ ի՞նդ դու ըմբռնեցար արհամարհել զնորա զպատուիրանն . ո՞չ հայրն քո վասն այսր ամբարշտութե՛ ՚ի կորուստ մատնեցաւ ։ Ընդդու տակաւին չյիշեցեր զնա , որ ոչն յիշեաց զմեղս հօրն քո , և ետ քեզ զտեղի ունել , այս ինքն զաթոռ և զթագ հօրն քո . և սկսար անօրինել առաջի ՚ան այ քո , և զամբարշտութիս և զանօրէնութե՛ս և զանիրաւութե՛ս կարի ՚ի նմանութե՛ սոդոմացւոցն՝ պատճառաւ չայտնապէս պատմէր ։ Եւ երկիւղ առ հասարակ լան և վայեն զրկութե՛ն զյափշտակութե՛ն , որով

դու կամեցար մեծանալ. և ոչ յափեցոյց զքեզ մեծ և բազում թագաւորութեցն յղփութիւնն, զոր ետն քեզ ՚ի ամի ՚Ռ։

Եւրդ լուր ինձ զոր ասեմն քեզ, և արա զնա՝ զի մարթասցես շահել զանձն քո, և ապրեցուցանել զքեզ ՚ի բարկութենէն անտի ՚ոյ, և մի թշուառական աչխարհս Հայոց յաղագս քո կորիցէ։ Եւլ ես տեսի տեսիլ, զի կորուստ և քանդումն յուշեալ խաղացեալ գայ ՚ի վերայ կորստական աչխարհիս Հայոց այսոցիկ։ Եւրդ հրաման տուր՝ ՚ի բաց քակել զտեղին զայն, և ցրուեա զմարդիկն՝ զոր ժողովեցեր, զի երթիցեն ցրուեսցին սփռեսցին յիւրաքանչիւր տեղիս, և երթիցեն տացեն իրաւունս ումն զինչ և պարտիցին. զի մի դու ՚ի խորս չարեաց բարկութենէն անգամ նիցիս կորիցես։ Եւ վասն մեղացն՝ զոր գործեցեր, հրաման տացուք ամ աչխարհի՝ ընդ քո ՚ի պահս և ՚ի խնդրուածս լինել, և մեք հանդերձ քեւ յապաշխարութիւն մտցուք. ո՛ գիտէ, թողու ՚որ զքո զայդ զանհնարին զմեղսդ գործեալ։ Եւթէ տեղւոյն էինչ կարի այդչափ ցանկացեալ ես, ես էնքն էնձէն զնա արդարութե՛ շինեցից, և շէն կալայց առաջի քո։

Եսկ Թագաւորն ծաղր առնէր զբանն կաթողիկոսին, և մկթայր զնորա զասացեալսն։ Եսկ նա միւսանգամ բարկացեալ, կրկնեալ ասէ. Գ՚իտես, ո՛վ Թագաւոր. վասն այսր ամի ասացեալ է կանխասացութենէն ՚ոյ բերանով մարգարէիցն, եթէ “Վա՛յ որ շինէ զտուն իւր՝ և ոչ արդարութե՛, և զվերնայարկս իւր՝ և ոչ իրաւամբ,,. եթէ “Յառակ առցին ողբքն, և ասասցեն՝ եթէ վայ որ ագահեսցէ զագահութիւն անձին իւրում, որ ոչ է իւր. զի եթէ տունք գերեզիկք լիցեն և մեծամեծք լիցեն, սակայն յաւեր դարձցին. զի մի՛ ոք բնակիցէ ՚ի նոսա մարդ, այլ Ձարակ հօտից լիցի, և դադարք գազանաց և որջք գազանաց և որջք բորենից և Ձագարաց և աղուեսաց, բոյն խորդոց և ագռաւուց, և անդք սահմանակաց. վասն այդորիկ աւերեսցին գործք ձեռաց քոց և մի՛ շինեսցին, և միանգամայն սատակեսցին ամ անօրէնքն բնակեալքն ՚ի նմա. և եղիցին դադարք եղանց և Ձարակք ցուռց, և աղուէսք մուտ և

ելս խաղաղացեն յարկս նոցին . և մի՛ շինեսցին , և մի՛ և՛ա քնակեսցեն , մինչև ցյաւիտեան ,, ։

Եւ զայս ամ՛ խօսեցաւ Հայրապետն Ղևրսէս , և գնացեալ՝ ի Թագաւորն եղեալ շրջիկ ընդ գաւառս գաւառս աշակերտութեն՝ ուղղել կարգել և հաստատել զեկեղեցիսն յամ՛ գաւառս Հայոց ։ Եւ յետ երից աւուրց անցանելոյ բանիցն ասացելոց ՝ի վերայ , որ խօսեցեալ եղեն ՝ի բերանոյն Ղևրսէսի , մահանեաց ՝որ զգեստաքաղաքն գՂրշակաւանն ՝ի ձեռս Հարուածոյն ։ Եւ սկսաւ Հատանել զոր չաքակեղն լիմն կոչեն , իսկ կեսքն ժանդ անուանեն . եւ լաներ ՝ի վերայ մարդկանն և անասնոյն ։ Ել աւելի եղև Հարուածոյն ՝ի վերայ նոցա քան զերիս աւուրս յերկարեցաւ , զի անմարդեցաւ . քան զքսան հաղարք սատակեցան երդք մարդկան , ոչ ինոց ՝ի նոցանէ և ոչ մի . զի առ Հասարակ սատակեցան կոտորեցան յանկարծօրէն քանդեցան . զի միահաղոյն եկն սատակումն ՝ի վերայ նոցա ։

Եւ յետ այսորիկ լինքնին Թագաւորն ելանէր ՝ի լննդիր Հայրապետին Ղևրսէսի . և գտեալ՝ խնդրեր ՝ի նմանէ , զի մատուսցէ աղօթս վասն նորա , զի մի՛ դուցէ և նա սատակեսցի , քանզի կարի զարհուրեալ էր ։ Ղպա խօսել սկսանէր եպիսկոպոսապետն Ղևրսէս ընդ Թագաւորին , և ասէր . Օ՛ի այժմ յաշխարհիս այսմիկ , վասն զի արդարքն և մեղաւորքն զոյգ Հասարակ խառն են , վասն արդարոցն խնայելին մեղաւորքն առ ժամանակ մի և ապրին , և յերկարին յաշխարհիս վասն նոցա կենացն և նոքա ՝ի պատճառս նոցա ։ Օ՛ի որոմն սերմանեալ Թշնամւոյն ՝ի վերայ ցորենոյ սերմանն յորենոյն , ընդ նմին զոյգ Հասարակ բուսեալ են . խնայելին վասն ցորենոյն արքունեաց և քոյս աղտեղութեն որոմին . զի մի՛ դուցէ մինչ զորոմին քաղահան արարեալ խլիցեն , խլեցէ ընդ նմա և ցորեանն ։ Ղ՝ան այնորիկ առ ժամանակս վայելեն ՝ի դարմանոյ ցորենոյն և որոմն ընդ նմին ՝ի ցօղ և յանձրևս և յոռոգմունս , և ՝ի ջերմութիս խարաց կեալ և ՝ի հեշտ արևս արեգականն ։ Ղյսպէս այս լինի մինչև ՝ի ժամանակս հնձոց , մինչև եկեսցէ ժամանակն յորժամ հնձեսցի ցորեան արմտեացն . զայն

'ի շահմարանս ազգայուԹենն ժողովեսցին, և զորումն յայրուսին յաւիտենական հրոյն· որ ե՛ւ ինքն հուսնձք կատարած ժամանակաց, յորժամ Աղբիւն այ եկեալ հատանիցէ, և տացէ հրամանն երկնաւոր միակացն ընդ նմա լինելոց 'ի վերուստ՝ 'ի գերեզմանացն հնձել զամ ննջեցեալսն յարուցեալս։

Աղբ այնուհետև ընդդուԹենէ առնիցէ· զարդարսն նման ցորենոյ ընդ ինքեան յազգայուԹենն իւր ընդունելոյ, և զմեղաւորսն որոմանն նմանեալս՝ յանշէջ 'ի յաւիտենական 'ի հուրն հրամայիցէ արկանել։ Աղբ այժմ ժամանակին հնձոց չե՛ւ ևս էր, դու կանուխ քաղհան որոմանն 'ի ցորենոյն արարեր, և կանուխ զնոքունն 'ի մի վայր առանց ցորենոյն ժողովեցեր· վասն այդորիկ յայնժամ կանխեաց հուրն, անինայ յարձակեցաւ այրել, զամ որոմնին 'ի մի վայր ժողովեալս 'ի միում վայրի գտեալս միահաղոյն վաղձանեաց։ Աւյլ այր դու, տես զանձն քո, զի մի՛ և դու կորիցես, և աշխարհս վասն քո։ Լսէ Թագաւորն 'ի գուշն հաբեալ, մեծաւ աղաչանօք և բազում աղօԹիւերօք աղաչէր Թագաւորն՝ հաշտել ընդ նմա· և եղ ուխտ, զի այլ ոչ ևս երբեք անցցէ զբանիւք նորա։

ԳԼՈՒԽ ԺԴ·

Յազագս Հայր մարդպետին, յորժամ եկն էջ 'ի գաւառն Տարօնոյ՝ եԹէ զնարդ եկն եւ 'ի տեղի ազօԹին Աշտիշատ, կամ զնարդ դաստատեալ գնաց անտի յերբոյ բերանոյն 'ի խօսիցն· կամ զնարդ անկեալ, մահուն պատահեալ, ամառակեցաւ 'ի Շահաստոյ արձրունեաց։

Այ էր մարդպետն Հայր այր չար և ժանտաբարոյիւք անօրէն և անիրաւ քան զառաջինն Հայր անուն մարդպետսն։ Ա՛ա կոտորեաց զամ ազգս նախարարսն 'ի ժամանակս ԹագաւորուԹենն Տիրանայ արքայի· և սոյնպէս առ ԹագաւորուԹեամբ Աղբակայ՝

և այ չար քան զառաջինն գործել չար առ Ամ մարդ։ Ա.րդ ելանէր սա շրջէր ընդ մարդապետութիւնն իւր։ ապա եկն էջ Հայր մարդպետ ՚ի գաւառն Տարօնոյ ընդ իւր գեղջն տեսանել։

Օ այնու ժամանակաւ սուրբն Ներսէս շրջէր ընդ իւր ձեռական իշխանութիւնն. զի հնգետասան գաւառ զայն ձեռական իշխանութիւնն ունէին իբրև սեպհական ՚ի ընմէ, առանձին առաջագի նոցա էր կարգեալ։ Եւ յայն գաւառ գլխաւոր գաւառք այս էին Ա.յրայրատ, Դարանաղէ, Նկեղեաց, Տարօն, Խղճնունիք, Ծոփք, և որ ընդ մէջ նոցա և որ շուրջ զնոքօք։ Նկն էջ և Հայրն մարդպետ զիւրով իշխանութեամբն շրջել. ապա եկն և ՚ի կաթողիկոսն Ներսէս յառաջին տեղին, ուր նախ էր զեկեղեցին շինեալ ՚ի Վրիգորէ, և զվկայարանն սրբոցն զվկային. և անդ զյիշատակս սրբոցն կատարէր։ Ա.պա դէպ եղև անցանել Հայր մարդպետին առ տեղօքն, ցանկացաւ ելանել ՚ի ՚ի ՚ի տեղիսն Ա.շտիշատու կալ յաղօթս, և առնուլ ողջոյն ՚ի սրբոյ եպիսկոպոսապետին Ներսէսէ։ Ա.պա իբրև կային յաղօթս, ետուն ողջոյն. Հրամայեաց տայր ՚ի Հայրապետն Ներսէս, եկեալցին ՚ի ձաշ պատրաստել։ Եւ մինչ դեռ նոքա պատրաստէին ինչ ըստ նմա արժանի աւագօրէն սպաս, նա ելանէր յեպիսկոպոսական կայենէն յապարանից մինչ ՚ի վկայարանս սրբոցն. ՚ի մեծ և ՚ի գեղեցիկ հրապարակին ղերթևեկս առեալ շրջէր, զՀեմս առեալ։ Ա.պա տեսանէր զգեղեցկութիւն վայրացն, զնիստ շքեղութիւնն ՚ի բարձաւանդակ տեղեացն և զնայեացն ՚ի խոնարհ, զի կարի վայելուչ էր տեղին. և չարակնեաց։

Ա.պա եմուտ բազմեցաւ յոտել և ըմպել։ Ի սկզբան յորժամ արբեցաւ սիտակակեաց, սկսաւ նեղբլինին խօսել քանս հպարտս և ամբարտաւանս յարբեալեաց՝ դնէր Թշնամանս Տրդատայ արքային, ՚ի մեռեալսն և կենդանեացն ՚ի կեանս, ազգի և տակի և տոհմի արշակունեաց Թագաւորացն Հայոց։ Օ իմբդ, ասէ, զայսպիսի տեղիս կանանցահանդերձ մարդկան տալ է, և ոչ արանց։ Եւ զոր տեղեօքն քամհարել արհամարհէր, և ասէր՝ եթէ զայս տեղիս ՚ի բաց քակեմք, զի աստ պարտ է շինել զապարանս արքունի։

Նա թէ ես Հայր մարդապետ կենդանի իցեմ և առ Թադեաւորաւն Հասից, ասէ, որ ինչ ասաց իցեն, զայն ի բաց փոխեցից. և որ ասաց իցեն, ասէ, ինոսա Հանից, և զտեղիս՝ արքունի սենեակ կազմեցից։

Իսկ սուրբ եպիսկոպոսապետն յորժամ լսէր, և ասէ՝ եթէ ուր մեր Տէր Վէ, որ ընտրեաց նախ զայս տեղի՝ դնել զանուն իւր ասա, որոյ անունն առ Հաստակ ընդ ամ տեղիս փառաւորեալ է Հարքն և որ Հոգոյն Հանդերձ, որ պատուիրեաց մի ամենևին յայլոց ինչ աչն դնել կամ ցանգալ. իսկ որք ժլատեալք ի նորա նուէրսն բերեն աչս, և այնմ ցանկան, վասն այսորիկ նա մի Հասցէ առ այն՝ որով սպառնացաւն, այլ խափան լինի իւր յառաջևնոնա բազում մակարդ մեղացն իւրոց գործելոց։ Այսպա գնայր մարդապետն Հայր ի տեղեացն, և էջ յարին գետոյն Հոսանացն Արբատու, Հովիտսն Թանձրախուռն անտառին, ի գետախառնուտնն երկուց գետոցն, ի Թառնեթ խարձիցն մամխեացն, որ ի տեղւոջն ի Հնոցն ինն չինած քաղաք՝ զոր շինեալ Մանասրուկ արքայի, որում անուն տեղւոյն Ծուրք կոչի։

Ընդ իբրև եկն եՀաս յայն տեղի, ապա յուզեցաւ դատաստան բարկութեանն ի վեր ի վերայ անօրէնն Հայրի, և իւրոց գործոցն և բանիցն խօսելոյ։ Այսպա մատնեցաւ նա ի ձեռս առն միոյ, որոյ անուն Շաւասպ կոչէր, մնացորդ ազգին արծրունեաց։ Ընդ ինչդեռ նստէր նա ի կառս, և երթայր զՀանապարհն, եկն Շաւասպն։ Ակնեալ պատմել մարդապետին սուտ ի բմնոց իւրոց, և ասէ. Ընդ մի տեսի սպիտակ իբրև զձիւն։ Նա հրապուրեաց զմարդապետն իջանել ի կառաց անտի, և հեծանել ի նժոյգի. և մնեալ պառակէին մայրեացն։ Իսկ իբրև ընդ թաւութեան անկանէին, զինի եղեալ սակաւ մի Շաւասպն յետսադոյն մնացեալ, յետոյ յառաջ նետիւ հարկաներ զվզի նեղբևուոյն Հայրի. անդէն թափ Հանեալ գնեաց, և անդ յերկիր անգեալ սատակեցաւ։ Նա առն այ ասացեալքն Հուպ ընդ Հուպ վաղվաղակի կատարեցաւ. զի ամենևին բան ի գետին ոչ անկանէր առն այ։

Յաղագս անօրէնութեան Թագաւորին Արշակայ, Թէ որպէս եսպան զորդի եղբօր իւրոյ, որում անուն Գնէլ, ի քաստութենէ չարութենէն Տիրիթայ. կամ որպէս յանգիմանեալ եղև յառնէն ՚ի ներսէսէ, կամ որպէս զմեւս ևս եղբօրորդին Տիրիթ. կամ որպէս զկինն Գնէլայ արար իւր կին. կամ որպէս էած իւր կին ՚ի Յունաց զՈղիմպին, կամ որպէս երեցն Մրջիւնիին մահուան դեղովն զնա ընդ օրէնսն սպա-նանէր՝ խորհրդով Փառանձեմայ։

Ո՝ՂՋՈՒ ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Ընդովկայ որումն, մի ՚ի նախարարացն Նահապետին Միհնեաց, որում անուն Փառանձեմ կոչէր. զորմէ կարի անուանեալ էր գեղեցկութիւք և պարկեշտութիւք։ Եպա Գնել պատանեակին եղբօրորդին արքային էառ զնա ՚ի կնութիւն իւր։ Եւ համբաւ գեղեցկուհե աղջկանն ընդ վայրսն տարածեցաւ, և համբաւ գեղոյ նո-ցա յաձախեալ բազմանայր և հնչէր։ Եպա առ համ-բաւ ցանկութիւն անուանն տրփեալ լինէր մին և սա հօր եղբօրորդին Գնելոյ, որում անուն Տիրիթ կոչէր։ Ո՝ման որոյ անգամներ ՚ի գաղտագողս, մինչ զի ըզ-նոյն իւր տեսանել կարասցէ։ Եւ յորժամ կարացին տեսլեամն՝ որում ցանգայր, այնուհետև հնարս խըն-դրէր առն կնոջն կորստեան, ո՛ գիտէ՝ զկնի նորա նմա հնար լեզի յափշտակել։

Եպա Տիրիթն ՚ի հնարս նենգութիւն մտանէր, և բազում վարձիւք իւր օգնականս և սատարս, որով զկնոջ չարախօսութիւնն յառաջ վարել կարասցէ։ Եւ քսիս ստութիւն զԳնելոյն նենգութիւք առ Թագաւորն Ընշակ մատուցանէր՝ Թէ Գնել Թագաւորել կամի, և զբեզ սպանանել. և ՚ամ մեծամեծք և նախարարք և ազատք սիրեն զԳնել, և ՚ամ աշխարհիս նախա-րարք կամին զտէրութիւն նորա ՚ի վերայ իւրեանց ա-ռաւել քան զքո։ Ընդ, ասէն, գիտես և տես, արքայ, զինչ գործեսցես. որպէս և կամիս, զնորդ մար-թասցիս սպրել։ Եւ այսպիսի բանիւք գրգռէին ըզ-

Թագաւորն Ա.ըշակ, մինչև հաստատէին ՚ի միտս Թագաւորին զիւրեանց ասացեալսն։

Այսպա ոխացեալ Թագաւորն ընդ պատանեկին Վնեղոյ, և բազում անգամ հալածական առնէր զնա. և նիւթեալ լինէր նենգութիւն բազում ժամանակս։ Այսպա զնաւասարդաց ժամանակօքն առնէր խորհուրդ Թագաւորն Ա.ըշակ, կոչել առ ինքն զպատանեակն Վնեղ և սպանանել։ Այսպա առաքէր զվարդան զեղբայր սպարապետին զնահապետ ազգին Մամիկոնեան տոհմին, զի մեծաւ երդմամբ և նենգութիւք կոչել կալ բացեղ, զի մի խորհուրդն յայտնեսցի. գուցէ փախիցէ և ապրեսցի. այլ զի պատրանօք և հրապուրանօք ածիցէ մինչև ՚ի տեղին մահուն։ Այս էր բանակ Թագաւորին ՚ի Շահապիվանի ՚ի գուն բանակի տեղւոյն Ա.ըշակունեացն ՚ի նեղքոյ Այնեացն և ՚ի վերայ աւազպարխացն։ Այս առաքեալ զվարդանն, զմեծ նահապետն յաղքայէն Ա.ըշակայ, ՚ելին եգիտ զպատանեակին Վնեղ ՚ի մօտաւոր տեղւոյն, այս ինքն ՚ի գետէն Ազաւիւտոյ անուանեալ։ Մեծաւ ուխտիւ և բազում պատրանօք զպատանեակին Վնեղ հանդերձ իւրովի հինաւն և դրամբն հաւանեցուցանէր երթալ հասանել ՚ի բանակն արքունի. իբրև այն թէ ՚ի մեծաքանս լինչ զնա կոչեցէ Թագաւորն, բազում խնդանօք տարեալ հասուցանէր՝ եթէ Թագաւորն Ա.ըշակ ոչ կամեցեալ զտօնս նաւասարդաց առանց քո անցուցանել, զի հաձեալ և քաղցրացեալ է ընդ քեզ, վասն զի ըստ բանից չարախօսացն ոչ լինչ գտաւ ՚ի քեզ չարուի. և եհաս լինքն ՚ի վերայ, զի զուր այժմ ատէր զքեզ՝ որ ՚ի նմանէն մեծ սիրոյ արժանի ես։

Այսպա չուեաց ՚ամ կազմութիւնն իւրով Վնեղ, երթեալ հասանէր ՚ի բանակն արքունի զգիշերին ՚ամ բազում փութով տագնապաւ։ Վ՚ասն զի վաղիւն հասելոց առաւօտուն օրն լուսանայր կիւրակէին։ Այս յայնմ աւուր տօն դիպեցաւ յիշատակի մեծին Յովհաննու, որ ՚ի Դրիգորէ և ՚ի Տրդատայ յաւանին Խաղաւանին կարգեալ էր։ Այսպա յայնմ յիշատակ աշխարհաբնակք մարդկան՝ որ ժողովեալն էին, և բազում եպիսկոպոսք՝ որ յայլոց գաւառաց. և ապա մեծ եպիսկոպոսապետն Ներսէս փոխանակ իւր յղեաց

զիւր աթոռակիցն զԱստղ , և զիւր աղբիւրակոնն եւ պիսկոպոսին՝ որում անուն Մուրիկ կոչէր . զի երթիցեն նորա , պէտք զինչ և իցեն ժողովոյն՝ ընդ նորա վճարեսցեն : Եւ ինքն անդէն միաց յարքունական բանակին , զի զնոյն հաղորդութենէն և անդ կատարեսցեն : Եւ յայնմ գիշերի ցայգապաշտօն մեծ եղև ՚ի բանակին առ կաթողիկոսին :

Իսկ իբրև առաւօտն ծագեաց , հասանէր վաշտն Գնելոյ ՚ի բանակն արքունի . և մինչ Գնէրն արքունական բանակին լինէր միջամուխ , ազդ լինէր թագաւորին եկն նորա : Այսպա ելանէր հրամանն յարքունուստ , արտաքս ունել և տանել սպանանել : Եւ մինչ դեռ գայր նա ընդ բանակամէջն , և էր հեծեալ յերիվարին իւրում , իբրև մերձ եղև ՚ի հրապարակն արքունի , և անդ ՚ի յարքունուստ հասանէին բազում սպասաւորք վառեալք սուսերաւորք նիզակաւորք վաղ բաւորք սակրաւորք սունաւորք և սպարակիրք հետեւակք , որք մատուցեալք բուռն հարեալք ընկենուվին յերիվարէ անտի զպատանեակն Գնել . և ձեռն յետս կապէին զնա , և առեալ գնային ՚ի տեղի կառափելոյն : Եւ քանզի կին նորա եկեալ էր ընդ նմա ժանուաւ , ՚ի նմին ՚ի նորին վաշտու էր ընդ առն իւրում : Իսկ իբրև տեսանէր Թէ կալան զայր իւր և կապեցին , վազվազակի ընթացաւ յեկեղեցականսն ժողովուրդն , ուր պաշտօն մարդկան բանակին առաձ կատարէր , մինչ դեռ առաւօտին աղօթքն մատչէին . և անդ ՚ի Յերսէս մեծ եպիսկոպոսապետն : Իսկ կինն հասեալ առ արքեպիսկոպոսապետն , գոյժ արկանէր նմա զիւրոյ առնն տարապարա կորուստն , ձըչեալ մեծաձայն . Ո՛վ աղ հասիր , ասէ , դեռ զամուսինն իմ զուր առանց մեղաւոյ և յանցանաց խողխողեն : Իսկ նորա խոփհանեալ զպաշտօնն , ընթանայր ՚ի խորանն արքունի . հասեալ ՚ի դրացն ՚ի ներքս առ Թագաւորն անգամեր : Իսկ Թագաւորն իբրև տեսաւ ներ զմեծ քահանայապետն , գխտացեալ զբարեխօսութիւն համարձելոյն վասն առնն մահուամն զի մի մեռցի , յայնժամ Թագաւորն զիւր սամոյրն զգլխոցն ածեալ , ՚ի փոյթ կնձանն մտեալ , զիւր դէմն երեսացն ծածկէր , քնոյ պատճառ եղեալ՝ զի զնորա բանսն մի լսիցէ :

Յակ ՚ի բեն ՚Ներսէս մատուցեալ զուտն հարկանէր զթագաւորէն. խօսեր ընդ նմա, և ասէր. Թագաւոր, յուշ լիցի քեզ քո տէրն՝ որ վասն մերոյ սիրոյ խոնարհեցաւ յիւրմէ ՚ի բնական բարձրութենէն, և եղև եղբայր ծառայութեամ մերոյ անարժանութեանս. ոչ վասն այլ երկիր, այլ զի լիցի վարդապետ սիրոյ. զի մեք խնայելով ՚ի միմեանս, նայեցեալ յածեղէն վարդապետան, զմիմեանս սիրեսցուք երկեղիւ. զի մի միմեանց ջնասել իշխեսցուք։ Յակ եթէ դու ՚ի քո եղբայր և ՚ի ծառայակիցն և յընկերակիցն և ՚ի հաւատառեան ոչ խնայեսցես, որ կամաքն եղբայրացեալ է մեզ տէրն՝ ՚ի քեզ ոչ խնայեսցէ։ Ոչ ի նա մեզ այսպէս ասաց. "Որ ձեզ լսէ, ինձ լսէ. և որ զձեզ ընդունի, զիս ընդունի. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ"։ Եւ որ այժմ դեռ մեք ընդ քեզ խօսի, լուր Ո՛հեի, զի մի կորիցես դու. գուցէ անկեալ ՚ի Թագաւորու Թենէդ քումմէ, կենդանւոյն միայն չըջիցես, և ոչ ոք քեզ օգնիցէ։ Այլ այժմ լուր Ո՛հեի, և խնայեա յանձն քո, մի հեղուլ զարիւն եղբօր քո հարազատի՝ սպանանել զարդարն ՚ի տարապարտուց յանխնայ։

Յակ Թագաւորն սաստեալ, ոչ ինչ լսեր. զերեսն վտաւտօքն ծածկեալ՝ ոչ բանայր, և ոչ կամէր առնել բանիցն պատասխանի. այլ ընկողմեալ պատեալ ծածկեալ կայր ՚ի գահոյն, զի և շարժել անգամ ոչ տղէր։ Յակ մինչ դեռ նա զայս և այսպիսի բանս ողբոյ ընդ Թագաւորին խօսէր, գայր արտաքուստ դահճապետն Երազմակ մուտեր ՚ի խորանն արքունի, սկսաներ պատմել՝ զի ՚ի գլուխ հանի կատարեցի, ասէ, զամ զհրամանս արքունի. առի գնացի զՈ՛հեի, տարայ մինչև յորմ Ալեսին սպանի, և անդէն Թաղեցի։

Այլա խօսել սկսաներ ՚ընդ ՚Ներսէս, և ասէր. Ա՛ր դարև իսկ երբև օձի քարբի, զի խնու զականջս իւր՝ զի մի լուիցէ նա զձայն Թովչի ձարտարի, և մի առցէ զչէզ ՚ի դեղատուէ իմաստոյ, սոյն օրինակ և դու խցեր զականջս, և կափուցեր զլսելիս, զի մի լուիցես զօգտակարս բարբառոյ զնծեղէն բանիցն խրատուն. այլ զգազանաց առեալ զբարուցս, սկսար լինել մարդախանձ։ Ա՛յսն այնորիկ որ ՚ի վերայ նոցա

ասացաւ, լեցի այն 'ի վերայ քո. որպէս ասէն. «Ո՞վ փչրեսցէ զատամունս նոցա 'ի բերանս նոցա, և զժա-նիս առիւծուց խորտակեաց ՝ուր»: Ո՞ման զի ընդդէմ դարձար հրամանին Ա՛ծի ՝ոմն քո, վասն այնորիկ ան-արդ լինիր դու իբրև զջուր հեղեալ. և 'ի լարել ա-ղեղան սորա՝ տկարասցիր: Այս կործանումն՝ որ քեզ բանով մարգարէին ածի 'ի վերայ ձեր, ըմնկել ազգիդ Ա՛րշակունեաց զյետին բաժակն, արբջիք արբեսջիք և կործանեսջիք, և այլ մի՛ ևս կանգնեսջիք: Այս ան-սպառ ժամանակին հրոյն սպառնալիք հասանիցեն ձեզ 'ի ՝ոմն գալստեանն. և անկջիք 'ի խաւարն, և մի՛ ևս տեսջիք զարև փառաց Աղուոյն ՝այ: Ա՛յլ դու, Ա՛րշակ, փոխանակ զի զգործս Այրենի գործեցեր, զանէծս Այրենի զգեցեր. անկջիր կենդանւոյն 'ի Թագաւորութիւնդ քումմէ, և չարչարեսցիս առաւել քան զՅիերան զՀայրն քո, և դառն մահուամբ զկեանս քո յերկրեպ մեծ նեղութիւնբ վճարեսջիր:

Այս զայս ՝ամ խօսեցեալ ընդ Թագաւորին քահա-նայապետին մեծին 'Ներսէսի, դնաց 'ի Թագաւորին, և այլ ոչ դարձաւ անդրէն յայն բանակ: Իսկ զպա-տանեակն Գնել առնուին դնային մօտ 'ի Աիւան ար-քունի, և անդէն կառափնէին 'ի սարակ լերինն. ո-րում տեղւոյն Աին անուանեալ է, մօտ յորմածս արգելոցացն որոյոյն երիցոյ, ընդդէմ մուրտաստա-նին աղբերացն բազմոցացն արքունի, յանդիման բա-նակետեղ քնին:

Ապա հրաման եղև յարքայէն. Ա՛մենայն մարդիկն որ իցեն 'ի բանակին, մեծ և փոքր առ հասարակ, մի՛ ոք իչխեսցէ չերթալ. այլ ՝ամ ոք առ հասարակ եր-թիցեն դիցեն աշխար կոծոց, և լացցեն զԳնել մեծ սեպուհն արշակունի զսպանեալն: Իսկ ինքն Թագա-ւորն գնացեալ 'ի լուխն, նստեալ լայր զեղբօրորդին իւր, զոր ինքն եսպան: Երթեալ նստեր մօտ առ դին, լայր ինքն, և տայր հրաման՝ կոծ մեծ և աշխար դնել շուրջ զսպանեալով դիակամբն: Իսկ կինն սպանելոյն Փառանձեմն զՀանդերձն պատառեալ, զգէսս արձակեալ, մերկատիտ 'ի մէջ աշխարանին կոծէր. ձայն արկանելով Ձէր, յողբս արտասուաց յաղխողորմ գոչ-ժի առ հասարակ զամենեսեան լացուցանէր: Իսկ

Թագաւորն Աբգար՝ ի լալկան տեսանէր զկինն սպա-
նելոյն, տուփերն և ամէն գնեղն՝ առնուլ զնա իւր կնուն։
Իսկ այն որ զնենգութիւն քսութեաց նիւթեաց, և
դաւով՝ ի վերայ իւրոյ հարազատին սպանութիւնս կա-
տարեաց, վասն նորին կնոջն արար զայն. զի մեծա-
պէս սիրով հարեալ էր՝ ի նմա։ Օ՜ Տիրիթն ասեմ,
որ յառաջագոյն հարեալ՝ ի կնոջն յայնմիկ, վասն ո-
րոյ զնենգութիւնս սպանութեանն Թագաւորաւն գոր-
ծեաց։ Իսկ մինչ դեռ՝ ի նմին կոծն սաստկացեալ էր,
Տիրիթն սկսանէր ժայժ չունելոյ տուփանացն։ Պատ-
գամ յղեր առ կինն մեռելոյն. ասէ՝ զի մի կարի զանձն
քո աշխատ առներ այդչափ, զի այր բարի ես եմ քան
զնա. ես սիրեցի զքեզ, վասն այսորիկ մատնեցի զնա
՝ի մահ, զի զքեզ առից ինձ կնուն։ Ընդ մինչ դեռ
կոծ մնալոյն զդիակամբն ջայլէին, զայսպիսի պատ-
գամս առաքեր Տիրիթն։ Խոցոք բառնայր՝ թէ լուա
բուք ամենեքեան, զի մահ առն իմոյ վասն իմ եղև.
զի որ ինձ ակն էդ վասն իմ, զայրն իմ ետ սպանա-
նել։ Օ՜ հեր փեսեր, ձէջեր ընդ կոծելն։

Պատ իբրև մեծ իրքն համարձակ յայտնեցան՝ ի
սէրիս ամենեցունն, և՝ ի ձայնարկունքն ամ եղև նա
մայր ողջոյն, և ձայնարկունքն ամ՝ ի ձայն ողջոյն
սկսան նուաղել զերծն տուփանացն Տիրիթայ, զակն
գնելն, զքսութիւնն, զկնաբոն մահու նիւթել, զսպա-
նումն, ձայնիւքն մինչդոյն՝ ի վերայ սպանելոյն՝ ի մէջ
կոծոյն բարբառելին զեղգեղեալ խանդաղատութիւնք։
Ի նուաճել իւրեանց ձայնիցն, իբրն յայտնեալ հըր-
շակ հարկանէր։ Օ՜ որ իբրև լուաւ Թագաւորն Աբ-
շակ, և եհաս՝ ի վերայ իրացն, զարմացեալ լինէր
արմանայր ընդարմանայր, տոչորացեալ՝ ի միտ առնոյր
զերծն։ Պատ խօսել սկսանէր Թագաւորն, ծախս ըղ-
ծափի հարեալ մեծաւ զղջմամբ ընդ իրսն՝ զոր գոր-
ծեաց, ասէ. Ո՜ ման զի՝ ի կնոջն Պտնելոյ զանարժան
սիրով հարաւ Տիրիթն, առ այնմ զչարիսն նիւթեաց
զքսութիւն, զմահուն գոռուելն զուր և տարապարտ.
և զմեզ ևս արդար արեանն շաղախեաց վասն իւրոյ
պղծութեանն. զերգայրն իւր ետ կորուսանել, և զան-
հնարինն չարիսն և զանէծս՝ որ ոչ անցանեն՝ ետ մեզ
ժառանգել։

Ապա իբրև հասաներ Թագաւորն յերացն Հաստատ տուեալ՝ ի վերայ, և ձգգրտեր զերկն, խլխլեալ անասայր բանին առ ժամանակ մի: Իսկ իբրև զմեռեալն ծածկեցեալն անդէն՝ ի տեղւոջն՝ յորում սպանաւն, և աւուրքն հարուստ անցեալ՝ ի վերայ երացն գործելոց, պատգամ յղեր Տիրիթն առ Թագաւորն: Կամ լեր, ասէ, քեզ արքայի, զի հրամանն տացես՝ զփառանձեմ կին Վռնելոյ Թող առից լինել կնոջ: Որ իբրև լուեալ արքային, ասէ. Ընդ հաստատ գիտեմ զոր լուայն Թէ ստոյգ է. վասն կնոջն իւրոյ եղև մահն Վռնելոյ: Նա անդէն արքայն մահ խորհեր, սպանանել զՏիրիթ և փոխանակ ընդ մահուն Վռնելոյ: Որ իբրև լուաւ Տիրիթ, զահի հարեալ յարքայէն՝ գիշերի փախստական լինէր: Ապա ազդ լինէր Թագաւորին Ընշակայ փախուստն Տիրիթայ, տայր հրաման Թագաւորն Ընշակ ազատագունդ բանակին զհետ լինել Տիրիթայն. զի իբրև հասցեն նմա, անդէն՝ ի տեղւոջն սպանցեն: Նազուամբ և քաջք զհետ լինէին փախուցելոյն Տիրիթայ. ապա երթեալ հասանէին՝ ի գաւառին Նասենոյ՝ ի մէջ մայրեացն. ի տեղւոջն՝ յորում հասանէին, անդէն զՏիրիթն սպա նանէին:

Նա յետ այսորիկ եաւ իւր Ընշակ զկինն սպանանել զփառանձեմն: Նա որչափ սիրէր արքայն Ընշակ զկինն, նոյնչափ առեալ կինն զարքայն Ընշակ. ասէ լով՝ Թէ Թաւ է մարմնով, և Թուխ է գունով: Ապա իբրև կինն՝ ի նա ոչ յանդոյց զիտաս իւր, առաքեաց արքայն Ընշակ յերկիրն Յունաց, և խնդրեաց Եաճ անտի կին՝ ի կայսերական տոհմէն ազգաւ, զի անուն էր նորա Ողոմպէ: Նա ուժգնին սիրով սիրեաց զնա, և նախանձուկս արկանէր նովաւ առաջին կնոջն. և կինն փառանձեմ ոխացաւ ընդ Ողոմպէին, և խնդրէր սպանանել զնա: Բայց ծնաւ ապա փառանձեմ Թագաւորին ուստր մի, և կոչեցին զանուն նորա Պապ, և մնացին զնա, և՝ ի չափ հասուցին: Նա իբրև ջըրաԹափեաց, և եղև հուժկու, ետուն զնա պանդանդ՝ ի դուռն կայսերն յերկիրն Յունաց:

Իսկ փառանձեմն՝ ի մեծ նախանձու և ոխութիւ գնայր ընդ Ողոմպէնոյն, և խնդրէր սպանանել զնա

դեղովք : Իբրև ոչ ինչ հնարս մեքենայից էիարէր գտանել , վասն զի անձինն իւրում կարի զգուշ կայր , մանաւանդ ՚ի կերակրոց և յըմպելեաց , բայց զի ւ-ոց նաժշտացն կերակուրս արարեալ և կամ զնոցին պարզեալ զդինի Ձաշակէր . և եթէ ոչ ինչ գտանէին հնարք դեղել զնա մահուան դեղոքն , ապա դրան երէց ոմն արքունի՝ որ էր ՚ի ժամանակին յայն , ո-րում անուն Ա՛ղլևնիկ , Ա՛ղշամունեաց տեղեացն ՚ի նահանգէն Տարօն գաւառէն , զնա ՚ի բանտ արկանէր փառանձեմն անօրէնն : Օ՛անարժանս զանկատար զանջնջելի գործոցն մեղայն չմոռացական տանջանացն կատարեաց զգործ զանարժանս զանաւս զանլուր , այս ինքն ընդ կենաց դէղն զդեղ մահուն խառնելով . որ ուրեք երբեք այսպիսի գործք յումեքէ ՚ի վերայ երկրի ոչ գործեցան : Ի՛նդ աերու-նական ընդ՝ որ ընդ ՝ածական մարմինն ընդ հայն օրի-նաց խառնելին զդեղն սատակման . երէցն , Ա՛ղլևնիկ անուն , տակաւ յեկեղեցւոյն Ա՛ղամիայ տիկնոջն ընծ-ձեռեալ զմահաւն գործ , և սպանանէր : Ի՛ստ չարեացն կատարելոց զփառանձեմայն ՝ամ չարեօք լցեալ ըզ-կամս կատարէր . և յանօրէնն փառանձեմայն պար-զև առեալ չերկնցուն զդեղն՝ ուստի իսկ ինքն էր ՚ի նահանգէն Տարօն գաւառէն , որում անուն Վամ-կունք կոչին :

Ա՛յլ՝ որ կաթողիկոսն Ա՛ներսէս այլ ոչ ևս յաւել տեսանել զերեսս Թագաւորին Ա՛շակայ մինչև յօրն նորին կոտանեան . այլ փոխանակ Ա՛ներսէսի զՕ՛ունակ ոմն անուն , և կացուցին փոխանակ նորա գլուխ քրիս-տոնէութեան . և էր ստրուկ ՚ի ստրկաց արքունի : Ա՛պա հրամանն տայր Թագաւորն՝ կոչել զնմա եպիսկոպոս Հայոց աշխարհին , զի եկեսցեն ձեռնադրեսցեն զՕ-նակն ՚ի կաթողիկոսութեն Հայոց : Նա ոչ ևս ոք ոչ հաւանեաց գալ . բայց միայն Ա՛ղձնեաց և Կորդուաց եպիսկոպոսք եկին , և զՕ՛նակն ձեռնադրեցին կա-թողիկոսութեն ըստ հրամանի Թագաւորին : Նա էր Օ՛նակն այր զգօն , և ոչ ինչ ունէր լեզու յանդի-մանութեն կամ խրատու , այլ հաւանեալ էր Թա-գաւորին զինչ և նա գործիցէ :

Յաղագս Թէ որպէս կամ զինչ կոչեցեալ եղև Արշակ արքայ Հայոց ի Շապհոյ արքայէ Պարսից , կամ զինչ մեծարեցաւ ի նմանէն մեծապէս . կամ զինչ Վասակ մամիկոնեան սպարապետն Հայոց սպանանելոր զսորակաղ ասպատանին արքային Պարսից . կամ Թէ զինչ Արշակ արքայ աւերտարանաւն երդուեալ արքային Պարսից , ուխտեր նմա , կամ Թէ զինչ առեալ յետոյ և փախեաւ . կամ Թէ զինչ արք եւթանասուն զեղ պաշտօնեայսն կոտորեր արքային Պարսից վասն նորա :

Յայնմ ժամանակի կոչեր առ ինքն Շապուհ արքայն Պարսից զԹագաւորն Հայոց զԱրշակ . և մեծարեցաւ ի նմանէ բազում պատուով և մեծաւ փառօք , բազում գանձու ոսկւով և արծաթով՝ որ մեծուԹիւն ԹագաւորուԹեն : Այլ իբրև զեղբայրս որպէս զորդի գրգեալ եղև ի նմանէ , և երկրորդական զմեծ տունն տայր նմա յատրպատական աշխարհին . և ի միասին ի միում տախտի գահոյն ի ժամ ուրախուԹեանն բազմէին , զմիագոյն զմիանշան զհամահանդերձ զարդու : Այլ զմիօրինակ զԹագն օր ըստ օրէ ինքեան և նմա Թագաւորն Պարսից զարդ պատրաստեր . զոյգ երկոքին ի միասին որպէս զեղբարս հարազատս անբաժինս յափացեալք էին ի միում ուրախուԹիւն , և յանպատում ուրախուԹէ ուրախ լինէին :

Այսպա եղև դէպ օր մի յաւուրց , եկին եմուտ Թագաւորն Հայոց Արշակ ընդել զասպատանաւ միով զարքային Պարսից . իսկ ախոռապետն արքային Պարսից նստէր ի նեղքս ի տան ասպատանին : Իբրև տեսանէր զԹագաւորն , ոչ ինչ առ լուս կալեալ մեծապրեաց գնա , և ոչ ինչ շուքս գնէր նմա . այլ և անարգանս ևս գնէր Թշնամանաց , ասելով ի պարսկերէնն լեզու՝ Թէ այծից Հայոց արքայ , եկ նիստ ի խրճան խոտոյ ի վերայ : Օ որ բանս իբրև լսեր սպարապետն զօրավարն Հայոց մեծաց , որում Վասակն կոչէր , ի մամիկոնեան տոհմէն , մեծաւ բարկուԹիւ և բազում

սրամտութիւնը բարկանայր. ՚ի վեր առեալ զսուսերն, զոր ընդ մէջն ունէր, հարեալ անդէն ՚ի տեղւոջն զախտաւսեան արքային Պարսից գլխատեր ՚ի ներքս յատպաստանի անդ։ Օ՚ի ոչ կարաց լսել և ժոյժ ուշ նել զիւրոյ թագաւորին զմահարգանս. զիւր մահն ա ռաջն եդեալ լաւ հաշուէր բազում անգամ, քան զնոն իւրոյ լսել զվատթարութիւնն թշնամանս։ Իբրև ՚ի Պարսից աշխարհն եկն, յայլոց ՚ի տեղւէ և ՚ի նո ցունն հրապարակի աներկիւղ և անկասկած յանկարծ ծօրէն զայապիսի զգործ կարաց գործել։ Իսկ թա գաւորն Պարսից յորժամ զայս լսէր, բազում ընդ ունէր զօրավարին Ա՚ասակայ, ընդ քաջասրտութիւնն զարմացեալ և ընդ բազում աներկիւղութիւնն։ Եւ բազում պարգեւաց և պատուոյ արժանի առնէր, զքաջութիւնն և զտիրասիրութիւնն գովեալ։ Ա՚ան այնր իրաց մեծաւ սիրով սիրէր զնա, և ըստ արժանի իւ րում պատուէր զնա. մեծարէր զնա՚մ աւուրս հաշ տութիւնն և խաղաղութիւնն, որ ՚ի մէջ նոցա էր։

Ա՚պա մինչ դեռ անդէն էս էր արքայն Հայոց առ արքային Պարսից, և մեծ սէր էր ՚ի մէջ նոցա և մեծ խաղաղութիւն, երկնչելով երկեաւ թագաւորն Պար սից Շ՚ապուհ, եթէ գուցէ ստեսցէ սիրոյն նորա Ա՚ր շակ արքայ Հայոց, և լինի միաբան ընդ կայսերն Յունաց, և կամ կողաբակ ինչ լինի ՚ի նմանէ։ Եւ ոչ հաւատայր նմա, թէ պահեսցէ առ նա զմտեր մութիւն սիրոյն, և կացցէ յուխտին միաբանութիւնն ընդ նմա։ Ա՚ան այսորիկ երդումն պահանջէր ՚ի նմա նէն, մինչև կարի ստիպեալ բռնադատեաց զնա. Հա ւանեաց, ասէ, և երդուիր ինձ յօրէնս քո, զի մի ստեսցես ինձ։ Իսկ իբրև կարի բռնադատեցաւ և ՚ի նեղ անդաւ և շտապեալ առաջնորդեցաւ, ետուն հրա ման ածել զերկցունս եկեղեցւոյն Տիսփոնի քաղա քի, որում անուն գլխաւորին Ա՚արի. և բերին զա ւետարանն Տեր, և տայր երդումն արքայն Պարսից Շ՚ապուհ արքային Հայոց Ա՚րշակայ՝ երդնուլ յաս տուածեան աւետարանն, զի այլ մի և ստեսցէ նմա. այլ կացցէ յուխտի նորա, և պահեսցէ զդաշինս նո րա։ Եւ վասն զի պատգամաւոր իրացս այսոցիկ էր տանուտէրն Նահապետան Մամիկոնեան տոհմին երէց

եղբայր Ա՛ստակայ սպարապետին, որում անուն Ա՛ստղիկ դան կոչէր, մեծապես արքայ Շ՛ապուհ յակն առեալ սիրեր զնա։ Իսկ իւր եղբայրն Ա՛ստակ զօրավարն Հայոց նախանձ բերեր ընդ երիցս՝ եղբօրն իւրում ընդ Ա՛ստղիկայ։ Կամեցաւ խանգարտ առնել՝ի մէջ Ա՛ղձնիկայ Թագաւորին Հայոց, և փախչել. այլ ապստեր Շ՛ապուհ. Ցո՛ւկ ձեր սրտի մտօք եր տուեալ զերդումն, զի՞պ՛ղդ կարեր ըստ հաւանութեանն ելանել երդմանցն և կամ փախչել։ Ա՛յլ, ասէ, գիտեմ զի կախարդութի՛ւք խաբեցեք զնա. և որ ունի զօրինան ձեր, զնա սիրեցեք. և նենգութի՛ւք նմա խորհրդակից եղեալ, յինէն փախուցեք։ Այլ կամիք դուք զտերութի՛ւն Ա՛ղձնիկայ ուսանիլ ի վերայ ձեր, և զնոյն խնդրեք։

Այլ երդնու Շ՛ապուհ արքայ յարեգակն և՛ի ջուր և՛ի կրակ, եթէ ո՛չ միում մարդոյ, որ յայդմ օրինս քրիստոնէութի՛ւն է, ոչ տամ ապրել. և հրաման տայր զամենեսեան տանել սպանանել։ Այլ տանէին զգնացեալսն նոցա զԱ՛ռիւ երից, և զայլ երիցունսն և զսարկաւագունսն, աւելի քան զեւթանասունսն այր. և՛ի միում զամենեսեան զնոսա փողոտէին։ Այլ զաւետացան՝ն՝ եթէ՝ յոր երդուաւ Թագաւորն Ա՛ղձնիկ՝ կապէր պատեր երկաթի սարեօք, և իւրով մատանեաւ կնքեալ, և՛ի գանձատան հրամայէր. և տայր հրաման սահել զգուշութի՛ւն։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Յաղագս թէ զնդրդ յուզեաց Շապուհ արքայ Պարսից՝ ի վերայ քրիստոնէութեան։

Ա՛յն՝ի ժամանն յայնմիկ, յորում սպանաւ երէցն Մարին հանդերձ եւթանասնաւքն, յարոյց Հալածանս մեծ Շ՛ապուհ արքայն քրիստոնէութեն հաւատոյ. հարկաւք և պէսպէս վշտաւք նեղէր զնոսա և հարուածովք բազում։ Այլ յետ այսորիկ հրաման տայր ընդ

ամ տեղիս իշխանութիւնէ իւրոյ, թէ որ միանգամ զանուն քրիստոնէութիւնէ ունիցի յիշխանութիւնէ իմում, զամ մարդ միանգամայն հանցեն ընդ սուր սատակեսցեն. զի մի գացի յիշխանութիւնէ իմում, որ քրիստոնեայ անուն անուանեսցէ զանձն իւր: Այսպէս բերէր բիւրուց կոտորիչին, և հաղարս հազարաց. զի այնպէս տուաւ հրամանն ի Թագաւորէն, զի ամենևին քրիստոնեայ անուն ի սահմանս նորա մի գացի:

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս Վարդանայ մահուն ի Թագաւորէն Արշակայ, նենգութիւն իւրոյ եղբօրն Վասակայ սպարապետին:

Իսկ Վարդանն, մամիկոնեան տոհմին տանուտէրն, գայր հասանէր հրեշտակութեամբ յարքայէն Պարսից առ արքայն Հայոց Արշակ. և մատուցանէր ջերմագոյն առաջի նորա: Այլ պատմէր նմա ի նմանէ բանս խաղաղութեան և ջհաշտութեան, և զերդմանցն հաստատութեան: Այլ տայր պատգամ, թէ որ ինչ եղևն, այն ահա թողեալ լիցի ընդ ետին. բայց դու յայսմ հետէ կաց յուխտին բանի, և մի անցանիր ըստ բան երդմանցն քում օրինաց՝ յոր երդուար: Այսպէս թէ ոչ, դու գիտես, և քո օրինքն որում ստեան: Իսկ Արշակ թագաւորն սիրով ունէր և սիրով լսէր պատգամին, և հաւանէր զաղաչելոյն: Այլ խաղաղութիւնն արձակէր զմեծ նահապետան ի տուն իւր, զի երթիցէ հանդիպեսցի յաշխատութենէն յերկայն ճանապարհէն. և գնաց:

Այլ յորժամ եկն նահապետն Վարդան առ Արշակ, ոչ դիպեցաւ անդ կրսեր եղբայրն Վասակ առ արքայն: Այսպէս յետ այսորիկ եկն Վասակն, և զերդեր զթագաւորն ընդ իւրում եղբօրն երիցուս, ասելով՝ թէ Վարդան է որ մատնէ զքեզ թագաւորին Պարսից, և կամի կորուսանել զքեզ. եթէ ոչ

աճապարեսցես վաղագոյն սպանցես զնա, զու կորընչ-
չիս և աշխարհս Հայոց։ Այլա և կին Թագաւորին
ևս գրգռեր զԹագաւորն սովին բանիւք, և զբանս
զօրավարին ասակայ հաւատարիմ առնէր նմա։
Ա ան զի ունէր նա զոխան զայն ընդ Ա արդանայ, զի
նենգաւորեամբ և դաւով և մեծաւ երդմամբ սա այս
Ա արդան կոչեաց զՀնէին զայրնորա. յորժամ սպա-
նանէր զնա Թագաւորն Ա.րշակ։ Իսկ կինն զնոյն ո-
խորմիս պահէր նմա, վասն այնորիկ աւելի ևս գըր-
գռեր կինն Թագաւորին 'ի վերայ նորա. մինչ զի և
զօր գումարեցին 'ի վերայ Ա արդանայ, զի երթեալք
սպանցեն զնա. նա և ինքն իսկ իւր եղբայր Ա ասակ
երթայր 'ի վերայ նորա։

Այլա երթեալ գտանէին զնա յիւրում գաւառին
'ի Տայս, յիւր ամուր բերդին՝ որում անուն Ն.րա-
խանի կոչէ։ Ն.րբև տեսին զգունդն Թէ Ա ասակ է,
ոչ ինչ երկեան և ոչ զգուշացան կամ կասկածեցին.
համարեցան զզօրն եղբօրն՝ Թէ խաղաղութի՛ է եկն
նորա, մինչ իջին առ խորանին դուրս, զի էր հարեալ
զխորանն 'ի ձոր յունջ բերդին։ Ն.ւ մարդիկ զօրայն
Ա ասակայ եկին ամենեքեան 'ի ծածուկ վաւերալք և 'ի
վերայ ագուցեալք հանդերձ։ Ն.ւ մինչ գեռ նա լուա
նայր զգլուխ իւր մերկանդամ, հասանէին սուսերօք
բազում մարդիկ, և խոյսոտեին զնա մինչ գեռ նա
կայր խոնարհեալ՝ զի արկցեն ջուր 'ի վերայ նորա։
Ն.ւ ոչ ոք տայր ժամանել յառնել, զի անդէն 'ի կո-
ղի սպանանէին զնա։

Ն.ւ կինն նորա յղի էր, և հասեալ էին աւուրք
ծննդեան իւրոյ։ Ա՝ինչ գեռ 'ի վեր 'ի բերդին նաեր
'ի գահոյս իւրում, եղև գոյժ սաստիկ. իսկ նա իբրև
զձայն գուժոյն լսեր, վազեր 'ի գահոյից անտի։ Ն.ւ
ընդ վազելն ծնանէր զմանուկն։ Ն.ւ կոչէին զանուն
մանկանն յանուն հօր իւրոյ Ա արդան։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս Թէ զնիւրդ անմուռԹԹ գնայր ՚ի սպանուԹԹիս նախարարացն յանխնայ Արշակ արքայ Հայոց։

Եւ ՚ի ժամանակին՝ յորժամ մերժեցաւ յարքունական բանակէն՝ որ եպիսկոպոսապետան ՚Ն էր սէս, և ոչ ոք գոյր ընդդիմացեալ Թագաւորին՝ որ տայր նմա զյանդիմանուԹԹիւն զնորատն, այնուհետև ըստ կամաց չարուԹԹեն իւրոյ գնացեալ լինէր նա. և զազգսն ՚ի նախարարացն կոտորեաց, զազգսն աղգատ արարեալ անձիտեաց, և զազգսդ տունս հաստանէր յարքունիս։ Եւայց զտոհմն կամնարականացն՝ որ էին գաւառաց տեառք, Շ էրակայ և Ն էրշարուհեաց, ազգատ[1] առնէր. և զգաւառսն ունէր յոստան։

Եւայց յազգէն յայնմանէ մանկիկ մի փոքրիկ, անուն Սպանդարատ, Թագուցեալ ապրեցուցանէր սպարապետն զօրավարն Հայոց Վ ասակ, որ յետոյ լինէր ժառանգ աշխարհին։ Թագաւորն Ն էրշակ հրամայեաց տալ՝ Ն էրշարունեաց գաւառին լինել իւր բերդ ի ամուր, Ն էրտագերս անուն։ Եւ զգաւառն յուստեատ ՚ի պատրաստուԹԹէ համբարաց Թողոյր բերդին, վասն զի կարի ամուր էր բերդն այն։

ԳԼՈՒԽ Ի.

Յաղագս Թէ զնիւրդ պատերազմ սաստկացեալ էր ՚ի մէջ Յունացն և Պարսից, և Թէ զնիւրդ Արշակ արքայ Հայոց զօրավիգն լինէր Թագաւորին Պարսից, և հանէր ընդ սուր զզօրսն Յունաց. կամ զնիւրդ դաւաճանուԹԹէ սիւնւոյն Անդուկայ փախստական լինէր արքային Պարսից։

Եւ զառաջինն իբրև փախեաւ Թագաւորն Ն էրշակ յարքայէն Շ ապհոյ, և անարգեաց զնա յետ երդմանցն իւրոց, զառաջինն Շ ապուհ արքայն Պարսից

1 Յամ՝ օրինակս ապաթ առնէր։

ոչ ինչ խոտուԹիւն ջանացաւ ընդ նմա . վասն զի մարտ
գեռ բազում սաստկացեալ էր ի մէջ իւր և ի մէջ
Թագաւորին Յունաց : Եւ իբրև հաղ քան զհաղ
յաւել լինել պատերազմ, իսկ Թագաւորն Հայոց Ա.ր
շակ զառաջինն ընդ միտս իւր մեծամտեալ էր, և նայ
էր տեսանել Թէ ով ի նոցանէն կոչեսցէ զնա ի Թիկ
կունս օգնականուԹիւն յաղագս գործոյ պատերազմին :
Ա՛ն ոմանք , երԹալ կամելով յօժարուԹիւ ի Թիկունս
կայսերն Յունաց . իսկ նոքա ոչ կոչեցին զնա , և ոչ
շուք ինչ եդին նմա և ոչ մեծարանս :

Իսկ Թագաւորն Պարսից Շ ապուհ յղեր առ նա
հրեշտակս խաղաղուԹիւ . յուշ առնէր նմա զառա
ջինն երդումն , ասելով՝ եԹէ կամ լեցի եղբօր զի և
կեսցես օգնեսցես ի գործ պատերազմիս , զի ի Թիւ
կունս հասցես քո գնդաւոգ : Ա՛յն . Իսկ դու ի մեր
կոյս լինիս , գիտեմք զի մեր լինելոց է յաղԹուԹիւն :
Ա՛պա յորժամ զայս լսէր Ա.րշակ արքայ Հայոց , մե
ծաւ ուրախուԹիւք կամեցաւ երԹալ ի Թիկունս օգ
նականուԹիւ , զօրավիգն լինել Շ ապհոյ Թագաւո
րին Պարսից : Ա՛պա տայր հրաման Թագաւորն Ա.ր
շակ ՚Ի ասակայ իւրում սպարապետին , գունդ գու
մարել՝ զօրս պատրաստել : Եւ նա վաղվաղակի կա
տարէր զՀրամանս Թագաւորին . չորեքհարիւր հա
զար զօր կուռ վառեալք , որ ընտիրք և պատերազ
մողք էին , լի արուԹիւք արուեստաց նահատակուԹեն :
Նիզակաւորք , սուսերաւորք , աղեղնաւորք անվրէպք
կորովիք , վաղրաւորք , սակրաւորք , որք ոչ գիտէին
զերկեղ զանգիտելոյ յարանց յախոյանց . Համակ հե
ծեալազօրք զրահաւոր պատենաղէնք , սաղաւարտա
ւորք , դրօշաւորք , կազմ նշանաւորք բազմաձայն փո
ղարօքն :

Ելաղաց գնաց Թագաւորն Ա.րշակ բազմակոյտ նա
խարարօքն , յուռեաց ընդ Ազձնիս ընդ իւր իշխանու
Թիւնն . չոգաւ Թաւրեցաւ յերկիրն արուաստանի
դէմ յանդիման մըծբնացւոց քաղաքին , որ էրն տե
ղի Ճակատուն պատերազմին : Ա՛պա երԹեալ տեսա
նէին զժամադիր արարեալ միաձանց վասն երեց պա
տերազմին կողմանցն երկոցունց : Իսկ զօրքն Յունաց
հասեալք , մածեալք բանակեալք էին իբրև զաւազ

առ ամին ծովուս բազմութիւք : Իսկ զօրքն Պարսից
չուէին հասեալ ի ժամադիր տեղի պատերազմին :
Իսկ զօրքն արքային Հայոց կանուխ քան զՊարսն ի
տեղի ճակատուն հասանէին, և զտեղի առեալ կայ-
ին : Այս տապել սկսան զօրքն Հայոց ընդ իւրեանց
նիստ խափանածոյն . և ոչ առնուին յանձն մնալ կամ
անալ զօրացն Պարսից , այլ կամեցան յարձակել դէմ
ել հասանել ի վերայ Թագաւորին Հոռնաց ինքեանք
առանց Պարսից զօրացն , անձամբք վճարել զգործ
պատերազմին : Ի այր ևս զօրացն Հայոց ինքնա-
կամք իւրաքանչիւր արձակ արձակ խաղային . և ա-
ռաւել զօրավարն նոցին Վասակ քան զամ զօրսն եէ
ևել առնէր , կապակոտոր լինէր , չնայր հաւանու-
թեան մինչև զօրքն Պարսից եկեսցեն , այլ զի միայն
ինքեամբք վճարեսցեն զգործ պատերազմին :

Այս միահամուռ զօրքն Հայոց անկանէին առաջի
և խնդրէին յիւրեանց Թագաւորէն Արշակայ , զի մի
պահեսցէ զնոսա մինչև եկեսցէ արքայն Պարսից Շա-
պուհ . այլ վասն որոյ իրիք եկեալ էին , վաղագոյն
նոցա զպատերազմն առ յանդիման արարեալ համար
ձակեսցէ յարձակել քան զանսասլն յօտար աշխարհին .
առաւել մղձկէին , զի լաւ հաշուէին զմեռանելն ա-
ռաւել քան զյաղթելն յօտար աշխարհին : Այս Թոյլ
տայր նոցա Թագաւորն Արշակ , և յանդիմանէր նո-
ցա զգործ պատերազմին : Այս կարգէր կազմէր պատ-
րաստէր զամ զօրսն Հայոց Վասակ զօրավարն սպա-
րապետն Հայոց մեծաց : Վասակ արէր զինէր ժամակալ
լինէր Վասակ . Հանդերձ ամ պատերազմող զօրացն
այրայրատեան գնդապետն ելանէր անկանէր ի վերայ բա-
նակին : Այս հասարակ ընդ սուր հանեալ կոտորէին ,
այնպէս զի ոչ ապրեցուցանէին ի նոցանէ և ոչ զմի :
Այս առնուին զկապուտ զաւար յոշնակաւն զօրուցն ,
զի ոչ գոյր չափ կամ թիւ որչափ լցան գանձօք . և
անհամար կարասեաւ մեծաւ աւարացն յղփացան :

Այս յետ այսորիկ զտեղի ունէր արքայն Հայոց հան-
դերձ իւրովք զօրօքն , մինչև գայր հասանէր Շա-
պուհ արքայն Պարսից ամ անթիւ և անչափ զօրօքն
Պարսից : Երբև եկն հետս զբաշխուելի գործոյն հայ-
աստան զօրացն , զի զճակատ մղեալ , զպատերազմ

յարդարեալ, զյաղթութիւն կազմեալ և զզօրն վհատեալ, կայր զարմացեալ մեծապէս. և պատուէր զՄ. շակ աղբայ Հայոց մեծապէս, և զամենայն մեծամեծս Հայոց. ոյնպէս և զսպարապետն Հայոց զՎասակ։

Ապա խօսել սկսանէր Թագաւորն Պարսից Շ. պուհ ընդ զօրս իւր՝ Թէ զինչ պարգեւս բարեաց, կամ զինչ հատուցումն կարեմք մեք հատուցանել աղբայիս Հայոց Մ.շակայ, զի զայսպիսի գործ գործեաց, կամ զայսպիսի քաջութիւն արարեալ, կամ զայսպիսի թշնամիս եհար և զայսպիսի պատերազմ մղեաց, կամ այսպիսի ձակատու յաղթեաց և զայսպիսի անուն ստացաւ մեզ։ Օ՛ի եթէ մեք լեալ էաք, ամ Մ.բեաց զօրք հանդերձ այսպիսի աջողութիւք գայր ՚ի ձեռն, քաջ Թէ զզգ հասարակ այսպիսի գործ ՚ի միասին կարէաք գործել. արդ Հայոց աղբայ իւրով զօրու. Թեամբն ընդ մեր նահատակեալ, զայսչափ քաջութիս արար, զոր ոչ ոք կարէ առնել ամենևին։ Մ.րդ զոր պիսի՞ հատուցումն բարեաց կարասցուք մեք առնել նմա։ Ա.ւ այսպիսի անգեալ էր ՚ի խորհուրդս, Թէ զինչ այն ինչ էցէ զոր տայցեմ ես նմա։ Ապա տայ. ին պատասխանի նախարարքն իւր Շ ապհոյ աղբային Պարսից, և ասեն ցնա՝ Թէ զինչ և կամիս, իւ կա. միս, կարող ես հաձել զնա. ոսկի քո շատ և արծաԹ կերպաս և մարգարիտ, զինչ և միանգամ դու կամիս ընդհարել նմա, տուր նմա։ Ապա տայր պատասխանի Շ ապուհ Թագաւորն Պարսից իւրոց իշխանացն, և ասէ. Մ.րդ ոչ եթէ սեր ինչ է, զոր դուքդ ասացէք. այլ եկայք, անքակ սեր արասցուք մեք ընդ Մ.շակայ աղբային Հայոց, զի մինչև յաւիտեան անբաժին լի. ցի նա ՚ի մէնջ։ Տացեմ զդուստր իմ կնութիւն Մ.շակայ աղբային Հայոց, և տաց նմա տունն մեծ. զի յորժամ գնասցէ ՚ի Հայոց գալ առ մեզ, այնպէս տա. ցուք նմա տունն, զի ՚ի Հայոց մինչև ՚ի Տիզբոն մինչև առ մեզ համակ յիւրում տան ագցի, մինչև առ մեզ եկեսցէ։ Թագաւորին զայս արասցուք. իսկ զօրավա. րին Վասակայ կամ այլոց մեծամեծացն և զօրավա. րացն տացուք ոսկի և արծաԹ, կերպաս և մարգա. րիտ։ Ա.ւ հաձեցան մեծամեծքն և խորհրդակիցք Թագաւորին Պարսից ընդ այս խորհուրդ. և հաս.

տատեին զասացեալսն՝ Թէ արժան է զայդ առնել։
Իսկ Թագաւորն Պարսից Շ ապուհ մեծաւ ստի-
պով ստիպեր զԹագաւորն Հայոց զԱ.ըշակ, զի առցէ
զնասցէ զնա ընդ ինքեան յԱսորեստան, զի անդ մե-
ծարիցէ պատուով և փեսայութիւ մեծարեսցէ զնա։
Իսկ Ա.ըշակ և ՚ամ զօրք իւր տաղտապէին [1] երթալ
զհեռի ՚անապարհն. զի ՚ամ ոք յանձնիւր տուն յիւ-
րաքանչիւր տեղի զօրին քարոզ Հայաստան մարզիկան
անձկացեալ էին։ Այս եղև իրրև ՚ի վերայ հասանէր
իրացն Ն.ղովիկ նահապետն Ալիւնեաց գաւառին, և
Թէ Շ ապուհ Թագաւորն Պարսից կամի տալ զգ-
դեստր ՚իւր կնութիւ Ա.ըշակայ Թագաւորին Հայոց,
մեծապէս երկեաւ, և բախեցաւ նորա կասկած մնացն
իւրոց։ Օ ի եղ ՚ի մտի իւրում՝ Թէ յորժամ առցէ
Ա.ըշակ կին իւր զդուստր Թագաւորին Պարսից,
յայտ է այնուհետև՝ Թէ անարգի զդուստր նորա։
Վ ասն զի փառանձեմ դուստր Ն.ղովիկայ, որ էր կին
լեալ Գնելոյ, ՚ի ժամանակի անդ էր կին Ա.ըշակայ
Թագաւորին Հայոց. կասկածեր նա՝ Թէ գուցէ յոր-
ժամ այլ առցէ, զնորայն անարգեսցէ։

Ն.ղովիկ այնուհետև Ն.ղովիկ ՚ի հնարս հնարել,
և ՚ի ծուխս խորհրդոց, գտանել պատճառս՝ զի ՚ո գի-
տէ կարասցէ ցրուել զսէրն մեծ, որ էր անկեալ ՚ի
մէջ Թագաւորացն երկոցունց։ Գ.ախս բազում ոսկի
զօրավարին Հայոց Վ ասակայ Ն.ղովիկն մատուցա-
նէր. սոյնպէս և զամենայն մեծամեծսն կաշառէր, զի
հնարեսցի քակել զմեծ սէրն, որ էցէն ՚ի մէջ Թա-
գաւորացն երկոցունց։ Այս ՚ամ մեծամեծքն ձեռն
յանձին հարկանէին, առեալ ոսկւոյն կաշառաք խա-
ւարեցան։ Գ.այս զմի ոմն յաւագաց Թագաւորին Պար-
սից ՚ի նեղքն ՚ի բուն խորհրդականացն ՚ի բանի իւ-
րում առնէր Ն.ղովիկն զՀնարաւորութիւնն, զնենգա-
ւորութիւնն դաւաճանութիւնն մեքենայութիւնն, զի բանս
արկցէ ընդ Թագաւորին Պարսից ընդ Շ ապուհ և
ընդ Ա.ըշակ։ Այս տայր նմա Ն.ղովիկ ոսկի բազում և
անհամար, և դնէր բանս ՚ի բերան, զի իրրև կերպա-
րանս գուշակի արասցէ ասել ցարքայ Ա.ըշակ, Թէ

1 Յերկուս օրինակս պաղպաղէին։

ապրեցո զանձն քո , զի Ճշդիւթ խորհուրդ խորհեալ է Թագաւորին Պարսից ունել զքեզ և սպանանել : Եւ յորժամ դու զայս առասցես, ասէ , և զմեզ հրամայեսջիր կոչել ՚ի խորհուրդն . և զքո բանս առագանիկն հաստատեսցէ :

Ա՛պա գայր մտանէր խորհրդակից արքային Պարսից առ արքայն Հայոց . խօսել սկսանէր ընդ նմա զբանս ՚ի բերան եդեալ Ա՛նդուկայն չարագործն , և ասէր՝ Թէ արքայդ Հայոց Ա՛բշակ , ապրեցո զանձն քո . զի խորհուրդ խորհեալ է Թագաւորին Պարսից Շապհոյ ունել զքեզ և սպանանել : Կայր հիացեալ և զարմացեալ արքայն Ա՛բշակ ընդ բանսն ընդ այնոսիկ , և ասէ . ՚Ի մեծի վաստակոյն իմոյ ՚ի վերայ այս հատուցումն ՚ի նոցանէն : Ա՛պա հրաման տայր կոչել զառաջեաւ իւրով արքայ Ա՛բշակ զՇամ զմեծամեծս իւր , և զՇամ խորհրդակիցս իւր , զի ասակ ապարատպետն , և զՆդովին զաներ իւր , և որ միանգամ էին նախարարքն . և պատմէր նոցա զոր միանգամ լուաւ ինքն ՚ի պարսկէ անտի : Ա՛պա և նոքա ընդ մի բերան ասէին ընդ նմա , Թէ մեք զայդ վաղ լուաք , զքեզ չիշխեցաք ասել . այլ իրքդ այդ հաստատ են : Հայց արդ, արքայ, գիտեա տես զիարդ ապրեցուսցես զանձն քո և զմեզ : Ա՛պա արքայ Ա՛բշակ բազում պարգեւս գանձուց ոսկւոյ և արծաթոյ տայր պարսկին այնմիկ , որ ասաց նմա զբանս զայսոսիկ : Եւ ինքեանք կազմեցան պատրաստեցան . խորհուրդ խորհեցաւ Ա՛բշակ Թագաւորն Հայոց , և յառնէին ՚ի գիշերի որ միանգամ մտրդ էր ՚ի բանակէն Հայոց . հեծան ՚ի ձիս , և փախեան : Եւ առ ետեղ Թողին զխորանս և զգլվրանս զկահ և զկարասի և զկազմած իւրեանց , և զբանակէն իւրեանց , և գնացին գազտուկ . և ոչ ոք ՚ի բանակէն Պարսից գիտացին զայն մինչ ցայդ ցառաւօտն :

Եւ իբրև եղև ժամ այգորելւոյ առ Թագաւորն Պարսից , և ՚ամ Թագաւորք և իշխանք մեծամեծք իւր այգորեալ գային արքային Պարսից , բայց միայն ոչ ուրեք ՚ի մէջ երևէր Թագաւորն Հայոց Ա՛բշակ հանդերձ իւրովք մեծամեծօքն : Ա՛պա տայր հրաման Շապուհ Թագաւորն Պարսից իւրոցն , երթեալ տե-

սանել՝ Թէ զինչ իրք իցեն՝ ի բանակին Հայոց Թա-
գաւորին Աբշակայ, զի այնչափ ժամս յամեաց գալ
յայգորել Թագաւորին Պարսից Շապհոյ։ Այլա եր-
թեալ տեսանէին, զի Թափուր կայր բանակն առանց
մարդոյ. զի Թողեալ էր իւրեանց զխորանս և զվրանս
և զհովանոցս և զսրահակս և զգահոյս և զանկողինս
և զկահ և զկազմածս և զկարասի իւրեանց, և զզ-
գանձս իւրեանց անգամ. բայց միայն զզէնս իւրեանց
որ բարձեալ էին ընդ ինքեանս, և գնացեալք։ Այ-
որք լուգան՝ ի բանակին, գային զայնմ պատմէին Շապ-
հոյ արքային Պարսից։ Այլ իբրև լուաւ Շապուհ
արքայն Պարսից, քանզի այր խմաստուն էր, գիտա-
ցեալ՝ ի կարծիս խմաստութեանէ իւրոյ զիրսն՝ որ ինչ է-
զևն, անդէն ասաց՝ Թէ այն փախուստ Թագաւորին
Հայոց յիմոյ աստի եղեալ է. զի՝ ի մինչ՝ ի մերմէ
՝ի զրանէ աստի էին, ասէ, որք փախուցին զայրն
զայն զԱբշակ։ Այլա իւրոց աւագացն՝ ի մեծամե-
ծացն զեռպան ձիով զազուսն յղեր զՀետ Թագա-
ւորին Հայոց, հանդերձ երդմամբ՝ ի սէր միաբանու-
թեանէ և յանդիմանութեանէ. զի դարձցին և զչարախօսու-
զեանս՝ ի մէջ ածեալ կշտամբիցեն։ Այլ ոչ կամեցաւ
արքայն Հայոց ունկնդիր լինել բանիցն պատգամաւո-
րացն Թագաւորին Պարսից Շապհոյ, և ոչ դարձաւ
այլ անդրէն յերկիրն Պարսից։ Այլա յայն օրէ հե-
տէ և անդր յուզեցաւ պատերազմ գրգռութեանէ մար-
տից Ձակատուց՝ ի մէջ Թագաւորին Հայոց Աբշա-
կայ և՝ ի մէջ Թագաւորին Պարսից Շապհոյ ամն
աւելի քան զերեսուն։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս թէ զնդրդ եղև պատերազմ ընդ Շապուհ Թագաւորն Պարսից և ընդ Արշակ Թագաւորն Հայոց զառաջինն, կամ զնդրդ յաղթեր Արշակ արքայ Հայոց։

Զայն ամն ուր, յետ գնալոյն փախչելոյն արքայ-
ին Հայոց Արշակայ՝ի Թագաւորէն Պարսից Շա-
հոյ, լուռ լիներ Թագաւորն Պարսից՝ի Թշնամւէ.
և խոսեր համակ ողջոյն, և աղաչեր զԱրշակ արքայ
Հայոց՝ սիրով հաշտ և միաբան կալ ընդ նմա յու-
տի խաղաղութե։ Ոչ ամն զի՝ի մեծ վտանգ շտապի
եր Թագաւորն Պարսից ստէպ ստէպ յանդադար պա-
տերազմացն՝ի Թագաւորաց անտի Յունաց։ Ոսկ
Արշակ արքայ Հայոց ոչ ինչ կամեր անսալ նմա, և
ոչ հնարել ինչ լինել՝ի նա. և յղեալ դեսպանս, և ոչ
ինչ տալ պատարագս ընձայից, և ոչ հնարել ինչ կամ
մտ լինել՝ի նա բնաւին. և զանունն անգամ նոցա
ոչ կամեր լսել։ Ոսկ Թագաւորն Պարսից ստէպ ստէպ
յղեր պատարագս առ նա, առաքեր դեսպանս։ Եւ
ինքն հեպձեպ կռուեր ընդ Թագաւորսն Յունաց։

Այլ իբրև եղև խաղաղութի՝ի մէջ Թագաւորացն
Յունաց և՝ի մէջ Թագաւորին Պարսից Շապհոյ,
ուխտից նամակ գրեալ և կնքեալ տայր Թագաւորն
Յունաց Թագաւորին Պարսից։ Եւ գրեալ էր յու-
տից նամակին այսպէս. Ստուա քեզ, ասէ, զԱծքին
քաղաք՝ որ է յարուեստանի, և զԻջաձետս Աս-
ղոց, և մէջաշխարհին Հայոց՝ ձեռնթափ եմ, ասէ,
Թէ կարասցես յաղթել նոցա և արկանել՝ի ծառայ-
ութի, ես՝ի թիկունս ոչ եկից նոցա։ Ընդ՝ի նեղ
ուրեմն անգեալ Թագաւորն Յունաց, և՝ի նեղին
վշտի՝ զայս ձև օրինակի բանիցն կնքեր մուրհակ, և
տայր Թագաւորին Պարսից. և ապա ճողոպրէր՝ի
նմանէ։

Այլ իբրև եղև խաղաղութե՝ի մէջ Թագաւորին
Յունաց և՝ի մէջ Թագաւորին Պարսից, այնուհե-
տև կազմէր զզօրս իւր Թագաւորն Պարսից Շա-

պուհ, և խաղաց ՚ի վերայ Ա.ըշակայ արքային Հայոց մարտի պատերազմաւ։ Իսկ սահմանապահքն Թագաւորին Հայոց, որ նստէին ՚ի Գանձակ Ա.տրպատականի, վաղ ազդ առնէին նմա զկերսն մինչև հասեալ էր նա ՚ի սահմանս Ա.տրպատականի։ Ա.յս իբրև զայն զգայր Թագաւորն Հայոց Ա.րշակ, հրաման տայր Վասակայ իշխաւմ սպարապետին՝ կազմել զՇամ զգօրս իւր, և հասանել ՚ի դիմի հարկանել Թագաւորին Պարսից Շ ապհոյ։ Ա.յս արագ ժողովել ՚ի մի վայր, հանդէս առնէր Վասակ սպարապետն Շամ զօրաց Հայոց. և գտան հէծելազօր սպառազինք կուռ վառեալք նիզակաւորք համակ վառմսուն բեւր, միասիրտք միաբան միամիտք։ Ա.յն հանդերձ նոքօք յաղաջ խաղայր սպարապետն Հայոց Վասակ հասանէր, բախեալ ՚ի դիմի հարկանէր Թագաւորին Պարսից։ Ա.ր հասարակ զօրսն զՇամ հարկանէին ՚ի սուր սուսերի իւրեանց. և միաձի Ճողոպրեալ արքայն Պարսից Շ ապուհ փախչէր։ Վաքա հասանէին, գերէին, այրացնէր առնէին առ հասարակ զերկիրն Պարսից. և ինքեանք կային ուռնէին զՀակատունն տեղւն, այս ինքն զսահմանս Պարսից պահէին։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաղագս յետ այսորիկ որ ընդ երիս տեղի եղև Հակատն յերկրին Հայոց ընդ զօրսն Պարսից, Թէ զիարդ նշան յաղթութեանն յայտ ևս Հայոց կանգնէր։

ՅԱՅՆՄ ժամանակի Թագաւորն Պարսից Շ ապուհ ժողովեաց զզօրս իւր անթիւ և անհամար իբրև զաւազ առ ափն ծովուս. և փիղս բազումս, զի ոչ գոյր նոցա թիւ։ Ա.յնդ երիս բաժանեալ զզօրսն, երկուց գնդացն զՆդիկան և զՀազարաւուխտ զօրագլուխս կացուցանէր. և միւսմ գնդին ինքնին Թագաւորն լինէր զօրագլուխ։ Ա.յն հրաման տայր Թա-

գաւառն զօրացն՝ ընդ երիս տեղիս խաղալ մտանել արշաւել յաշխարհն Հայոց ։ Ապա այս բանք վաղագոյն ազդ լինէին առ Թագաւորն Հայոց Արշակ , և առ զօրավարն նոցին Ա՛ասակ . ապա և սոքա բազում զօր յաշխարհէ ժողովէին , զի ոչ գոյր համար բազմութեան ։ Իսկ թէ բեւր ահաւասիկ էին , սակայն զօրքն Պարսից արշաւէին յերկիրն Հայոց , և ընդ երիս առ պատակէին ։

Ապա Թագաւորն Արշակ և զիւր զօրն բաժանէր ընդ երիս . և տայր զմի գունդն Ա՛ասակայ սպարապետին . և զերկրորդ գունդն ի ձեռն Բագասի եղբօր նորին , որ ի գործ արուեստից քաջ էր անհնարին , բայց ի գործ իմաստութեան բախած էր . և զմիւս գունդն իսկ Թագաւորն Արշակ առնոյր ։ Իսկ տայր հրաման՝ յառաջ խաղալ պատրաստեալ , առ դիպան պատահել զօրացն Պարսից ։ Ապա գայր սպարապետն Ա՛ասակ , գտանէր զառաջինն առաջն զօրացն Պարսից զՀազարաւուխտն , զի հասեալ էին ի գաւառն Ա՛ծանդայ , ի տեղւոջն՝ որ անուանեալ կոչեր Յորնեալ . և բախէր ընդդէմ զօրացն Պարսից մարտիւ պատերազմաւ ։ Ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից , դարձան ի փախուստ , ցրուեցան սփռեցան ։ Հասանէր զօրավարն Ա՛ասակ , արկանէր ըզզօրսն ամ փախստեից Պարսից . ոչ ապրեցուցանէին և ոչ զմի , և Թափեցին աւար բազում և զփիղսն ։

Ի նմին ամենայն ի նմին շաբաթու ի նմին աւուր հասանէր Բագոս , հանդերձ զօրօք՝ որ ընդ իւրև էին . գտանէր զառաջ երկրորդ զօրացն Պարսից և զՀնդիկան զօրագլուխն նոցա , զի հասեալ մածեալ բանակէին ի վերայ ձկնատեղիցն Արեստեայ ։ Ապա վաղ զգացեալ զօրքն Պարսից զՀասանել Բագոսին , և պատրաստեցան ի մարտ պատերազմի ընդդէմ զօրացն Հայոց ։ Ապա հասանէր Բագոս ամ գնդաւն . ընդդէմ յարձակէին Ճակատուն Պարսից , անդէն հարկանէին սատակէին զամ առ հասարակ զզօրսն Պարսից , և գլխովին զՀնդիկան սպանանէին ։ Ապա դիպէր Բագոսն գնդին փղացն , և տեսանէր զմի ի փղաց անդի մեծագոյն զարդարեալ , և զարքունական նշանս ի վերայ արձակեալ ։ Համարեցաւ զթագա-

ւորն ՚ի փղէն յայնմիկ. իջանէր յերկիւղէն, հանեալ զսուսերն իւր յարձակէր ՚ի վերայ փղէն. զէն վերայ ցոյց, եմուտ ՚ի ներքոյ փղէն, հարկանէր զներսոտ փղէն, և անդէն ընկենոյր զփիղն ՚ի վերայ անձին իւրոյ, և սատակէին երկոքեան. զի ոչ ժամանէր ելանել ներքուստ ՚ի փղէն: Յայնմ ձակատու, բայց միայն զի մեռաւ զօրագլուխ զօրացն Բագոսն, այլ ՚ի Պարսից զօրացն ոչ ապրեցուցանէին յայնցանէ և ոչ մի:

Իսկ ՚ինոյն ամի ՚ի նմին շաբաթի ՚ի նմին իսկ աւուրս, քանզ՚ ՚ի մի օր[1] եղեն ձակատքն երեքեան, արդ հասանէր Թագաւորն Ա՛ղշակ, հանդերձ զօրօքն՝ որ ընդ իւրն էին. զտանէր զինքնին Թագաւորն Հ՚ապուհ, զի հասեալ մածեալ բանակէին ՚ի գաւառն Բասենոյ ՚ի տեղին՝ որ անուանեալ կոչի Ոխա[2]: Ա՛պա անդ կանէր զիշերի արքայն Ա՛ղշակ ՚ի վերայ բանակին Պարսից, և անդէն ընդ սուր հաներ զամենեսեան. բայց միայն միոձի մանապուր Ճողպրեր Թագաւորն Հ՚ապուհ, փախուցեալ անկանէր յաշխարհն Պարսից: Ա՛պա յայնմ ժամանակի յերիցունց գնդացն մի մեռանց դիպէին աւետաւորքն յաղթութեանցն. բայց ՚ի Բագոսէ, զի մեռաւ միայն ՚ի միում ձակատուն, այլ և ոչ մի ՚ի նոցանէն ոչ ծախէին. յայ եղև մեծ աղօղութիւն յաղթութեանն: Այս սոքա ՚ի կողմանս Պարսից ասպատակէին, և հարկանէին մինչև ՚ի կողմանս՝ որ կոչին Ատրպատական: Այս լցան գանձիւք բազմօք և գինւոյ և գարդու և բազում աւարաւ և անչափ մեծութիւք, և հարստացան անցին ըստ չափ:

1 Յայմ օրինակս փան պի օր: 2 Յերկուս օրինակս Ոխա:

Յաղագս Մերուժանայ արծրունւոյ, որ ապստամբեաց յարքայէն Հայոց Աբշակայ, և անկաւ առ Թագաւորն Պարսից Շապուհ, և առաքեալ գրգռէր զպատերազմունան. և Թէ զնարդ ուղեցաւ յայ, և կամ զնարդ եղև խոչընգակն և խոչոտն երկրին Հայոց մինչև յապայ:

Յաջորժամանակի ապստամբեաց յարքայէն Հայոց մի ոմն՝ ի նախարարաց մեծամեծացն, Մերուժան անուն արծրունի. և չոգաւ եկաց առաջի Թագաւորին Պարսից Շապհոյ, և զնեղը ընդ նմա ուխտ երդմամբ, զի յաւիտեան ծառայ լիցի նմա: Նախ ուրացաւ՝ ի կենացն իւրոց, զոր յաճձն ուներ. զի եթող զօրինս քրիստոնէութե, և խոստովան եղև վասն անձին իւրոյ՝ Թէ չեմ քրիստոնեայ. և կալաւ զօրինս մաղդեզանցն, այսինքն զմոգուցն. եպագ երկիր արեգական և կրակի, և խոստովան եղև՝ Թէ ածք այն են, զոր Թագաւորն Պարսից պաշտէ: Նոյնուխտ ընդ Շապհոյ արքայէն Պարսից յայնմհետէ. Նա էր և կարասցէ յաղթել Շապուհ Հայոց, և ունել զաշխարհն, և լինէ զարձ՝ լեցի յիմ աշխարհն և յիմ տունն, նախ ես՝ ասէ՝ շինեցից ատրուշան յիմում տանն սեպհականին, այս ինքն տուն կրակին պաշտելոյ: Նա կեանս և մահ զնեղը ընդ նոսա, խոստացեալ բանիւք և արդեամբք: Նա զզօրսն Պարսից պատրաստէին առաւել ևս քան զառաջինն, և առաջնորդ ունէին զբարագործն Մերուժանն, ասպատակել յաշխարհն Հայոց: Յանկարծօրէն այրացաւեր զերկիրն Հայոց առնէին առաջնորդ Մերուժանաւ. զոր տայլն՝ ի կոխումն փղոց, և զկանայս ընդ ցից սայլից հանէին. առնուին կոտորէին զամ քնակիչսն վերնագաւառացն Հայոց:

Մինչ զեռ Թագաւորն Աբշակ՝ ի կողմանն ստորին գաւառացն Հնդգեղ տան էր յուսահատ, զմիջնաշխարհն քանդեալ բրեալ զօրքն Պարսից ապականէին: Նպա զօրաժողով լինէր Ասակ զօրավարն Հայոց, և որ հասին՝ ի ժամանակի՝ անդ՝ ի ձեռն նո-

րա տան Հաղարդ հեծեալ ընդդէմ ընդդէմ և քաջ այրեաձի, կազմ զինու և բազում պատրաստութեբ. և հանդերձ նոքօք խաղայր, ի կիրթ ձգեալ հասանէր զօրացն Պարսից: Իսկ երբև զգացին զօրավարքն զօրացն Թագաւորին Պարսից՝ եթէ զօրաժողով է ի վերոյ նոցա զօրավարն Հայոց Վասակ, զինացորդս աշխարհին գերփեցին գերեցին առին և փախեան յաշխարհն իւրեանց Ձեպով տագնապաւ: Այսպա զհետ կրթէր Վասակ մամիկոնեան, և երթայր հասանէր նոցա. չուէին ի սահմանս Պարսատականին: Իսկ զօրքն Թագաւորին Պարսից Թողին զգերին, և փախստական լինէին հանդերձ Վերուժանաւն: Այս Թափէր անչափ և անթիւ զաւառ գերուածին, և դառնային խաղաղութբ առ Թագաւորն Արշակ:

ԳԼՈՒԽ ԻԴ.

Ցաղագս Վերուժանայ, Թէ զնարդ ապստամբէր և գրգռէր զԹագաւորն Պարսից Շապուհ, և առնէր պատերազմ. և Թէ զնարդ լինէր աւգնական Թագաւորին Պարսից Շապհոյ, և ածէր հէն յաշխարհն Հայաստանի. և կամ զնարդ գերէր զոսկերս արշակունեաց. կամ զնարդ զօրավարն Վասակ Թափեայ զգերեալն և յաղթեայ Թշնամւոյն:

Այս յետ այսորիկ Վերուժան վատանշան գերգռէր զԹագաւորն Պարսից զՇապուհն ի վերայ Թագաւորին Արշակայ մեծաւ բարկութբ: Այսպա զօրաժողով լինէր Թագաւորն Պարսից Շապուհ. և լրտեսս արձակէր, դիտել զարքային Հայոց զԱրշակ: Այս մինչ նա դեռ զգուշացեալ Արշակ արքային Հայոց հանդերձ իւրով զօրօքն զատրպատական սահմանաւքն, զի անդ սպասէր զօրացն Պարսից, նոցա առաջնորդ կալեալ զՎերուժանն՝ ընդ այլ կաթել աստղատակ յաշխարհն Հայոց առնէին: Օ՛ի ընդ Արձնիս և ընդ Օ՛ոփս մեծ, ընդ Անգեղ տունն և ընդ գաւառն Անձտայ ընդ Օ՛ոփս Շահունոց, ընդ Ազուր

գաւառն և ընդ Դարանաղէ, ընդ Նկեղեաց, զկողմանս այնց գաւառացն Շապուհ Թագաւորն Պարսից հանդերձ անթիւ զօրօքն առպատակել հեղեալ ծաւալեր բազմութիւք իբրև զջուրս բազումս։

Լուրացաւեր առնէին, և զանթիւ մարդիկ արկանէին ի սուր սուսերի իւրեանց. զկանայս և զմանկտի հանէին ընդ ցից սայլից, զկէսս զոր ի ինեբըդոյ կամացն արկեալ կասուին։ Նոյնպէս զարանց բազմութիւնս տային ի կոխումն փղաց. և զառանց Թուոյ զմատաղ մանկտոյն, զայն ի գերուէ վարէին. և զբազում ամուրս քանդէին, և զբերդս աւերէին զամուրս։ Նոյնպէս աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ էր ի գաւառին Ղճնեաց յիշխանութիւնէ բդեշխին. քառասուն հազար երդ, զայն նորհետայն ի գերութիւն խաղացուցին. և ինքեանք ի նոսին մեծ արշաւեցին։ Նոյնպէս անդ էին բերդք, զոր առին. և էր, զոր ոչ կարացին առնուլ։ Նոյնպէս գային պահ արկանէին շուրջ զԱնգեղ զամուր բերդացն, որ է Անկեղ տանն գաւառին. զի անդ էին բազում Հայոց Թագաւորացն գերեզմանք շիրմացն արանցն արշակունեաց. բազում գանձք մնացեալ կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ։ Ոչուան պահ արկին զբերդսն. ապա իբրև ոչ կարէին առնուլ վասն ամրութեան տեղւոյն, Թողուին և գնային։ Նոյնպէս զբազում բերդսն զանց առնէին, զի ոչ կարէին մարտընչել ընդ ամուրսն. բայց միայն մատնեցաւ ի ձեռս նոցա ամուր բերդն Անի ի Դարանաղեաց գաւառին անդ, զի չարագործն Վերուժանն հնարաւորութիւք մեքենայիւք ամուր բերդին այնմիկ։ Նստանէին ի վեր, և կործանէին զպարիսպ նորա, և իջուցանէին անթիւ գանձս ի բերդէն։ Նոյնպէս զբերեզմանս զառաջին Թագաւորացն Հայոց զարանց քաջաց զարշակունոյ, և խաղացուցանէին ի գերուէ զոսկերս Թագաւորացն. բայց միայն զգերեզմանն շիրմին Մանատրկոյ արքային ոչ կարացին քանալ վասն անհեղեղ սկայագործ հաստատուն ձարտարագործ արարածոյն։ Այսպէս գնացեալք անտի ի բաց մերժէին, ընդ այլ դիմեալ՝ առ պատակս կապէին, ընդ կողմանսն Ասկնոյ յառաջ խաղային և ինքեանք, կամէին ի Թիկանցն կուսէ անց

կանել Հասանել՝ի վերայ զօրացն Թագաւորին Հայոց։ Այսպս մինչ դեռ այս ամ լինէր, գուժկան Հասաներ առ Թագաւորն Արշակ, և ասէն նմա. Դու ա-ւադիկ առաջոյ սպասես Թշնամեացն, նախ յԱտրպատական. իսկ Թշնամիքն զքիւմամբք անկեալ կոտորելին զաշխարհս. և արդ դիմեալ գան՝ի վերայ քո։ Այսպս իբրև զայս լսէին Թագաւորն Հայոց Արշակ և զօրավարն նորին Վասակ, հանդէս առնէին զօրացն իւրեանց։ Եւ գտան՝ի ժամանակին անդ ընդ ձեռամբն զօրավարին Վասակայ արք գործոց իբրև վաթսուն հազար, ընտիրք և պատերազմող. որ միամիտք և միասիրտք էին միաբանութեամբ գործոցն պատերազմին, հասանել մարտնչել՝ի վերայ որդւոց և կանանց իւրեանց, և՝ի վերայ աշխարհին գնել զանձինս իւրեանց մինչև՝ի մահ և՝ի վերայ աշխարհին գաւառացն քաջութեամբ, հասանել մարտնչել՝ի վերայ եկեղեցացն իւրեանց, ՝ի վերայ ուխտին պաշտամանն սրբոյ եկեղեցեաց իւրեանց, ՝ի վերայ հաւատոց ուխտին անուան Այ իւրեանց, փոխանակ քնակ տերանց իւրեանց արշակունեաց։ Ո՞ւ անգամ ոսկերք Թագաւորացն մեռելոց և բազում ժողովուրդք խլեալք յիւրաքանչիւր տեղեաց, փոփոխեցան յօտարութիւն։

Այսպս Վասակ սպարապետն հանդերձ վաթսուն հազարօք յառաջ խաղայր, դարձեալ ընդ կրունկ Թագաւորն Արշակ յամուր տեղւոջ ուրեմն յերկրին Արաց, հանդերձ սպասաւորօքն։ Եւ հնգն գայր հասանէր՝ի միջնաշխարհն Հայոց՝ի գաւառն Այրարատոս. և հասանէր գտանէր զզօրսն Պարսից, զի հասեալ մնծեալ էին բազմութիւնբ իբրև զաւազ առ ափն ծովու, բանակեալ զգաւառաւն այրարատեան։ Այսպս հասեալ Վասակ հանդերձ զնդաւն՝ որ ընդ իւրն էին, անկանէր՝ի վերայ բանակին Թագաւորին Պարսից՝ի գիշերի յեղակարծումն ժամանակի։ Եւ անդէն առ հասարակ ընդ սուր հանէին զզօրսն ամ Պարսից. բայց միայն Թագաւորն միածի ձողոպրեալ մազապուր փախչէր։ Ո՞չ հետ հալածէին զմնացեալսն փախուցեալսն արտաքոյ իւրեանց սահմանացն, և Թափէին՝ի նոցանէ աւար բազում և անթիւ, զի ոչ գոյր նոցա չափ համարոյ։ Եւ առ հա-

սաղակ արկանէին զնոսա ՚ի սուր սուսերի խրեհանց, և Թափէին ՚ի նոցանէն զոսկերս Թագաւորացն Խրեհանց, զոր պարսիկք խաղացուցեալ տանէին ՚ի գեղուն յաշխարհն Պարսից։ Օ ՚ի ասէին ըստ իրեհանց հեթանոսութեն ըստ օրինացն, Թէ վասն այսորիկ բարձեալ տանիմք զոսկերս Թագաւորացն Հայոց յաշխարհն մեր, զի փառք Թագաւորացն և բախտն և քաջութիւն աշխարհիս աստի գնացեալ ընդ ոսկերս Թագաւորացն յաշխարհն մեր եկեսցեն։ Այսպա Թափեր ՚ի ասակ զգեղուին ամ զՀայաստան աշխարհին. և զոսկերս Թագաւորացն Հայոց, զորս Թափեաց ՚ի ասակ, հանեալ Թաղեցին յամուր ՚ի գեղջն՝ որ Արձէքն անուանին, Արարատ գաւառին՝ որ կայն ՚ի խինձս ՚ի գոգս ՚ի ծոցս յանձուկս ՚ի դժուարս լերինն մեծի, զոր Արագածն կոչեն։ Եւ ինքեանք փոյթ արարեալ զաշխարհ նուաճել, յարդարել կարգել յօրինել շինել զամ զգեղուին յաւերածոյն և այրեցածոյն։ Այլոց յայնմ նուազի ևս ապրեր ՚ի ղուժանն չարագործն, փախուցեալ ընդ արքային Պարսից։ Եւ յայնմ հետէ պահ ունէին իրեհանց աշխարհին. արքայն Արշակ հանդերձ զօրավարաւն ՚ի ասակաւ յերկոսին դուրս սահմանացն զգուշանային մինչև զամ աւուրս կենդանութեն իւրեանց։

Գ Լ Ո Ւ Խ Ի ե·

Յաղագս Թէ զնարդ արշաւեաց արքայն Արշակ յերկիրն Պարսից, և քանդէր և հարկանէր զբանակն Շապհոյ արքային ՚ի Թաւրէզ։

Այն զօրաժողով լիներ Արշակ արքայ Հայոց, և կուտեր առ ինքն զօրս բազումս իբրև զաւազ բազմութեամբ, և խաղայր ՚ի վերայ աշխարհին Պարսից։ Այսպա առնոյր ՚ի ասակ զգուշդն Հայոց, և զՆոնան հանդերձ Արլանօքն կոչել յօգնականութեն, և հասանէր դիմէր յօգնականութեն Թագաւորութեն Հայոց

ի վերայ Պարսից։ Ա.յլ Թագաւորն Պարսից հանդերձ ամ իւրովք զօրօքն ի ժամանակի անդ յայնմիկ քանզի և նա խաղացեալ գայր ի վերայ Հայաստան երկրին ընդդէմ սոցա, ապա սոքա փութացեալք հասանէին յԱ.տրպատական. և գտանէին զբանակն ոյքային Պարսից ի Ծաւրեշ բանակեալ։

Հասանէր և ասակ սպարապետն հանդերձ քսան բիւրուքն, անկանէր ի վերայ բանակին Պարսից։ Ի հաճի ձողոպրեալ Թագաւորն փախչէր, և առնուին յաւարի զամ կարաւանն Պարսից. և զամ զօրն Պարսից բազմութենն կոտորեցեալ, և աւելն աւար բազում ի բանակէն, զի ոչ գոյր նոցա թիւ։ Ա.պա տակ տուեալ առնուին զամ ատրպայական երկիրն. քանզեալ բրէին զերկիրն, մինչև ի հիմանց կործանէին. և խաղացուցանէին զգերութիւն երկրին քան զաստեղս բազմութիւն։ Ա.ւ զամ զայր երկրին հանէին ընդ սուր. և ինքեանք զգուշացեալք սահմանաւք երկրին իւրեանց, պահ արկեալ պահէին մեծաւ զգուշութիւն։

Գ Լ Ո Ւ Խ ԻԶ.

Յաջորդա Վնոյ պարակի, և յորեքհարիւր հազարացն՝ որ եկեալ էին ի վերայ Հայոց, և նկուն լինէին ի զօրացն Հայոց։

Ա.յն գումարեաց Թագաւորն Պարսից Շապուհ զայ լինն ի վերայ արքային Հայոց Ա.րշակայ յորեքհարիւր հազարաւ։ Ա.պա գայր եւանէր ոյ լինն, ասպատակ սփռէր ընդ ամ երկիրն սահմանացն Հայոց։ Ա.ւ ապա իբրև գիտացեալ Թագաւորն Հայոց Ա.րշակ, հասանէին ի վերայ զօրացն Պարսից. կոտորեալ առ հասարակ ընդ սուր հանէր զամենայն զօրն Պարսից, և զմնացեալսն փախստական առնէր մինչև ի կողմանս սահմանացն Պարսից։ Ա.ատակէին զնոսա, և ինքեանք դարձեալ ուռնէին զձակատուն տեղի։

ԳԼՈՒԽ ԻԶ.

*Յաղագս զօրավարին Պարսից Անդիկանայ, որ քառասուն բիւրուն հա-
սանէր՝ աւար առնուլ զերկիրն Հայոց. Թէ զիա՛րդ վասակ սպարա-
պետն Հայոց ելանէր ընդ առաջ նորա երկոտասան բիւրու. հարկա-
նէր զնա և զղօրս նորա։*

Զայն յետ այսորիկ առաքէր արքայն Պարսից ՚ի վերայ արքային Հայոց գունդ կազմեալ պատրաս-
տեալ արս ընդհրոս պատերազմողս իւր և զքառասունն բիւրս, գալ առնուլ այրել աւերել զերկիրն Հայաս-
տան, և Ընդկան զօրագլուխս նոցա. գայր հասանէր առապատակ առնէր յերկիրն Հայոց։ Լսեա գայր հա-
սանէր ընդ առաջ նորա Վասակ մամիկոնեան սպա-
րապետն Հայոց երկոտասան բիւրուք. հարկանէր սա-
տակէր զնա և զղօրս նորա, Թաւիւր զղարդ նոցա, և
ոչ ապրէցուցանէր մի ՚ի նոցանէ և ոչ մի. և ինքն կայր քաջուԹ֊ե ունելով զձակատուն տեղւոյ։

ԳԼՈՒԽ ԻԸ.

*Յաղագս Հազարաւուխտին՝ որ էր մի ՚ի նախարարացն Պարսից, զոր
առաքեաց Շապուհ արքայ ուԹսուն բիւրօք՝ հարկանել զերկիրն Հայ-
ոց. Եթէ զիա՛րդ Վասակ եւ ընդ առաջ նորա մեծասան հազարաւ,
հարկանէր սատակէր զնա և զղօրս նորա ՚ի սահմանս Աղձնեաց։*

Լսեն եհաս Հազարաւուխտ ՚ի զօրացն Պարսից, գալ այրեացաւեր առնել, ՚ի հիմանց տապալել զեր-
կիրն Հայոց։ Նա զիմեալ ընդ երկիրն Աղձնեաց, կամեցաւ ծառայել ընդ երկիրն Հայոց և ընդ նմ֊
սահմանս նոցա։ Լսեա ելանէր Վասակ ընդ առաջ նորա Հանդերձ մեծասան հազարաւ. հարկանէր սա-
տակէր, և զղօրսն զնացեալսն և զփախստականսն սր-
կանէր յերկիրն Պարսից. և զՀազարաւուխտն ան-
դէն սպանանէր։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Յաղագս Դամասունդ Վսեմականոյ, որ իննսուն բիւրուն տապրիկ զօրքն՝ զոր առաքեաց ի վերայ Արշակայ արքային Հայոց Շապուհ արքայն Պարսից։ Ապա եւանէր վասակ զօրավարն Հայոց, հարկանէր զնա եւ զզօրս նորա։

Եպա գայր հասանէր ի Կաւոսականի տոհմէն Դամասունդ Վսեմական, հանդերձ իննսուն բիւրուն՝ որ առաքեալ էին ի Շ ապհոյ արքայէն Պարսից յերկիրն Հայոց, տալ ընդ նոսա մարտ պատերազմի։ Եպա կազմեցան պատրաստեցան զօրքն երկրին Հայոց, և Վասակ զօրավար նոցա. ելին պատերազմել ի դիմի հարկանել նոցա։ Եպա ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից յերեսաց նոցա, դարձան ի փախուստ։ Հասանէր Վասակ, կոտորէր սպանանէր հարկանէր ի նոցանէն, զի և մի ոչ ապրեցուցանէր. և զՎսեմականն ի մէջ զօրացն սպանանէր։ Այս սէնքորքն[1] արտաքոյ իւրեանց սահմանացն հալածեալ տանէին։

ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս Վահրիձայ, որ չորեքհարիւր բիւրուն գայր հասանէր, տայր պատերազմ ընդ Արշակայ արքային. և զնմանդ մատնեցաւ ի ձեռս Վասակայ զօրավարին Հայոց ամ զօրօքն հանդերձ։

Եպա գայր հասանէր Վ ահրիձ՛ ի Վ ահրիձայ, և զօրքն Պարսից չորեքհարիւր բիւրուն առաքեալ՛ ի Շ ապհոյ արքայէն՛ ի վերայ Հայաստան աշխարհին, աւար առնուլ և կորուսանել զերկիրն զօրացն Թագաւորութեանն Հայոց. և գայրն հասանէին՛ ի տեղին, որ կոչին Վ ահազեան։ Եպա քառասուն հազա-

1 ՛ի չորս օրինակս «Ինէֆորդն»։

ըաւ Ելանէր Վ ասակ զօրավարն ընդդէմ նոցա . հաղ կանէր սատակէր զզօրս նոցա , սպանանէր զՎ ահրիձն, և կոտորէր զզօրսն Պարսից , և ոչ Թողոյր Ի նոցանէ և ոչ մի . և զգուշանայր զսահմանօք երկրին իւրոյ :

ԳԼՈՒԽ ԼԱ.

Յաղագս Գումանդ Էսպհոյ , որ մեծաւ պարծանօք պարծեալ առաջի արքային Պարսից Էսպհոյ , և առեալ ածէր Ի վերոյ աշխարհին Հայոց իննհարիւր հազար զօրս . և կամ գնդապետ նմուն լինէին , չորաչար մերժեալ լինէին յաշխարհէն Հայոց :

Այ եղև յետ այսորիկ գայր հասանէր Գումանդ Էսպուհ , առաքեալ Ի Էսպուհոյ արքայէ Պարսից իննհարիւր հազարաւ , պարծեցեալ առաջի Թագաւորին : Այլ գնացեալ , գայր հասանէր յաշխարհն Հայոց . և առաջնորդ ունէր Ի ձեռին զՎերուժանն վատանշան , որ էր Ա.ծրունեաց տոհմէն յերկրէն Հայոց : Այլ գայր հասանէր , և զեղծ գտանէր ըղ- սահմանապահսն՝ որք պահէին զսահմանս Հայոց : Այլ լցան սիրեցան ճաւալեցան ընդ ամ երկիրն Հայոց , աւար առնուլ քանդել աւերել զերկիրն ամ Հայոց աշխարհին : Այլ կազմէր պատրաստեր Վ ասակ զօրավարն Հայոց , հասանէր անկանէր Ի վերոյ արքայագնդին . և նախ զԳումանդ Էսպուհն սպա- նանէր : Այս ապա ընդ ցիրկն ասպատակ սիրեալ հայա ցիքն , զամ զօրսն Պարսից կոտորեալ , անմի արա- րեալ սպառեցին : Այլք միայն չարագործն Վերու- ժանն միաձի ձողոպրեալ փախչէր անկանէր յերկիրն Պարսից :

ԳԼՈՒԽ ԼԲ.

Յաղագս Դեհկան նահապետի, որ առաքեցաւ ի Շապհոյ արքայէ Պարսից ի վերայ Աղշակայ Հայոց արքային՝ զօրօք բազմօք. ապա հասանէր սատակէր զնոսա զօրավարն Հայոց Վասակ։

Յետ այսր ամի Շ ապուհ արքայն Պարսից զօրաժողով լինէր, և կուտէր զօրս անչափս և անթիւ և անհամար իբրև զաւազ ծովու, և կուռ վառեալ՝ որք նիզակ՝ ի ձեռն առնուին, չորեքհարիւր բեւր զօրս բաւ զումն։ Եւ զԴեհկան նահապետ, որ տոհմիկ իսկ էր ազգաւ տոհմին զօրավարացն Հայոց՝ այս լինքն մամիկոնենից, առաքէր զնա Թագաւորն Պարսից Շ ապուհ յերկիրն Հայոց՝ ի վերայ Աղշակայ արքային Հայոց։

Պայր հասանէր՝ ի տահմանս երկրին Հայոց. ապա և զՀայոցին ոչ լինչ ծուլացեալ՝ ի քուն գտանէր, այլ հազմ պատրաստք կային նմին գործոյ Ճակատուն պատերազմի։ Եւ զօրավարն Վ ասակ ելանէր ընդ առաջ նոցա եւ Թանատուն հազարաւ. հարկանէր սատակէր զզօրսն Պարսից, սպանանէր զիւր զագ գային զԴեհկան նահապետն, և զինացեալսն առաջի իւր տանէր փախստական ձիահալածք արարեալք։ Իսայց Աերուժանն արծրունի փախուցեալ ապրէր, որ առաջնորդէր նոցա։

ԳԼՈՒԽ ԼԳ.

Յաղագս Սուրէնայ Պահլաւի, որ եկն և նա զօրօք բազմօք. և սա և նոյն լինէր իբրև զառաջինն։

Այս կրկնեալ լինէր զօրաժողով Շ ապուհ արքայ Պարսից, կազմէր պատրաստէր գունդս բազումս զօրացն և փիղս անթիւս, զօրս ընդ իւր և պատերազմող. և Սուրէն Պահլաւ, որ ազգակից իսկ էր Աղշակայ Թագաւորին Հայոց, և Աերուժանն առաջ

նորդ նոցա. և արձակեաց ՚ի վերայ նոցա: Եպա քանզի և Վասակ զօրավարն Հայոց խաղաց գնաց ընդառաջ նոցա երեսուն հազարաւ, հարկանէր ՚ի դիմի զՎուրէն և սպանանէր, և զզօրսն կոտորեաց. բայց Մերուժան փախչէր:

ԳԼՈՒԽ ԼԴ.

Յաղագս Ապական վսեմականի, զի եկն և նա յայս պատերազմս, և նմա ձախողեցաւ որպէս առաջնոցն:

Իսկ յետ Մուրենայ եկն Վ սեմական. գայր հասանէր անչափ բազմութիւք և անթիւ զօրօք, և Մերուժան առաջնորդ առաքեաւ ՚ի Շապհոյ արքայէն Պարսից ՚ի գործ պատերազմի ՚ի վերայ երկրին Հայոց: Եպա առաքեցաւ ընդ առաջ նորա Վասակ սպարապետ զօրավարն Հայոց. հարկանէր սատակէր զՊականն Վ սեմական հանդերձ զօրօքն, և զմին ՚ի նոցանէն ոչ ապրեցուցանէր: Եայց միայն փախչէր չարագործն Մերուժան:

ԳԼՈՒԽ ԼԵ.

Յաղագս Զրհայ նուիրակապետի, որ առաքեցաւ ՚ի Շապհոյ արքայէն ՚ի վերայ Հայոց բազում զօրօք ՚ի պատերազմ, և սատակեցաւ իբրև զառաջինան:

Յետ այսորիկ Զրհայ նուիրակապետն զկնի արձակեաց Շապուհ արքայ Պարսից, մղել զպատերազմ Հայոց. և զՄերուժանն առաջնորդ ընդ նոսա առնել: Եյնմ գումարեր գումարտակ բազում իբրև զաւազ ծովու բազմութիւք. և գային հասանէին յերկիրն Հայոց: Եպա ելանէր ՚ի դիմի հարկանէր նոցա Վասակ զօրավարն Հայոց. Զրհայն սպանանէր, և զզօրսն

*զկեան կոտորէր, և զկեան առաջի իւրեանց փախստա-
կան առնէին։ Այն անգամ ևս ոչ կարէին ՚ի բուռն
արկանել զՄերուժանն։*

ԳԼՈՒԽ ԼԶ.

*Յաղագս Սուրենայ պարսկի, որ յետ Զըկայն ևս եկն ՚ի պատերազմն.
և նա ՚ի բուռն անկեալ Վասակայ, հանգերձ իւրովք զօրօքն ստուա-
կեցաւ։*

Այ եղև յետ մահուն Օձկայ, Սուրէն պարսիկ խաղաց ՚ի Թագաւորէն Պարսից Շապհոյ. վաթսուն բիւրու եկն եհաս, տալ պատերազմ ընդ Թագաւորին Հայոց Զըշակայ. և առաջնորդ ուներ զՄերուժանն։ Այլ ժողովեաց զնմա զօրս նախարարացն Վասակ սպարապետն Հայոց. եւ անկեալ գիշերի անկանէր ՚ի նեղըս ՚ի զակիչն ՚ի հետոտս, սուսեր՚ի ձեռն տան հազարաւ ընտիր ընտիր արամբք։ Այլ հատարակ կոտորէին հարկանէին և սատակէին զզօրսն Պարսից. և ձերբեակալ առնէին զՍուրէն պարսիկ, և ածէին զնա առ արքայն Զըշակ։ Այլ հրաման տայր քարակոխիւք առնել զնա։ Ոչայց Մերուժանն ապրէր փախստեայ։

ԳԼՈՒԽ ԼԷ.

*Յաղագս Հրեշշղումայ, որ առաքեցաւ յարքայէն Պարսից ՚ի վերայ
Հայոց լինլսուն բիւրու. և այն անգամ ևս նշան յաղթութեան Հայոց
կանխնէր։*

Այ Հրեշշղումն արձակէր ՚ի պատերազմ ՚ի վերայ աշխարհին Հայոց։ Օձ ևս սա իսկ ՚ի նմին յազգէ Թագաւորին Հայոց ազգական էր, այլ բանիւ Շապհոյ արքայի գայր հասանէր հանդերձ զօրօք լինլսուն բիւրուն, տալ պատերազմ ընդ Հայաստանեայսն։

Ա՛պա կարգեր կազմեր պատրաստեր Վասակ զօրավարն Հայոց զի՞մ զգուշդս զօրացն, և գիմեաց՝ ի վերայ նոցա մարտիւ պատերազմաւ։ Վախատականն տանէին զնոսա, արկեալ առաջի իւրեանց. և Հրեշ շողումն և Վերուժանն փախչէին։

ԳԼՈՒԽ ԼԸ.

Յաղագս Աղանայոզին, որ յորէքհարեւր բիւրաւ գայր հասանէր ՚ի Թագաւորէն Պարսից՝ տալ պատերազմ ընդ աղքային Հայոց, եթէ զի արդ նեղեալ պարտեցաւ ՚ի ձեռն Վասակայ։

Իսկ Աղանայոզանն, որ Պահլաւն էր ՚ի տոհմէն արշակունեաց, որ նա խրոխտացեալ առաջի Շապհոյ Թագաւորին Պարսից, և գնայր գայր հասանէր ՚ի սահմանս Հայոց։ Ա՛պա այս վաղագոյն ազդ լինէր Թագաւորին Հայոց Ա՛րշակայ. սոյնպէս և սա զիւր զօրքն կազմէր ՚ի ձեռն Վասակայ իւրոյ սպարապետին։ Նա զի՞մ նախարարքն Հայոց ընդ նմա գումայրեալ, գայր հասանէր ընդ առաջ զօրացն Պարսից. հարկանէր կոտորէր զամենեսեան առ հասարակ. և զինացեալն փախստեայս առնէին յերկիրն Պարսից. և ինքեանք զգուշանային սահմանացն իւրեանց։

ԳԼՈՒԽ ԼԹ.

Յաղագս Բոյեկան մեծ նախարարին Պարսից, որ եկն և սա քառասուն բիւրաւ. զոր հարկանէր ընկէր սպարապետն Հայոց Վասակ։

Յետ այսորիկ Բոյեկան մեծ նախարար Պարսից, և քառասուն բեւր ընդ նմա, գային հասանէին յԱտրպատական. կամէին աստղատակ առնել յերկիրն Հայոց։ Ա՛պա զառաջեօք անգանէր Վասակ իւրով հայաստան գնդաւն, հարկանէր զզօրսն Պարսից, և զԲոյեկանն սպանանէր ՚ի ձիաւորեաժն։ Նա այրեր

անդ զսպատանս Թագաւորին Պարսից. և գտեալ անդ զսպատակեր Թագաւորին Պարսից, նեւտաճիգ եւ դեալ՝ նեւտալից առներ։ Բայց միայն փախչեր Արբուժանն ընդ նոսա եկեալ։

ԳԼՈՒԽ Խ.

Յաղագս Վաչականայ, որ եկն ի Հայս ուղեւտատն բիւրուն, և կալեր առնուլ զՀայս. ապա և զնա վանեաց սպարապետն Հայոց և զզօրս նորա։

Վաչականն ոմն ի նախարարացն Պարսից արշաւեր յերկիրն Հայաստան, հանդերձ ուղեւտատն բիւրօք։ Իսկ ժողովեր զօրավարն Հայոց Ա տասակ զամ զզօրսն Հայոց. և Թողեալ զԹագաւորն Խոշակ յամուր բերդին Դարւնաց, և ինքն զօրավարն Հայոց Ա տասակ խաղայր անկաներ հանդերձ զօրօքն Հայոց զջնջակաւն Վաչականայ։ Սպանաներ զվաչականն, և կոտորեր զջնջակսն Պարսից. բայց միայն ապրեր սակաւուք փախուցեալ Արբուժանն, եկեալ առաջնորդ նոցա։

ԳԼՈՒԽ ԽԱ.

Յաղագս Մշկանայ և երեսուն և հինգ բիւրուն, որ արշաւեր յերկիրն Հայոց, եթէ զնա՛րդ կոտորեալ եղև ի Վասակայ և ի զօրաց Հայոց։

Այն Մշկան ոմն անուն, մի՛ ի նախարարացն Պարսից, և նա եկեալ ուղղեր ձակատս ընդ Թագաւորին Խոշակայ։ Իսկ զօրավարն Հայոց Վասակ ձակատեր զզօրսն Հայոց ընդդէմ նոցա. և զդէմ յանդիմման մեծաւ բռնութեամբ միմեանց յարձակէին։ Այլ յաղթահարեր զզօրսն Պարսից գունդն Հայաստան. սատակէին, և ոչ մի՛ ի նոցանէն ոչ ապրեցուցաներ.

և յականէ յանուանէ զՄՇկանն սպանանէին, և ՄԵրուժանն փախչէր ։

ԳԼՈՒԽ ԽԲ.

Յաղագս Մարուձանայ և վաթսուն բիւրուն, թէ զնարդ եկեալք ի վերայ Թագաւորին Արշակայ, կամ զնարդ հարկանէր սատակէր զնոսա վասակ սպարապետն ։

ՄԱՐԻՃ անուն մեծ նախարար գայր մարտնչէր ընդ երկիրն Հայոց ։ Ապա հանդերձ զօրօքն վաթսուն բիւրուն գայր հասանէր միջամբոխ [1] լինէր յերկիրն Հայոց. և առաջնորդ ի ձեռին ունէր զՄերուժանն արծրունի ։ Ապա և պատահէր պատերազմաւ վասակ ՅամՀ զօրօքն Հայոց. հարկանէր սատակէր զզօրսն Պարսից կորուսանէր, և զՄարուձանն սպանանէր ։ Հայց միայն փախչէր ՄերուժանՀ ։

ԳԼՈՒԽ ԽԳ.

Յաղագս զինդակապետին, որ իննսուն բիւրով եկն ի վերայ Հայոց Թագաւորին. ապա հասանէր սատակէր ի մեծ հարուածս զզօրսն Պարսից վասակ զօրավարն ։

ՕՆԴԿԱՊԵՏ ոմն, զօրագլուխ զօրացն Թագաւորին Պարսից, հանդերձ իննսուն բիւրուն գայր հասանէր ի սահմանս Ատրպատականի ։ Ապա կանխէր և ելանէր ընդ առաջ նոցա վասակ զօրավարն Հայոց. անկանէր ի գիշերի ի վերայ զակչին պարսկաց, և հանէր ընդ սուր առ հասարակ զամենեսեան, և սպանանէր զզինդկապետն ի մէջ բանակին ։ Հայց միայն Ճողոպրեալ ապրէր ՄերուժանՀ վատանշան ։

1 Ցերկուս օրինակս ՀԼամոխ լինէր ։

Յաղագս արքայորդւոյն Պաապայ. Թէ զնորդ յայտնի կէին գնա՛ի նմա, և հանգերձ նորօք գործէր զպղծութիւնն։

ՊԱՊ որդին Ա՛ըշակայ ծնաւ՛ի մօրէն Փառանձեմայ սիւնեցւոյ, որ էր լեալ կին Պետերայն. զոր եւ պան արքային Ա՛ըշակ, և առ զկին նորա Փառանձեմ իւր կին, և ծնաւ՛ի նմանէ որդի՝ որ կոչեցաւն Պապ։ Այլ եղև իբրև ծնաւ զնա մայրն իւր, քանզի անօրէն մարդ էր և ամենևին չայ ոչ երկնչէր, նուիրեաց զնա գիւաց. և զնակեցոյն գնա բազումք՛ի մանուկն, և վարէին զնա ըստ կամայ իւրեանց։ Սնաւ և աճեաց, և գործէր զմեղս. զպոռնկութիւն, զպղծութիւն արուա գիտութիւնե և զանասնագիտութիւն, և զազրալի գարշուութիւն. բայց կարի զարուագիտութիւն։ Վարձեալ ինքն իգանայր այլոց, և այսպէս մբնկեալ թաւալեալ էր։

Այլ երբեմն իբրև զգաց մայր նորա զարուագիտութիւնն, և ոչ կարացեալ համբերել պարսաւանացն վատանուանութենն, ասէ ցանենկապան որդւոյն իւրոյ, Թէ յորժամ նա խնդրեացէ՛ի պղծութիւն զարմն՝ ընդ որ սովորն է անկանել, դուք զնա՛ի ներքս կոչեա՛ջք։ Յորժամ պատանեակին Պապ ինքն ընդ անկողնին մտեալ՝ խնդրեր զարմն՛ի պղծուի, եմուտ մայր նորա և նստաւ զառաջեաւ նորա՝ իւր որդւոյն։ Ա՛պա սկսաւ ձչել վայել պատանեակն, և ասէ ցմայր իւր. Յարիցես գնասցես՛ի բաց, զի մեռանիմ խռովիմ կսկծիմ պայթիմ, Թէ ոչ յարիցես գնասցես՛ի տանէս։ Ասէ մայրն ասէ, Թէ ոչ գնացեալ ելից՛ի տանէ աստի։ Ասէ նա հաղ քան զհաղ ձչէր, բազմացուցանէր զվայելն։ Ասէ մայրն նայեցեալ տեսանէր աչօք իւրովք օձք սպիտակք, զի պատեալք էին զգահոյիցն ոտամբք, և ձապատէին՛ի վերայ պատանեկին Պապայ, մինչ գեռ ընդոդմանեալ էր նա. կայր՛ի մահիճն, վայէր և խնդրէր զպատանեակն ընդ որ սովորն էր գիտանալ։ Ասէ մայրն գիտացեալ յիշեաց զայն, որոց՛ի ծննդեանն նուիրեաց զորդին իւր. գի-

տաց Թէ նոքա էին, որ ի կերպարանս օձիցն ձագա-
տէին զորդւոյն իւրում. յարտասուս հարեալ, ասաց.
Ա՛յ լինաք, որդեակ իմ. զի քեզ տաղնապ էր, և ես
ոչ գիտէի: Յարուցեալ գնաց եԹող զտեղին, կա-
տարել զպէտս ցանկութեանն: Եւ այսպէս դիւաք վա-
րեալ, յայսմհետէ գործս զՅամ աւուրս կէնաց իւրոց
ըմբռնեալ Պապն որդին Արշակայ, մինչ եհաս ի
Թագաւորութիւն, մինչև ի մահ իւր:

ԳԼՈՒԽ ԽԵ.

Յաղագս Սահատան անդերձապետի, որ առաքեցաւ ի Շապհոյ Թա-
գաւորէն Պարսից չորեքհարեւր հազարաւ, և փախոյց ևս զնա Վասակ
զօրավարն Հայոց:

Ա՛յն յետ այսորիկ ժողովեաց Թագաւորն Պար-
սից Շ ասուհ զզօրս իւր, և հազարս չորեքհարեւր.
և Սահատան անդերձապետ զօրագլուխս նոցա: Ա՛յս
խաղացին գնացին ի կողմանս Հայոց. եկին ճաւա-
լեցան Ձակատեցան ընդ Թագաւորութեն Հայոց Ար-
շակայ: Ա՛յս ի մի վայր եկեալք ամ մեծամեծք նա-
խարարացն Հայոց, խորհուրդ խորհեին. քանզի ոչ
առնուին յանձն երբէք, Թէ Թագաւորն Արշակ մնա-
յէ ընդ նոսա ի պատերազմ: Ա՛յս զօրավարն Վա-
սակ, հանդերձ ամ մեծամեծօքն և նախարարօքն
ամ Հայոց մեծաց, հարկանէր սատակէր զամ զօրսն
Պարսից: Եւ սպանանէր Սահատան անդերձապետն.
բայց միայն ապրէր Վերուժանն սրծբռնի փախու-
ցեալ:

ԳԼՈՒԽ ԽԶ.

Յաղագս Հապտան տակառապետին, որ նկն հինգ հարեւր բիւրուն ի վերայ աշխարհին Հայոց. ապա և զնոսա հարկանէին ստատկէին զօրքն Հայոց։

ՀԱՊՏԱՆ տակառապետն գայր հասանէր հինգ հարիւր բիւրուն ի վերայ աշխարհին Հայոց, և կայ մէր մնանել յաշխարհն Հայոց։ Ապա կազմեալ պատրաստեալ դունդն զօրաց Թագաւորին Հայոց, և ինքն ասակ զօրավարն Հայոց, ելանէր ի դիմի հարկանէր զօրացն Պարսից։ Հարկանէին կոտորէին զզօրսն Պարսից, և սպանանէին զՀապտան տակառապետն պարսկաց։ Բայց միայն փախչէր Վերուժանն, ապրեալ լինէր։

ԳԼՈՒԽ ԽԷ.

Յաղագս Մոգաց հանդերձապետին՝ որ գայր հասանէր ուխտաւորան բիւրուն, տալ ճակատ ընդ Թագաւորին Հայոց. և սա կոտծանէր լրիւ զառաջինան։

ԶՊԱՆ և Մոգաց անդերձապետն գայր հասանէր ուխտաւորան բիւրու, տալ ճակատս ընդ Թագաւորին Հայոց Արշակայ։ Ապա գնային հասանէին ի մի վայր ամ զօրքն Հայաստան երկրին և ինքն ասակ զօրավարն սպարապետն, որ էր դայեակ Թագաւորին Հայոց Արշակայ։ Եթէ կարի շատ աճապարեալ հասանէին, այնչափ ժամանեցին՝ մինչև ի Աղիսազան կարացին հասանել։ Նա անդ ընդ միմեանս դունդն երկոքեան բախէին. ի պարտութէ մանեցան զօրքն Պարսից, փախստական լինէին յերեսաց Հայկայ զօրավարին և ամ զօրացն Հայոց։ Նա սպանանէին անդ զՄոգաց անդերձապետն, և զզօրսն անմի արարեալ. բայց միայն Վերուժանն ի տաճիկ ձի նստեալ փախչէր։

ԳԼՈՒԽ ԽԸ.

Յաղագս Համբարակապետին, որ իննսուն բիւրուն եկեալ մարտնչէր ընդ զօրս Թագաւորին Հայոց. և սատակեցաւ ի Յաղամաս ի զօրացն Հայոց, և ի զօրավարէն Վասակայ։

Եպա Համբարակապետն Թագաւորին Պարսից, և սա զայր հասանէր ի գաւառն Կորձէից ի Յաղաղմաս հանդերձ իննսուն բիւրօք։ Եւ զակիւղ աճեալ յամուր տեղւոջ միոջ, կամէր կռուել ընդ Թագաւորին Հայոց ընդ Եըշակայ։ Եպա զայր զօրավարն Հայոց, հանդերձ տասն հազարաւ զինուս ընտիր զօրու. և զարանամուտ լինէր ընդ կողմանս բանակին, և ի գիշերին անկանէր ի զակիւղն։ Եւ զամենեսեան ընդ սուր հանէին առ հասարակ, և ոչ ի ոչ ապրեցուցանէին. բայց միայն Վերուժանն արտաքոյ զընդին դիպեալ, փախչէր։

ԳԼՈՒԽ ԽԹ.

Յաղագս Մռիկանայ՝ որ քառասուն բիւրօք եկն կռուել ընդ Թագաւորին Հայոց, և ի վասակէ և ի զօրացն Հայոց սատակեցաւ։

Եպա Մռիկան ոմն մեծ զօրագլուխն Պարսից քառասուն բիւրօք գայր հասանէր ի մարտ պատերազմի ընդ Եըշակայ արքային Հայոց։ Եպա և զօրքն Հայոց խրոխտացեալ հանդերձ իւրեանց զօրավարաւն Վասակաւ, գազանաբար առիւծաբար դէմ ընդդէմ յարձակէին. և անդէն սատակէին զզօրսն Պարսից, և սպանանէին զՄռիկանն։ Բայց Վերուժանն և այն անգամ փախչէր։

ԳԼՈՒԽ Ծ.

Յաղագս քակելոյ և քայքայելոյ Թագաւորութեանն Հայոց, թէ որպէս ապստամբեցին բազումք ի նախարարացն Հայոց, և ձեռս եառուն ի Հապուհ արքայն Պարսից. և թէ զինարդ հասեալ ցրուեցան այսր անդր, և նուաղեաց Թագաւորութեանն Հայոց:

ՕՐԵՐՍՈՒՆ և զչորս ամն ետուն պատերազմ եր կիր Հայոց ընդ Թագաւորին Պարսից, և յետ այնորիկ ձանձրացան պարտեցան լքան աշխատեցան երկոքին կողմանքն: Եւ սկսան սորսորել զնալ ի բանակէն Հայոց Թագաւորին. Թողին զիւրեանց արքայն Ա.ըշակ: Բայց նախ այսմ գնալոյ սկիզբն առնէին մեծամեծ աւազանքն: Նախ բդեաշխն Ղզնեաց, և Նշխրական[1] բդեաշխն, և Մահկեր տանն, և Լիհորականն, և Դասընաբեթին, և Համ նախարարքն Ղզնեաց, և զօրն և տունն տոհմին Ղզնեաց կողմանն ապստամբեցին յարքայէն Հայոց Ա.ըշակայ, և չոգան կացին առաջի արքային պարսից Շապհոյ. և պարեալ աճէին ի Հայոց կուսէ՝ որ Զորայն կոչէն, դրուանս զնէին. և զատուցին զիւրեանց աշխարհն ի Հայոց:

Եւ յետ սորա Վուզարայ[2] բդեաշխն, և յետ սորա Զորայ գաւառին տէրն, և Կողբայ գաւառին տէրն, և ընդ նոսա Վարդմանաձորոյ տէրն: Եւ որք մնա էին ի նոսա կողմն այնր ձեռնին, որ շուրջ էին զնաքօք, միահաղոյն ապստամբեցին ի Թագաւորէն Հայոց Ա.ըշակայ. և չոգան գնացին առաջի կացին Թագաւորին Պարսից Շապհոյ: Ապստամբեցին Ա.ըշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Ա.ըձախայ, և ամուր գաւառն Տմորեաց, և ամուր աշխարհն Կորդեաց. ապա և տէր գաւառին Կորդուաց չոգաւ եկայ առաջի Թագաւորին Պարսից:

Յետ այսորիկ ապստամբեաց ի Թագաւորէն Հայ-

1 Յերկուս օրինակս Նուշիբա- ան:

2 Յօրինակի միում Գոգորեաց, և յայլում Գոգորեաց:

ոց և ձեռին իշխանութեն տանն Հայոց Թագաւորին, որ էր զատրպայական աշխարհաւն, յետս եկաց ի Թագաւորէն Հայոց ամուր աշխարհն Վարաց. յետս եկաց յաղթայէն Հայոց և աշխարհն Կաղնից. եթող զաղթայն Հայոց և գնաց Վաղամուտ տէրն Նձտեայ, և ընդ նմա իշխանն մեծի Նոփից. և գնացին առ Թագաւորն Յունաց: Ի ջնաշխարհն ծնացեալքն յերկուացան յաղթայէն, և ոչ կամէին լսել Թագաւորին իւրեանց, ոչ մի ինչ իրս՝ զոր նա կամէր: Նա գձձեցաւ Թագաւորութեն մեծապէս:

Նա Վահան եղբայր Վասակայ սպարապետին, ի մանկունեան ի տհմէն, անկաւ ի բանս հրապուրանաց նա ի Վերուժանայ արծրունոյ քեռորդւոյ իւրոյ: Նա սա ապստամբեաց ի Աշուշակայ յաղթայէն Հայոց, և չոգաւ եկաց առաջի Թագաւորին Պարսից Շապհոյ: Նա հաձեաց զմիտս նորա, և նախ ուրացաւ նա ի կենաց իւրոց՝ զոր ի Քէն ունէր, և յանձն առ պաշտել զօրինս մոգութեն. այս ինքն երկիր պագանել կրակի և ջրոյ և արեգական, և ուրանալ զօրինս քրիստոնէութեն՝ յորում ծնեալն էր: Նա եղև նա ըստ մտի Թագաւորին Պարսից. և մատուցանէր ևս ամբաստան գրգռութեի զաղթայէն Հայոց Աշուշակայ, և զիւրմէ տանուտեառնէն Վասակայ. և յիշեցուցանէր ևս նմա զմահն Վարդանայ, թէ չաղագս քո մեռաւ: Նա եղև նա այնուհետեւ սիրելի Շապհոյ աղթայէն, և ետ նա կին Վահանայ զԱրմիզդուխտ քոյր իւր. և ընդհակառակ նմա բարձ և զպատիւ՝ որ նոցուն լեալ էր նախնեաց, և մեծարէր փեսայ արար զնա իւր Թագաւորն. և ի մէջ գօրաց իւրոց չքեղացոյց զնա, և խոստացաւ նմա կեանս մեծամեծս առնել: Իսկ Թէն Հայոց պակասեաց յայսմհետէ և չատա:

ԳԼՈՒԽ ԾԱ.

Յաղագս Թէ զնարդ միաբան համօրէն աշխարհօքէն՝ որ միանգամ մնա- ցեալ յաշխարհին՝ ժողովէին առ Ներսէս կաթողիկոսն Հայոց, և զբողոք հարկանէին առաջի նորա, և ձեռնթափ լինէին, և Թողէն ի ձեռաց զնուբեանց Թագաւորն Արշակ։

Ապա ժողովեցան մարդիկ ամ աշխարհին իշխա- նունքն Թագաւորունքն Հայոց. և եկին առ մեծ եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս, մեծամեծք նա- խարարք կուսակալք կողմակալք գաւառատեարք գոր- ծակալք և գասապետք շինականաց. ի մի վայր ե- կեալ ժողովեցան, խօսել սկսան ընդ Ներսիսի և ասեն. Լաւ տեր, քեզկն գիտես, զի այս երեսուն ամ է Թագաւորին մերոյ Արշակայ, զի ոչ մի ամ մեզ հանդիստ ոչ եղև ի պատերազմէ. և համակ սրով և սուսերօք և ի սլաքս և ի տեգս նիզակաց զբռտունս երեսաց մերոց ջնջեցաք։ Այս արդ ոչ կարեմք այսմ գժոյժ[1] ունել, և ոչ այլ կարեմք տալ ձակատս. զի լաւ է մեզ՝ Թէ ծառայեսցուք մեք Թագաւորին Պարսից սից որպէս ընկերքն մեր արարին, զի Թողէն գնա և գնացին առ Թագաւորն Պարսից. և մեք սոյնպէս առնելոց եմք, զի ոչ այլ ևս կարեմք կռուել։ Եթէ պէտ իցէ Թագաւորին Արշակայ կռուել ընդ Հոգ, Ասաւաս և Ունդուկաս աներաս իւրով տացէ պատերազմ. այլ յայսմիկ Հայոց աշխարհէս և ոչ մի այլ ոչ ոք է երթալոց ի Թիկունս օգնականութեան նորա։ Եմա եթէ պէտ իցէ, տացէ պատերազմ, Թէ պէտ մի. մեր Թողեալ գնա՝ մեզ չէ փոյթ։

Իսկ ոբն Ներսէս խօսէր ընդ նոսա որպէս օրէն էր, եթէ տեսէք և քաջ զմտաւ ածէք, և յիշեցէք զանձն ձեր պատուիրանին միաբանութ որպէս պատուիրեաց Քառայիկ՝ հնազանդ կալ տերանց իւրեանց։ Օ՛ի ամենեքեան դուք աւագիկ կայք և վկայէք, մանա-

1 Յօրինակի միում դյժ ունել, յայլում ոյժ ունել, և ի միւս այլ յոյժ ունել։

ւանդ զի առնէքեան դուք կեցեալ էք յաղգէդ աւ
շակունոյ . ոմանք ՚ի ձէնջ գաւառատեալք լեալք ՚ի
նոցանէն , և ոմանք մեծամեծք աշխարհաց , ոմանք
աւագ աւագ աւանաց գեղից և գանձուց տեառք
լեալ էք , և պէսպէս դաստակերտացն : Օ՚ի թէ
պէտ և առ արարիչն ՅԱ յանցաւոր իցեն պեղծ ազգն
արշակունեաց , սակայն զձեզ կեցուցեալ զամենե
սեան և յաղթոյ թօթափեալ է , զոմն գործով , զոմն
պատուով , զոմն իշխանութիւք , զոմն գործակալու
թիւք : Օ՚ի թէպէտ և առ ՅԱ մեղաւոր է Ա՚րշակ արքայ ,
և պարտական է տոկոսեաց արարչին իւրոյ՝ առ ՚ի տա
նել նմա վրէժս , սակայն ՅԱ վասն բազում և անչափ
մարդասիրութիւն իւրոյ՝ խնայեաց ՚ի նա , և վասն նո
րա ՚ի ձեզ :

Այս դուք աւադիկ կամիք անկանել հեթանոսաց
՚ի ծառայութիւն , և կորուսանել զկեանս ձեր չայ , և
մերժել զքնակ տեարսն ձեր՝ զորս տուեալ է ձեզ չայ ,
և օտար տերանց ծառայեալ , և նոցին անճոռ կրօնից
ցանկալ : Այլ լաւ լիցի ձեզ զնոյն սիրել և չանձն
առնուլ , և նմին հաւանիլ , և մերժել չանձանց ձե
րոց զարարչապաշտ թագաւորն : Օ՚ի թէ բեւր չար
իցէ Ա՚րշակ , սակայն ՅԱծապաշտ է . և եթէ մեղաւոր
և ս իցէ , սակայն թագաւոր ձեր է . որպէս և դուքդ
ասացէք առաջի իմ , թէ այսչափ ամք են՝ զի մար
տեալք և ս ՚ի վերայ անձանց ձերոց և հօտից , ՚ի վե
րայ աշխարհի , ՚ի վերայ կանանց և որդւոց ձերոց :
Այս որ մեծն է քան զՅՄ , ՚ի վերայ եկեղեցեաց ձե
րոց , ՚ի վերայ ուխտի հաւատոց ձերոց , զոր ունիմք
՚ի տէր մեր ՅՀ ՎՀ . և համակ տէր ետ ձեզ չաղթուի
անուան իւրոյ : Այս արդ կամիք փոխանակ Վհի ա
րարչին ձերոյ՝ ծառայել ձեզ անաճիւն մոգութիւն անօ
րինացն և նոցուն պաշտօնէիցն , ՚ի թողուլ նախ զա
րարիչն մեր և զնորուն պատուիրանս՝ զոր պատուի
րեաց ձեզ , միամիտ կալ առ տեարսն մարմնաւորս՝
զորս նորայն արարեալ է . գուցէ բարկացեալ տէր ՅԱ
ձեր , և խլեցէ զձեզ արմատաքի , և մատնեսցէ զձեզ
հեթանոսացն ՚ի չար ծառայութիւն սարկութիւնն միչև
չաւիտեան , և ոչ երբէք բարձցի լուծն ծառայութե
՚ի ձէնջ : Այս բողոքէք դուք առ տէր , և նա ոչ լսիցէ

ձեզ. վասն զի անձամբ անկանիք դուք ՚ի ծառայուԹիւն հեԹանոս տերանց և անուծ անգէտ մարդկան, ՚ի ձեռս հեԹանոս արանց տերանց խստասրտաց. և բաղում չարի դիպեալ ելանիցէ առաջի ձեր, և ոչ կարիցէք Ճողոպրել յայնմանէ։

Իսկ նոքա, որ միանգամ էին ՚ի մի վայր ժողովեալ, զաղաղակ հարկանէին. քարոզ կարդացեալ՝ միմեանց ձայն առնէին, շփոԹէին ամբոխէին, և ասէին. Հա՛ պա գնասցուք, ասեն, սիրեցարուք յիւրաքանչիւր տեղիս. զի այդմ բանից մեք ինչ ոչ կամիմք լսել։ Սիրեցան յիւրաքանչիւր տունս իւրեանց։

ԳԼՈՒԽ ԾԲ.

Յաղագս Ըսպհոյ արքայի, Թէ զնորդ յայնմ ժամանակի լսեցոյց զպատերազմ տալ ընդ Աբջակայ Հայոց Թագաւորին, և մեղմեխանօք առ ինքն կոչէր ՚ի հաշտուԹի։

Ա՛պա Ը՛սպհոյ արքայ Պարսից մեծաւ աղաչանօք և պատարագօք և հրովարտակօք և սիրով զԱ՛բշակ առ ինքն կոչէր, զի յայնմ հետէ արասցեն ՚ի մէջ իւրեանց սէր և խաղաղուԹիւն և բարեկամուԹիւն մեծ։ Իսկ Ա՛բշակ արքայ ԹԷպէտ պատերազմ կամէր տալ, այլ ոչ կամէին յանձն առնուլ այսմիկ ՚ամ զօրքն աշխարհին Հայոց։ Ա՛պա ԹԷ կամաւ կամաւ՝ ԹԷ ոչ կամաւ, սակայն եդ սիրտ՝ խոնարհուԹիւն հրովարտակս առ Ը՛սպհոյ արքայ Պարսից, որպէս վայելէ ծառայ առ ՚տէր իւր, տալ։ Եւ առաքէր յիւրմէ նմա պատարագս հաշտուԹիւն։

Յաղագս կոչելոյն կրկին անգամ Շապուհ արքայի զԱրշակ արքայ Հայոց · և նորա երթալոյն , և միահաղոյն կոնչելոյն նորա ։

Ա՛պա յետ այսորիկ դարձեալ առաքեաց առ Ա՛րշակ արքայ Հայոց Շապուհ արքայ Պարսից , և ասէ · Ասէ եթէ հաճ եմք ես և դու ընդ միմեանս , եկ տեսցուք զիմեանս · և յայսմ հետէ իբրև զհայր և զորդի լիցուք ընդ միմեանս ։ Ա՛պա թէ ոչ տեսանես դու զիս , խնդրես զպատերազմ ի մէջ իմ և ի մէջ քո ։ Ասէ Ա՛րշակ խնդրեր հաւատարիմ երդումն ուխտիւ ի նմանէն , զի յայսմ հետէ անկասկած երթիցէ առ նա ։ Այս նա ետ բերել ըստ օրինացն հաւատարիմ երդմանց Թագաւորութենն Պարսից՝ աղ , կնքել վարազ նկարագիր մատանեաւ , և յղեաց ։ Ո՛վ թէ իցէ և զայն երդման ևս զհետ ոչ եկեսցէ , ապա կազմ լիցի տալ Ճակատս պատերազմի ի մէջ իւրեանց ։

Ասէ զայն ևս յորժամ տեսին և լուան ամ մարդիկն երկրին Հայոց , ատելեցին քննաբօսեցին [1] զիւրեանց Թագաւորն զԱ՛րշակ և շտապեցին , զի յարիցեն զնասցեն երթիցէ յանդիման լիցի Թագաւորին Պարսից Շ ապհոյ ։ Յայնմ հետէ , թէ կամաւ կամաւ՝ և թէ ՝ոչ կամաւ , յարեաւ Թագաւորն Հայոց Ա՛րշակ , առ ընդ իւր զզօրավարն սպարապետն Հայոց զԴայեակն իւր , խաղաց զնաց յերկրին Հայոց յերկիրն Պարսից առ Շ ապուհ արքայ Պարսից · չոգաւ յանդիման եղև Թագաւորին Պարսից Շ ապհոյ ։ Իբրև տեսին զնոսա , արկին զերկոսեանն զարքայն Ա՛րշակ և զսպարապետն Ա՛ասակ , և պահեցին զնոսա արձակ ի մէջ ազատագունդ փուշտիպանն զօրացն ։ Այս կոչեաց արքայ Շ ապուհ զարքայ Ա՛րշակ , և իբրև զծառայ իւր պատուհասեաց զնա · և նա յանցաւոր և մահապարտ զանձն իւր առ նա համարեցաւ ։ Պարձեալ անդրէն ի նոյն գունդ փուշտիպանաց եւտուն զԱ՛րշակ արքայ ի պահեստ ։

1 Յօրինակի միում՝ բառապբօսեցին ։

Յաղագս Թէ որպէս զդիւրթան և զքաւդեայն հարցեալ Ըսպհոյ՝ փորձէր զմիտս Աբջակայ, և ապա զնա յԱնուշ բերդն, և կամ զվասակ սպարապետն Հայոց չարամահ հրամայէր առնել։

Ա՚պա կոչեաց Թագաւորն Պարսից Շապուհ զդիւրթան և զաստեղագէտսն և զքաւդեայն. խօսէր ընդ նոսա և ասէր՝ եթէ ես բազում անգամ կամեցայ սիրել զԱ՚բջակ արքայ Հայոց, և նա համակ անարգեաց զիս։ Այս եդի ընդ նմա ուխտ խաղաղութե, և երդուաւ ինձ յիւրեանց օրէնս քրիստոնէութենի՝ի գլխաւորութե այնմ, զոր աւետարանն կոչէն. նախ այն երդմանն ստեաց։ Այս նմա բեւր բարիս խորհեցայ որպէս Հայր որդւոյ կատարել նմա, և նա ինձ չար ընդ բարւոյ հատոյց։ Ուստ ես կոչեցի զերիցուսն եկեղեցոյն Ցիսփոնի քաղաքի, և կարծեցի Թէ նոքա նենգութե ինչ ետուն նմա զերդումն և ետուն ինձ ստել։ Այս պատուհասեալ զնոսա որպէս զմահապարտս, իսկ ասաց ցիս Աարի երեց գլխաւորն նոցա. ասեմ՝ Թէ մեք արդարութե տուաք նմա զերդումն. բայց եթէ նա ստեաց, նոյն աւետարանն ածէ զնա առ ոտս ձեր։ Այս ես նոցա ոչ լուայ. և ետու հրաման՝ եւթանասունն զնոսա՚ի մի գուբ փողոտել, և զուսումնակից նոցա հանել ընդ սուր։ Օ՚աւետարանն՝ յոր երդուաւ Ա՚բջակ արքայ, որ է գլխաւորութե ուսմանց նոցա քրիստոնէութենն, կապեցի շղթայիւք. և կայ՚ի գանձի իմում։ Ուայց քանզի Աա բեւր երիցդ ուշ եղեն ինձ. և յիշեցի զի ասէր՝ Թէ մի սպանաներ զմեզ, այլ ես գիտեմ՝ զի նոյն աւետարանն ածէ զԱ՚բջակ արքայ՚ի ծուռնկա քո։ Ա՚հաւասիկ բանք արդարուքն կատարեցան, զոր ասէրն։ Ուայց Ա՚բջակ արքայ Հայոց այս երեսուն ամ է Ա՚բեաց՝ զի ետուն ընդ նմա ձակատս, և յաղթել և ոչ մի ամ ոչ կարացաք. և եղեալ է եկեալ ոտիւք իւրովք։ Ուայց Թէ գիտէի՝ Թէ յայսմ հետէ կայցէ յուխտին իմում և՚ի հնազանդութե բարեաւ ուխտիւ, մեծապէս մե-

ծարանօք արձակէի զնա խաղաղութեամբ յիւր աշխարհն ։

Իսկ քաւղեայքն ետուն նմա պատասխանի և ասեն . Ողջ մեզ այսօր, և վաղիւն պատասխանի արասցուք քեզ ։ Իսկ ՚ի վաղիւ անդր ժողովեցան եկին ամք քաւղեայքն և աստեղագէտքն , և ասեն ցարքայն . Ա.յժմ զի եկեալ է առ քեզ Թագաւորն Հայոց Ա.ր շակ , զիա՞րդ խօսի ընդ քեզ , կամ զինչ ձայն ածէ , կամ զիա՞րդ ունի զանձն ։ Ա.յն արքայն . Իբրև զմի ՚ի ծառայիցն իմոց համարի զինքն , հող ոտից իմոց ջանայ լինել ։ Ա.յն նորա . Ա.ռ արա զոր ասեմքն քեզ . պահեա դու զնոսա աստէն , և առաքեա դու դէսպանս յերկիրն Հայոց , և տուր բերել անտի հող ՚ի սահմանացն Հայոց երբև բեռինս երկուս , և կահոյր մի ջուր ։ Ա.ւ հրամայն տացես հարկանել զկէս խորաչի յատակ ՚ի բերեալ հողոյն Հայոց . և առցես քեզ զձեռանէ արքային Հայոց Ա.րշակայ , և տարցես նախ յայն տեղ՝ որ քնակ իսկ էցէ հողն , և հարցցես զնա բանս ։ Ա.ւ դարձեալ առցես դու զձեռանէ նորա , և տարցես ՚ի հայատակն ՚ի հարեալ հողոյն . և լուիցես դու բանս ՚ի նմանէ , և ապա գիտասցես դու՝ եթէ կա՞յ յոմիսի քո և պահէ զդաշինս քո թէ ոչ կեա արձակելոյ քո զնա ՚ի Հայս ։ Ա.պա թէ ՚ի վերայ հայ հողոյն խիստ ինչ բարբառեսցի , գիտասջիր՝ զի որ օր հասանէ յերկիրն Հայոց , զնոյն ձայն ածէ ընդ քեզ , և զնոյն պատերազմ նորոգէ ընդ քեզ , ըստ նոյն ձակատս և զնոյն թշնամութիւն յուզէ ։

Ա.պա Թագաւորն Պարսից , քանզի զայս լուեալ ՚ի քաւղէիցն , տաճիկ ուղտուք արձակէ ՚ի Հայս արս զհողոյ և զջրոյ , զի եկեսցեն բարձցեն նմա զհմայսն ։ Ա.ւ ընդ սակաւ աւուրս եկին բերին զայն ինչ , զորմէ յղեացն ։ Ա.պա հրամայն տայր Թագաւորն Հ ապուհ , զկէս յատակէին խորոյ խորանին հարկանել ՚ի բերեալ հողոյն Հայոց , և զջուրն ցանել ՚ի վերայ նորա . և զկէսն ՚ի նոյն հողն զիւրոյ քնակութե երկրին Թողուլ ։ Ա.ւ ետ ածել զԱ.րշակ արքայ Հայոց զառաջեւ իւրով , և զայլ մարդիկն ՚ի բաց հրամայեաց կացուցանել . և զձեռանէ առեալ՝ շրջէր ձեմելով ։ Ա.ւ երթ ևեկս առեալ ընդ խորանն , ասէ ցնա յորժամ ՚ի

պարսիկ ՚ի հողոյն ՚ի վերայ ձեռիկին՝ թէ ընդէր եղեր իմ Թշնամի, Ա.ըշակ արքայ Հայոց. զի ես որպէս զորդի սիրեցի զքեզ, և կամեցայ տալ քեզ զդուստր իմ ՚ի կնութիւն, և որդի ինձ առնել զքեզ. իսկ դու խոտացար ընդ իս, և քովք կամօք՝ առանց իմոց կամաց՝ եղեր ընդ իս Թշնամի. և այս լի երեսուն ամ է, զի պատերազմեցար ընդ իս:

Ասէ Ա.ըշակ արքայ, Թէ մեղայ քեզ և յանցեայ. զի ես եկի և կատորեցի, և յաղթեցի Թշնամեաց քոց. և ահն ունէի ՚ի քէն պարզև կենաց, և Թշնամիք իմ հրապուրեցին զիս, և արկին երկիւղս ՚ի քէն, և փախուցին ՚ի քէն: Այլ երդումն իմ, զոր երդուայ քեզ, յառաջ ածին զիս. և եկի աւասիկ առաջի քո: Այլ աւասիկ ծառայ քո ՚ի ձեռս քո կամ. զինչ և պէտք է քեզ, արա զիս, զինչ և կամ իցէ. սպան զիս, զի ես ծառայ քո առ քեզ կարի յանցաւոր եմ, մա՛ հապարտ եմ:

Ասէ Շապուհ արքայ առեալ զձեռանէն նորա, զրջիր ձեմելով, ՚ի չքմեղս առեալ զնա ածէր ՚ի հայակողմն ՚ի հողն հարեալ յատակն: Ասէ իբրև յայն տեղի հասանէր, և զՀայ զհողն կոխէր, մեծամեծս ըմբռնատացեալ հպարտացեալ՝ այլ ձայն շրջէր. սկսա նէր խօսել և ասել. ՚Ո՛ բաց կաց յինէն ծառայ չարագործ տիրացեալ տերանցն քոց. այլ ոչ Թողից զքեզ և որդւոց քոց զվրէժ նախնեաց իմոց, և զմանն Ա.բաւանայ արքայի: Ո՛չ ի այժմիկ ձեր ծառայից զբռեր տերանց ձերոց զբարձ կալեալ է. բայց ոչ Թողից, եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ[1]:

Ասէ դարձեալ առնոյր զձեռանէն, դարձեալ տանէր յայն հող Պարսից. ապա աշխարէր զասացեալսն, խնայարհէր բուռն հարկանէր զտից նորա, մեծապէս ապաշխարելով զղջմամբ զասացեալ բանին: Ասէ յոր ժամ առեալ զձեռանէն զնա տանել ՚ի հայ հողն, և խոտագոյն քան զառաջինսն բարբառէր. իսկ դարձեալ միւսանգամ հանէր յայնմ հողոյն, բանիւք յապաշխարուԹիւն դառնայր: Յայգուէ և երեկոյն այնպէս շատ փորձ փորձեաց զնա. զի իբրև ՚ի վերայ հա-

1 Յերկուս օրինակս էին:

ըեալ Հողոյն տաներ, խստացեալ ամբարտաւաներ. իսկ ՚ի վերայ բուն գեհենոյն յատակին՝ և կայր, ՚ի զղջումն դառնայր։

Իսկ իբրև երեկոյ եղև ժամ ընթրեաց Թագաւորին Պարսից, քանզի սովորութի՛ն էր Հայոց Թագաւորին բազմական անդէն ընդ նմին առ նմա ՚ի նորին տախտին արկանել բազմական, օրէնք էին՝ զի Թագաւորն Պարսից և Թագաւորն Հայոց ՚ի միում տախտի բազմէին ՚ի միում գահոյս։ Իսկ այն օր նախ զտող բազմականացն Թագաւորացն, որ անդն էին, զամենեցունց կարգեցեալն. Հուսկ յետոյ զկնի ամենեցունց ՚ի ներքոյ բոլորին զԱ՛շակայ բազմականն առնէին, ուր զհայ Հողն յատակն հարեալ էր։ Ա՛յսպէս ամենեքեան իբրև բազմեցան յիւրաքանչիւր չափու, յետոյ ածէին բազմեցուցանէին զաղքայն Ա՛շակ։ Ա՛րդ եկաց բազմեալ ուռուցեալ վայր մի. իսկ յոտն եկաց, ասէ ցԹագաւորն Հ՝ապուհ. Ի՞մ այդ տեղն, ուր դուդ ես բազմեալ. յոտն կաց այդի, Թող ես այդր բազմեցայց, զի տեղի ազգի մերոյ այդ լեալ է. ապա եթէ յաշխարհն իմ հասից, մեծամեծ վրէժս ինդրեցից ՚ի քէն։

Ա՛պա տայր հրաման Հ՝ապուհ արքայ Պարսից, բերել շղթայս և արկանել՚ի պարանոցն Ա՛շակայ և յոտս և ՚ի ձեռս նորա երկաթս, և խաղացուցանել զնա ՚ի յԱ՛նդմէն՝ զոր Ա՛նուշ բերդն կոչէն, և պլնդեալ զնա մինչև անդէն մեռցի։ Այս եղև ՚ի վաղիւ անդր եառ հրաման Հ՝ապուհ արքայ, ածել զառաջեաւ իւր զԱ՛սակ մանիկնեան զղօրավարն սպարապետն Հայոց մեծաց. սկսաւ պատուհասել զնա, քանզի էր Ա՛սակ անձամբ փոքրիկ, ասէ ցնա արքայն Պարսից Հ՝ապուհ. Ա՛ղուես, դու էիր խանգարիչ՝ որ այսչափ աշխատ արարեր զմեզ. դու ես այն՝ որ կոտորեցեր զԱ՛րիս այսչափ ամս, և զի՞ դործես. զմահ աղուեսու սպանից զքեզ։ Իսկ վասակ տուեալ պատասխանի, ասէ. Ա՛յժմ քո տեսեալ զիս անձամբս փոքրիկ, ոչ առեր զչափ մեծուԹե՛ իմոյ. զի ցայժմ ես քեզ առեւծ էի, և արդ աղուէս։ Այլ մինչ ես Ա՛սակն էի, ես սկայ էի. մի ոտնս ՚ի միոյ լերինն կայր, և միւս ոտնս իմ ՚ի միոյ լերինն կայր. յոր-

ժամ յաջ ոտնս յենուի, զաջ լեառն ընդ գետին տա-
նէի. յորժամ ի ձախ ոտնն յենուի, զձախ լեառն
ընդ գետին տանէի: Այս հարցանէր Թագաւորն
Պարսից Շապուհ և ասէ. աղէ՛ տուր լինել գիտել,
ոմ են լերինքն այնոքիկ՝ զորս դուն ընդ ոտնդ տա-
նէիր: Նա ասէ Ա ասակ. Լերինքն երկուք, մի դու
էիր, և մի Թագաւորն Յունաց: Այն միանչ տուեալ
էր ինձ այ, զքեզ ընդ գետին տանէի և զԹագաւորն
Յունաց, մինչև օրհնութիւն հօրն մերոյ Արսակայ
հանգուցեալ էր ի վերայ մեր, և այ զմեզ ի ձեռա-
նէ չէր թողեալ. մինչև զնորա բանն արարաք, և խրատ
նորա եկաց առ մեզ, գիտացաք տալ քեզ խրատ.
մինչև մեզն աւօք բացօք անկաք ի խորխորատ: Այդ
զինչ և կամիս, արա: Այս ետ հրաման Թագաւորն
Պարսից մորթել զզօրավարն Հայոց Ա ասակ, և զը-
մորթն հանել և ընուլ խոտով, և տանել ընդ նոյն
բերդ Այնդմէնն՝ որ Այծուձն կոչեն. ուր արգելին խակ
զԹագաւորն Արշակ:

Գ Լ Ո Ւ Խ ԾԵ.

Յաղագս գերութեանն և հարուածոյն աշխարհին Հայոց և աւերա-
ծոյն, և գերուեցեն տանելոյն ի Պարս. և չարահաճ լինելոյ տիկնոջն
փառանձեմայ. և քաղաքացն Հայոց աւերելոյ, և հիմանց աշխարհին
տապալելոյ:

Այն արձակեաց արքայն Պարսից Շապուհ ի
վերայ աշխարհին Հայոց երկուս ոմանս Հիշխանաց
անտի իւրոց, միումն Օձիկ անուն և միումն Կարէն,
հինգ հարեւր բիւրով. զի եկեսցեն բրեսցեն քան-
դեսցեն զաշխարհն Հայոց: Այս եկին հասին ի վե-
րայ երկրին Հայոց: Այդ իբրև ետես տիկին աշխար-
հին Հայոց կինն Արշակայ Թագաւորին Հայոց փա-
ռանձեմ զզօրս Թագաւորին Պարսից, եթէ եկին
լցին զաշխարհս Հայոց, առեալ ընդ իւր մարդիկ իբ-
րև մեծասան հազար ազատս ընտիրս սպառազէնս

պատերազմողս, և հանդերձ նոքօք դիմեաց եմուտ ՚ի բերդն Աբտագերից՝ որ ՚ի յերկրին արշակունեաց՝ յերեսաց զօրացն Պարսից։ Այսպա եկին հասին ամ զօրքն Պարսից, շուրջ զբերդաւն նստէին, պահ արկանէին. պատեցին պաշարեցին։ Իսկ նոքա ՚ի ներքս ամրացեալք, յուսային ՚ի տեզևոյն ամուրձին. և նոքա լակիշ ածեալ, նստէին արտաքուստ շուրջ զձորօքն։ Այս նստան շուրջ զբերդաւն ամիսք երեքտասան, և առնուլ զբերդն ոչ կարացին, զի կարի ամուր էր տեղին։ Այերեցին քանզեցին զերկիրն ամ. ելանէին առնուին աւար զերկիրն ամ, շուրջ ՚ի գաւառացն և յաշխարհացն ածէին զգերի մարդկանն և զանասնոյ ՚ի լակիշն իւրեանց. այլևստ բերէին համբարս, և ուտէին. և զբերդն պաշարեալ պահէին։

Իսկ Պապ որդին Աբշակայ ոչ դիպեցաւ անդ ՚ի Հայոց աշխարհին, զի առ Թագաւորն Յունաց գիպեցաւ։ Օ՚ի Թէպետ և զայս ամ լուան ազատագունդք բանակին Հայոց, չոգան իւրեանց խնդրել Թիկունս օգնականութիւն. և էր նոցա զօրագլուխ Մուշեղ որդին Ա աստակայ սպարապետին։ Այս չոգան նոքա առ իւրեանց աղբայորդին. մինչ դեռ նոքա ընդ Թագաւորին Յունաց խօսէին, հաւանեցուցանէին զնոսա Թիկունք լինել իւրեանց։ Իսկ յերկիրն Հայոց ստէպ առաքէին դեսպանս առ տիկին աշխարհին առ Փառանձեմ, զի ժուժկալ լինիցի բերդին, և մի ձեռս տացէ ՚ի պարսիկս։ Այս դեսպանս ստէպ ստէպ յորդւոյ նորա ՚ի Պապայ զվիմեանց գնին ՚ի շաբաթու շաբաթու եկեալ հասանէին. և գաղտ ընդ գաղտնի դուռն ուրեմն մեքենաւորութիւ՚ ՚ի բերդն մտանէին, տային քաջալերս տիկնոջն. և յերկարեաց ՚ի բերդին ամիսս երեքտասան պաշարումն։ Այլ որք գային և երթային, ստէպ ստէպ գային՝ Թէ պինդ կաց, զի հասեալ է Պապ որդի քո և գունդ կայսերական ՚ի Թիկունս օգնականութիւն։ Այս յերկարեաց խրախոյս որ հասանէր, զի ասէին. Ա այրիկ մի և սակաւիկ մի և կալցիս ժոյժ, և ահա հասեալ է օգնականութիւն։

Այս եղև յետ չորեքտասաներորդ ամենեան հարուածոյ՝ որ յայ հասին ՚ի վերայ գաղթականին բերդնորդեացն, զի մահ անկաւ ՚ի վերայ նոցա՝ որք ՚ի բեր-

դէն էին, զի ՚ի տունէ հասին պատուհասք։ Ա՛բաջի տիկնոջն փառանձեմայ ուտէին և ըմպէին և ուրախ լինէին որք էին ՚ի տաճարին. յանկարծակի ՚ի միում ժամու հարիւր այր, և ՚ի միւսում երկերիւր, և երկ՝ զի հինգ հարիւր այր մեռան ՚ի բազմականին՝ յոր ժամ բազմեալ կային. և օր ըստ օրէ սատակէին։ Յորժամ սկսան, զամիս մի ոչ յերկարեաց՝ զի սատակեցան առ հասարակ. զի էին որք իբրև մեռա- սան հազար, և կանայք իբրև վեց հազար. զի ամիս մի ոչ կացին, զի ամենեքեան՝ որ էին ՚ի բերդին՝ առ հասարակ սատակեցան։

Բայց ինաց ՚ի բերդին փառանձեմ տիկին, երկու նաժշտօք։ Ա՛պա եկին եմուտ գաղտ ՚ի ներս ՚ի բերդն Հայր մոնդպետ ներքինին, և Թէլամանեաց զտիկինն մեծապէս իբրև զօդ մի։ Ակսաւ զնել Թէլամանս աղգին արշակունեաց, զի վատախորհուրդք են վա- տանշանք, կորուսին զաշխարհս և զս. իբրեւ անց ընդ ձեզ այդ, և այլ զի անցցէ։ Նէ գաղտուկ, և փա- խեաւ։ Իսկ տիկինն փառանձեմ իբրև եառս՝ ե- թէ միայն ինաց, եթող զդուռն բերդին, և Թողա- ցոյց զօրսն Պարսից մտանել ՚ի բերդն։ Նոյն եկին կա- լան զտիկինն, և իջուցին ՚ի բերդէն։ Նլանեկին ՚ի բերդն ՚ի վեր զօրավարն Պարսից, գերեկին զգանձս Թագաւորին Հայոց, որ կային ՚ի բերդին. և սկսան կրել իջուցանել զնմա գանձն, որ կայր ՚ի բերդին։ Օ՛ինն տիւ և գինն գիշեր համակ իջուցին զոր գտին Ա՛րտաշէրեան բերդին, հանդերձ տիկնաւն խա- զացուցին։

Նոյ յետ այսորիկ եկին ՚ի քաղաքն մեծ Ա՛րտա- շատ, և առին զնա, և կործանեցին զպարիսպ նորա. առին անառի զգանձս ժԹէրեալ՝ որ կային, և գերե- ցին զամենայն քաղաքն։ Նոյ խաղացուցին ՚ի Ա՛րտա- շատ ՚ի քաղաքէ հինն հազար տուն երդ Հրեայս, զոր ածեալն էր գերի Տիգրանայ արքայի արշակունւոյ յերկրէն պաղեստինացւոց. և քառասուն երդ Հայ, զոր Ա՛րտաշատ քաղաքէ խաղացուցին։ Նոյ զնմանէ շէ- նուած քաղաքին հրձիգ արարին զփայտակերտն, և զքարակերտն քանդեցին. զպարիսպն ըստ նմին օրի- նակի և զնմանէ շինուած քաղաքին մինչև ՚ի հիմունսն

ապականեցին, և ոչ Թողին մի, և ոչ Թողին քնաւ քար 'ի քարի վերայ. անմարդի և Թափուր յամ քնակչաց իւրոց կացուցանէին։

Եւ եղև յորժամ ածին ժողովեցին զամ զգերին զքաղաքին 'ի մի վայր, և անցուցին ըստ Ցափերին կամուրջ, և առնէին համար գերւոյն, 'ի մէջ շերտափակ զօրացն պատէին, ասեն զօրապլուխքն Պարսից ց Օ՞ուիթ երեց քաղաքին Բրտաշատու. Լկեալ 'ի միջոյ գերւոյդ, երթ գնա դու յո պէտք է քեզ։ Եւ ոչ առնոյր զայս յանձն երէցն Օ՞ուիթն, այլ ասէր. Յո զնաչնդ տանիք, և զՀովիւս տարայք. զի ոչ է մարթ Հովուի Թողուլ զնաչն իւր, այլ պարտ է Հովուի դնել զանձն 'ի վերայ ոչխարին իւրոյ։ Եւ զայս ասացեալ եմուտ 'ի գերուին, և խաղաց 'ի գերուէ ընդ իւրում ժողովրդեանն յերկիրն Պարսից։

Բնակուին և զայ աղարշապատ քաղաք. քանզեին բրեին զքաղաքն 'ի Հիմանց տապալեին, և խաղացուցանէին յայնմ ևս քաղաքէ ինևևատան երդս հազար։ Ընդ ամ քաղաքս ոչ Թողին ամենևին շինած. զի զամ տապալեին, քակեալ քանդեին. և ընդ ամ երկիրն ասպատակ սիրեալ՝ զամ այր 'ի չափ հասեալ կոտորեին, զկանայս և զորդիս 'ի գերուէն վարեին. և զբերդս ամ Թագաւորին Հայոց կալան, և լցեալ բազում ամբարօք՝ բերդակալս Թողուին։ Բնակուին և զմեծ քաղաքն զԱրուանդաշատ, և խաղացուցանէին անտի երդս քսան հազար Հայ, և երդս երեսուն հազար Հրեայ. և զքաղաքն 'ի հիմանց տապալեալ բրեալ յատակէին։ Բպա առնուին և զքաղաքն Խագրևանդայ Օ՞արեհատան, և խաղացուցանէին անտի հինգ հազար երդ Հայ, և ուէթ հազար երդ Հրեայ. և զքաղաքն 'ի հիմանց տապալէին յատակեին։ Բնակուին և զքաղաքն մեծ Օ՞արիշատ՝ որ էր 'ի գաւառին Ալղոյհովտի, չորեքտասան հազար երդ Հրեայ, և տասն հազար երդ Հայս. և զնա 'ի հիմանց քանդեալ ապականէին։ Բնակուին և զամուր քաղաքն Ալ ան, որ է 'ի գաւառին Ցողայ. և հրձիգ արարեալ, քակէին զհիմունս նորա. և խաղացուցանէին անտի երդս հինգ հազար Հայ, և ուէթ և տասն հազար երդս Հրեայս։

Օ այս ամ բազմութիւն Հրէից, զոր գերեցին տա-
ղան յերկրէն Հայոց, ածեալ էր յերկրէն պաղես-
տինացւոց մեծի Թագաւորին Հայոց Տիգրանայ ՚ի
ժամանակին՝ յորժամ գերեաց նա և ած ՚ի Հայս
զքահանայապետն Հրէից զԻւրկանոս զառաջին
ժամանակաւ։ Այս էած մեծ արքայն Տիգրան զամե-
նայն զՀրէութիւնն զայն բնակեցոյց ՚ի քաղաքն Հայոց
յիւրում դարուն ՚ի ժամանակին։ Իսկ յայսմ ժա-
մանակի աւերեցին զքաղաքն, և գերեցին զբնա-
կեալսն անդ. և զամ երկիրն Հայոց և զամ գաւառն
ընդ նմին գերեալ, խաղացուցեալ[1] և զայլ գերուին
գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, փորի փո-
րի, զաշխարհի աշխարհի, ածին ժողովեցին ՚ի քա-
ղաքն Ախձաւան. զի անդ էր զօրաժողով իւրեանց
զօրացն։ Այսպա առին և զնա քանդեցին. անտի երդս
Հայս երկուս հազարս, և Հրեայ երդս վեշտասան
հազարս անտի խաղացուցին գնացուցին ամ գերու-
թեամբն հանդերձ։ Այս անդէն յերկիրն Հայոց ոս-
տիկանս Թողին և վերակացուս, ՚ի ծառայութիւն
մատնել[2] զինացորդս երկրին. և ինքեանք զտիկինն
Փառանձեմ առեալ, հանդերձ գանձիւքն և բազ-
մութեք գերեաքն յերկիրն Պարսից խաղացուցանէին.
և գնացեալք երթային տանէին հասուցանէին յեր-
կիրն Պարսից առ Շապուհ արքայն Պարսից։

Այս եղև իբրև չոգան տարան զտիկինն Փառան-
ձեմ յերկիրն Պարսից, և զայլ ամ գերուէն Հայոց
և զգանձս կալան առաջի Թագաւորին և զտիկինն
Փառանձեմ, չնորհ մեծ ունէր Թագաւորն Պարսից
իւրոց զօրավարացն։ Այս իբրև կամեցաւ Թագաւորն
Պարսից Շապուհ Թշնամանս առնել ազգին աշ-
խարհին Հայոց և Թագաւորութեանն, եառ հրամայ
ժողովել զամ զօրս իւր և զմեծամեծս իւր և զիշ-
խէր, և ՚ի մէջ ամենեսեան ածել զտիկինն Հայոց զՓա-
ռանձեմն։ Այս հրամայեաց ՚ի հրապարակին լինն առ-
նել հրապոյրս մեքենայից, որով հրամայեաց զկինն
սպկանել, և արձակել տիկնոջն Փառանձեմայ ՚ի

1 Յերիս օրինակս Խաղացեալ։ 2 ՚Ի չորս օրինակս Մատնել։

խառնակութէն պոռնկութէն անասնական պղծութէն։ Ի յոսկէս սատակեցին զտիկինն զՎառանձեմ։ Իսկ զայլ գերին զնմ տարան քնակեցուցին, որ Ի Սօրեստան, որ յերկրին խուժաստանի։

ԳԼՈՒԽ ԾԶ.

Յաղագս վկայութէն Զուիթայ երիցու յերկրին Պարսից։

Ի գա իբրև չոգան տարան յերկիրն Պարսից զամենայն գերութէն Հայոց, և զՕուիթ երէց Ի Բաշատ քաղաքն ունէին կապանօք առաջի Թագաւորին Պարսից Շապհոյ։ Նա նայեր Թագաւորն Պարսից Շապուհ, և տեսանէր զերկայն Օուիթ այր բարձր և անձնեայ, և ի միոց մանուկ. և հեր գըլխոյն ալևորեալ էին, այլ մուրուքն դեռ տակաւին սեաւ էս կային։ Ի գա յորժամ զառաջինն խօսել սկսաւ, ասէ. Լթէկ տեսանէք զառնդ զայդը զբուէն. քանզի յայտ է, ի հերոց այսի երևի թէ կախարդ է. զի հերքն սպիտակ են, և մուրուքն սեաւ։ Իսկ երիցուն տուեալ պատասխանի, ասէ. Լաւ քեզ պէտ էր, այլ զինչ կամիս խօսել և առնել՝ խօսեաց. այլ վասն այդորիկ գիտեա, զի յիրաւունս սպիտակացեալ են նախ հերքս. զի բազում աւուրբք երեխ են, գոնեա հնգետասան ամօք քան զմուրուս նախայ բոյս են։ Իսկ Թագաւորն հրամայեաց տալ մինչև ի վաղիւն պահել զնա. իսկ ի վաղիւն հրամայեաց տալ ածել ի հրապարակին շղթայիւք։ Նա ելին ոստիկանք արքունի հարցանել, եթէ իցէ՝ յանձն առցէ պաշտել զօրէնս մոգութէն, ոչ մեռցի։ Իսկ նա ոչ առնոյր յանձն. այլ կամեցեալ մեռանել խնդութէ վասն այ, երթեալ ի տեղի մահուան, և աղաչեաց զվերակացուս իւրոյ մահուանն, զի Թողացուսցեն նմա սակաւ մի կալ յաղօթս։ Նա մատուցեալ յառաջադոյն, եդ ծունր և ասէ.

ԳԼՈՒԽ ԾԲ.

Աղօթք ի ժամ մահուն Ջուխթայ։

ՏԱՐԱՒԶ մեր, որ արարեր զերկինս և զերկիր և զծով յոչընչէ, և ստեղծեր զմեզ ի հողոյ. և զմեղեալս այսպէս իմաստուն բանաւորս և կենդանիս արարեր։ Նա ընդհատեցեր մեզ զպիտուի քո, զոր ցուցեր ազգաց որդւոց մարդկան ի ձեռն սրբոց քոց մարգարէից կարապետացն քոց. և դու քեզկն եկիր ի ջեր մարդացար երևեցար յերկրի, և ընդ մարդկան շրջեցար. և զկատարեալ իմաստութիւդ քո ընդհատեցեր արարածոց քոց, զոր Ադաքելովքն քարոզեցեր քոց ստացուածոց յաշխարհի։ Նա վարդապետօքն սրբովք, զորս եդիր ի քում յեկեղեցւոջ լուսաւորս, զամենեսեան իմաստնացուցեր։ Նա զնս, զայր զանարժան, արժանի արարեր քում ծառայութեդ. և պատրաստեցեր զնս տառապեալս մանել և ուսանել ընդ ձեռօք քո սրբոյ և մեծի և քո քահանայապետին Ներսիսի՝ քո պաշտօնէին, և՝ի ձեռաց նորա առնուլ զձեռնադրութիւն երիցութիւն, և՝ի ձեռաց նորա զնս նուիրեալ քեզ՝ի քահանայութիւն։ Նա յայնմ աշտիճանէ պատրաստեցեր ընդել զվկայութեան բաժակն փրկութիւն, զոր ըմբեղով զանուն տէն կարդացից. զաղօթս իմ ես տէն տայ առաջի քո ժողովրդոյ նորա։ Ընդ որում քեզ փառք և զօրութիւն և իշխանութիւն միածնի Որդւոյ քո սիրելոյ Յիսի Քրիստի, և կենդանարար Հոգւոյդ քում սրբոյ, յառաջ քան զամ յաւիտեանս այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Նա երբեմն զայս ասաց, բազում մարդիկ ամբոխի ժողովեալ էին. ասացին զամէնն։ Ապա զայրացեալք վերակացուք սպանողութենն, թէ ընդէր այն չափ երկար ժողացուցին նմա խօսել, ապա տարնապաւ ի տեղի մահուն հասուցանէին։ Իսկ նա մեծաւ խնդութիւք կարկառեալ զպարանոցն, վճարէր ի սուսերէն։

Յաղագս գալոյն Շապհոյ Թագաւորին Պարսից յերկիրն Հայոց, և միանգամայն սատակել զմնացեալսն երկրին. և բիւր չարեացն, զոր կրեցին։

Այն յետ այսորիկ խաղաց գնաց Թագաւորն Պարսից Շապուհ ամր իշխանութեանէ զօրաց իւրոց, և չոգաւ եւ յերկիրն Հայոց. և առաջնորդ ունէր ընդ իւր զԱհան ի մամիկոնեան տոհմէն, և զԵրուժան ժանն յԱրծրունեաց տոհմէն։ Այսպա հասեալ ասպատակէին յերկիրն Հայոց, և առնուին զամր գերին ի մի վայր ժողովեցին։ Նա բազումք ի նախարարացն Հայոց Թողուին զկանայս իւրեանց և զորդիս և զընտանիս, և փախեան ընդ այս ընդ այն գնացին։ Իսկ զամր կանայս նախարարացն Հայոց, զոր Թողին և փախեանն, ասպատակն ժողովեր. և ածին գնոսա առ Շապուհ արքայ Պարսից։

Իբրև եր բանակն Շապհոյ Թագաւորին Պարսից ի գաւառն Ռադրևանդայ յաւերս քաղաքին Օաթհաանի, զոր յառաջնումն եկեալք զօրքն Պարսից աւերեցին, և ածին ժողովեցին առաջի Թագաւորին Պարսից զամր գերին մնացորդաց աշխարհին Հայոց, ապա հրաման տայր Թագաւորն Պարսից Շապուհ, զամր այր ի չափ հասեալ կոխան արարեալ փղաց, և զամր զկին և զմանուկ հանել ընդ ցից սայլից։ Հազարք հազարաց և բիւրք բիւրուց սպանեալին, զի ոչ գոյր Թիւ կամ համար սպանելոցն. և զկանայս ազատացն և նախարարացն զփախուցեալսն հրաման տայր ածել յապարէնն՝ որ եր ի Օարեհ վան քաղաքի։ Նա հրաման տայր հոլանել զամր ազատ կանանսին, և նստուցանել աստի անտի ասպարէսին. և ինքն Շապուհ արքայ հեծեալ ի ձի, շաւակի անցանէր առ կանանսին. և որ յանկն գայլին, մի մի ի նոցանէ պղծեալ ի խառնակութեն տանէր առ ինքն։ Վանդի մծտ յասպարէսն հարեալ եր խորանն, յոր առեալ մտանէր զործել զանօրէնութեն. և այն

պէս զաղջում աւուրս առնէր զայն ընդ կանայսն։ Եւ զազգն Աիւնեաց տոհմին զնա զայր ՚ի չափ հասեալ կոտորեցին, և զկնայս սպանին. և զնա մանր մանկտին նեղբնիս հրամայեր առնել, և խաղացուցանել յերկիրն Պարսից։ Եւ առնէր զայս ամենայն վասն վրիժուցն Ներսեհայ, որ եղև պատերազմ ընդ Ներսեհ արքայ Պարսից։

Եւ տայր հրաման Շապուհ արքայն Պարսից զամուր ամուր տեղիսն Հայոց բերդս շինել, հրամայեաց և բերդակալս կացուցանել։ Եւ զազատ կանայսն անդէն ՚ի բերդեանն բաշխեր և թողոյր. զի եթէ ոչ արք նոցա եկեսցեն նմա ՚ի ծառայութիւն, սպանցեն զկանայս նոցա բերդակալքն՝ առ որս եթող զնոսա։ Եւ եթող յաշխարհին զՕ լիկն և զՎարդենն, զնոցա իշխանս զօրաց բազմաց. և զիշխանութիւն ձեռայորդացն էտ ՚ի ձեռս Վահանայ և Վերուժանայ, և ինքն գնաց յՈրպայական։

ԳԼՈՒԽ ԾԹ.

Յաղագս Թէ իբրև մնացին Վահան և Վերուժան, Թէ զինչ չատ չարիս գործեցին ընդ երկիրս Հայոց. և կամ զնդրդ սատակեցան Վահան և կինն իւր յիւրեանց որդւոյն։

Եւ յՅունիհեցեի Վահանն մամիկոնեան և Վերուժանն արծրունի, տոքա երկոքեան արք պիղծք անօրէնք էին, ապստամբեալք էին յուխտէ ՅԾպաշտութենէն, և զանՅծն Վազգեղանց աղանդն յանձն առեալ պաշտէին, ակսան այնուհետեւ յերկրին Հայոց աւերել զեկեղեցիս՝ զտեղիս աղօթից քրիստոնէից յամէ կողմանս Հայոց՝ գաւառաց գաւառաց և կողմանց կողմանց։ Եւ նեղէին զբազում մարդիկ՝ զոր ՚ի բուռն արկանէին, Թողուլ զՅծպաշտութիւն և ՚ի պաշտօն գառնալ Վազգեղանցն։ Եւ յետ այսորիկ տային հրաման Վահանն և Վերուժանն, զՅամ կա-

նայս փախուցեալըն զնախարարացն՝ որ Թողինն և զնա ցինն, տային Հրաման ի բերդեանն զի նեղեսցեն զնա՝ դարձուցանել յօրինս Աղդեզանց. եթէ ոչ առնուցուն յանձն, սատակեսցեն զամենեսեան չարաչար։ Եւ բերդակալեանն յորժամ զայն Հրամանն ընկալան, ամ ոք ի ոք առ ուժեք էին՝ նեղեցին զնոսա ըստ Հրամանին տուելոյ։ Այլ իբրև ոչ ի ոք յանձն առնուին ուրանալ ի քրիստոնէութենէն, չարամահ սպանանէին զամենեսեան յամենայն ի բերդն՝ յորս տուեալ էր զնոսա անդ։

Իսկ Ա ահանայ էր քոյրաթիւ ի մամիկոնեան տոհմէն, քոյր Ա արդանայ, Համազասպուհի։ Եւ էր նա կին Վարեգնի տեառնն Աշտունեաց գաւառին։ Օ սա եթող և փախեաւ Վարեգէն այր իւր ի ժամանակին, յորում եկն Շապուհ աքեայ Պարսից յերկիրն Հայոց. իսկ զտիկինն Աշտունեաց ի միջնաբերդն Ա ան բերդի, որ էր քաղաքն ի Տոսբ գաւառին։ Իսկ անօրէնն Ա ահան և Աերուժանն հրամանն տային բերդակալին, զի նեղեսցէ զկինն. եթէ ոչ առցէ յանձն զօրինս Աղդեզանցն, տայր հրամանն կախել զարձր աշտարակէն և սպանանել։ Իբրև ոչ առնոյր յանձն Համազասպուհի պահել զօրինս Աղդեզանցն, հանէին ի բարձր աշտարակին՝ որ կայր ի վերայ բարձր գահոյն քարին, որ հային ի կողմն ծովակին ի գետոյ կուսէ. և մերկացուցին զնա իբրև ի մօրէ. և արկեալ կապ զոտիցն, գլխովայր կախեցին զնա զբարձուէն կուսէ. և այնպէս մեռաւ ի կախաղանին։ Եւ էր նա սպիտակ մարմնով, և պայծառ տեսանելոյն. կայր կախեալ յերևոյթ տեսիլ նշանակի, և փաղփաղէր մարմինն ի բարձուէն զոր օրինակ ձիւն սպիտակութեան. և բազում մարդիկ ժողովէին տեսանել օր ըստ օրէ, զի իբրև աքանչելի ինչ երևէր յաշխարհին։ Յայս տեսիլ տիկնոջն Համազասպուհեայ՝ եաւ կին մի դայեակն նորին, ագաւ նա պարեգօտ մի՝ զոր անակիւղս [2] կոչեն, և էած գօտի ընդ մէջ իւր. և կայր առ բարձր գահոյն քարին ի ներքոյ աշտարակին՝ զորմէ կախեալ էր

1 Ցամ օրինակ Ե Համազասպուհի։ 2 Ցերիս օրինակս անկիւղս։

զսահն իւր, մինչև կողոպտեցաւ համ մարմինք դիոցն։ Եւ որչափ ՚ի վայր վայրեկին[1] ոսկերքն, նա յիւր ծոցն ժողովէր բովանդակ զնամ զոսկերս սահին. և առեալ գնաց յիւրմն։

Եւ այնչափ չար էին արքն երկոքին, զի անգամ իւրեանց ուժեք ոչ ողորմէին. այլ անխնայութեք դա տէին զօտարս և զիւրեանց ընդահես։ Ետրուշանս շի նէին ՚ի բազում տեղիս, և զմարդիկ հնազանդէին օրինացն Ազգեզանց. և բազում յիւրեանց սեփ հականն շինէին ատրուշանս, և զորդիս և զազգայինս իւրեանց տային յօսումն Ազգեզանցն։ Ապա որ դի մի Ա ահանայ, անուն Սամուէլ, եհար սատա կեաց զԱ ահան զհայր իւր, և զԱրմիզդուխտ զմայր իւր՝ զքոյր Շ ապհոյ Պարսից Թագաւորին. և ինքն փախստական ընկեր յերկիրն Հայոց։

1 ՚Ի միում օրինակի ՚ի վայր վտէին։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԲՈՒԶԱՆԴԱՑ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ
ԶՈՐ ԱՍԵԼՈՑ ԵՄ ԿԱՐԳԵԼ, ԶԴՊՐՈՒԹԻՒՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ
ԿԱՆՈՆ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ ՄԱՏԵՆԻՑ

Ա· Յաղագս Թագաւորելոյ Պապայ յերկրին Յունաց, և գալոյ ՚ի Հայս, և յինքն ունելոյ զաշխարհն. և կամ որ միանգամ գործեաց որպէս յաջողեցաւ։

Բ· Յաղագս Մուշեղայ զօրավարին Հայոց՝ Թէ որպէս անկաւ ՚ի վերայ բանակին Շապհոյ Թագաւորին Պարսից, և եհար զնոսա ՚ի հարուածս անհնարինս, մինչ զի միաձի Շապուհ ճողոպրէր։

Գ· Յաղագս Հայր մարդպետի, Թէ որպէս սպանանել հրամայեաց Թագաւորն Պապ։

Դ· Յաղագս դարձեալ պատերազմին, որ եղև ՚ի Բագաւանդ գաւառին ընդ Պապ Թագաւորին Հայոց և ընդ զօրն Պարսից։

Ե· Յաղագս միւսոյ պատերազմին ընդ Հայս և ընդ Պարս ՚ի Գանձակ Ատրպատականի. Եւ վասն դուշակութեանն Ուռնայրի, զի յայնմ և յաղթութիւն լինէր Հայոց։

Զ· Յաղագս Դղակայ մարդպետի, որ կացուցին սահմանակալ. և նա խորհրդակից եղեալ Պարսից Թագաւորին, Թէ որպէս խոստանայր մատնել զարքայն Հայոց. և վասն մահուն Դղակայ ՚ի Պապայ արքայէ։

Է· Յաղագս մահուն Արշակայ Թագաւորին Հայոց, Թէ զնուրդ մեռաւ յերկիրն խուժաստանի յԱնուշ բերդի ինքնին ձեռօք, և Դրաստամատ լինէր պատճառք մահու նորա։

Ը· Յաղագս Թէ զնուրդ լուեալ պատերազմ ՚ի կողմանցն Պարսից. ապա սկսաւ սպարապետն Մուշեղ ոգորել ընդ այնոսիկ, որք միանգամ ապստամբեցին ՚ի Թագաւորէն Հայոց. զքաղաքս կոյս կոյս հարկանէր մեծաւ պատերազմաւ, նախ յաղագս տան արքայիկ Հայոց՝ որ յԱտրպատականէն էր։

Թ· Յաղագս Նոշիրականի։

Ժ· Յաղագս Կորդուաց և Կորդեաց և Տմորեաց։

ԺԱ. Յաղագս Մաբաց։
ԺԲ. Յաղագս Արծխեաց։
ԺԳ. Յաղագս Աղուանից։
ԺԴ. Յաղագս Կասբից։
ԺԵ. Յաղագս Վրաց։
ԺԶ. Յաղագս գաւառին Աղձնեաց։
ԺԷ. Յաղագս մեծաց Ծոփաց։
ԺԸ. Յաղագս Անգեղ տանն։
ԺԹ. Յաղագս գաւառին Անձաւայ։
Ի. Յաղագս Մուշեղի սպարապետին Հայոց։
ԻԱ. Յաղագս եպիսկոպոսապետին Հայոց Ներսիսի, թէ որպիսի այր, կամ զինչ շատ գործեաց աքանչելիս։
ԻԲ. Յաղագս թագաւորին Պապայ, թէ զնարդ էր դիւաք, կամ որպէս անօրէն։
ԻԳ. Յաղագս յանդիմանութեն սրբոյն Ներսէսի, զի հանապազ թշնամի էր թագաւորին Պապայ վասն մեղաց։
ԻԴ. Յաղագս մահուն մեծի եպիսկոպոսապետին Ներսիսի ՚ի թագաւորէն Պապայ, որպէս կամ զնարդ սպանաւ ՚ի նմանէ։
ԻԵ. Յաղագս տեսլեանն, որ երևեցաւ արանցն սրբոց Շաղիտայի և Եփիփանու, մինդեռ նստէին ՚ի լերինն։
ԻԶ. Յաղագս Շաղիտայի սրբոյ։
ԻԷ. Յաղագս Եփիփանու սրբոյ։
ԻԸ. Յաղագս մեծամեծ նշանաց աքանչելեացն՝ որ երևեցաւ յայ ՚ի Մամբրեա յետ գնալոյն անտի Եպիփանու։
ԻԹ. Յաղագս Յուսկայ՝ որ էր ՚ի տոհմէն Աղբիանոս եպիսկոպոսի, զոր կացոյց փոխանակ Ներսիսի թագաւորն Պապ յիւրոց կամաց, առանց մեծի եպիսկոպոսապետին Կեսարու. և վասն այնորիկ յայնմ հետէ բարձաւ իշխանութեն հայրապետացն Հայոց զեպիսկոպոսս ձեռնադրել։
Լ. Յաղագս սգոյն՝ որ սգային զհայրապետն Ներսէս, և զի նէին զնմանէ կաթողիկն։
ԼԱ. Յաղագս թէ որպէս զկնի մեռանելոյն հայրապետին Ներսիսի, թէ որպէս ՚ի նախանձ մտեալ տապալեաց թագաւորն Պապ զամ զեղեալսն կրօնսն կանոնիցն, որ ինչ միանգամ եղան ՚ի Ներսիսէ առ կենդանութեն նորա ՚ի նմանէ։
ԼԲ. Յաղագս թագաւորին Պապայ, թէ որպէս խոստովեցաւ ՚ի թագաւորէն Յունաց, կամ որպէս սպանաւ ՚ի զօրագլխացն Յունաց։
ԼԳ. Յաղագս որ ինչ խորհեցան իշխանքն Հայոց. ապա անցին կացին լուռ։
ԼԴ. Յաղագս թագաւորելոյն Վարազդատայ ՚ի վերայ երկրին Հայոց յետ Պապայ։
ԼԵ. Յաղագս թէ որպէս ՚ի բանս չարախորհուրդս և անիրա

մարդկան եկեալ թագաւորն վարազդատ, և զզօրաւարն Հայոց զՄուշեղ սպանանէր։

ԼԶ. Յաղագս անմտութեանն կարծեացն ընդանեացն մուշեղի և այլ մարդկան։

ԼԷ. Յաղագս գալոյն Մանուէլի ՚ի գերութենէն Պարսից, և խնդրելոյ զվրէժն Մուշեղայ, և հալածելոյ զթագաւորն զվարազդատ յերկրէն Հայոց։

ԼԸ. Յաղագս թէ զնարդ սպարապետն Հայոց Մանուէլ հանդերձ ամ աշխարհաւն ձեռս ետ ՚ի թագաւորն Պարսից, և մարզպան և աշխարհակալ աշխարհին Հայոց ած զառաջինն ՚ի թագաւորէն Պարսից զՅուրէն, և մեծաւ պարգեւօք մեծարեցաւ ՚ի նմանէն. կամ որպէս խորամանկութեամբ Երուժանայ արծրունւոյ եղև ապրուստամբութենէն, և պատերազմունք յուզեցան։

ԼԹ. Յաղագս Գումանդ Շապհոյ, զի առաքեցաւ ՚ի թագաւորէն Պարսից տալ պատերազմ ընդ Հայս, և սատակեցաւ ՚ի Մանուէլէ զօրօք իւրովք հանդերձ։

Խ. Յաղագս վարազայ, թէ որպէս կամ զնարդ առաքեցաւ ՚ի թագաւորէն Պարսից, և սատակեցաւ ՚ի Մանուէլէ իբրև զառաջինն։

ԽԱ. Յաղագս Մռկանայ, որ առաքեաց դարձեալ թագաւորն Պարսից ՚ի վերայ երկրին Հայոց և ՚ի վերայ Մանուէլի զօրօք բազմօք, և սատակեցաւ ՚ի Մանուէլէ իբրև զառաջինն։

ԽԲ. Յաղագս խաղաղութեանն Հայոց ամս եւթն։

ԽԳ. Յաղագս Երուժանայ արծրունւոյ, որ հանդերձ զօրքն Պարսից եկն ՚ի վերայ Մանուէլի, և սատակեցաւ ՚ի նմանէ։

ԽԴ. Յաղագս թէ զնարդ թագաւորեցոյց Մանուէլ մեծ սպարապետն զմանուկն Աբշակ. ապա և ինքն Մանուէլ մահու մեռանէր։

ԲՈՒԶԱՆԴԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆՔ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՔ ՄԱՏԵՆԻՑ ՏԱՆ ՈՐԴՒՈՑՆ
ԹՈՐԳՈՄԵԱՑ ԻՇԽԱՆԻՆ ՀԱՑՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս Թագաւորելոյ Պապայ յերկրին Յունաց, և գալոյ ՚ի Հայս, և յինքն ունելոյ զաշխարհ իւր. և կամ որ ինչ միանգամ գործեաց, և յաջողեցաւ նմա։

Զոր յետ այսր ամի Մուշեղ որդի Վասակայ ժողովեաց զամենայն ազատագունդ մարդկանն Միայելոյն՝ որ միանգամ միայեալ էին, և չոգաւ հանդերձ նոքօք առ Թագաւորն յունաց։ Եւ եցոյց ըզպաղատանս աշխարհին Հայոց, և զայմ անցս տառապանաց՝ որ անցեալ էր ընդ նոսա, և խնդրեաց ՚ի կայսերէն զպապ զորդի Եդեշակայ Թագաւոր ՚ի վերայ Հայոց աշխարհին։ Եւ Թագաւորն Յունաց Թագաւորեցոյց զպապ զորդին Եդեշակայ ՚ի վերայ աշխարհին Հայոց, որպէս և խնդրեաց նա ՚ի նմանէ. և մեծապէս Թիկունք լինէր արքային Յունաց, և զՏեր[1]նոտ անուն սպարապետան և զԱրձ ունի կոմս արձակեին ընդ արքային Պապայ յերկիրն Հայոց վեց հարիւր քաւոր։

Եւ եկին հասին ի սահմանս Հայոց. և Մուշեղ լինէր զօրավար սպարապետ Հայոց փոխանակ Վահագայ հօր իւրոյ: Եւ գային ի մի վայր ժողովէին ամ ցրուեալք փախուցեալք թագուցեալք, որ էին յերկրին Հայոց. գային և ի մի վայր բովանդակէին, և լինէին ի խնդիր սրբոյն մեծի Հայրապետին Գրիգորի Թագաւորն և ամ մարդիկ աշխարհին Հայոց, մեծամեծք գաւառականք և գաւառատեարք: Ողք եկեալք ժողովեալք, զկաթողիկոսն զմեծն Գրիգոր խնդրէին. զի գիտէին թէ նա կարող է աղօթս առնել, և խնդրել յայն վանս շինուածէ ամ աշխարհին Հայոց, և փրկել ի Հնամեացն. և դարձեալ զինչ և խնդրեր յայն, տայր ած նմա. և միւս և այս, զի իմաստութեամբ իմն կարեր սոցա զօգտակար իրատն մատուցանել: Վասն այսորիկ ոչ եթէ փոքր ինչ էր խնդիրն այնպիսւոյն առն լինել, որ կարեր նոցա զօգուտ իրատու իմաստութէ շնորհել, և ըստ ժամանակին դիպացն պատահելոյ՝ միտս օգտակարս դնել, որով զձանապարհս՝ որ կայրն առաջի՝ գնալ մարթասցեն:

Այսպա ինքն Թագաւորն Պապ երթայր հասանէր գտանէր զեպիսկոպոսապետն Գրիգոր հանդերձ աւագ գայնոյն Հայոց. աղաչէր զնա, զի հայր Հայոց ամ օգտի իրատու առաջնորդ՝ և խնդրեսցէ ևս վասն նոց: Այսպա մեծաւ ջանիւ հազիւ հաւանեցուցին զնա երթալնմա ընդ նոսա ի բանակն արքունի. զի յաւուրց ժամանակին ի մահուանէն Վտեհեայ մինչև յայն ժամանակն Թագաւորութէն Պապայ ոչ էր երթեալ նա ի բանակն արքունի: Այսպա յայնմ ժամանակի մեծաւ աղաչանօք տարան զնա ի բանակն արքունի ընդ Ինքեանս. և նա էր նոցա վերակացու և իրատատու, կարգիչ և առաջնորդ. և հանապազ խնդրեր վասն նոց յայն: Եւ էր իմաստութէ իրաց առաջնորդ, և հանապազ կցորդ հոգւոց և բարձիչ վշտաց աղօթիւք իւրովք. և յամենայնի ամիս երթէք հայր երևեալ:

Այսպա կարգէր կազմէր յօրինէր Մուշեղ սպարապետ զամ զգունդս Հայոց զօրացն, և առնէր հանդէս ամ զօրացն գնդին՝ որ հասին ի ձեռս նոր տասն հազար: Եւ ածէր զամ հանդէսն կարգեալս և պատ-

բաստեալս վառեալս ի պատերազմ, զգրօշս փողփողեալս և նշանս արձակեալս. և ցուցանէր զհանդէս զօրացն Հայոց սպարապետին Հայոց Մուշեղ առաջի իւրեանց Թագաւորին Պապայ, և մեծի քահանայապետին Ներսէսի, և առաջի Տէրենտի և Ազէի զօրագլխացն Հունաց։ Եւ մեծ շնորհակալութիւն առնէր նմա Թագաւորն Պապ Հայոց, և մեծամեծ պարգեւս շնորհէր զօրավարին Մուշեղի. և սոյնպէս զօրագլուխքն Հոռոմոց շնորհակալ լինէին նմա։ Սոյնպէս և եպիսկոպոսապետին Ներսէս օրհնէր զզօրավարն Մուշեղ, և ասէր. Տէր Աստուած օրհնեսցէ զքեզ, և յաջողեսցէ քեզ, և տացէ քեզ զյաղթութիւն շնորհս զնմանութիւս կենաց քոց. ի ձեռն քո և ի ձեռն ազգի քո փրկեսցէ զերկիրս Հայոց մինչև յաւիտեան։

Ապա զօրավարն Հայոց Մուշեղ գունդ կազմեաց պատրաստեաց, և յառաջեաց հանդերձ Հայոց գնդօն. առաջապահ անցանէր առաջի Թագաւորին Պապայ և զօրացն Հունաց կայսերական գնդիւն։ Ապա ի Դարանաղեաց գաւառին լինէալ յարձակեցաւ Մուշեղն։ Իբրև գայր [1] առաջապահն հասանէր ի միջնաշխարհն Հայոց, սպանանէր Մուշեղ զզօրագլուխն Պարսից զԱրէհն և զՕխին, և զնմանս զզօրսն արկանէր ի սուր սուսերի իւրոյ, և ոչ ի զոք ապրեցուցանէր։ Եւ մինչև ի բուն ի սահմանն ի Դանձակ Աղբպատականի զերկիրն յիւր վտարեալ բռնացեալ ոմանք։

Եւ եկն եմուտ Թագաւորն Պապ յերկիրն Հայոց, և Թագաւորեաց ի վերայ նոր. և Թափեաց յինքն զամուր ամուր բերդիցն, զոր կալեալ էր պարսկացն. և բերդն Դարօնից, որ է յերկին Կոգայ, ուր կային դանձք արշակունեացն սաստիկ յոյժ։ Վրանդն գիպեցան մտերիմք բերդակալքն. զի Թէպետ ի ժամանակէն՝ իբրև տարան զԹագաւորն Հայոց զՄշակ ի Պարսս՝ յայնմ հետէ ժամանակ մարտեան ընդ բերդին ընդ այնմիկ պարսիկք, և ոչ կարացին առնուլ, մինչև եկն Պապ Թագաւորն յերկիրն Հայոց. զի պահեցաւ դանձն և եհաս ամբողջ ի Պապ Թա-

1 ի ջոր օրինակս Մուշէն իբր գայլ։

գաւառն մինչև եկին։ Եւ զօրն Յունաց յԱնդ և ի Խախիչն ընդ ամէրկիրն Հայոց բաշխեին ընդ ամ գաւառան. բայց միայն Աերուժանն չարագործ փախչէր միաձի։

Իսկ Աուշեղ զօրավարն Հայաստանեաց շրջէր ընդ երկիրն, և աւերէր զատրուշանն Ազդեզանից։ Իսկ զԱազդեզունան, որ միանգամ՝ ի քուռն արկին, զամենեսեան տայր հրամայն սպարապետն Աուշեղ ունել և հրով խորովել։ Եւ բազում բերդակալս բերդացն չարամահս առնէին, և զբազում պատուաւոր տեառս՝ որ պատուականք էին առաջի Թագաւորին Պարսից՝ ունէր ձերբակալս Աուշեղ, և տայր մորթել և ընուլ խոտով և կանգնել՝ ի վէր պարսպացն։ Ընդ բազում տեղիս զայս առնէր՝ ի վրէժս հօրն իւրոյ Ա ասակայ։

Եւ՝ շինէին զամ աւերեալն՝ ի Թշնամեացն, և զեկեղեցիսն նորոգէին. և Թագաւորութիւն հաղ քան զհաղ նորոգէր, և իրք ժամանակին հաղ քան զհաղ յառաջագէմ ազոյէին։ Եւ տէն Ներսէս իմաստուն Հայրապետն առաջնորդէր և լուսաւորէր, խրատէր և կարգէր և շինէր աղքատաց հանգիստ, ոչ և ինքն՝ ի քնէ իսկ սովոր էր. և զվարս Թագաւորութեն իսկ յօրինէր ամենաբարի կրօնիւք, ոչ և տեսեալ էր իւր առ հնոքն Թագաւորքն։ Եւ առաւել զկարգս եկեղեցւոյ պաշտամանն եպիսկոպոսաց երիցանց և սարկաւագաց, և շինուածս եկեղեցւոյ և վկայանոցաց զամն նորոգեաց ուսոյց և յարդարեաց։

Ո օրավարն Հայոց Աուշեղ զգունդ իւր կազմէր, և երթայր՝ ի սահմանն՝ կալ անդ, զգուշացեալ ըզսահմանաւքն երկրին իւրոյ՝ պահել զնւր աշխարհն հրամանաւ իւրոյ Թագաւորին Պապայ։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս զօրավարին Մուշեղայ Հայոց, Թէ որպէս անկաւ ՚ի վէր բանակին Շապհոյ Թագաւորին Պարսից, և եհատ զնա ՚ի հարուածս անհնարինս, մինչ դեռ միաձի Շապուհ Ճողոպրեր։

Այն Մուշեղ որդի Վասակայ, տոհմատեառն Հայոց մեծաց, ընդրեաց իւր արս ընտիրս միամիտս ազատս ազգայինս քառասուն հազար, միաբանս միակամս, և կազմեաց զնա ձիով և Թուշակաւ և զինուս. և առեալ զնա ընդ իւր, երթալ նստել ՚ի սահմանս Ատրպատականի, և պահել զաշխարհն Հայոց։ Այսպա յայնմ ժամանակի կազմեաց պատրաստեցաւ Շապուհ արքայ Պարսից ամ կազմուքն զօրովք իւրովք, եկն եհաս յերկիրն Ատրպատականի. և Ներսուժանն առաջնորդ գնդին բանակի նը, և բուն բանակն ուրեմն Թագաւորին ՚ի Կաւարեչն զնակեալ էին։

Այլ հասանէր սպարապետն զօրավարն Հայոց Մուշեղ, անկանէր ՚ի վէր բանակին քառասուն հազարաւ, և անդէն ձեռն ՚ի գործ արարեալ կոտորէր։ Այսպա միաձի մազապուր Թագաւորն Պարսից Շապուհ Ճողոպրեալ փախչէր. և զայմ կարևան բանակին առ հասարակ ընդ սուր հանէր Մուշեղ հանդերձ զօրքն Հայոց։ Օ ի զբազումն կոտորէին, և զբազումս յաւազանցն Պարսից ձերբակալս առնէին, և առնուին զգանձս Թագաւորին Պարսից յաւարի. և ըմբռնէին զտիկնանց տիկինն հանդերձ այլովք կանամբքն։ Այլ զայմ մաշկաւարզան ՚ի բուռն արկանէր Մուշեղ սպարապետն, և զայմ աւազանին՝ արս իբրև վեց հարիւր՝ հրամայէր մորթել զօրավարն Հայոց Մուշեղ, և ընուլ խոտով. և տայր բերել առ Պապ արքայն Հայոց։ Ընդեր զայս ՚ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ։

Տայր զկանայսն Շապհոյ Թագաւորին Պարսից ոչ ումեք ինչ Թոյլ տայր Մուշեղ զօրավարն Հայոց անարգել ինչ զնա ումեք. այլ ժանաւարս տայր նմ կազմել ամենեցուն, և հանեալ արձակէր զամենեսեան զհետ առն նմ Շապհոյ արքայի։ Այլ ՚ի պարս-

կացին ընդ նմա արձակիչը, զի երթիցեն առ Շապուհ Թագաւորն Պարսից ողջս և անարատս։ Իսկ Թագաւորն Պարսից զարմացեալ ընդ բարերարութենին Ա՛ուշեղի և ընդ քաջութենին և ընդ ազատութենին, զի ոչ արար ինչ նմա յաղագս կանանցն Թշնամանս։ Այլ էր՝ի ժամանակին յայնմիկ երիվարն Ա՛ուշեղի, ձերմակ ձի մի. իսկ Թագաւորն Պարսից Շապուհ յորժամ առնոյր գինի՝ի մատուռնն ըմպել, յորժամ ուրախութենն իւրոյ խրախուսես առնէր զօրացն իւրոց, ասէր. Ձերմակաձին գինի արբցէ։ Այլ ետ նկարել զտաշտ՝ի պատկեր գԱ՛ուշեղ ձերմակաձին. և՝ի ժամ ուրախութենն իւրոյ զնէր զտաշտն առաջի իւր, և յիշէր հանապազ զնոյն բանս ասելով թէ ձերմակաձին գինի արբցէ։

Ա՛յլ մուշեղ և ամ զօրքն Հայոց անչափ առին զաւար՝ի բանակէն Պարսից, և անչափ լցան գանձօք և ստացուածովք. և բազում աւարամատ Պապայ պահէին Թագաւորին իւրեանց. և զօրացն Հայոց՝ որ անդէն առ Թագաւորին Պապայ էին մնացեալ՝ հանին աւարամատն, և զօրավարացն Յունաց՝ որ էին առ Թագաւորին Հայոց. սոյնպէս և ամ զօրացն այլոց բաշխիչ՝ի մեծամեծ աւարացն ածելոցն։ Ա՛յլ իբրև գարձան զօրքն Հայոց յաշխարհն իւրեանց, բազումք՝ի զօրացն Հայոց ամբաստանէին առ Թագաւորին Պապայ զԱ՛ուշեղէ զսպարապետէն, թէ ընդէր արձակեաց զկանայս Թագաւորին Պարսից զթշնամւոյն մերոյ։ Այլ Թագաւորին Հայոց Պապայ վա՛ս այսր իրաց ոչ ինչ սակաւ լինէր Թշնամւոքն ընդ Ա՛ուշեղի միանձն՝ի բազում ժամանակս։

ԳԼՈՒԽ Գ·

Ցաղագս Հայր մարդպետին, եթէ որպէս սպանանէր Հրամայեաց Թագաւորն Պապ։

Ա՚ՊԱ պատմեցաւ Թագաւորին Պապայ յաղագս օրերացն՝ զոր եղև Հայր մարդպետն տիկնոջն Փառանձեմայ, մօր Թագաւորին Պապայ, Թշնամանս ձաղանաց ի բերդարգել պաշարմանն. զի իբրև զլուռ մի, այնպէս Թշնամանեաց զնա ի ժամանակի՝ իբրև եմուտ անդր գաղտուկ, և եղ անարգանս տիկնոջն, և եկն եղ անտի և փախեաւ. ետուն զայս ամ զոյց Թագաւորին։ Ա՚պա մինչդեռ մարդպետն Հայր զիւրով իշխանութիւնն շրջէր յերկրին Տարօնոյ, և Ո՚ուշեղ սպարապետն Հայոց էր ի նմին գաւառին յիւրում բերդին՝ որում Աղաման կոչեն, որ կայ ի վէր գետոյն Արածանւոյ, եկն եհաս մի գեսպան յարքայէն Պապայ առ զօրավարն Հայոց Ո՚ուշեղ. և ունէր առ նա հրովարտակ, և գրեալ էր ի հրովարտակին անդր հրաման առ նա, զի չարամահ սատակեսցէ զՀայր մարդպետն։ Եւ նա իբրև զայս հրամանս ընկալեալ ի ձեռն առնոյր, յղէր առ մարդպետն Հայր գաւով, և մեծարանաց պատճառանաւ առ ինքն կոչէր Աղաման. և էին աւուրք ձմերայնոյ, և սաստ կացեալ կացեալ էր գետն Արածանի։ Ա՚պա կոչեալ եղև առ նա Հայր մարդպետն իբրև ի պատիւ մեծարանաց. եկն եմուտ մարդպետն ի բերդն Աղաման։ Ա՚յն հրաման զօրավարին Ո՚ուշեղ զօրականացն ունել զնա, և մերկանալ իբրև ի մօրէ, և կապել զըձեռս նր ի նեղքոյ ծնկաց նր, և ի քաշուցանել զնա ի գետն, և դնել ի վէր սառչին կցելոյ գետոյն. և սատակեցաւ անդէն։ Եւ եղև ի վաղիւ անդր ջուգան տեսին, զի ուղիղ գլխոյն ի ցրտոյն վայրեալ ի բաց իջեալ թափեալ էր ընդ քիթս նորա։ Եւ փոխանակ ի նորա տեղի Հայրուհէ մարդպետուհին զՈ՚ըզղակ որմն անուն, որ յաւուրս Ա՚ղշակայ Թագաւորին

1 Յօրինակի միում օրինացն։

կամ Տիրանայ հօր նոր գամուս միջև լեալ նոյն գործ մարդապետութենն։

ԳԼՈՒԽ Դ.

Ցաղագս գալոյեալ պատերազմին, որ եղև ի Բագաւան յաւանին Բագրեւանդ գաւառին ընդ Պապ Թագաւորն Հայոց և ընդ զօրսն Պարսից։

Ա՛պա յետ այսորիկ Թագաւորն Պարսից կրկներ լիներ զօրաժողով ամ ուժով և ամ զօրութիւն իւրով. խաղայր գնայր ամ զօրօքն իւրով հասաներ յաշխարհն Ատրպատականի։ Եւ ինքն անդր դադարեր սակաւուք, և զամ զօրացն զբազմութիւն առաքեր ի վր Թագաւորին Պապայ ի պատերազմ։ Եւ եկեալ զօրքն Պարսից ասպատակ առնէին և ի միջնաշխարհն Հայոց. ապա և Թագաւորն Հայոց Պապ զօրաժողով առնել հրամայեր ի Բագաւանն։ Եւ զօրքն Յունաց, որ էին յԱնդրկին ի Նախիջանն [1], ի միայր ժողովեցան առ Թագաւորն Պապ, և ածին փոս զբանակաւն իւրեանց մօտ ի լեառնն ի Վարդատ մերձ ի գետն Եփրատ, և կազմեալ պատրաստեալ կային գործոյ ճակատուն։

Ա՛պա զօրավարն սպարապետն Հայոց Մուշեղ ժողովեր զամ զօրսն Հայոց աւելի ևս քան զընտրեալսն հազար, և կազմէին պատրաստութիւն։ Իսկ իբրև զօրահատոյցն առներ Շապուհ Պարսից Թագաւորն զզօրս իւր ի վր ուխտարհին Հայոց և ի վր զօրացն Յունաց։ Ուռնայր ազքայ Վղուանից առ եր առ Թագաւորին Պարսից։ Ա՛պա յառաջ կայր և խրնդրեր պարգևս Ուռնայր ի Շ ապհոյ ազքայէն Պարսից, և ասէր՝ Թէ կամ լեցի քեզ, արանց քաջ [2], զի և ինձ պարգև հրամայես, զի Հայոց գնդին պատայ ազքայիս ես ինձէն եղից իմով գնդովս նահատակ։ Ո՛չ Վրէաց գնդին պատեհ է դիպան եղանել

1 Յամ օրինակս ի Բաղանն։ 2 Յամ օրինակս արանց փաքաջ։

զօրացն Յունաց, իսկ ես իմով գնդաւս Հայոց իշ-
խանացն եղից։ Եւ Շ ապուհ Թագաւորն հաձեցաւ,
և զնորհ կալաւ, և հրամայեաց։ Բայց Վերուժա-
նայ արծրունւոյ պատասխանի տուեալ Ուռնայրի,
ասաց. Ոչ ստ արկեր զգազիւ գիրկս. բայց Թէ ժողո-
վել կարիցես, մեծ զարմանք իցեն։ Եւ գաղտուկ
խորհրդով զայս գուշակութիւն Վերուժանն ի ձեռն
հրեշտակի առ Մուշեղ զօրավարն Հայոց հասուցա
նէր՝ Թէ գիտեա և պատրաստեաց, Մուշեղ. զի մե-
ծաւ պարծանօք պարգև խնդրեալ է զձեզ Ուռնայրի
արքային Աղուանից. արդ գիտես զինչ գործիցես։

Բայց մինչ դեռ խօսեցեալ գային զօրքն Պարսից
ի վէր Հայոց, և Ուռնայր արքայ Աղուանից իւրով
գնդաւն ընդ նմա, խօսէր Թագաւորն Աղուանից ընդ
այնոսիկ՝ որ ընդ իւրն էին. ասէր. Յանձն լսցի ձեզ,
յիշելով ի ժամանակի՝ երբեմն ձերբակալ արասցուք
զզօրսն Յունաց, զբազումս ի նոցանէն ապրեցուսջիք.
զի կալեալը կապեալս տարցուք յաղթանս [1] ի գործ
կատարածութեանէ գաղատաս որմանէնս պիտոյից մերոց
քաղաքաց ապարանից և այլոց պիտոյից։ Այլ երբեմն
եկիմ հասին մերձեցան ի միմեանս գունդքն երկո-
քեան Յունացն և Պարսից, և հանդերձեալք խառ-
նել ընդ միմեանս, ինքնին Թագաւորն Հայոց Պաս
վառեցաւ կազմեցաւ պատրաստեցաւ, և կամեցաւ ի
ձակատ ելանել։ Այս չառնոյր զայն նմա յանձն Ցե-
րեխան զօրավարն Յունաց, Թէ ի ձակատ մտցէ. այլ
ասէ. Թագաւորն Յունաց զմեզ մի՛ զօրս յղեաց, եթէ
երթայք զնա պահեցէք. արդ իցէ՝ Թէ քեզ դէպ ինչ
տայցէ, մեք զմեր Թագաւորն որո՞վ երեսօք տեսա-
նեմք, կամ զի՞նչ տայցեմք նմա պատասխանի եթէ
իցէ՝ և մեք աստի առանց քո ապրեսցուք և առ մեր
Թագաւորն հասանեմք, և լինիցիմք այնուհետև գըլ
խապարտք առաջի մերոյ Թագաւորին։ Այլ արա
դու, արքայ, զոր մեք ասեմք քեզ. առ դու զեպիս-
կոպոսապետդ Հայոց զՅերսէս, և եղ նմա ի վէր
Պատ լերինն յամուր և յանկասկած տեղւոջ, և
զի արքեպիսկոպոսապետան Յերսէս արասցէ աղօթս

1 Յօրինակի միում ՝Աղաւաս։

և խնդրեսցէ ՚ի նմանէ, զի ոք տացէ մեզ զյաղթուԹիւն։ Նա ՚ի բարձուԹենն նայեցաւ, և տեսջիր զջան վաստակոց պատերազմին մերոյ զքաջուԹիւն և զվատուԹիւն, զոր առաջի քո գործեսցեն։

Ապա Թագաւորն Պապ հաւանեցաւ բանիցս այսոցիկ. առ ընդ իւր զմեծ քահանայապետան Ներսէս, և ելանէր նստեր ՚ի վերայ նպատական լերինն. և ամրզօրքն Յունաց և Հայոց իջանէին ՚ի տեղի պատերազմին։ Ապա եկն և զօրավարն սպարապետան Հայոց Մուշեղ, և եբեր զնշանան իւր և զգէնն առ Ներսէս եպիսկոպոսապետան, զի օրհնեսցէ զնա, և իջցէ ՚ի պատերազմ։ Նա ՚ի ժամանակին յայնմիկ յիշեաց Թագաւորն Պապ զՀին զոյցան, և ասէ. Յիշեցի ես զայն, զի բարեկամէ Մուշեղն Թագաւորին Պարսից Շապհոյ։ Ո՞վ այդ այն Մուշեղն է, որ արձակեաց զնահապետ Թագաւորին Պարսից Շապհոյ հանդերձ ժանուարօք և վաշտականօքն. և լուեալ ևս է իմ, Թէ ՚ի պարսիկս խօսի. արդ մի մոցէ դա ՚ի չարս։

Ապա զօրավարն Հայոց Մուշեղ բարեխօս առնէր առ Թագաւորն Պապ զմեծ քահանայապետն Ներսէս։ Իսկ Թագաւորն Պապ ասէ ցեպիսկոպոսապետան Ներսէս, Թէ մի լինիր դու բարեխօս. զի իբրև իջանէ, ՚ի զօրսն Պարսից անկանի։ Իսկ նա ևս քան զևս յաճախէր մատուցանել զաղաչեխօսուԹիւն։ Իսկ Թագաւորն, քանզի բանիւ ինչ ոչ անցանէր զնոր ՚ի ժամանակին յայնմիկ, ասէ ցՆերսէս. Կամք քո կատարեսցին։ Բայց նախ երդումն տուր յաղ քո, զի մեզ մի ստեսցէ, և ապա արձակեսջիր ՚ի պատերազմ։ Ապա կոչէն զՄուշեղ զառաջեաւ արքային, և եկն եպագ երկիր արքային. և մատուցեալ բուռն հարկանէր զաջոյ եպիսկոպոսապետին Ներսէսի, և երդնոյր։ Նոյնպէս և ՚ի Թագաւորէն Պապայ ձեռն արկանէր, երդնոյր և ասէր՝ Թէ կեցից և մեռայց ՚ի վերայ քո որպէս նախնիքն իմ ՚ի վերայ նախնեացն քոց, որպէս և հայրն իմ ՚ի վերայ հօրն քո Արշակայ, նոյնպէս և ես ՚ի վերայ քո. բայց միայն չարախօսացն ունկն մի դնիցես։

Ապա օրհնէր զնա քահանայապետն Հայոց Ներ-

սէս բազում օրհնութիւն։ Ապա Թագաւորն Հայոց Պապ զերիվարն զիւր և զիւր նիզակն հրամայեաց մատուցանել առն քաջի զօրավարին Մուշեղի. այլ նա ոչ առ. Ասէին, ասէ, գործեցէք. ապա դու, արքայ, զինչ և տացես՝ ի ձեռս քո եմ։ Նա զիւր նշանն և զզէնն մատուցանէր առ Ներսէս, զի օրհնեսցէ։ Նա հեծանէր իւրով գնդապետն Հանդերձ, և զամ Ճահան Հայոց յարդարեալ յաջմէ զօրացն Յունաց, յաջումն Թևի նա խաղայր յառաջ։

Ասէ Թագաւորն Պապ և եպիսկոպոսապետն Ներսէս կայր ի վերայ Պատ լերինն. և ասէ Ներսէս զբազումն Հանապազատարածս համբարձեալ յերկինս, խնդրէր ի նմանէ՝ զի անխայեսցէ նոր ի յուխտ իւր և ի նոր եկեղեցիս իւր, զոր պատուական արեամբն իւրով սատցաւ. և մի տալ զժողովուրդսն ի ձեռս անաճ հեթանոսաց, զի մի երբեք ասիցեն ի հեթանոսս՝ Թէ ուր է Աճ նոցա։ Նա մինչ դեռ նա զաղօթսն մատուցանէր առ Աճ, խաղացեալ Ճակատեալ իբրև զհուր ամ զօրքն Հայոց ընդդէմ զօրացն Պարսից, իսկ գունդն մուշեղեան յառաջեալ քան զայլ գունդսն՝ յառաջամուխ տագնապեալ երթային. մինչ զի նայէր Թագաւորն և տեսանէր զի ըստ ակն անգանգիւն, մինչ զի ոչ երևէին Թագաւորին նշանքն Մուշեղի։ Իսկ իբրև չերևեալ սկսան նշանքն, աղաղակել սկսաւ Թագաւորն Պապ առ Ներսէս և ասէ. Դու խնեցեր այրեցեր զիս. զի ասացի ես քանս, մի յղեր զայրն զայն ի գործ պատերազմիս. ահա ի զօրսըն Պարսից անկաւ, և արդ մեծամեծ ինձս գործեաց ես։ Նա ասէ եպիսկոպոսապետն Ներսէս. Մի, արքայ, մի կարծեր. զի ոչ ստէ մեզ այրն այն. այլ տեսցես քեզէն զքաջութիւն նորա, զոր գործեսցէ ծառայ քո առաջի քո։

Իսկ Թագաւորն Պապ կարի ստիպեր առ եպիսկոպոսապետն Ներսէս ասել՝ Թէ ստեպ կաց յաղօթս և աղաչեա զնոր մինչ դեռ խառնուրդքս են։ Իսկ իբրև կարի ձանձրացոյց, ասէ եպիսկոպոսապետն Ներսէս ցԹագաւորն Պապ. Արի՛ իջ՝ ուղեսցես զսիրտ քո առ Աստ, դիմասցէ ի վերայ քո և ի վերայ աշխատիս. և իջ՝ Թէ սրբեսցես զքեզ ի պղծութենէ զոր-

ծոց քոց, ընկալցի և ոչ թողցէ ՚ի ձեռաց գլխէդ, և ոչ մատնեսցէ գլխէդ ՚ի ձեռն թշնամեացն քոց։ Ահա ես ոմն եմ, զի աղաչես դու զիս, իբրև եթէ ես այր մի տառապեալ կարիցեմ հակառակ ընդդէմ կամացն՝ զոր ինչ կամիցի առնել՝ ածՙ առնել առ նա ա զօթս, զի այնու շրջիցեմ զկամս նորա։ Այլ այն՝ որ արար զամ յոչընչէ, և ունի զսիեղերս ՚ի ձեռին իւրում և զամ քակիչս նորա իբրև զմարախ, որ չափեաց զերկինս թզաւ և զերկիրս ամ քլաւ իւրով, որ եդ զլերինս ՚ի կշռիս և եբարձ զդաշտս կշռորդաբ, որ գիտաց զնմաստուն՝ նօր իւրոյ և եղև նմա խորհրդակից, որ ընդ նօրն առնէ զամ վճիռ դատաստանաց, դեռ այժմ իսկ զարհեալս և զմեւտս, զհիւսիսի և զհարաւ եդեալ ՚ի կշռիս, և դեռ զկշռան ՚ի վեր ունի. և ըստ մի մի ծանրութեանէ, յոր կողմ հակեսցէ կշռիւն մեզացն, ըստ այնմ և դատի զարարածս իւր։ Զի նա գիտէ զչափ արարածոց իւրոց գործոց, և ըստ արժանի գործոց իւրեանց հատուցանէ նոցա. զի դեռ այժմիկ ժամանակ է կշռաթութեանէ և ժամանակ յանդիմանուհէ և ժամանակ դատելոյ. զի դեռ աւա դիկ յայսմ ժամու ոչ մարդ ընդ մարդկան ձակատեալ պատերազմին, այլ դատաւորն դատաւորաց յարեաւ դատել զերկիր։ Այդ դեռ յայսմ ժամուս ժամանակս դատաստանաց է, ոմն է որ կարէ իշխել բանալ զբերան իւր առաջի նորա յայսմ ժամանակիս և կամ ոմն է որ գիտէ զիմաս ՚ին, զի և խրատտու ևս լինիցի նմա. զի ամ ինչ ՚ի նմանէն և ՚ի նոյն և նովաւ ամ. նմա փառք յաւիտեանս։ Զի թէ ըստ գործոց մերոց հատուցանէ մեզ ՚ին, մեզ ընդդէմ կայ մաց նորա մի լինի երթալ, և խնդրել ինչ ՚ի նմանէ. այլ ասել՝ եթէ «Յերաւունս անցուցեր դու զայս ամ ընդ մեզ. արդար ես դու ՚ին, և ամ գործք քո ճշմարիտ են։ Ճանապարհք քո ուղիղ են, և ամ դատաստանք քո ուղիղ են։ Զի զդատաստան արդարութեանէ ածեր ՚ի վերայ մեր, ըստ ամի զոր ինչ ածեր ՚ի վերայ մեր. զի արդարութեանէ և յիրաւի ածեր ՚ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Զի անօրինեցաք և յանցեաք և ապստամբեցաք մեք ՚ի քէն. մեղաք յամի և պատուիրանայ քոց ոչ անսացաք։ Ել պահեցաք և

ոչ արարաք որպէս պատուիրեցեր մեզ, զի բարի գըտ-
ցուք մեք ՚ի քէն. արդ զնա՝ զոր արարեր և զոր ինչ
ածեր ՚ի վերայ մեր՝ արդարո դատաստանաւ արարեր.
զի դատաստանք քո քաղցր են։ Արդ մի մնաներ ըզ-
մեզ ՚ի սպառ վա՛ն անուան քո, փրկեա զմեզ վա՛ն սքան-
չելեաց քոց, և փառաւորո արա զանուն քո, Տէր. զի
մի երբէք ամաչեսցեն ոյք յուսացեալ լինին ՚ի քեզ։
Ամաչեցեալ լիցին բռնութիւնք նոցա, և Տա՛ զօրութիւնք
նոցա խորտակեսցին. ծանիցեն զի դու ես Տէր Աստ մի-
այն, որ փառաւորեալ ես ՚ի վերայ Տա՛ տիեզերաց»։
Եւ յայնմ ամենևին քո միայնոյ կատարեսցին կամք
քո ամենազօր, որ հզօրդ ես և կարող և արդար յայմ,
և սիրես ողորմել նեղելոց և տապնապելոց։ Օ՜ օգու-
տըն մեր դու գիտես, Տէր, և պատրաստել մեզ որպէս
և քեզ հաճոյ իցէ. զի եթէ իցէ մեզ օգուտ նեղու-
թիւնք, յաճախեա մեզ. և եթէ հաճոյ է առաջի քո
ողորմութիւն, ընդրկեա մեզ։ Օ՜ի որպէս իցեն կամք
նոն յերկինս, սոյնպէս և կատարեսցի. և որով գաւա-
զանաւ կամիցիս խրատել ՚ի ձեռդ քո եմք յամ ժամ։
Վաւեա, Տէր, զանօրէնութիւնս զմեզս և զյանցանս
ծառայից քոց. զի ո՛վ իցէ այն մարդն, որ ոչ յանցա-
նիցէ կամ մեղանչիցէ առաջի քո. զի ոչ ոք իցէ ար-
դար ՚ի վերայ երկրի, և ոչ ոք է մինչև ՚ի մի։ Օ՜ի
դու միայն ես, որ առանց մեղացդ ես. և քո միայն
արդարութի՛, որ արարեր զմեզ յոչընչէ, և ածեր զմեզ
յայս կենդանութի՛, և ցուցեր մեզ ճանապարհս կե-
նաց և փրկութե՛, և զհոգս այսպէս իմաստունս և խո-
ստունս արարեր. և եղեր ընդ մեր փրկանք, զի անմա-
հութե՛ վիճակին հասուսցես զմեզ։ Ցիշեա զեկեղե-
ցի քո՝ զոր քո՛ր արեամբդ ստացար, զի մի՛ գնուխ-
րեալն քեզ ՚ի ձեռս շանց մնասեր[1]. այլ յամենայնի
և ողորմութի՛ քո, դարձցի սրտմտութի՛ քարկուե՛ քո
յուխտե՛ քումմէ, և փրկեա զեկեղեցի քո, Տէր Աստ մեր։
Արդ մինչ դեռ կայր ՚ի վերայ լերինն, զայս և այս
պիսի և որ ինչ նման է այս բանից՝ աւելի և բազում
քան զայն խօսեցաւ, մինչ դեռ կայր առ նմա Թա-
դէոսն Պաւղ ՚ի վերայ լերինն. բազում և աղքի աղ

1 Ցօրինակի միւսմ Տաճեցոյս։

գի և պէսպէս աղօթս մատուցանէր մինչև ցերեկոյն և ՚ի մտանել արեգականն, մինչև վաղձանեցաւ ձա-
կատն։

Ա.ՀԼ ՚ի պատերազմին օգնական այ հասանէր ՚ի վերայ Յունացն, և հայաստան գնդին լինէր յաղ-
թութիւն, և ՚ի պարտութիւն մատնեցաւ գունդն Պար-
սից, դարձան ՚ի փախուստ, ցրուեցան սիրտեցան դաշ-
տաց՝ լերանց բարձանց՝ խորոց ձորոց։ Ա՛պա գՀետ նո-
ցա լինէին զօրքն Յունաց և Հայոց. հասանէին, ըզ-
մեծ և զփոքր առ հասարակ սատակէին. բայց սա-
կաւք ՚ի բազմաց քաջաձիք փախստեայք լինէին։ Ա-
պա գՀետ լինէին փախստէիցն զօրքն Հայոց, և մինչև
՚ի Գանձակ Ա՛տրպատական ՚ի սահմանս Հայոց հա-
լածէին զզօրսն Պարսից. ընդ փախուցեալսն զբա-
զումս սատակէին զՀանապարհայն։ Եւ Ա՛ուշեղ սպա-
րապետն Հայոց հարկանէր զզօրսն Պարսից ՚ի հա-
րուածս անհնարինս. սպաս արարեալ և դիպեր գնն
դին Ա՛ղուանից, և առ հասարակ զամ զզօրսն սատա-
կէր։ Եւ հասանէր Ա՛ուշեղ արքային Ա՛ղուանից
՚ի փախստեանն, և նիզակաբնաւն ՚ի կառափն մա-
տուցեալ ծեծէր բազում, ասելով թէ այդմ չնորհս
կալ[1], զի այր քաջագործ ես, և քաջ ունիս. ես ոչ
սպանից զայր քաջագործ, թէ կարի նեղ հասցէ լինիմ։
Եւ ուղի հեծելով Թայլ ետ նմա փախչել երթալ գը-
նալ յաշխարհն Ա՛ղուանից։

Ա.ՀԼ յորժամ դարձան ամ զօրքն Հայոց, ոչ գոյր
չափ գլխանոյն ախոյենիցն՝ զոր բերեալ էր առաջի
Թագաւորին Հայոց Պապայ զօրավարն Հայոց Ա՛ու-
շեղ։ Այնպէս ըստ իւրաքանչիւր չափու ամ նախա-
րարքն և մեծամեծքն և բովանդակ ամ զօրքն. և եղև
մեծ յաղթութիւն յերկրին Հայոց, և՚ի մեջ զօրացն Յու-
նաց։ Այնպէս լցան բազում աւարաւ գանձուցն զի-
նու և զարդու, ոսկւով և արծաթով և բազում կա-
րասեաւ, ձիով և ջորեօք և ուղտօք, զոր ինչ Թա-
փեցին. զի ոչ գոյր Թիւ կամ չափ, այլ կարի բազում
էր յոյժ։

Բայց ապա ամբաստան լինէին քսսուԹը առ մեծ

1 Ցամ օրինակս ընթերակալ։

Թագաւորն Պապայ զզօրավարէն Ա՛ուշեղի, և ասէ՝ ինչ՝ Թէ գիտեա, ալբայ, զի մեծաւ նենգուբ է ընդ քեզ, և քեզ մահու սպասէ. զի զքո Թշնամին հա՛մակ արձակէ, զի զքաղաքս բազում՛ անգամ՛ի բուռն արկեալ՝ սովոր է արձակել զԹշնամին. զի զԱ՛ռնայր ալբայ արձակեալ, Թոյլ եա ապրել՝ի բուռն արկեալ զհակառակորդս քո: Նա՛ւ վա՛ այսր իրաց բազում՛ անգամ լինէր գժտուԹի Թագաւորին Պապայ ընդ զօրավարին Ա՛ուշեղի. և բազում՛ անգամ յանդիմանէր զնա վա՛ այսր իրաց: Իսկ զօրավարն Ա՛ուշեղ տայր պատասխանի Թագաւորին Պապայ, և ասէր՝ ԵԹէ զիմ զընգերսն զամենեսեան ես կոտորեցի. իսկ որ Թագս ունիցին՝ նոքա իմ ընգերք չէին, այլ քո. եկեա ցես՝ ոմն ես զիմին սպանի, դու զքոյսն. այլ իմ յայր Թագաւոր ոչ ձգեալ ձեռն երբէք որ Թագ ունի, և ոչ ձգեմ, և մի՛ այլ ձգել լիցի: ՆԹէ կամիս սպանանել զիս, սպան. այլ ես, եԹէ գայ ինձ՝ի ձեռն երբէք այր Թագաւոր՝ ոմն եկն բազում՛ անգամ, ես ոչ սպանանեմ զայր Թագաւոր՝ որ գամ՛ի Թագ ունի, եԹէ ոք իսկ զիս սպանցէ:

Թագաւորն Պապ իբրև լսեր զբանս զայս, յարատասուս հարեալ, և յարուցեալ՝ի գահոյիցն, բուռն հարկանէր զԱ՛ուշեղ. արկանէր զնովաւ գիրկս, և լայր՝ի վերայ պարանոցին Ա՛ուշեղի, և ասէ. Ա՛ահապարա են այնոքիկ՝ որ իշխեն խօսել չարուԹիւն զԱ՛ուշեղ, զառնէ քաջէ և զպատուականէ: Օ՛ի այր՝ որ ազգաւ պատուական է իբրև զմեզ, և նախնիքն դորա իբրև զնախնիսն մեր, և Թողեալ նախնեացն դորա զԹագաւորուԹիւն Ն՛էնոյ աշխարհին, եկեալք առ մեզ նախնիքն՝ի նախնեացն մերոց՝ի վերայ կեցեալք և մեռեալք են, և հայր սորա՝ի վերայ հօրն իմոյ մեռաւ, և սա միամտուԹիբ մինչև՝ի մահ վաստակեալ է, և բազում՛ անգամ՝ ա՛ծ եա մեզ չաղԹուԹիւն չաղօԹս և՝ի խնդրուածս հօր մերոյ աքանչելոյն Ն՛էրսխի, զի ձեռն դորա ընդհեցայ բազում՛ խաղաղուԹիւն, զիարդ ասեն ցիս զայս բանս եԹէ Ա՛ուշեղ քեզ մահու սպասէ. սա աւասիկ այր իրաւախոյտ է, զի յօտար տեարան վա՛ բարեկամուԹ խնայեաց, զիարդ դա՝ի բնակ տեարս ձեռն ձգէր:

Յայնմ ժամանակի բազում պարգեւս և պատիւս և բազում գեղեցան զօրավարին Մուշեղի Պասին շնորհեր։

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս միւսոյ պատերազմին Հայոց ընդ Պարս ի Գանձակ Ատրպատականի. և վասն գուշակուճն Ուռնայրի, զի յայնմ ևս յաղթութիւն լինէր Հայոց գնդին։

Ապա լինէր գուշակ Մուշեղի Ուռնայր ազգեայ Աղուանից, յղէր առ նա հրեշտակ և տայր նմա տեղեկութիւն. ասէր. Մեծ հնարհակալութիւն ունիմ ի քեզանակ զի ոչ սպաներ զիս. և ած հաճ զիս ի ձեռս քո, և դու անխայեցեր. զայս սէր քո ոչ մոռացայց մինչև իցեմ ես։ Հայց գուշակեալ իմ քեզ, զի Շապուհ Թագաւորն Պարսից ամ զօրօք իւրովք կազմի գալ անկանել յանապատասահից երկիր Աղուանից։ Ապա ստորան Հունաց կազմեաց զօրս իւր՝ որ ընդ իւրով ձեռամբ էին, և խաղացոյց տանել գնալ ի սահմանս Հայոց ի Գանձակէ կուսէ յատրպատական տանէ։ Այսպէս և Մուշեղ սպարապետն գումարեաց ի մի վայր զզօրսն ամ Հայոց. և էին կուռ վառեալք ինքեանք հազարք ընդ իրեք նիզակ ի ձեռն. Թող զսպարակիրս։ Նա սոքա վաղագոյն քան գուշակութեն աճապարեցին հասին յիւրեանց սահմանն, բայց միայն Թագաւորն մնաց անդէն ի Հայոց աշխարհին։ Նա եպիսկոպոսապետն Ներսէս անդէն մնայր յաշխարհին, և խնդրուածս առնէր ընդ ամ աշխարհին. հրամայէր վե զօրացն որ էին ի պատերազմին։

Իսկ Թագաւորն Պարսից Շապուհ գայր հասանէր ամ զօրօքն իւրովք ի տեղի պատերազմին, և դիր տանէր զզօրսն Հունացն և զգունդն Հայոց, զի կազմեալ պատրաստեալ էին ի գործ պատերազմին։ Նա լինէին խառնուրդք ճակատուն. ի պարտութիւն մատ նեցան զօրքն Պարսից։ Ամենայնդ գունդք նիզակաւորացն յարձակեալք մոլեգնեալք, քաջութիւ ա-

խոյեանս ՚ի վերուստ յերիվարացն յերկիր կործանե-
ին յանդիման Թագաւորին Պարսից Շապհոյ. և
ընդ ընկենուլն խրախոյս բառնային աղաղակելով ՚ամ
զօրքն պատերազմիկք Հայոց համակ, զայս բանս ա-
սելով եթէ առ Արշակ քաջ։ Օ ի զՙամ ախոյեանան,
զոր ՚ի Ձակատուն յայն սպանանէին, նման նուիրէին
իւրեանց առաջի Թագաւորին Արշակայ. զի զՙամ զոր
սպանանէին, ասէին. Արշակայ Թագաւորին մերոյ
զՀ լինիր։ Եւ յորժամ Հայոց ազատանոյն ախոյե-
նացն նիզակաւորացն ռազմարարեալ յարձակեալ,
զզօրսն Պարսից նիզակաւորքն առեալ ընդհնուին,
ասէին ՚ի խրախուսանէն. Ա՛ռ արշակ քաջ։ Իսկ յոր-
ժամ զհնեալ դլխատէին զախոյեանան՝ ասէին. Ա՛ր-
շակայ զՀ լինիր։

Եւ լեգէոն զօրուն բազմութէն, այս կնքն Յու-
նաց զօրացն սպարակիրն, սոյնպէս և Հայոց սպարա-
կիրն զթիկունս ունէր զօրացն Հայոց, վհատնօք փա-
կեալք զինքեանմբք՝ իբրև զամուր քաղաք կնչ ՚ի թի-
կանց լինէին։ Յորժամ տարածանէին կնչ զօրքն Պար-
սից զզօրսն Յունաց և կամ զգունդ նիզակաւորացն
Հայոց, ՚ի լեգէոն վհատնաւորացն Յունաց կամ ՚ի
սպարակիրն Հայոց իբրև ՚ի բերդ մտեալ հանգչէին։
Իսկ յորժամ ոգի առեալ սակաւ մի, և անդուստ
ելեալ յարձակէին, անթիւս ՚ի զօրացն Պարսից ըն-
կէցեալ առաջի իւրեանց ոտից սատակեալս դլխա-
տէին. խրախուսելով ՚ի նոյն բանս՝ Արշակ Թագա-
ւորն իւրեանց, անչափս և անթիւս ՚ի զօրացն Պար-
սից կոտորեցին։ Եւ յորժամ դարձեալ սակաւիկ մի
կնչ յաղթահարէին զնա զօրքն Պարսից, և նոքա իբրև
՚ի բերդ ամուր դիմէին ՚ի լեգէոն ՚ի զօրսն վհատնա-
ւորս, և նոցա բացեալ զվհատնան՝ զնա ՚ի միջ առեալ
փակէին։ Եւ յայնմ աւուր հարկանէին սատակէին
զզօրսն Պարսից զօրքն Յունաց, և Տերէնտն ստրա-
տելատ նոցա, և գունդքն Հայոց և Մուշեղ սպա-
րապետ նոցա։ Եւ սակաւուք փախչէր Շապհ Թա-
գաւորն Պարսից ՚ի պատերազմէ անտի. և նոցա սահ-
մանապահս կացուցանէին, և կնքեանք առ իւրեանց
Թագաւորն Պապ դառնային մեծաւ անուամբ, և
բարի աւարաւ, և հոյակապ շքեղութէ։

Ա.յլ Շ ապուհ Թագաւորն յորժամ յաշխարհն իշխանութենէն իւրոյ հասանէր, զարմացեալ ընդ քա- ջութիւն գնդին կուսոյն որ դիպեցաւ նմա, և ասէր՝ եթէ զարմացեալ եմ ես զոր ինչ տեսի. զի իմ՝ի մանկութենէ իմմէ համակ՝ի ձակատս և՝ի կռիւ մը- տեալ եմ, և բազում ամք են՝ զի հասի՝ի Թագաւո- րութիւն, և առանց կռուոյ ամենևին չեմ լեալ. բայց իմ ջերմ կռիւս զայս էր տեսեալ, որ այս անգամն դիպեցաւ ինձ: Օ՛ի յորժամ Հայոց նիզակաւորքն առաջի կարգէին, այսպէս յարձակէին որպէս զլեառն մի բարձր և կիմ որպէս զաշտարակ մի հաստաբեստ հզօր և անշարժ. և յորժամ մեք զնա սակաւ մի շարժեաք, նոքա՝ի լեզուն Հոռոմոց ապաստան լինէին. և նոցա զվահանափակսն բացեալ, զնոսա իբրև՝ի քաղաքորմ պարսպաւորս ամրացեալ ընդունէին: Ա.յս անտի սա- կաւիկ մի ոգի առեալ, դարձեալ եկեալք մարտնչէ- ին, մինչև անմի զգօրսն Ա.րանց առնէին: Ա.յս միւս ևս՝ որ ընդ այս եմ զարմացեալ ես, ընդ մտերմութե՛ն միամտութե՛ն հայաստան գնդին ընդ տիրասիրութե՛ն: Օ՛ի այնչափ ամք են՝ զի տէրն նոցա Ա.ջակ կորու- սեալ է՝ի նոցանէն, և նոքա՝ի պատերազմին՝ի նա խրա խուսէին: Ա.յս յորժամ զախոյեանսն ընկէնուէին, հա- մակ ասէին՝ թէ առ Ա.ջակ, և նա չէր՝ի մէջ նոցա, և նոքա առ գութ տիրասիրութե՛ն՝ զոր առ քնակ տէրն իւրեանց ունէին, զամ ախոյեանսն՝ զոր սպանանէ- ին՝ նմա նուիրէին: Ա.յս կամ մոլեկան գունդն մուշե- ղեան, զի ինձ այսպէս թուէր՝ եթէ հուր բոց՝ի գլխ- դէն ելանիցէր և՝ի նշանացն, իբրև՝ի հուր հրդեհի այնպէս անցանէր ընդ գունդն որպէս բոց ընդ եղե- գբն: Ա.յս այնչափ ժամանակք են՝ զի Ա.ջակ տէրն նոցա՝ի նոցանէն կորուսեալ է, զի Ա.նդրեչն բեր- դի կայ յերկրին խուժաստանի, և նոքա առ գութն համարէին՝ թէ՝ի գլուխս նոցա նա իբրև Թագաւոր կայցէ, և կամ ընդ նոսա արդեւք՝ի մէջ գնդին կայ- ցէ՝ի գլուխս ձակատսն պատերազմին, և նոքա առ նմա առնիցեն պաշտօն յանդիման նորա: Ա.յլ ա- սէր, երանի՛ որ Հայոց գնդին տէր լեցէ, այնպիսի տի- բասէր և միաբան միամիտ զօրացն:

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս Դղեակայ մարդպետի՝ զոր կացուցին սահմանակալ, և նա խորհրդակից եղեալ Պարսից Թագաւորին, թէ որպէս խոստանայր մատնել զաղբեայն Հայոց. և վասն մահուն Դղեակայ ի Պապայ աղբեայէ։

Ա՛պա Տերէնդ զօրավարն զօրացն Յունաց և Մու-
շեղ զօրավար զօրացն Հայոց զԴղեակ մարդպետ, որ
անուանեալ կոչէր ըստ գործոյն՝ Հայր Թագաւորին,
Թողին զնա սահմանապահ ի Դանձակ՝ որ էր սահ-
ման ընդ Պարս և ընդ Հայս։ Նա ինաց առ նմա ե-
րեսուն հազար ընտիր ընտիրք, նիզակաւորք կուռ վա-
ռեալք պատեզինք[1] և զրահաւորք կազմ ամենայնիւ։
Նա Տերէնդն և Մուշեղ ամ զօրօք, որ էին ընդ նո-
սա, գնացին յաշխարհն առ Թագաւորն Պապ։ Իսկ
մարդպետն Դղեակ, յորժամ հրեշտակս խորհրդով առ
Շապուհ աղբեայն Պարսից, և խոստանայր մատնել
ի ձեռս նորա զԹագաւորն Հայոց Պապ, և զզօրա-
վարն Յունաց զՏերէնդն, և զզօրավարն Հայոց զ-
Մուշեղ, և առնոյր ի նմանէ դանձս պարգեւաց սաս-
տիկ չափ։ Բայց այլ մեծամեծ նախարարքն, որ էին
առ նմա, գաղտ ազդ առնէին Թագաւորին Պապայ,
Դնեցին՝ տեր գաւառին անձնացեաց, և այլք որ էին
անդ մնացեալ։

Ա՛պա Թագաւորն Պապ յղեաց դեսպանս առ մարդ-
պետն Դղեակ, Թէ զօրքդ՝ որ են ընդ ձեռամբ քով՝
գումարեա զայդ. Դնելոյ անձնացուոյ յանձն արաս-
ցես, և վաղ եկեսցես. զի պիտոյ է ինձ յղել զքեզ
առ Թագաւորն Պարսից Շապուհ, զի ես մտից նմա
ի ծառայութիւն։ Ա՛պա յորժամ լսեր մարդպետն
Դղեակ, մեծապէս խնդացեալ՝ ասէր ընդ միտս իւր,
Թէ արդ դիւրին ինձ գկամն իմ կատարել, զոր խոս-
տացայն Թագաւորին Պարսից Շապհոյ, յորժամ
դուրս գտի իրացս յապահով յանդգնաս առնել քա-
նիւք զՊապ, և յանկարծօրէն յանպատրաստից ար-

1 Յօրինակի միում պապենապէնթ։

կանել զԹագաւորն Պարսից զգլխով նորա։ Եւ ինքն զուարճացեալ, լինէր խօսնակից ՚ի մէջ Թագաւորացն երկոցունց. դեսպան ձիով վազ հասուցանէր ՚ի գաւառն Ասորեստոյ ՚ի մեծ ՚ի գեղն ընդիմն արքունի, որում Աբդեանան կոչէն, առ Թագաւորն Նայոց Պապ. և զայր յանդիմանն լինէր Թագաւորին։ Մեծապէս մեծարեցաւ ՚ի նմանէն. և ՚ի ժամ ընթրեացն հրամայն եւ արքայն Պապ, տանել պատմուճան ազուցանել մարգպետին Պղտակայ. և ազուցին նմա զրաստս և վարտիս։ Եւ էր հանդերձն անհեղեղ մեծուԹեան. զի խորշ զխորշիւ իջանէր, մինչ զի ոչ կարէր հանդերձել զանձն իւր, զի պատեաց զնա մեծուԹի հանդերձին։ Եւ ազուցեալ զպատմուճանն մեծ, էած զգօտին ընդ մէջ իւր՝ զոր մէ Թուրն կախէր. և սուսեր ընդ մէջ ածեալ, և խորշ ՚ի գօտւոյ դրատիցն իջեալ, զԹուրն և զսուսերն ծածկէր։ Իսկ զվարտիսն զգեցեալ, և մոյկս ազուցեալ, և զնրանն յազդեր կապեալ, և ՚ի վերայ նորա նէին խորշն ՚ի վարտեացն իջեալ անկեալ ՚ի վերայ նորա նէին՝ ծածկեալ մինչև ՚ի սրունսն և ոչ ինչ իմացաւ Պղտակ Թէ այն մեծուԹի հանդերձին չարոյ նորա իցէ այն։ Իսկ յինն ժամ աւուրն կոչեցին զՊղտակն, և ասեն. Կոչեն զքեզ յընԹրիս ՚ի ներքս յարքունիս։ Իսկ յորժամ մուծին ՚ի փող տանցն՝ յորում արքայն էր, և էր փողն ընդ երկար, բազում երդս լսելիացս էր Թողեալ, և տանէին զնա ընդ այն, կայր շուրջ սպարակիրն փակեալ սակրաւորքն, և զերդս ամ լուսոյն ծածկէին։ Ապա մտեալ շուրջ գնովաւ ՚ի տեղւոյն ձգձգէին զնա սպարակիրքն։ Իսկ նա Թէպէտ տանէր ձեռն ՚ի զէն ՚ի խորշխորշան հանդերձիցն պատատեղոցն՝ զոր էր զգեցեալ, ոչ զմի զէն ոչ կարաց գտանել։

Ապա զի էր ինքն Պղտակն այր մեծ և անձնեայ, քաջ հարուստ ոսկերօք, սակայն սպարակիրն մարգկանն պատեցին գնովաւ, և բարձին զնա վերըմբարձ. և տանէին զնա մինչև ՚ի դուրս տաճարին արքունի։ Իսկ իբրև ետես Թագաւորն՝ Թէ անդր տանին, ասէ. Ա՛ի այր. մի՛ այր, այլ մուծէք զդա ՚ի տուն պատմուճանակայն։ Վազեալ ՚ի փողին զօրք սպարա-

կլսայն մուծին զնա ՚ի նեղբս ՚ի տունն պատմուճա-
կացն կապեալ ձեռս յետս, այս ինքն ուր Թագ ար-
քունի դնեին. և անդէն խօսել սկսաւ Դղեակն և ա-
սէ. Կացեք ցարքայ, զոգէք. ես այս մահու արժա-
նի էի, բայց քեզ արժան էր զիս ՚ի հրապարակի սպա-
նանել, և ոչ ՚ի տան Թագաց սպանանել, և զքո Թագդ
արեամբ շաղախել: Եւ զայս միայն ժամանեաց ա-
սել. և անդէն ՚ի վանն պատմուճակացն փողոտեցին
զնա, և հատին զգլուխ նորա, և հանին հարին ՚ի նիզ-
ակի, և կանկնեցին ՚ի հրապարակին արքունի:

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս մահուան Արշակայ Թագաւորին Հայոց, Թէ զինչդ մեռաւ յերկրին խուժաստանի ՚Անդմըշն բերդին ինք ինքեանմբ ձեռօք, և Դրատամատն էր պատճառք մահուն:

Յետ յայնմ ժամանակի դեռ տակաւին ևս կայր կենդանի Արշակ արքայ Հայոց յերկրին իշխանուհին ԹագաւորուԹենն Պարսից ՚ի կողմանս խուժաստա-
նի ՚Անդմըշն բերդին. այս ինքն որ անուն Ընդուշն բերդն կոչեն: Եւ զայնու ժամանակաւ խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ Հայս. զի արշակու-
նին Թագաւորն Վռուշանաց, որ նստեր ՚ի Բաղդ քա-
ղաքի, նա յարոյց տալ պատերազմ ընդ սասանակա-
նին Շ ապհոյ և Թագաւորին Պարսից: Եւ Շ ա-
պուհ Թագաւորն զնաց զզօրսն Պարսից գումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, և զորս միան-
գամ ածեալ էր գերուԹիւն յերկրէն Հայոց զնա այլևս գումարեալ խաղացոյց ընդ ինքեան. և զնեղ քինին անգամ Թագաւորին Հայոց Արշակայ տա-
ներ ընդ ինքեան ՚ի գործ պատերազմին:

Եւ էր նեղբինի մի Հայոց Թագաւորին Արշակայ, ոստիկան հաւատարիմ լեալ, նեղբինի սիրելի մեծի իշխանուԹե և մեծի պատուի, և անուն Դրաստա-

մասն։ Իսկ իբրև եղև պատերազմ ընդ Թագաւորին Վրաց և ընդ Թագաւորին Պարսից, չարաչար տարածէին զզօրսն Պարսից զօրքն Վրաց, և զբազումս կոտորեցին ի զօրացն Պարսից զօրքն Վրաց, և զբազումս ձերբակալ արարին, և զկէս փախստականս հալածական առնէին։ Իսկ Պրատամասն նեղբքինն, որ յամս Տիրանայ Թագաւորին Հայոց և Արշակայ որդւոյ նորա Թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Նպեղ բերդին, և ամ բերդացն արքունի՝ որ ի կողմանս յայնս. սոյնպէս և յերկրին Ծոփաց ի Մնաբեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովաս, և բարձ նորա ի վեր քան զամ նախարարացն։ Այլ քանզի ղի այս գործակալութեն և մարդպետութեն, որում հայրն կոչէին նեղբքինեաց՝ գործ լեալ էր ի բնէ ժառմտակաց ի Թագաւորութենն արշակունոյ, և զայս Պրատամասն նեղբքինի զիշխանն զՆպեղ տանն գերեալ տարեալ էր յերկիրն Պարսից ի ժամանակին՝ յորժամ կալան զԱրշակ արքայն Հայոց։

Այս այս Պրատամասն էր յայնմ ձակատու, յորում վատթարեցին Վրաստանքն զՇ ապուհ արքայն Պարսից։ Այս Պրատամասն գործեաց անհնարին քաջութիւն այնչափ կռուաւ ևս ի վերայ Շ ապհոյ արքային, և ապրեցոյց զնա ի մահուանէ. և բազում ի Վրաստանց անտի կոտորեաց, և զբազում զախոյանից զգլուխս բերէր զառաջեաւ։ Այս զՇ ապուհ Թագաւորն Պարսից փրկէր ի նեղութենէն պատերազմին Թշնամեաց անտի, ուր արգելին զնա ի խուռն պատերազմին ի զօրաց անտի։ Իսկ իբրև եղև յորժամ դարձաւ Շ ապուհ Թագաւորն Պարսից յերկիրն Վրաստանի, և մեծ շնորհակալութեն առնէր նեղբքինեայն Պրատամասնայն վաստակոյն, և ասէր ցնա Շ ապուհ Թագաւորն Պարսից. խնդրեա դու ինչ յինէն. զինչ և խնդրեսցես, տաց քեզ և ոչ արգելից։ Այս ասէ Պրատամասն ցԹագաւորն. Ինձ ի քէն այլ ինչ ոչ պիտի, բայց տուր ինձ հրաման, զի երթայց տեսից զնահ տէրն իմ զԱրշակ արքայ Հայոց։ Այս առ մի օր, իբրև ես երթայց առ նա, հրաման տուր՝ արձակել զնա ի կապանացն, և ես իշխե-

ցից լուանալ զգլուխ նորա և օծանել, և ազուցանել նմա պատմուճան, և արկանել նմա բազմոցս, և դնել առաջի նորա խորտիկս, և տալ նմա գինի, և ուրախ առնել զնա արուեստակիսաքն մի օր Ճիշդ։ Այլ ասէ Թագաւորն Ո՞ապուհ. Խնամ ես խընդրուածդդ, զոր խնդրեցեր դ. զի յաւուրց ժամանակաց՝ յորմէ Թագաւորութիս Պարսից կանխեալ է, և բերդն այն Հնդուց բերդ կոչեցեալ է, չիք ոք մարդ եղեալ ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցանել Թագաւորաց զոր յայնմ բերդի եղեալ զոք է Թագաւորաց, յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի զոք եղեալ է, Թող Թէ զնա զայր Թագաւոր և զիմ ընկեր կապեալ եղեալ յայնմ բերդի զհակառակորդն. քան միոչ աշխատ արարեր զմեզ, և դու աւադիկ զանձն ի մահ եդեր և յիշեցուցեր զՀնդուէն, որ ոչ էին լեալ երբէք օրէնք Թագաւորութեան Հրեաց ի սկզբանէ։ Հայց զի վասն՝ քո մեծ վաստակք են առնա, զոր ինչ խնդրեցեր՝ երթ՝ տուեալ լիցի քեզ. բայց քեզ արժան էր զօգուտ քո անձինդ խնդրել կամ աշխարհս կամ գաւառս կամ գանձս։ Հայց յորժամ դու զայդ խնդրեցեր, անցեալ լիցիս զօրինաց Հրեաց Թագաւորութեանս. երթ, տուեալ լիցի քեզ որ ինչ յինէնս խնդրեցեր փոխանակաց քոց։

Այլ ետ նմա փուշտիպան մի հաւատարիմ. և հրովարտակ՝ արքունի մատանեաւն, զի գնացեալ երթիցէ նա՝ ի բերդն Հնդումըչն, և զիարդ և կամք իցէ նորա, զոր օրինակ և խնդրեացն՝ արասցէ կապելոյն Հրշակայ, որ յառաջ Թագաւորեաւն էր ի Հայս։ Այլ զօգաւ Պրաստամանն հանդերձ փշտիպանաւն և հրովարտակաւն արքունի Հնդուշ բերդն, և ետես զանէրն քնակ. և արձակեաց զՀրշակ ի կապանացն երկաթեաց ի ձեռակապացն և յոտնից երկաթոց և յանրոց պարանոցէն շղթայիցն սարեացն. և լուաց զգլուխ նորա, և լոգացոյց զանձն նորա։ Այլ ազդոյց նմա պատմուճան ազնիւ. և էարկ նմա բազմոցս, և բազմեցոյց զնա. և եղ առաջի նորա ընթրիս ըստ օրինաց Թագաւորաց, և եղ առաջի նորա գինի որպէս օրէնն էր Թագաւորացն. սեթափեաց զնա, և միսի Թարեաց, և ուրախ առնէր զնա գուսանօք։

Եւ ՚ի ժամ աղանդերը մատուցանելոյ՝ եդին առաջի նորա միրգ, խնձոր և վարունգ և ամիճ, զի կերիցէ ցէ. և եդին դանակ նմա, որպէս զի հատցէ և կերիցէ զնարդ և կամեսցի: Եւ Տրդատամատ մեծապէս ուրախ առնէր զնա. կայր յոտն, և մխիթարէր զնա: Իսկ յորժամ արբեցաւ, և գինին եկն զակամբ նորա, արբեցաւ հպարտացաւ և ասէ. Ա՛յ ինձ Աղշակայ. այսպէս[1] և այս, և յայսմ չափու և այս անցք անցին ընդ իս: Եւ զայս ասացեալ, զդանակն զոր ունէր ՚ի ձեռինն, որով զմիրգն կամ զամիճն կամէր ուտել, եհար ՚ի սրտի իւրում. և անդէն սատակեցաւ, և մեռաւ անդէն ՚ի նմին ժամուն մինչ դեռ կայր ՚ի բազմականին: Իսկ յորժամ զայն ետես Տրդատամատն, յարձակեցաւ եհան ՚ի նմանէ զնոյն դանակ, և եհար յիւրում կշռին. և անդէն մեռաւ և նա ՚ի նմին ժամուն յայնմ:

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս Թէ զնարդ լուեաց պատերազմն ՚ի կողմանցն Պարսից, ապա սկսաւ սպարապետն Մուշեղ ոգորել ընդ այնոսիկ՝ որք միանգամ ապստամբեցին ՚ի Թագաւորէն Հայոց. զբազում կռիս կռիս հարկանէր մեծաւ պատերազմաւ, նախ վասն տան Թագաւորին Հայոց՝ որ Արշակունեաց էր:

Եղև իբրև դադարեաց պատերազմն ՚ի կողմանցն Պարսից, և յապահովեցան իրք Ճակատուն յայնմ կողմանէ, և այնուհետև սկսանէր սպարապետն Հայոց Մուշեղ հարկանել զայնոսիկ՝ որք ապստամբեալ էին ՚ի Թագաւորութենէն արշակունեաց: Նախ հարկանէր զտուն Թագաւորին Հայոց, որ Արտաշեսեան էր. զնմա երկիրն գաւառացն Արտաշատոյ ամէրքն, և առնոյր գերեր բազում գերութիւն ՚ի նո-

1 Յետ օրինակս Աբրահայ. այս ես և այս:

*ցանէ. և զինացորդան նուաճէը և՝ի հարկի կացու-
ցանէր, և առնոյր զբազումն պանդանդս՝ի նոցանէ։*

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս Նոշիրականի։

*ԻԱրկանէր Մուշեղ զապստամբս Նոշիրական
աշխարհին, որ ապստամբեցեալն յարքայէն Հայոց. առ-
նոյր աւերէր գերէր, և՝ի մնացորդացն առնոյր պան-
դանդս. և զբնակիչս երկրին՝ի հարկի ծառայութիւն
կացուցանէր։*

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագս Կորդուաց Կորդեաց և Ցմրեաց։

*ԻԱրկանէր Մուշեղ սպարապետն և զայս գա-
ւառս ապստամբեալս յարքայէն Հայոց, զՎորդուս
և զՎորդիս և զՑմրիս. առնոյր գերէր և աւերէր,
դնէր հարկ մնացորդացն, և առնոյր պանդանդս։*

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս Մարաց։

*Նոյն զկողմանսն Մարաց, քանզի և նոքա ապըս-
տամբեցին յարքայէն Հայոց, հարկանէր զնոսա մե-
ծապէս. և գերէր զբազումն՝ի նոցանէն, և մնացոր-
դացն դնէր հարկս, և առնոյր պանդանդս։*

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս Աբգխայ։

ՆԱՐԿԱՆԵՐ զերկիրն Աբգխայ մեծաւ պատերազմաւ, գերեր զազգսն ի նոցանէն. և զինացորդսն ի հարկի կացուցաներ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս Աղուանից։

ՅՈՆԵՐ պատերազմ ընդ երկիրն Աղուանից. հարկաներ զնոսա ի հարուածս անհնարինս։ Եւ թափեր ի նոցանէ բազում գաւառս, զոր հատեալ եր նոյ ի նոցանէն. զվտի, զՇակաշէն և զձորն Կարղմանայ, զվողէ և այլ որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառք։ Եւ զկուր գետ՝ որպէս և յառաջն լեալ եր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն Իբերաց սահման արարեալ կացուցանէին. և ի գլխաւորացն բազում սպանանէին. և զինացորդսն ի հարկի կացուցանէին, և պանդխտս ի նոցանէ առնուին։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս Կասբից։

ՅՈՒ ինդրեր զվրէժն մեծապէս սպարապետն Մուշեղ յերկրէն Պարսից և ի փայտակարան քաղաքէ, փոխանակ զի և նոքա նշկահէցին ստեղծին արքային Հայոց։ Հասեալ, զբազում ի նոցանէ գլխով պատուհաս առներ սպարապետն զօրաւարն Մուշեղ. զբազում ի նոցանէ գերեր, և զինացորդսն ի հար-

կի կացուցանէր. և առնոյր պանդանդս ի նոցանէն, և անդ ոստիկանս վերակացուս Թողոյր։

ԳԼՈՒԽ ԽԵ.

Յաղագս Վրաց։

Այն խաղալոյ սպարապետն Մուշեղ ի վերայ Վրաց արքային, և նեղէր զնա մեծապէս. և հարկանէր զերկիրն, և վանէր զնմանէ աշխարհն Վրաց. և հանէր ընդ սուր զնմանէ ազատս և զազգս նախնեաց, զոր եգիտ։ Օ փառաւազեանսն հրամանն տայր սպարապետն Մուշեղ հանել ի խաչ ի մէջ աշխարհին Վրաց. և զբերեաշխն Կուգարաց, որ յառաջն ծառայէր Թագաւորին Հայոց և ապստամբեաց, կալեալ գլխատէր. և զազգն որձակոտոր առնէր, և ըզկանայսն և զզաւերսն ի գերութիւն վարէին։ Այն օրինակ և որ միանգամ ի կողմանն յայն էին նախաբազքն, և ի Թագաւորին Հայոց եղեն ապստամբ, զամենեսեան գլխատէր. և Թափէր զնմանէ գաւառն, և առնոյր պանդանդս, և զինացեալսն ի հարկի կացուցանէր։ Եւ զհինն սահմանն, որ յառաջնումն էր լեալ յերկիրն Հայոց և ընդ երկիրն Վրաց, որ ի հինէն մեծ զետն կուր, այնուհետեւ յինքն վտարեալ դառնայր անտի։

ԳԼՈՒԽ ԽԶ.

Յաղագս Թագաւորին Աղձնեաց։

Ընդունայր ապա զօրավարն Մուշեղ յերկիրն Աղձնեաց, և հարկանէր զերկիրն ի մեծ ի հարուածս. զի և նոքա ապստամբեալ էին յարքային Հայոց։ Զերբեակալ արարեալ զբեդեաշխն Աղձնեաց, առնոյր կոտորեցին զկնայս, և զորդիս նոցա ի գերուէ վա-

ըեցին . և զմնացեալսն ՚ի հարկի կացուցանէր , և վերակացուս և ոստիկանս յերկրին Աղձնեաց Թողուին։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս մեծի Ծոփաց։

Գոյ անտի ՚ի նմանէս մեծ արշաւեցեալն . և նոքա էին ապստամբեալ։ Հարկանէր զերկիրն գաւառին Մուշեղ մեծի նմանէս , և զազգն հանէր ընդ սուր . և առնոյր պանդխտս , և զազգն ՚ի հարկի կացուցանէր։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս Անգեղ տանն։

Հարկանէր և յԱնգեղ տունն զբազումս , և հանէր ընդ սուր։ Բայց աշխարհն զի ոստան արքունի լեալ էր վաղ վաղ , բնակիչք գաւառին և ինքեանք կային ՚ի հարկի ծառայութեանէ։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս գաւառին Անձտայ։

Գոյ ՚ի գաւառն Անձտայ արշաւէր , և հարկանէր Մուշեղ զկողմանս գաւառացն այնոցիկ՝ որ շուրջ էին զնովաւ . քանզի և նոքա ապստամբեցին ՚ի Թագաւորութենէն արշակունեաց։ Հանէր ընդ սուր զբազումս գաւառին . առնոյր պանտխտս , և նուաճէր . ՚ի հարկի ծառայութեանէ Թագաւորին Հայոց Պապայ զամենեսեան առ հասարակ կացուցանէր։

ԳԼՈՒԽ Ի·

Յաղագս Մուշեղի սպարապետին Հայոց։

ԱՅԼ քաջն զօրավարն սպարապետան Հայոց լի էր քինիւ մեծաւ և քաղցր նախանձու զՅամ աւուրս կենաց իւրոց, և միամտութիւ և արդար վաստակով ջանայր հանապազ և վաստակէր ի վերայ Թագաւորութեն Հայոց աշխարհին։ Օ տիւ և զգիշեր կայր յաշխատութեն. ջանայր և ձգնէր կալ ի ձակատու պատերազմին, և ոչ Թողոյր քնաւ ամենևին և ոչ քան զկորի մի գետին ի սահմանաց երկրին Հայոց ուրեք վտարել· ի վերայ աշխարհին կեալ, և ի մեռանել ի վերայ անուանն քաջութեան, ի վերայ քնակ տեղանց, և ի վերայ քնակչաց աշխարհին, ի վերայ քրիստոնէութեն հաւատոյ, ի վերայ հաւատացեալ յԱծ և ի քո մկրտեալ ժողովրդոց, ի վերայ եկեղեցեաց, և ի վերայ նուիրեալ սպասուց, ի վերայ վկայարանացն Քրիստի, ի վերայ ուխտի Աստուծոյ, ի վերայ քերց և եղջերց, ի վերայ մերձաւորաց տոհմին, ի վերայ բաւ բեկաց բարեկիր բարեկամաց հանապազ կայր զօրավարն Մուշեղ ի նահատակութեան պատերազմին, զանձն փոխանակ առնել աշխարհին. և յանձն իւր անխոյեր ի մեռանել, զՅամ աւուրս կենաց իւրոց առաջի իւրոց քնակ տերանցն արշակունեաց վաստակեր։

ԳԼՈՒԽ ԻԱ·

Յաղագս եպիսկոպոսապետին Ներսէսի, Թէ որպիսի այր էր, կամ զինչ գործեր։

ԱՅԼ եպիսկոպոսապետան Հայոց Ներսէս շիներ զՅամ աւերեալսն երկրին Հայոց· յանձն առնէր և միխիթարեր, դարմաներ և տեսուչ լինէր Յամ աղքատաց· և զօրկոնս և զաղքատս հանգուցանէր։ Նա շիներ զեկեղեցիս ընդ Յամ տեղիս, և զՅամ կործա-

նեալն կանխեր. և զամ կարգան տապալեալ ուղղեր և նորոգեր։ Շիներ և հաստատեր, խրատեր և յանդիմաներ. բազում առներ նշանս և զօրութիւնս մեծամեծս և բազում բժշկութիւնս սքանչելեաց։ Այս յօրինան սաստեր մեծապէս. և զոր օրհնէր, օրհնէր[1]. և զոր անիծանէր, անիծեալ լինէին։ Այս բազմացոյց զկարգս պաշտօնէից յամ տեղիս իշխանութեն՝ ի սահմանացն Հայոց, և յամ գաւառս կացոյց տեսուչս եպիսկոպոսս. և հանապազ զգուշանայր տեսչութենէն իւրոյ և իշխանութենէ, օրչափ եկաց նա ժամանակս։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաղագս Թագաւորին Պապայ, թէ զնա՞յդ էր լի դիւօք կամ որպէս վարէրն։

Այն Թագաւորն Պապ, զի մինչ դեռ տղայիկ այն էինչ ծնեալ էր՝ ի մօրէ իւրմէ՝ յայնժամ ձօնեաց զնա դիւաց անօրէնն մայրն Վառանձեմ, և վասն այնորիկ լի էր դիւօք՝ ի տղայութենէ իւրմէ։ Վասն զի հանապազ զկաման դիւաց առնէր, վասն այսորիկ և զբժշկութիւն իսկ ոչ կամէր գտանել. զի հանապազ վարժէր զանձն իւր դիւօք, և կախարդանօք երևեցին դևքն՝ ի նմա. և ամ մարդ զդևան՝ ի նմա աչօք բացօք տեսանէին։ Օ՛ի յորժամ մարդիկ հանապազօր յայդ րել ելեալ մտանէին, տեսանէին՝ զի յօձից կերպարանս ելանէին՝ ի ծոցոյն Պապայ Թագաւորին, և պատէին զուսոք նորա. և ամենեքեան ոչք տեսանէին զնա, երկնչէին՝ ի նմանէ և հուսկ երթալ։ Իսկ նա պատասխանի տայր մարդկանն ասելով թէ մի՛ երկչիք, զի սոքա իմ են. և ամ մարդ յամ ժամ տեսանէին զայսպիսի ինչ կերպարանս՝ ի նմա։

Օ՛ի բազում համբաւք դիւաց համբարեալ էին՝ ի նմա. և յամ ժամ ամենայն մարդոյ երևէր այս, զոր գամ մի զԹագաւորն տեսանէին. բայց յորժամ հայրապետն Ներսէս մտանէր առաջի նոր կամ՝ զոր եպիսկոպոս Պատ, դևքն չերևեալ աներևոյթ լինէին։

1 Յամ օրինակս և զոր օրհնէր և զոր անիծանէր։

Նա էր Թագաւորն Պապ՝ ի պղծութեանէ Թաւալեալ. երբեմն այլոց էգ եղեալ, տայր զինքն՝ ի խառնակութիւն. և երբեմն զայլս էգ արարեալ, զարուսն խառնակեալ պղծեր. և երբեմն ընդ անասունս խառնակեր։ Նա այսպէս գիւաբ վարեալ, ոչք՝ ի նմանէ էին բնակեալ զամ աւուրս կենաց իւրոց։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս յանդիմանութեանն սրբոյն Կերսէսի, զի հանապազ Թշնամի էր Թագաւորին Պապայ վասն մեղաց նորա։

Այլ սուրբն Կերսէս եպիսկոպոսապետն Հայոց հանապազօր ընդդիմացեալ Թագաւորին Պապայ, կշտամբեր և յանդիմաներ մեծաւ վկայութեամբ յանդիմանութեամբ. և վասն չարեաց նորա բազմաց ոչ համոզեաձակեր նմա զսեամն եկեղեցւոյն կոխել, և ոչ մտանել նմա՝ ի ներքս։ Հանապազ կշտամբեալ յանդիմաներ և խրատեր, զի գոցէ զանձն իւր՝ ի կորստենէ գործոց իւրոց. և հանապազ խօսեր ընդ նմա, զի փոխեսցէ զարատս ապաշխարութեամբ։ Վասն որոյ առաջի նորա վկայութիւն՝ ի գրոց, ահ արկանելով յաւիտենական դատաստանացն պատժովք՝ գալ՝ ի զգաստութեամբ և՝ ի լաւանալ, և յառաջդիմութեամբ արդարութեամբ կարգացն և գործոցն սրբութեամբ փոխել։

Իսկ Թագաւորն Պապ լսելոյ նմա ոչ լսեր. այլ և ընդդիմացեալ և մեծաւ թշնամանաւք, և մահու սպասեր նմա, և կամէր սպանանել զնա յայտնի. բայց՝ ի Թագաւորէն Յունաց յայտնի և անարգել անգամ բանիւք չէին, և ոչ սակաւ մի համարձակել՝ ի նա, թող թէ մահու աղագաւ։ Վասն և իւր իսկ աշխարհի մարդիկն և զօրքն ամ չառնուին, յանձն զայսպիսի ինչ առնել. այլ՝ զորմէ ամ մարդիկ աշխարհին Հայոց կախեալ կային զնմանէ վասն արդար գործոցն, սրբութեամբ գնացիցն յաշխարհի, խաղաղութեամբ մեծի առաջնորդութեանն, նա և վասն յայտնի նշանագործութեանն աքանչելեացն՝ զոր առնէր, իբրև յերկ-

նաւուր հրեշտակ այնպէս նայէին ամ մարդ։ Եւ թագաւորն ոխացեալ էր ընդ նմա, և խնդրէր սպանանել զնա. այլ յայտնի զայս և բանիւք ձառել ոչ իշխէր, թէ ոչ՝ իւր զօրքն սպանանէին զնա։ Օ՛ի այնպէս ամ մարդ ապաստանեալ էին յաղօթս նորա, և սիրէին զնա առ հասարակ մեծամեծք և փոքունք, պատուականք և անարդք, ազատք և շինականք միանգամայն։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Յաղագս մահու սրբոյն մեծի քահանայապետին Ներսէսի ՚ի Թագաւորէն Պապայ, Թէ որպէս կամ զնարդ սպանաւ ՚ի նմանէ։

Եւ Թագաւորն Պապ յամ ժամ էր Թշնամի մեծի քահանայապետին վասն յանդիմանութեանն որում իւրոց չարեաց՝ զոր գործէր, և յանդիմանեալ լինէր յառնէն ամ ՚ի Ներսիսէ հանապազ։ Եւ զգաստանալ կամէր և ոչ գալ յուղղութեի, և ոչ համբերել կարէր հանապազորդ նախատանացն յանդիմանչին. էարկ ՚ի միտս սպանանել զմեծ քահանայապետն ամ զՆերսէս։ Իբրև յայտնի զայս ոչ մարթէր նմա առնել, կեղծաւորել կերպարանէր իբրև այն եթէ յուղղութիւն ինչ եկեալ է. աղաչէր զքահանայապետն ամ տալ նմա ապաշխարութեի։ Եւ կոչեցաւ յապարանս իւր ՚ի Լսակ առանի Ա՛կեղեցւոյ գաւառի. ապար նմա ընթրիս, աղաչեաց զայրն ամ բազմել նմա յարքունական գահոյսն, և իբրև այնու եթէ սրբեսցի նա ՚ի չարեաց առաի իւրոց, և ինքն այնուհետև յայտնի հետ յապաշխարութեի մտցէ։

Իսկ իբրև զառաջինն բազմեցոյց, ինքնին Թագաւորն յոտն կացեալ հոլանեալ ՚ի մէջ գետին անցեալ, անապակ մատուցանէր առնն ամ Ներսիսէ ընթրիս անդ, և դեղ մահու ընդ կոտինդն խառնեալ մատուցանէր նմա։ Եւ յորժամ ըմպէր զաժանն զայն՝ իմացեալ անդէն, խօսել սկսաւ և ասէ. Օրհնեալ է

՝ի ձեռս մեր, որ արժանի արար զմեզ լսել զաժակս զայս, և հասանել մեհուա՝ որ վասն ՝ին է, որում և ցանկացեալ էի ՝ի մանկութենէ իմմէ։ Այդ զաժակս փրկութենէ ընկալայց, և զանուն ՝ին կարդացից, զի և ես հաւասարեցից հասանել ՝ի մասն ժառանգութենէ սրբոցն ՝ի լոյս։ Այլ քեզ, ո՛վ Թագաւոր, արժան էր իբրև զայր Թագաւոր յայտնի հրամանս տալ և սպասնանել. զի ո՛վ էր՝ որ արգելոյր զքեզ, կամ ո՛վ էր՝ որ պահէր զձեռն քո՝ի գործոց, զոր ինչ կամէիր գործել։ Այայց, ՝ին, Թող սոցա զայս գործս՝ զոր ինչ գործեցեն յիս. և ընկալ զՀոգի ծառայիս քո, որ հանկուցիչդ ես ՝ամ աշխատելոց. և կատարիչ ՝ամ բարութեց,

Օ՜այս և այսպիսի, և որ ինչ նման են այսպիսի բանք, խօսեցաւ. և յարուցեալ գնաց ՝ի վանս իւր։ Այլ զհետ գնացին նորա ՝ի տաճարէն արքունի ՝ամ մեծամեծքն նախարարքն Հայոց, և Մուշեղ սպասբապետն Հայոց, և Հայր մարզպետ. և ՝ամ որ միանգամ էին անդ, մնին ընդ նմա ՝ի վանս նորա։ Այլ իբրև եմուտ ՝ի վանս իւր, վերացուցեալ զպարեգօտս իւր՝ ՝ի վերայ սրտին ցուցանէր կապուտակեալ քան զչափ նկանակի միոյ։ Իսկ մեծամեծք նախարարացն մատուցանէին նմա Թիւրակէս և անդեղեայս վասն ապրելոյ. իսկ նա ոչ կամեցեալ զայն ՝ի բաց մերժէր, այլ ասէ. Մեծապէս եղև ինձ բարի, զի եհաս ինձ ուսանել վասն զգուշութենէ պատուիրանացն Աստուծոյ։ Այլ քանզի դուք ձեղէն գիտէք, զի հրապարակախօսի ընդ ձեզ՝ զոր ինչ խօսէի, արժան էր ինձ հրապարակաւ ուսանել ՝ի ձէնջ, զի այնմ՝ իսկ ցանկացեալ էի. բայց բարւոք եղև ինձ վիճակն ընդ ընտիրս, և ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ։ Օրհնեցից զՔեզ, որ այս մասին վիճակի ժառանգութենէ սպրեցոյց զիս. և մեծապէս խնդութենէ ես լինի, զի վաղվաղակի լուծայց ես յանօրէնն և յամբարիշտ աշխարհէն աստի յայսմանէ։ Այլ բազում ինչ խօսեցաւ ընդ նոսա, և զգուշացոյց զնոսա. և աղաչեաց զամենեսեան զգուշանալ անձանց, և պահել զպատուիրանս Տեառն։

1 ՝ի չորս օրինակս այծմ։

Նա յետ այսորիկ սկսաւ զարհուրանս գունդ գունդ ի ներքուստ ընդ բերանն արտաքս հոսել իբրև զերկուս ժամս։ Նա յետ այսորիկ յարուցեալ եկաց յաղօթս. եդեալ ծունրը, խնդրեր զթողութիւն ի վերայ սպանողին իւրոյ։ Ապա յետ այսորիկ յիշեր յաղօթս իւր զՅամ մարդս, զմերձաւորս և զհեռաւորս, զանարգս և զպատուականս. և զայնսոսիկ անգամ, զորս երբեք ոչ ճանաչէր զնոսա, յիշեր յաղօթս իւր։ Նա յետ աղօթիցն կատարելոյ համբարձեալ զձեռս իւր և զաչս իւր ընդ երկինս, ասաց. Տէր Յի՛ս Քրիստո՛ս, ընկալ զհոգի իմ։ Նա զայս ասացեալ, արձակեաց զոգի։ Նա առեալ զմարմին սրբոյն Կերսէսի զառնն այ պաշտօնեայք եկեղեցւոյն, և Փաւստոս եպիսկոպոս, և պաշտօնէիցն գլխաւորք՝ Տրդատ և Մուշեղ սպարապետն և Հայր մարդպետ, և ամ ազատագունդ բանակն առ քունի, բարձին յաւանէն ի կողմն գեղջէ՝ ուր գործն կատարեցաւ, տարան ի Թիլն յաւանն յիւր գեւղն։ Հանդերձ սաղմոսիւք և օրհնութիւք, կանթեղիւք վառեալովք և մեծապաշտմամբք և բազում յիշատակօք տըբեն յուղարկեցին։ Այլ մինչ էր ծածկեալ զսմարմին սրբոյն, ինքն Թագաւորն Պապ երթեալ պատեաց և Թաղեաց ի մարտիրոսական ի բնակութիւնն. բայց Թագաւորն Պապ ի չքմեղս լինելով չլուեցաւ առնէր, իբրև թէ իւր չիցէ գործեալ զայն։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Յաղագս առելեանն՝ որ երևեցաւ արանցն սրբոց անապատաւորաց, Շաղիտայ և Եպիփանու, մինչ գեռ նստէին ի լերինն։

Ընդ երկու կրօնաւորքն անապատաւորքն մինչ գեռ նստէին ի լերինն, անուն միւսմ Շ աղիտա, և էր սա ազգաւ ասորի, և նստէր Ա՛ռեւճ լերինն, և միւսն անուն Եպիփան, և էր սա ազգաւ Յոյն, և նստէր սա ի մեծի լերինն ի տեղի դիցն՝ զոր կոչէն

աթոռ Աղահատայ[1], և էին սոքա երկոքին լեալ աշակերտք սրբոյն Գաղիկեի մեծի՝ զոր վերագոյին յիշեցաք, և մինչ դեռ յիւրաքանչիւր լերին նստէին սոքա, ի ժամու՝ յորում մեռաւ սրբն Գերսէս, տեսանէին սոքա յիւրաքանչիւր լեառնի աջոք բայոք ի տուընջեան ժամու զայրն այ զԳերսէս իբրև յամպս յափըշտակեալս։ Ոչ ի հրեշտակք այ տանէին զնա ի վեր, և գունդք գունդք գային նմա առաջի։ Իբրև տեսին զայս տեսիլ անապատաւորքն, զարմացեալք ընդ գործն ընդ այնս. բայց Շ աղիտայն՝ որ էրն յԱբեւծ լերինն՝ քանզի էր հմուտ այր, գիտաց եթէ հանգուցեալ է սրբն Գերսէս, և այն ոգիք նորա երևին նմա. բայց Գալիլիան եղ ի մտի իւրում, թէ մարմնով իցէ յափշտակեալ զնա։ Զսա յաբեան յիւրաքանչիւր լեառնէ ընթացեալք փութով մինչև յԱկեղեաց գաւառ, եկին քննեցին տեսին զի կատարեալ էր՝ զոր հայրապետն Գերսէս. և եկին մինչև ի Թիլայ գեւղն, և տեսին զտեղին՝ յորում եղեալ էր գնա, և դիպեալք միաբանց արքն հաւատարիմք պատմէին միաբանց զոր ինչ տեսին՝ առաջի ժողովրդոյն։ Այլ էին արքն այն հրեշտակակրօնք, յանապատին մնալք և կեցեալք. զի և կարօղք էին նշանս առնել մեծամեծս, և ամենեցուն գիտելի և ծանօթք էին գործք նոցա։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Ցաղագս սրբոյն Շաղիտայի։

Շ ԱՂԻՏԱՑՍ, այր՝ զոր, էր լեալ աշակերտ մեծին Գաղիկեի. և ի տղայութենէն իւրմէ մնեալ էր հաւատիկ յանապատս, և ընդ անապատաւորս խոտաճաշակ լեալ էր։ Այլ յետ հանգստեան սրբոյն Գերսէսի դնաց ջոգաւ ի գաւառն Կորդուաց, և առնէր նշանս և սքանչելիս, և բնակէր ի մէջ առիւծուց.

1 Յայմ օրինակս Նահապետ։

աւելի քան զքսան առեւծ հանապազ շրջէին ընդ նմա հանապազորդեալք։ Այր մի լինէր՝ մի յորժամ ցաւ ինչ ցաւէր գազանացն, գայլին շուրջ պատէին գնացեալ, և ձգձգէին զի աղիտացն, և նշանաւ առնէին խնդրել զբժշկութիւն։ Այս էր երբեմն՝ մի առեւծ մի մեծ, և էր ելեալ եղէգն ընդ Թաթոսլ բազկին առիւծոյն, և եկն առեւծն առ սուրբն Ի աղիտացն՝ ի լեառնն՝ յորում նստէր. և զօրէն մարդոյ՝ ի վեր առեալ զԹաթոսլն՝ ցուցանէր նմա զվէրն, նշանացեր նմա բժշկել զինքն։ Իսկ սրբն Ի աղիտաս հանէր զեղէգն՝ որ ընդ վէրն մտեալ էր, և Թքանէր ի վէրն, և Թաշխինակաւն՝ զոր ընդ գլուխն իւր էր ածեալ՝ հանեալ պատէր զԹաթ առիւծոյն և բժշկէր։

Այս այսպէս բիւրապատիկ և պէսպէս առնէր զբսքանչելիս։ Այս գազանք էին կենաց կցորդ նորա, մինչ շրջէր նա յանապատս զնմ առուրս կենաց իւրոց։ Այս ի գետ իջուն հասանէր, կօշկօքն անցանէր ի վերայ ջուրցն գետոյն, և ոչ Թանային կօշկիք նորա։ Այս յորժամ ի շէն ուրեք իջանէր, զբազում մոլորեալս դարձուցանէր նշանօք և արուեստիւք։ Այ՝նայն շրջէր. և իջուն իջանէր ի շէնս, առնէր բժշկութիւնս բազում հիւանդաց. և էր սա առուրքք ծերագոյն։

Այայց ամ մարդ սպասէր և ակն ունէր մահու նորա, վասն ըմբռնելոյ զմարմին նորա։ Իսկ երբն Ի աղիտա խնայեալ զայս՝ Թէ սպասեն առնուլ զմարմին նորա բազում մարդիկ, ապա խնդրեաց Ի աղիտա յայ, զի մի ոք ըմբռնեսցէ զմարմին նորա։ Այս եղև օր մի յաւուրց, որպէս սովորութիւն էր իւր, գնալ ի վերայ ջուրցն գետոյն։ Այս մինչ դեռ անցանէր նա ընդ գետն Այորդուայ, ըստ խնդրուածոյն իւրոց՝ որպէս և խընդրեաց նա, յանկարծակի՝ իջուն կայր ի մէջ գետոյն՝ յանկարծօրէն ընդ ջուրսն մտեալ սուրբն Ի աղիտացն ծածկեցաւ։ Այս մեծ գոյժ եղև գաւառին. և ժողովեցան անչափ բազմութիւնք մարդկանն ի մի վայր եկեալք կուտեցան, մինչև հատին գարձուցին ընդ այլ շրջեցին զգետն։ Այս խնդրէին զմարմինն սրբոյն Ի աղիտայի, և ոչ կարացին ուրեք գտանել. զի իւր խընդրուածքն առ Ա՛ծ այսպէս էին լեալ յաւաջագոյն, սոյնպէս և կատարեցաւ։

Յաղագս սրբոյն Եպիփանու ։

Այլ երանելին Եպիփան էր ընդ սրբոյն Հ աղիտալի աշակերտ եղեալ մեծին Յակոբայ . և սա ՚ի մանկութենէ մեծաւ էր յանապատի ։ Եւ յետ մահուանն մեծի քահանայապետին Ներսէսի եկն քահանայութեացս նա ՚ի մեծ Հռոփս յանապատին , որ կոչի անուն տեղւոյն Ամբրէ , ՚ի վերայ գետոյն՝ որ անուանեալ կոչի Ամուշեղ ։ Եւ էր բնակեալ ՚ի քարանձաւս , և հանապազորդեալ էր ընդ գազանս անապատի , և ժողովէին առ նա արջք և ինձք ։ Եւ էր սա հանապազորդեալ յանապատին , և առնէր սա մեծամեծ նշանս և սքանչելիս . և գարձուցանէր զազգսն մոլորեալս ՚ի հեթանոսութենէ ՚ի քրիստոնէութի , և ընդոյր զերկիրն Հռոփայ վանիւք . և գնէր վարժեալ ընդ ամ երկիրն Հռոփայ , և լինէր նա Եպիփան լոյս երկրին Հռոփայ , և լուսաւորէր զնոսա մեծապէս ։

Ընդանէր և յերկիրն Պզնեաց , լուսաւորէր և զնոսա . և ընդոյր զերկիրն Պզնեաց վաներով . և շինէր վկայանոց մի յաւանին ՚ի քաղաքին Տիգրանակերտ , և յօր յիշատակի սրբոյն ՚ի փրկութենէ և ՚ի բարեխօսութենէ աշխարհի . և առնէր ինքն նշանս , և գառնայր ինքն յիւր վանն ։ Եւ էր մնա ՚ի գետն Ամուշեղ աղբեւր մի , և ձուկն բազում ելանէր ընդ ակն աղբերն . և բազում մարդիկ հանեալ զձուկն , օգտէին ՚ի նմանէ ։ Պատ երկու եղբայրք ՚ի վերայ ձկանն հակառակեալք , էսպան միմն զմիմն . և իբրև գիտաց նոքա Եպիփան , ասէ . Յայսմ հետէ այսի ոք ձուկն մի կերիցէ ։ Եւ անդէն գառնացաւ ձուկն տեղւոյն , և եղև իբրև զլեղի գառն մինչև ցայսօր ժամանակի . և ոչ ոք որսաց զնա մինչև ցայսօր ժամանակի ։ Բազում և այլ զօրութիւնս առնէր և նշանս անչափս ։

1 Ցերիս օրինակս չկայ ընդ . և ՚ի միում օրինակի Եպիփան ընդ գէր սրբոյն Շաւիթայի ։

Իբրև բազում կարգս ուղղութեան Թողոյր ՚ի գաւառսն յայնոսիկ տէրն Եպիփան, իսկ նա հառ ընդ իւր զաշակերտսն իւր արս միանձունս լեառնականս անապատականս, արս հինգ հարիւր, երթալ գնալ յերկիրն Յունաց։ Նա մինչ դեռ երթային, ՚ի ձա՛նապարհին դիպեցաւ նոցա կին մի. իբրև անցին ընդ կինն, սկսաւ փորձել զնոսա Եպիփան, և ասէ. Իբրև զի՞ դեղեցիկ էր կինն և վայելուչ։ Ասէ մանուկ մի յաշակերտաց՝ անուն. Կինն, զոր դու դովեցեր, միականի էր։ Նա ասէ տէրն Եպիփան. Դու զնաւ ընդէր նայեցար տեսանել զերեսս նորա. տեսանես զի խորհուրդք չարք կան ՚ի քեզ։ Նա անդէն մեկնեաց զմանուկն յիւրմէ, և հալածեաց զնա։ Նա ինքն չոգաւ եմուտ ՚ի ծով մեծ, և նաւաք անցին յանապատ ՚ի կղզիս. և ուսեալ զկղզին զայն օձից բազմութիւնք, և էին յայնմ կղզւոջ զնակեալ օձք իժք և քարքք, բազում գազանք դաժանք թունաւորք։ Նա եղև իբրև չոգան, եհաս տէրն Եպիփան ՚ի կղզին յայն, մերժեցան անտի գազանքն, և Թողին զկղզին և գնացին։ Նա այնուհետև ոչ ինչ ջնաս եղև նոցա ՚ի կղզւոջն յայնմիկ, այլ քնաւ կեցան անդ խաղաղութիւ։ Ընդ եկեաց տէրն Եպիփան, անդէն ՚ի նմին կղզւոջ հանգեաւ։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Յաղագս մեծամեծ նշանացն և սքանչելեացն, որ երևեցաւ յայ ՚ի Մաւրէ յետ գնալոյն Եպիփանու։

Այդ իբրև գնայր սուրբն Եպիփան ՚ի գաւառէն Օսոփաց յիւրմէ միանձնանոցէն՝ որ անուանեալ կոչի Մաւրէ, եթող անդ բազում եղբարս միաբանս միահաւանս հաւատացեալս կրօնաւորս քրիստոնէիցն, լեառնականս ճգնաւորս միանձունս. և ՚ի վերայ նո-

1 Յերկուս օրինակս պակասի։

յա երեց մի գլխաւոր։ Այլ եկին ի նոցանէ ոմանք, որ քնաւ ամենևին այլ ինչ կերակուր չէր ձաշակել նոյա ի մանկութենէ իւրեանց, բայց լոկ բանջար և ջուր. և զհամ գինւոյ գիտէին ոչ գիարդ լինի։

Այլ էր անդ եղբայր մի խստակրօն, որ մեծին վարս վարէր. և ոչ ձաշակէր ամենևին ի բաժակէն կենաց բարւոյ փրկութենէն յուսոյն յարութենէն, այս ինքն յարեւնէն ահն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Օ՛ի ոչ կարէր հաւատալ թէ ձմարտիւ արիւն իցէ Աստուծոյ այ, յորժամ ելանիցէ ի սեղանն այ. այլ նմա գինի լոկ թուէր թէ իցէ, վասն այսորիկ վիճէր հանապազ ընդ բազումս։ Լոկ եղև օր մի յաւուրց, իբրև կատարեցին անդ ըզխորհուրդս գոհութեան պատարագին ի վկայանոցի անդ յայնմիկ՝ զոր էր շինեալ սրբոյն Գալիփանոս, յորժամ հանին զհացն սրբութենէ և զգինին՝ արիւնանալ պատարագին ի վերայ սեղանոյն, և կայր եղբայրն անհաւատ ի վկայանոցին։ Այլ երեցն ելեալ կայր ի վերայ առաջի սրբոյ սեղանոյն. յորժամ յառաջ քան զմատուցանել զպատարագն համբառնայր զձեռս երեցն ի վերայ սեղանոյն, և ասէր.

Տէր ած զօրութենէդ, որ արարեր զամ յոչընչէ, և ստեղծեր զմարդ ի հողոյ կենդանի և անապականա յու. և անցին զքոյով պատուիրանսդ, և անկան ի մահ իւրեանց պատուիրանազանցութենէն։ Այլ արդ արդար դատաստանսդ քովք մերժեցեր զնա ի դրախտէն փափկութենէ յայս աշխարհ ուստի ստեղծեր, և գրաւեցան լինել ընդ մահապարտութենէ. սակայն ոչ թողեր ի ձեռանէ, բարերարդ ած, այլ տեսչութենէ և հնարհօք միածնիդ քո վերստին ծննդեամբ նորոգեցեր զստեղծուածս քո. և բազում կերպարանօք այցելու եղեր արարածոց քոց։ Զաւաքեցեր զմարգարէս, արարեր զօրութիս ազգի ազգի նշանս ի ձեռն սրբոց քոց՝ որք յազգս ազգս իւրեանց հաճոյ եղեն առաջի քո,ետուր զօրինս յօժնականութենէ, առաքեցեր հրեշտակս վերակացուս։ Լոկ իբրև եկն կատարած ժամանակաց, խօսեցար ընդ մեզ միածին Որդովդ քո՝ որով զաշխարհս արարեր, որ է պատկեր փառաց քոց և կերպարանք էութենէ քո, և կրէ զամ բանիւ զօրութենէ. որ ոչ ինչ յափշտակեաց զհաւան

Ի օրն զնոսա Թէն հաւատար պատիւ անձինն, այլ ածն յաւիտենական 'ի յերկրի երևեցաւ, ընդ մարդկան շրջեցաւ, 'ի սրբոյ կուսէն մարմնացաւ, զկերպարանս ծառայի էառ, և եղև 'ի նմանուԹիս տկարուԹեաս մերոյ, զի արասցէ զմեզ նմանակիցս փառացն իւրոց։ Ո՛վ յաւիտենական զաւակուԹեանց և յաւիտենական մեղսակեցս փրկեցեալ զմեզ. և բարձեր յաւիտենից զանցաւորուԹիւն ԹերահաւատուԹեանս, և եռուր գյուսոյ զհաւատս յաւուրն ահաւոր գոց արարածոց, որոց և զնմանուԹիւն պատկերի կերպարանաց գոց ընդունեցեր։ Եւ հաւատովքն, զոր եռուր զօրանալ 'ի մարդիկ, զամենեսեան առ հաւարակ միանգամայն կեցուցեր ընդունելով. զի ոչ եԹէ վասն արդարուԹեանց ինչ մերոց, զի ոչ ինչ արաբաք զբարիս 'ի վերայ երկրի, այլ վասն ողորմուԹեանդ և գԹուԹեան քո՝ զոր սիրեցեր 'ի մեզ՝ համարձակիմք խնդրել 'ի սրտագիտեդ, որ քննես զսիրտս և զերիկամունս որդւոց մարդկան։ Դու, տէր, սրտագէտ յաւմի, դու գիտես զՀնարաւուԹիւն զվաստակոց զառնս զայսորիկ, զի խստամբերուԹիւն վարի 'ի վարս վաստակոց իւրոց, և չիք հաւատք 'ի սմա. արդ յաւել 'ի սա հաւատս քան զՀատ մանանխոյ, զի մի կորիցէ անձն սորա։ Նովիւ քաջ, որ ելերդ 'ի խնդիր ոչխարին կորուսելոյ, և եդիր զանձն քո 'ի վերայ խաչանց գոց, արդ և զսա փրկեա 'ի ԹերահաւատուԹենէ՝ յոր ըմբռնեալ ես, զի մի յափշտակեսցէ Թշնամին զանձն սորա, և քո ստեղծուածս և նմանուԹիւն կերպարանացս յապականուԹիւն յաւիտենական կորստեան մատնեսցի։

Եւ զայս աղօԹս մատուցանէր երէցն յառաջ քան զմատուցանելն պատարագին. և յետ այսորիկ մատոյց կատարեաց զպատարագամատոյցն ջՀ։ Իբրև ասաց. Նայր մեր՝ որ յերկինս, եդ ծունր և կայր յաղօԹս յերկար։ Եւ մինչ դեռ եդեալ էր նորա ծունր և կայր յաղօԹս, և կայր եղբայրն Թերահաւատ 'ի յոտն, 'ի խոնարհ 'ի քեմին նայեր 'ի սեղանն, սկսաւ տեսանել մեծամեծ սքանչելիս աչօք բացօք իւրովք։ Զանգն տեսանէր զՀ, զի իջեալ կայր 'ի վերայ սեղանոյն. և բացեալ էր իւր գվերսն 'ի կողմանէ, զոր 'ի կողն գեղարդեամբն խոցեցին. և 'ի

վերջ կողցին արիւնն ցնցղկացեալ հոսէր ՚ի բաժակ անդր պատարագին, որ եդեալ էր ՚ի վերայ սեղանոյն։ Իսկ իբրև ետես զայս եղբայրն Թերահաւատ կրճնաւորն, զարհուրեալ դողացեալ խուովեալ տագնապեալ յերկիւղ կործանեալ կայր, ՚ի բերանս հարեալ, պարտեալ Թալացեալ ոգին սպառեալ լինքնէն։

Այսպա երէցն յարուցեալ կատարեաց զգործ սրբուԹե պատարագին. իջուցեալ զսրբուԹի օրինացն ՚ի բեմէն, ետես զեղբայրն, զի յերկիւղ կործանեալ Թալացեալ կայր։ Իբր ետ ումՔ տալ էր զօրէնսն, և եհան զմնացորդսն ՚ի սեղանն, ապա լինքն մատուցեալ բուռն հարկանէր զեղբօրն. և տեսանէր, զի նա Թալացեալ պակուցեալ կայր ՚ի գետնին։ Այսպա ջուր արկանէր ընդ բերանսն. իսկ նա ուրեմն եթէր զոգի. և զգաստացեալ, մատեաւ եկաց պատմեաց ըզմեծամեծ սքանչելիսն՝ զոր ինչ ետես։ Այսպա կամեցաւ տալ նմա երէցն ՚ի սրբուԹէն անտի օրինացն. իսկ եղբայրն չհաւանեալ յառնոյր յանձն, վասն զի անարժան համարէր զանձն իւր։ Այլ հոր հատեալ անձինն, ՚ի ներքս իջեալ, զեւԹն առ ապաշխարեալ զԹերահաւատուԹէն մեղաց իւրոց, և յետ եւԹն առմին ապա զանձն արժանի ապաշխարուԹէն համարէր, ելանել առնուլ ընդ օրէնսն հաւասարել։ Այսկայն ՚ի նոյն հոր իջուցեալ զանձն իւր զՔառ աւուրս կենդանոյ իւրոց, մինչև ՚ի նմին հոր վաղճանեցաւ եղբայրն։ Այսպա և նոյն երէցն հանգեաւ, և ՚ի միասին երկոքեան եգան ՚ի ներքս ՚ի վկայանոցին, ուր սքանչելիք երևեցան յեղբայրանոցին Նպիփանու։

Յաղագս Յուսկան՝ որ էր ի զաւակէ Աղբիանոս եպիսկոպոսի, զոր կացոյց փոխանակ Ներսիսի Թադաւորն Պապ յիւրոյ կամաց՝ առանց մեծ եպիսկոպոսապետին կեսարու. և վասն այսորիկ բարձաւ իշխանութիւն Հայրապետացն Հայոց ձեռնադրել։

Այդեւ յետ մահուանն Հայրապետին Ներսիսի կացոյց Թադաւորն Պապ զՅուսիկ եպիսկոպոս, որ էր ի զաւակէ Աղբիանոս եպիսկոպոսին Մանազկերտ։ Նա հրամանն ունել նմա զտեղի Հայրապետացն, իշխել փոխանակ նորա՝ զոր սպան. և էր նա փոխանակ նորա։ Բայց լուաւ եպիսկոպոսապետն Կեսարու՝ թէ սպանին զմեծ Հայրապետն Ներսէս, և փոխանակ նորա տեղի նորումն զոր կացուցին զՅուսիկ՝ առանց նորա հրամանի եղեալ, զի ոչ որպէս սովոր էին առ Հայրապետան տանել՝ի Կեսարիա ի ձեռնադրութիւն։

Եւ իբրեւ այս մեծ զարմանալով ցասման եղեալ Հայրապետին Կեսարու վասն բանիս այսորիկ, և եղև ժողով եպիսկոպոսացն սիւնհոդոսին նահանգին Կեսարու առանց Հայրապետին. և գրեցին Թուղթ ցասմամբ մեծապէս։ Եւ նոյնպէս և գրեցին Թուղթ առ Թադաւորն Պապ, և լուծին զիշխանութիւնն կաթողիկոսութեն. զի որ լինէին Հայրապետ Հայոց, նա պրանն արքունի իշխեսցէ՝ զհացն օրհնել. և մի՛ իշխեսցէ ձեռնադրել զեպիսկոպոսն Հայոց, որպէս սովորութիւն էր ի հնումն։ Եւ յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն Հայոց զեպիսկոպոսն ձեռնադրել. այլ որ լինէին եպիսկոպոսք ամ գաւառաց գաւառաց Հայոց և կողմանց կողմանց, այնուհետեւ յայնմ հետէ որ միանգամ լինէին եպիսկոպոսք սահմանացն Հայոց, երթային ի քաղաքն Կեսարացւոց, և անդ լինէին եպիսկոպոսք։ Ո՛ւմն զի յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն յերկրէն Հայոց, այնուհետեւ ոչ իշխէին եպիսկոպոսք ձեռնադրել. բայց որ լինէր աւագ եպիսկոպոսացն, ի վերոյ միայն նստէր, և հաց օրհներ

Թագաւորացն։ Այլ սա քրիստոնեայ, բայց համարձակութիւն յանդիմանուիլ ինչ ընդ ումեք չիշխեր բարբառել. կամ զի երկնչոտ էր և հաւանն, և ըստ կամս Թագաւորին միայն ունէր զպատիւն, և կայր ՚ի լռութեան և ՚ի համեստութեան զամս աւուրս կենաց իւրոց։

ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս սգոյն, որպէս սգային զհայրապետն Կերսէս, և լինելին զնմանէ կաթոգի։

Այն յետ սպանանելոյն Պապայ զսուրբ հայրապետն Կերսէս, տխրեցաւ ամ մարդ խոր տրտմութեամբ. և ամ մարդ երկրին Հայոց հաւանեին խօսէին և ասէին. Խարձեալ են արդ վիրաւք Հայոց, զի բարձաւ արդարն ՚ի յայսմ երկրէ։ Լսօսէին իշխանքն և նախարարքն, և ասէին. Վասն մեր արդ թէ կորեաւ երկիր մեր. զինարդ հեղաւ արիւն արդար ՚ի տարապարտուց, մանաւանդ զի վասն ՚ի սպանաւ։ Այլ խօսէր Ներսէհ սպարապետն Հայոց և ասէր. Սրբոյն ՚ի հեղաւ արիւն ՚ի տարապարտուց. այսուհետև ես ոչ կարեմ երթալ ՚ի վերայ Թշնամեաց, և ոչ նիզակ ումեք ուղղել։ Օ՛ի գիտեմ եթէ եթող ՚ած ՚ի ձեռանէ զնեզ. և լքեալ եմք, և ոչ կարեմք համբառնալ զգլուխս մեր. զի գիտեմ՝ եթէ չիք յաղթուի ՚ի վերայ Թշնամեաց երկրիս Հայոց. յաղթիչ նորա էր յաղթուի որ մեռաւն, և ազգի նոցա։ Այլ սգային ամ ազատք և շինականք ծագէ ՚ի ծագ ամ ամենայն երկրին Հայոց, ազատք և շինականք ամ քնարկիչք տանն Վռամշապհոյ, հայ լեզուն առ հասարակ։

ԳԼՈՒԽ ԼԱ.

Ցաղագս Թէ որպէս զկնի մեռանելոյն Հայրապետին Ներսիսի, և կամ որպէս ի նախանձ մտեալ տապալեաց Թագաւորն Պապ զնմա եղեալ կրօնս կանոնիցն՝ որ լինչ եդան ի Ներսիսէ առ կենդանութեանն նորա ի նմանէն։

Իսկ Թագաւորն Հայոց Պապ զի Թէպետ և սպան զՀայրապետն աշխարհին Հայոց զՆերսէս, սակայն ոչ յագեցաւ մահուամբ նորա, այլ ջանայր այսպէս՝ Թէ զինչ միանգամ կարգք էցեն ուղղութեանն՝ ի Ներսիսէ եղեալ յեկեղեցւոջն, եղծեսցէ և խանգարեսցէ։ Եւ սկսաւ նախանձ վարել ընդդէմ յառաջագոյն կանոնեալոցն ի նմանէ. և սկսաւ հրաման տալ յայտնապէս յաշխարհին աւերել զայրենոցան և զորբանոցան՝ զոր շինեալ էր Ներսէս ի գաւառս գաւառս, և աւերել զկուսաստանսն ի գաւառս գաւառս և յատանս յատանս պարսպեալս և ամրացեալ՝ որ նորին Ներսիսի էր շինեալ վանս ամրապահս առանգոյն[1] զգուշութեանն։ Վասնզի յիւրում կենդանութեանն երանելոյն Ներսիսի էր շինեալ. շինեաց զայս կուսաստանս յամ գաւառս, զի որ միանգամ կուսանք և հաւատացեալք իցեն՝ անդր ժողովեսցին ի պահս և յաղօթս, և կերակրել յաշխարհէ և յիւրաքանչիւր ընտանեաց։ Այն աւերել հրամայեր Պապ Թագաւորին, և զկուսանսն հաւատացեալս տայր հրամանն ի խառնակութիւն պղծութեան։

Եւ յամ աւանս էր շինեալ նորին Ներսիսի և հիւանդանոցս, յամ կողմանց և ուռճիկս և գարմանս կարգեալս, և արս հաւատարիմս Թողեալ տեսուչս հիւանդացն և աղքատացն. նոյնպէս և այնոցիկ յանձն արարեալ որք երկիւղածքն էին յայ, որք գաստատանացն յաւիտենականացն և գալստեանն Քրիստի սպասէին։ Այվերակացուսն հալածէր Թագաւորն յիւրաքանչիւր տեղութենէ, և զտեղիսն ի բաց աւերէր։ Այոր վերակացուսն կարգեալ էր յաղագս չքա-

1 ի յորս օրինակս առանձինն։

ւորացն և աղքատաց տեսուչ, զնոսա ՚ի բաց հա-
լածէր. և հրաման տայր ամ աշխարհի իշխանուհին
իւրոյ. Աղքատքն բայց եթէ ՚ի մոյր ելցեն. այլ անդր
ոք լինչ մի՛ իշխեսցէ տանել, եթէ ոչ նոքա եկեսցեն
ժառեսցեն աղաչեսցեն, ապա թէ գտանել հազիւ լինչ
կարասցեն: Եւ զկարգս պտղոյն և զտասանորդացն՝ որ
՚ի նախնեացն կարգեալ սովորութիւն էր տալ յեկեղե-
ցին, վասն այնորիկ հանէր հրաման ընդ աշխարհ՝ զի
մի՛ ոք տացէ:

Եւ յաւուրսն Ներսիսի հայրապետին ոչ ոք իշ-
խէր ՚ի նմանէ հանել կամ թողուլ զկին իւր զամու-
սին յամէրկիրն Հայոց, զոր միանգամ քօղով կամ
պսակաւ հարսանեացն օրհնութիւնք առեալ էր. և ոչ
այլ առնել միւսանգամ իշխէր ոք համարձակել: Ե-
թէ յանկարծ մեռանէր ոք, ոչ ոք իշխէր անյուսութիւ
արտաքոյ կարգի կանոնի եկեղեցւոյ լալ զմեռեալն.
և ոչ կոծ ոք դնէր կամ աշխարանս մեռելոյն, և ոչ
ձայնս ոք արկանէր ՚ի վերայ մեռելոյն յաւուրսն Ներ-
սիսի. այլ լոկ արտասուօք և ըստ արժանի սաղմո-
սիւք և օրհնութիւք, կանթեղօք և մոմեղինօք լուցե-
լովք զմեռեալն յուղարկէին: Իսկ յետ մահուան
նոր այնուհետեւ ամ մարդ առնէր հրաման համարձա-
կութիւք ՚ի թագաւորէն, թողուլ զկանայս զամուսինս
իւրեանց. էր զի մի այր տասն կին փոխէր. և առ
հասարակ յանօրէնութի դարձան միանգամայն: Ապա
յետ մահուան Ներսիսի յորժամ զմեռեալն լայէին,
փողովք և փանդռօք և ձնօք զկոծն պարուցն կա-
քաւելով, զտիգսն հատեալս, զերեսս պատառեալս,
արք և կանայք պղծութիւք ձիւաղութիւք պարուք դէմ
ընդ դէմ հարկանելով, և կամ ասիս [1] հարկանելով,
զմեռեալն յուղարկէին:

Իսկ յաւուրսն Ներսիսի զաղքատս քնաւ ամենևին
՚ի մոյր ոչ տեսանէր ընդ ամ սահմանսն Հայոց. այլ
անդէն ՚ի հանգստեան նոցին, այս ինքն յօրկանոցսն,
ամ մարդիկ տանէին զամ պիտոյս նոցա. անդէն իսկ
անկարօտ յամ ուժեքէ լցեալ էին: Իսկ յետ մահուն

1 ՚ի ջրոյ օրինակս կամ ասխ. յօրինակի միւսմ կամ ծախ. մեզ այս-
պէս ուղղել պատշաճ դատեցաւ:

քահանայապետին Թէ առնէր որ հանգիստ աղքատացն, մեծ պատիժս կրէր ի Թագաւորէն։

Իսկ յաւուրսն Կերսիսի ընդ ամ երկրին Հայոց կարգք պաշտամանն եկեղեցւոյն մեծապէս պայծառացեալ էր, և բազմութիւն սրբոց պաշտօնէիցն կանոնեցին։ Նա յիշատակ սրբոց վկայից յաւուրս նոր յամ տեղիս Հայոց մեծախումբ ժողովրդիք[1] հանապազ պայծառանային, և պատիւ հարցն եպիսկոպոսաց յամ գաւառս Հայոց յաճախէր ըստ արժանի իւրեանց։ Եւ կարգք վանականաց և ի շէնս և յանշէնս առ հասարակ ծաղկեալ։ Ալ ամ եղծեալ ապականեալ խանգարեցաւ յետ մահուանն նր։

Իսկ յաւուրս քահանայապետուն Կերսիսի ամ գաւառք Հայոց յամ ի շէնս և ի գեղս յամ կողմանս Հայոց առ հասարակ ի հրամանէ քահանայապետին էին շինեալ օտարատունք հիւանդանոցք օտարանոցք։ Եւ ամ մարդիկք երկրին Հայոց էին պրտղաբերք և ողորմածք առ ի յիշել զաղքատս և զնեղեալս զտառապեալս և զօտարս, զհարստահարս, զիրըշ դէհս, զպանդուխտս, զհիւրս զանցաւորս։ Եւ էր նոցա կարգեալ վերակացուս սրբոյն Կերսիսի, և դարմանս ի տեղեաց տեղեաց։ Իսկ յետ մահու նր աւերեաց զայն ամ Թագաւորն Պապ, և անարգեաց զպատիւ եկեղեցւոյ։ Եւ բազում լինչ կարգ և կանոնաց ուղղութիւն յօրինուածոյ՝ զոր եդ հայրապետն Կերսէս, և անցեալ դարձեալ ի մոռացօնս զամ կարգեալն տապալեր։ Յետ նր ելին յաշխարհիս բազում գաւառք Հայոց և բազում մարդիկ ի հնութիւն դիւապաշտութիւն դարձան, և ընդ բազում տեղիս Հայոց կուռս կանգնեցին ի համարձակութիւն Թագաւորին Պապայ։ զի ոչ գոյր յանդիմանիչ, և ոչ ոք էր այն՝ յորմէ խիթային։ զինչ և կամէին գործել, համարձակութիւն գործէին։ բազումք պատկերս կանգնեալ, երկիր պագանէին։

Նա հատ ևս յարքունիս Պապ Թագաւոր զհող եկեղեցւոյն, զոր տուեալ էր Թագաւորին Տրդատայ առ մեծաւն Գրիգորիս քահանայապետիս ի սպաս

1 Յամ օրինակս ժողվ։

պաշտամանն Եկեղեցւոյն ընդ ամէ երկիրն Հայոց: Ո՛չ ի յեւթն հողոյն զհինգն հատանէր յարքունիս, և զերկուսն միայն Թոզոյր երկուս հողս: Այլ ըստ հողոյն Թոզոյր երկուս երկուս առ գետղ մի երեց և սարկաւագ, և զայն՝ ի սպասուս կացուցանէր յիւր՝ ի ծաւայուքէ զեղջերս և զորդիս երիցանցն և սարկաւագացն: Ո՛չ ի նմա այսպէս Թուեցաւ՝ եթէ զայն չար ինչ կամացն հեծուկս Աերսխի առնիցէ՝ ի կենդանեացս առ մեռեալս, վասն Թշնամութեն՝ զոր ունէր ընդ նմա: Այլ զայն ոչ ածէր զմտաւ՝ Թէ զանձն կորուսանէ: Այլ՝ ի ժամանակին նուաղելին՝ ամ կարգք Եկեղեցւոյ պաշտամանն սպասուցն յամենայն երկիրն Հայոց:

ԳԼՈՒԽ ԼԲ.

Ցաղագս Թագաւորին Պապայ Թէ որպէս խոտորեցաւն՝ ի Թագաւորէն Ցունաց, և կամ որպէս սպանաւ՝ ի զօրացն Ցունաց:

Այլ ընդ ելանել զմիտս իւր Թագաւորն Պապ և խոտորեաց զսիրտ իւր՝ ի Թագաւորէն Ցունաց, և կամեցաւ խառնել զսէր իւր և առնել միաբանութիւն ընդ Թագաւորին Պարսից: Այլ սկսաւ Թիկունս իւր առնել զարքային Պարսից, և արձակել անդրէն հրեշտակս յաղագս միաբանութեան: Այլ առաքէր հրեշտակս առ Թագաւորն Ցունաց, եթէ կեսարիաւ հետ՝ և տամն քաղաք մեր լեալ է, արդ՝ ի քաց տուր. և զԱւռհա քաղաք շինեալ է նախնեացն մերոց. արդ եթէ ոչ կամիս խանգաղ ինչ առնել, տուր՝ ի քաց. ապա թէ ոչ, կռուիմք մեծաւ պատերազմաւ: Այլ Աուշեղ և ամ իշխանքն Հայոց շատ եղին՝ ի մտի արքային, զի մի քակեսցէ զուխտ յերկրէն Թագաւորութենէն Ցունաց. և ոչ անսաց նոցա, և յայտնեաց զԹշնամութիւն իւր՝ զոր ունէր ընդ Թագաւորին Ցունաց:

Այլ իշխանքն Ցունաց և զօրքն նոցին տակաւին էին յերկրին Հայոց. և անուն իշխանացն՝ միումն

Տերենտ, միւսումն Աշէ։ Եւ յղեաց դեսպան մի գաղտուկ Թագաւորն Յունաց առ իշխանն զօրացն իւրոց՝ որ էին յերկրին Հայոց, և հրաման տայր ըսպանանել զԹագաւորն Հայոց զՊապ։ Եւ եղև իբրև ընկալան զայս հրաման՝ Թագաւորէն Յունաց իշխանքն իւր՝ որ էին ի Հայոց երկրին, սպասէին մահու ի դէպ՝ սպանանել զԹագաւորն Հայոց զՊապ։ Եւ եղև ի դիպան ժամանակի իբրև գիտացին Տէրենտն և Աշէն զօրավարքն զօրացն Յունաց՝ Թէ միայն է Թագաւորն Հայոց Պապ, և ամ մեծամեծքն և զօրքն Հայոց չէին անդ, և էր Թագաւորն Հայոց Պապ բանակեալ ի դաշտին ի Բագրեւանդ գաւառի ի Լսու անուն տեղւոյն, և բանակ զօրացն Յունաց բանակեալ էր անդէն մօտ առ բանակին Հայոց արքային, ապա զօրավարն Յունաց Հայ մեծապէս գործեալ՝ յրնթրիս հրաւիրեալ կոչեցին զմեծ Թագաւորն Հայոց զՊապ մեծապէս ըստ արժանաւորութեանն նորա, որպէս օրէնն էր զայր Թագաւոր ի Հայ մեծ կոչել. և առնէին կազմութեանն պատրաստութեան։

Եւ եկեալ Թագաւորն Պապ յրնթրիս, մտեալ բազմեցաւ յուտել և յըմպել։ Եւ իբրև մտաներ արքայն ի խորանն Տերենտի զօրավարին Յունաց, և լեգէոն սպարակիր հետևակն վահան ի ձեռն, սակուր զգօտւոյ, շուրջ ի ներքոյ զորմովք խորանին պատեալ պսակէին. սոյնպէս և արտաքոյ կազմէին ի ներքոյ կուռ վառեալք, և ի վերոյ հանդերձք զգեցեալք պատրաստէին։ Իսկ Թագաւորն Պապ համբերը ի միտս իւր Թէ ի պատիւ ինչ նորա զայն առնիցեն։ Եւ մինչ դեռ յրնթրիսն[1] ուտէր, սակրաւոր զօրքն ի Թիկանց կուսէ նիր կարգեալք պսակեալք կային շուրջ զնովաւ յայմ կուսէ։ Իբրև ընդ գինիս մտին, որպէս զառաջին ուրախութեանն նուագն մատուցին արքային Պապայ, և առ հասարակ Թմբկահարք և սրընգահարք քնարահարք և փողահարք իւրաքանչիւր արուեստօք պէսպէս ձայնիւք բարբառեցան։ Եւ վահանաւոր լեգէոնին հրաման ետուն. և մինչ դեռ Թագաւորն Պապ զուրախութեանն գինին ու

1 Ցերկուս օրինակս ընդրիսն ասեն։

նէը ՚ի մատունս իւր, և նայէը ընդ պէսպէս ամբոխս գուսանացն, ահեակ ձեռամբն յարմուկն՝ յոր յե- ցեալ բազմեալ էր՝ ունէը տաշտ ոսկի ՚ի մատունս իւր, իսկ աջ ձեռնն եդեալ էր ՚ի դաստապան նրանին՝ զոր կապեալն էր յաջոյ ազդէրն իւրում, և մինչ դեռ բե- րանն ՚ի բաժակին էր յըմպելն, և աչքն յառաջ կոյս պշուցեալ հայէը ընդ պէսպէս ամբոխս գուսա- նացն, հրամանն լինէր ակնարկելով զօրացն Յունաց: Եւ լեգէոն սակրաւորքն երկու ՚ի թիկանց կուսէ կային ՚ի սպասու ոսկիկիմբէ վահանաքն յանկարծօրէն կից ՚ի վեր առեալ զսակուրսն, զարկանէին Թագա- ւորին Պապայ. մին կշնու զուշն հարկանէր սակրաւն, և միւսն և սակրաւորն զաջ Թաթ ձեռինն՝ որ կայր ՚ի վերոյ դաստապանի նրանին՝ հարկանէր, կտրէր և ՚ի բաց ընդ ենոյր: Ընդէն ՚ի բերանս տապալէր Թա- գաւորն Պապ. և գլխին տաշտիւն և արիւնն պա- րանոցին նովաւ հանդերձ ՚ի վերոյ բաժակալ սկը- տեղն անկանէր առ հասարակ. և անդէն սատակէր Թագաւորն Պապ: Ընդ շփոթելոյ տաճարին խռո- վութեան՝ Գնել տէր գաւառին Ընձեւացեաց յոտն կացեալ յիւրմէ բազմականէն, հանեալ զիւր սու- սերն՝ հարկանէր զմի ՚ի լեգէոնաց անդի սպանանէր, յայնցանէ՝ որ հարին զԹագաւորն: Ապա Տերենդ զօ- բավարին Յունաց զիւր սուսերն հանեալ ածէր, տա- րակաց ՚ի գլխոյն Գնելոյ զսկաւառակն գլխոյն ՚ի վե- րոյ աչացն ՚ի բաց ընդ ենոյր: Եւ այլ ինչ ոք ոչ կարաց յանդգնել ասել ինչ ընդ նմա և ոչ ինչ:

ԳԼՈՒԽ ԼԴ.

Յաղագս որ ինչ խորհեցան ՚ի յետոյ իշխանքն Հայոց, ապա անկին կա- ցին լուռ:

Եւ ժողովեցան եկին առ իշխանքն Հայոց մեծա- մեծք ՚ի մի վայր ՚ի միասին, և Ռուշեղ սպարապետն, և Հայր մարզպետ, և առ իշխանքն ասէին: Ո՞ինչ արասցուք կամ զի՞նչ գործեսցուք, խնդրեսցո՞ւք զվրէժ

Թագաւորին մերոյ, Թէ ոչ։ Եւ ապա հաստատեցաւ այս բան ՚ի խորհրդեանն, և ասեն։ Ոչ կարեմք հեթանոսաց ՚ի պարսկաց ՚ի ծառայութենէ մտանել, և Թշնամի առնել զԹագաւորն Յունաց. և ոչ զերկուսեան Թշնամի առնել, և ոչ առանց միոյ Թիկանց կարեմք կեալ։ Ապա եկաց այս բան ՚ի խորհրդին, Թէ զինչ եղիւ՝ ահա եղիւ, Թող ծառայեսցուք Թագաւորին Յունաց. կացցուք ՚ի հնազանդութենէ իշխանութենէ Թագաւորութեն Յունաց. զիարդ և կամք իցեն Թագաւորութենէ Յունաց, արասցեն մեզ։ Եւ ոչ ինչ արկին ՚ի միտ, կամ վրէժ խնդրել, կամ այլ ազգ ինչ իրս առնել. այլ անցին կացին լուռ։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Յաղագս Թագաւորելոյն Վարազտատայ երկրին Հայոց յետ Պապայ։

Եւ եղև յետ մահուն Պապայ Թագաւորին Հայոց, Թագաւորեցոյց Թագաւորն Յունաց զՎարազդատ որմն ՚ինմին տոհմէն արշակունի ՚ի վերայ աշխարհին Հայոց։ Եկն բազում շքով եմուտ յերկիրն Հայոց, և Թագաւորեաց յերկրին Հայոց։ Եւ էր նա մանուկ յաւուրց, լի արուեստիւ, կորովի ձեռօք, քաջ սրտիւ, և ՚ի մտաց Թեթեւ, մանգաբարոյ տղայահանճար մանկամիտ։ Հայոց սակայն իբրև տեսին զնա, ժողովեցան առ նա ամ ազգք Հայոց մեծամեծք նախարարք, և կամեցեալ խնդացին զԹագաւորեալն նորա ՚ի վերայ իւրեանց։

Եւ սպարապետն Հայոց Մուշեղ առաջնորդէր Հայոց. և զգուշանայր զսահմանսն Հայոց, որպէս սովոր էր կարգել զաշխարհ մեծապէս. և խրատ բաբեաց Թագաւորին մանկանն Վարազդատայ մատուցանել։ Եւ հոգայր հանապազ վասն Թագաւորութեանն աշխարհին Հայոց, և զիարդ կամ որպէս շէն լինել մարթասցէ. և հանապազ երկս արկանէր բարեխոհուրդն, զի հաստատուն կալ կարասցէ Թագաւորութիւնն։ Խորհէր և ընդ իշխանսն Յունաց, և նո-

քօք ընդ կայսերն, թէ պարտ է նոցա քաղաք մի շինել յերկիրն Հայոց. 'ի մի մի գաւառան, որ մին մի քաղաքս, որ երկուս երկուս ամուր պարսպաւորս զբանիսոտ հաստատել ընդ ամ երկիրն Հայոց. մինչև 'ի Կանճակ սահման երկիրն, որ Պարսից կուսէ էր, Հայոց սահման էր. և զամ ազատան Հայոց կայսերական Թօշակօքն զինուորել. սոյնպէս և զօրաց երկրին Հայոց, զի այսպէս ամ զգուշութեամբ լեցի առ 'ի Թշնամեաց իւրեանց 'ի զօրացն Պարսից: Եւ Թագաւորն Յունաց յանձին ունէր մեծաւ խնդութեամբ առնել զայս. զի այսու աւելնայիւ աշխարհն հաստատուն լիցի և անշարժ 'ի նմանէն, զի մի կարասցէ Թագաւորն Պարսից յիւր վտարել զաշխարհն Հայոց:

ԳԼՈՒԽ ԼԵ.

Յաղագս Թէ որպէս 'ի բանս չարախորհուրդս և անմիտ մարդկան եւ լեալ Թագաւորն Հայոց Վարազդատ, զզօրավարն Հայոց Մուշեղ սպանանէր:

Այլ իբրև տեսանէին զԹագաւորն Հայոց Վարազդատ մեծ նախարարքն Հայոց՝ Թէ մանուկ բանս երթուկ է, զչար 'ի բարոյ որոշել չգիտէ, սկսան այնուհետև ըստ կամաց իւրեանց վարել զԹագաւորն. որպէս և կամէին, բանիւք իւրեանց տանէին և բերէին զնա: Կայ առաւել ունէին դնէր մանկտոյն՝ որ 'ի տիոց հասակակիցք էին նորա, առաւել քան զծերոցն խմաստնոց՝ որք կարող էին զօգտակար խրատն մատուցանել նմա:

Այլ Նահապետն էր ազգին Վահրուհեաց տոհմին, դայեակ մնուցիչ Թագաւորին Վարազդատայ, կամեցաւ նա զգործ զօրավարութեանն սպարապետութեանն Մուշեղայ լինքն յափշտակել 'ի նմանէ: Վ՚ այսորիկ սկսաւ քսիս մատուցանել զնմա նէն առ Թագաւորին Վարազդատայ առ իւրում սանուն, և ասել՝ Թէ 'ի սկզբան 'ի նախնեացն հետէ զձեր արշակունեաց տոհմին մանիկոնեից է կորու-

սեալ, զի հակառակորդք ձեր դոքա լեալ են ի քեզ անտի. և համակ զերկիրս Հայոց դոցա է կերեալ, մանաւանդ Աուշեղի. մանաւանդ զի այր չար է և նենգաւոր։ Օ՛ի սիրելի է Թէնամեաց ձերոց, և ատելի սիրելեաց ձերոց. և համակ ընդ ձեզ նենգաւոր է գնացեալ, երկմտութեբ և դժխեմութեբ։ Օ՛ի ոչ այն Աուշեղ է, որ ի Թագաւորութեան ժամանակ Պապայ ի պատերազմունսն Պարսից քանիցս անգամ ձեռնահաս եղև սպանանել զՇապուհ արքայն Պարսից, և ոչ եսպան, այլ արձակեաց զթշնամին. և երբեմն զկնայս Շապհոյ Թագաւորին ի բուռն էարկ, և խնամով զթով ժանուարօք արձակեաց զնոսա զհետ Շապհոյ։ Ո՛չ այդ այն Աուշեղն է, որ զԱուռնայր արքայ Աղուանից ի բուռն էարկ, և սպանանել ոչ կամեցաւ, այլ արձակեաց զթշնամին։ Ո՛չ այդ այն Աուշեղն է, զի զարքայն Պապ հրամայեաւ դոցա և դոցին խորհրդովք զօրավարքն Յունաց սպանին. զի դա ոխացոյց և դրգռեաց զարքայն Յունաց ի վերայ Թագաւորին Պապայ, մինչև ետ սպանանել։ Աւրէ արժան է մեռանել ի ձեռաց քոց, և չէ պարտ կեալ դմա. այլ թէ ոչ աճապարեսցես, արքայ, այժմ զհայ երկիրս խորհի լնուլ քաղաքօք, և զօրանիստ առնէ աստ քնակութեբ զօրացն Յունաց։ Եւ այնուհետեւ կամ Թագաւորն Յունաց հանէ ի քէն զթագաւորութիս Հայոց, կամ այս Աուշեղ սպանանէ, և ինքն Թագաւորէ։ Եւ այսպիսի բանիւք գաղտնի հանապազ զթագաւորն գրգռէին, մինչև հաւանեցաւ ըստ կամաց նոցա զսպարապետն զզօրավարն Հայոց սպանանել։

Այս խորհուրդ արարին, թէ որպէս ըմբռնել կարացեն զնա. քանզի մեծապէս երկնչէին ի նմանէն, զի զգայ, ասեն, մեծ պատերազմ առնէ. և ոչ ոք կարէ զդէմ քաջութեբ նորա ունել, բայց հնարիւք մեքենաւորութեբ ինչ լինիցի հնար։ Այսպէս սպասէին նմա։ Եւ եղև յաւուր միոջ հրամանեաւ Ա՛արազատ արքայ Հայոց ընթրիս մեծ գործել և մեծ պատրաստութեբ առնել. և կոչել հրամայեաց յընթրիսն զՇամ աւագս պատուականս և զմեծամեծս, և զզօրավարն Աուշեղ։ Պատրաստեաց Ա՛արազատ

ասս ընտիրս հղօրս, զօրեղք, զի կալմ կայեցն գոր-
ծոյն, հարկանել յանկարծօրէն յանպատրաստից յե-
ղակարծումն ժամու ՚ի վերայ Մուշեղի։ Օ՚նոսա
քաջ ուրախ առնէր մեծապէս, և շատ գինի տայր
ըմպել, և բաղում առնէր զբօսումն ուրախութեան։
Ա՚ղբայն Ա արազդատ տայր նշանս յառաջագոյն այ-
նոցիկ, զոր՝ էր սպանօղն պատրաստեալ, եթէ յոր-
ժամ գիտիցես՝ թէ քաջ արբեալ իցէ, և զմտաք զա-
ռանցեալ յարբեցութենէ սպարապետն Մուշեղ, ես
յարուցեալ իբրև ՚ի ձեմիչն երթալոյ պատճառաւ,
և դուք պատեսջիք զնովաւ։ Եւ եղև իբրև անցին
զառանցին ՚ի գինւոյն՝ ըստ չափ անցանելով, և թա-
գաւորն Ա արազդատ պահէր զանձն ՚ի գինւոյն. իբ-
րև գիտաց Ա արազդատ՝ թէ արդ յարբեցութենէ
մտաց լինչ չգիտաց՝, ինքն յարուցեալ իբրև յատա-
բահէ զանց առնելոյ պատճառաւ, և աւագանին
ամ բազմականացն յոտն կացին առ հասարակ, իբ-
րև նմա պատիւ լինչ առնել։ Եւ յանկարծ արքն, ո-
րոց էր տուեալ հրաման, երկոտասան այր կէց զոգ
գինի կողմանէ գնմանէ բուռն հարկանէին, վեց այր
՚ի մի բազուկն Մուշեղի, և վեց այր ՚ի միւս բազուկն։
Եւ ընդ ոտն կալ Թագաւորին, նայեցեալ ընդ նա՝
եթէ այս ընդդէր է. և Թագաւորին պատասխանի
տուեալ, ասէ. Երթ առ Պապ արքայ, հարց և տես՝
թէ ընդդէր է այդ։ Եւ Թագաւորն ՚ի դուրս կոյս
գնացեալ ելանէր, և ասէ Մուշեղ. ՚Ի վերայ բա-
զում խմոց վաստակոցն արեան և քրտան, և սլաքօքն
գբիերան ջնջելոյ, այս հատուցումն եղև ինձ։ Կայց
իբրև եհաս ինձ մահս, թէ ՚ի վերայ ձիոյ դիպեալ
էր... Օ՚այս միայն բանս ժամանեաց ասել, և այլ
ոչ ինչ ոչ։ Եւ անդէն Կատ Ա ահռաւունի, գայեակին
արքային Ա արազդատայ, զնորանն՝ զոր յիւրում ազ-
գէրն ունէր՝ հանեալ, անցոյց ընդ փողս զօրավարին
Մուշեղի. և անդէն ՚ի բաց եհատ զգլուխ նորա։
Եւ բարձին գնա, և տարան զմարմին նր՝ ՚ի գեւղն իւր։

1 Յամ օրինակս Վաղ ինչ գիան։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Յաղագս անմտութեան կարծեաց ընդանեացն Մուշեղի, և այլ մարդկանն։

Այլ եղև իբրև տարան զմարմինն սպարապետին Մուշեղի ՚ի տուն իւր առ ընտանիս իւր, ոչ հաւաստային ընդանիք նորա մահուն նորա, թէպէտ և տեսանէին զդէմս նորուն զատ ՚ի մարմնոյն անտի։ Ո՛վ ի սոսկին. Վասն որոյ յանթիւ ձակատ մտեալ էր, և վէրք երեսաց չէր առեալ. ոչ նեղ մի դիպեցաւ երեսաց, և ոչ այլոց զինու խոցեալ է զդա։ Իսկ կէսք յառնելոյ առն ունէին նմա. մինչև զդէմսին անդէն ՚ի կոձեղն կարեալ կցեցին, և հանին եդին ՚ի տանիսն աշտարակ կի միոյ, ասէին՝ թէ վասն զի այր քաջ էր, Ո՛չ ուրեք իջանեն և յարուցանեն զդա։ Պահապան կային, և առն ունէին յառնելոյ մինչև ՚ի նեղեցաւ մարմինն։ Ա՛յս պա իջուցին յաշտարակէ անտի, և լացին Թաղեցին զնա որպէս օրէն էր։

ԳԼՈՒԽ ԼԷ.

Յաղագս գալոյն Մանուէլի ՚ի գերութէ Պարսից, և խնդրելոյ զվրէժն Մուշեղի, և հալածելոյ զթագաւորն Վարազդատ յերկրէն Հայոց, և յինքն ունելոյ զերկիրն Հայոց։

Այս կացոյց Թագաւորն Վարազդատ ՚ի գործ զօրաւարութեանն սպարապետութեանն զԱտատնահապետն Վահառունեաց տոհմին, որ էր իւր դայեակ, քանզի արկու քսուն սպանօղն Մուշեղի։ Այլ էր նա սպարապետ փոխանակ նորա զօրավար ամ Հայոց։ Այլ ազգին Մամիկոնեան տոհմին տանուտէրն Նահապետ կացոյց Թագաւորն, Վ՛աչէ անուն ՚ի նմին տոհմէ։

Յայնմ ժամանակի դարձան ՚ի գերութենէն եկին ՚ի Պարսից, զոր տարեալ էր Տ՛ապհոյ արքայն, զոք երկու եղբարք ՚ի մամիկոնեան տոհմէն. անուն միում

Մանուէլ, և անուն երկրորդին Կոմն[1]։ Վասնզի զայն ժամանակաւ Թագաւորին Պարսից սասանականին տուեալ էր պատերազմ ընդ մեծ Թագաւորին Վռուշանայ ընդ արշակունոյն, որ նստէր ի Տաղտ քաղաքին։ Եւ իբրև երթային զօրքն Պարսից ի Վռուշանացն պատերազմին, ապա և զմարդիկ գերուքեն որ ի Հայոցն էին Թագաւորին Պարսից՝ յղէր ի պատերազմ ընդ իւր զօրսն. և Մանուէլ այս երթայր ընդ նոսա հանդերձ եղբարբն իւրով Կոմնիւ։ Եւ իբրև եղեն խառնորդք երկոցունց գնդացն ընդ միմեանս, ապա ի պարտուելն մատնեցան զօրքն Պարսից յեբեսաց զօրացն Վռուշանայ. դարձան ի փախուստ անհնարին հարուածովք, հասին ի վերայ զօրացն Պարսից. զի ոչ մի ի նոցանէն ոչ ապրեցուցանէին ի զօրացն Պարսից, բանբեր անգամ ոչ ապրեր, բայց Մանուէլ որդի Ներսեհայ ի մամիկոնեան ի տոհմէն, հանդերձ եղբարբն իւրով Կոմնիւ, բազում քաջութիւն կատարեալ ի նմին ձակատուն, սակայն հեծոտս ապրեին։ Եւ դայլն յամ զօրացն Պարսից առքս միայն հասանէին առ Թագաւորն Պարսից ողջ ապրեալք, և բազում քաջութիւն կատարեալ։

Սակայն Թագաւորին Պարսից բազում տրտմութիւնք յաղագս իւրոց զօրացն կատարածոյն. սակայն և զմնուս զայրացեալ զձակատէր, զի զնոսա միայն տեսանէր ողջ եկեալ յամ զօրացն իւրոց։ Յասուցեալ ընդ նոսա, այսպէս արարեալ, հալածեաց յիւրոց սահմանացն. արձակեաց զնոսա յերկիրն իւրեանց։ Եւ գնացեալք գայլն դէմ յանդիման յիւրեանց երկիրն արարեալ։ Եւ էին հետիոտք երկոքին եղբարքն. և էին երկոքեան մեծք անհեղեղք, երկոքեան անձնեայք որպէս սկայազունք։ Միոչ դեռ գայլն ի ձեռնապարհի, ոչ կարէր Մանուէլն գնալ, զի ոտիքն ցաւած էր. ապա Կոմն եղբայրն իւր ըստանձնեալ առեալ բառնայր, և տանն տանն խրատսկս բերէր ըստ անձին զայնչափ այրն զանհեղեղ զանարի. էին եբեր յերկիրս Հայոց։ Եւ եղև իբրև էկն եհաս յերկիրն Հայոց Մանուէլ եղբարբն իւրով Կոմնիւ հանդերձ,

1 Յամ օրինակս Կն. ուղղեցաք ըստ յաջորդացն։

իբրև ետես զնա Ա աչէն՝ որ յառաջն էր լեալ նա-
հապետ, մինչ չև եկեալ էր ՚ի նա՝ ետ ցնա զպատիւ
իշխանութեն, զոր առեալ էր ՚ի Թագաւորէն Ա ա-
րազատայ։ Վասնզի նա էր երէց յազգէն, և Ա՚ա-
նուէնն ունէր զնահապետութե ազգին տանուտէրութե
պատուին. և Ա աչէն լինէր երկրորդ։

Իսկ յորժամ Ե՚հաս եկաց Ա՚անուէնն ՚ի փառս տէ-
րութե իւրոյ, նախ առանց Հրամանի Թագաւորին
Ա՚արազատայ յինքն յափշտակեաց զգօրավարութեն
զսպարապետութեին. զի այն ինչ որ իւրոց նախնեացն
՚ի ձեռն կալեալ էր ՚ի սկզբանէ, զոր արքայն Ա՚արազ-
պատ չնորհ առներ իւրում դայեկին Խատայ, զայն
Ա՚անուէն յինքն հանեալ ունէր զիշխանութին։ Ընդ
յետ այսորիկ, պատգամ յղեր սպարապետն Հայոց
Ա՚անուէն առ Թագաւորն Ա՚արազատ, և ասէր՝
Թէ փոխանակ ՚ամ ազգին մերոյ վաստակոցն, զոր ՚ի
նախնեացն ՚ի հնոց ժամանակաց հետէ միամտութէ
առ ձեզ արշակունիս վաստակեալ եմք, և եղեալ
զանձինս մեր ՚ի վերայ ձեր, կեցեալ և մեռեալ եմք
՚ի վերայ ձեր, ՚ամ նախնիքն մեր առաջինքն անկան
՚ի պատերազմունս ՚ի վերայ ձեր, Ա՚ասակ հայր Ա՚ու-
շեղն կորեաւ ՚ի վերայ Ա՚րշակայ արքայի, և մեք հա-
նապազ վաստակեալ և աշխատեալ եմք ՚ի վերայ Թա-
գաւորութե ազգիդ ձերոյ, և փոխանակ կեանս առ-
նելոյ ընդ վաստակոցն, արդ որք ՚ի Թշնամեացն մե-
ռան, որք մնացին՝ զայն դուք արշակունիքդ կոտորե-
ցիք։ Ա՚րդ Ա՚ուշեղ այր քաջ եղբայր իմ, որ ՚ի վե-
րայ ձեր մաշեաց զանձն իւր ՚ի մանկութենէ իւրմէ,
վանեաց կոտորեաց զթշնամիս ձեր, և ոչ կարացին
Թշնամիքն սպանանել, դուս կալար ՚ի բազմականի խեղ
գեցեր զնա։ Ա՚յս դուս չես իսկ արշակունի, այլ ՚ի
պոռնկութենէ եղեալ ես որդի. վասն այդորիկ ոչ
ծանեար զվաստակաւորսն արշակունեաց։ Ա՚յս մեք
չեմք իսկ լեալ ձեր ծառայք, այլ ընկերք ձեր և ՚ի
վերոյ քան զձեզ. զի մեր նախնիքն լեալ էին Թագա-
ւորք աշխարհին Ա՚ենոց, և վասն եղբարց իւրեանց
գրգռութեանն, զի արիւն մեծ անկեալ է ՚ի վերայ,
վասն այնր եմք գնացեալք. և վասն բարւոյ հանգստի
գտանելոյ՝ եկեալ դադարեալ եմք։ Ա՚յսաչէն Թագա-

ւոլքն արշակունիք, ոլք գիտէին զմեզ ոմն էաք կամ ուստի՛ էաք. այլ զի դու քանզի չես արշակունի, գնա յաշխարհէս, և մի՛ մեռանիր ՚ի ձեռաց իմոց։

Ոսկ Վ արազդատ Թագաւորն պատգամ յղեր պատսխանոյն առ զօրավարն Վաղուէլ և ասէր. Զի քանզի չեմ արշակունի, զի եղի զթագ նախնեաց իմոց արշակունեացն, և կալայ զաշխարհ առաջնոց իմոց, և խնդրեցի զվրէժ հօրեղբօրն իմոյ Պապայ ՚ի չարաչորձ յեղբօրէն քումմէ ՚ի Վուշեղայ, բայց զի դու չես յաշխարհէս յայսմանէ, զի քեզէն իսկ ասացեր բան յերկրէն յաշխարհէն Ձենաց եմք լեալք Թագաւորք ՚ի բնուէ, և այսր պանդուխտք եմք եկեալք, արդ ըստ օրինակի եղբօրն քո մի՛ մեռանիր։ Օ՛ի իմ, առ բարերարուէ իմոյ, արձակեաւ լեցի զքէզ. երթ գնա յերկիրն Ձենաց, անդ կեաց, և անդէն Թագաւորեսջիր յերկրին քումմ։ Այսպա Թէ ոչ կամիցիս գնալ, մեռանիս ՚ի ձեռաց իմոց որպէս և Վուշեղն մեռաւ։

Ոսկ յորժամ բազում անգամ երթեալք եկեալք պատգամաւորք՝ բազում խոստացոյն քան զխոստացոյն բանս կսկծանաց առ միաեանս յղէին, և չէտ այսու ինչ ժամադիր միաեանց լինէին՝ պատերազմաւ զմիմեանս տեսանել։ Ոսկ ՚ի հասեալ ՚ի ժամադիր ժամն, եկեալ տային ընդ միմեանս պատերազմ։ Զի Թագաւորն Վ արազդատ առնոյր զլօրն իւրոյ բանակէին, և գնայր հասանէր ՚ի տեղի Ձակատուն, վառեալ կազմեալ պատրաստեալ ՚ի պատերազմ. սոյնպէս և սա պատրաստագոյն քան զնոսա։ Զի Վանուէլ սպարապետն հասանէր իւրով գնդաւն ՚ի նոյն տեղի. և ՚ի գաշտին Արծոյ լինէին խառնուրդք երկոցունց գնդացն ընդ միմեանս բախելոցն։

Թագաւորն Վ արազդատ և սպարապետն Վանուէլ զնիզակս առեալ, միմեանց յարձակեալ ախոյեանք ելանէին։ Յերև զաչս ՚ի վեր ամբառնայր արքայն Վ արազդատ, և նայէր ընդ գաղն իւր և տեսանէր զսպարապետն Վանուէլն, ՚ի մեծութենէն հասակին և ՚ի չքեղութենէ անձինն, և յամրակուռ յերկաթապատ յոտիցն մինչև ցգլուխն առ հասարակ յանվթար զինեալն, ՚ի հաստատեալ յանձնէն, և ՚ի

հաստատուն երիվարին և յասպազին [1] վառելոյն յանւշարժ սպառազինին համարեցաւ կշռեաց գնա ի միտս իւր իբրև զլեառն մի բարձր զանմատոյց : Ակայն ա ծեալ զմահ ընդ միտս , յարձակեցաւ . զի այնուհետև չուներ ակն անձինն ապրելոյ : Ակայն զի մանուկ մարդ էր արքայն Արազդատ , իբրև ետես գնա այնպէս՝ զի չէր ինչ կռուոյ տեղեակ , էած զմտաւ Թէ ի զրահն ոչ ինչ կարիցէ նիզակ գործել , առ ձեռաց կորովուԹին գնիզակն ընդ քերան արկանէր զօրավարին Անուէլի : Իսկ Անուէլ բռուն հարկանէր գնիզակին . հանեաւ ի նմանէ գնիզակատէգն՝ ընդ իւր Թուրծն հանէր , և բազում զիւր Թափէր զատամունսն , գնիզակն յինքն հանէր յարքայէն :

Եւ արքայն Արազդատ ի փախուստ դառնայր յերեսաց զօրավարին Անուէլի . և անգէն Անուէլ զատ նուել զտէգ նիզակին ի ձեռինն կալեալ , և նիզակահան ի կառափն մատուցեալ ծեծէր զարքայն Արազդատ . այնպէս տանէր իբրև աստարէզս չորս : Եւ անգէն որդիքն Անուէլի յարձակեցան մէն մի նիզակ ի ձեռն , Ահմայեակն և Աբտաշէսն , սպանանել զաղքայն : Ինքն իսկ Անուէլ աղաղակեր զկնի որդւոցն իւրոց , և ասէր . Ո՛չ մի լինիք տիրասպանութ : Եւ նոցա լուեալ զձայն հօրն , վաղվաղակի արագ արագ դառնային ի նմանէ . և ի պարտուէ մատնեցաւ այն օր գունդն արքունական առաջի մանուէլեան գնդին :

Ել ինչ այնուհետև սակաւ սպանեալք անկանէին ընդ երեսս դաշտին , բազում խոցք և խեղք վիրաւորք . և բազում նախարարք սատակեցան . բազում փախստեայք հալածականք լինէին : Ինչ դեռ գունդն մանուէլեան էին գկնի փախստէից , և գայր հասանէր Ահմազասպեան սեպուհ մ՝ ի մամիկոնեան տոհմէն , անցանէր առ անկեալսն գիակաւքն և առ խոց վիրաւորսքն պատերազմին . և ընդ նոսին ընկենեալ էր և գԱրեգին , տէր գաւառին ուրշտունեաց . բայց ողջ կայր , զի ոչ խոց էր և ոչ ինասեալ ինչ : Ա՛յս Արեգին փեսայ լեալ էր յառաջնորդին Ահմազասպեան , զքոյր նորին Ահմազասպուհի անուն ունէր

1 Յայմ օրինակս յասպազին :

կին : Եւ իբրեւ եկն Թագաւորն Շ ապուհ յերկիրն Հայոց , սա եթող զկինն իւր և փախեաւ : Իսկ տա րան զՀամազասպուհի յերկիրն Տոսպոց , ՚ի քաղաքն ՚ի Ա ան . հանեալ կախեցին զնա պարսիկքն զբարձր աշտարակացն՝ որ կայր ՚ի վերայ քարանձաւին , ՚ի կա խաղանի սպանին զնա :

Իսկ յայնմ աւուր իբրեւ անկեալ կայր այն Վա րդգին ՚ի մէջ անկեղջոյն , եկն Համազասպ անդր նո րոյն անցանել առ նոքօք : Ընդաղակեաց Վարդգինն , և ասէ . Ձեր Համազասպեան , և զիս տես . հրաման տուր նժոյգ մատուցանել , Թող հեծայց : Եւ ասէ ցնա Համազասպեան . Որ՞վ ես դու : Եւ ասէ . Ես եմ Վարդգին ուրշտունի : Եւ ետ հրաման Համա զասպեան վահանաւորացն , որ ընդ նմա էին , ասէ . Իջէք և դիք զվահանսդ ՚ի վերայ նորա , և պահեցէք : Եւ ինքն էանց . ապա իջին վահանաւորքն եդեալք զվահանն ՚ի վերայ , և կային պահելին ըստ հրամա նի տուեալոյն :

Ընդ այսոքիկ գայր Վանուն ոմն գամապետ սպարակրացն[1] զնդին մանուէլեան զօրացն . ետես զի իջեալ էին վահանաւորք ՚ի վերայ , և զՎարդգինն պահէին , եհարց ցնոսա՝ Թէ ո՞վ է այդ , և դուք հի՞մ իջեալ կայք յայդմ տեղւոջ : Ընդէն նոքա՝ Թէ սա Վարդգին ըռշտունեաց տէր է . և մեզ հրամայեաց Համազասպեան , իջանել պահել զսա : Եւ մեծաւ ցասմամբ զայրանալով ՚ի բարկութիւն մեծ զորքերն Վանունն , և ասէր . Ընդ ուրեմն վերատին կամի Համազասպեան զսա իւր փեսայ առնել . և զՀամա զասպուհի զքոյր իւր տալ սմա կնութիւն . վասն այսո րիկ անխոչեաց ՚ի դա , պահել հրամայեր : Եւ ան դէն ոտն ածեալ էջ ՚ի ձիոյն , եհան զթուրն , մա տուցեալ ՚ի նա՝ պատառ պատառ կոտորեալ , անդէն յրեալ սատակեաց զնա :

Իսկ՝ այլ զօրքն ամ դեռ գային ՚ի կոտորածոյն , զգաշումն ձերբակալ արարեալ և կալեալ ածէին : Եւ զՀաման , առքայլին Ա արազդատայ զքսուն , զգա

1 ՚ի չորս օրինակս գամապետ պրակաւոացն . ՚ի մի՛ս այլ գամապետ պրակաւոացն . մեզ այսպէս ուղղե լն գաւեցաւ :

պանօղն Ա՛ուշեղն, կալեալ իւր որդւոյն առաջի սպարապետին Ա՛նտուէլի, և զայլս՝ որք միանգամայն գործոց սատարն լեալ էին՝ ըմբռնէին զամենեսեան, առ նա ածէին։ Յե մեծաւ դատաստանաւք դատեցաւ զանօրէնն Հատ սպարապետն Ա՛նտուէլ։ Հայց նախ յանդիման նմա հրամայէր փողոտել զորդին նորա, ապա յետոյ զնա գլխատել. և զայլսն կոտորեաց ըստ նմին օրինակի։ Յե զթագաւորն Ա՛շոտ զրազդատ հա֊լածեցեալն ի յերկրէն ի սահմանացն Հայոց, չորաւ գնաց ի յերկիրն Յունաց. անդ եկաց ոչխարի և ե֊կաց, և անդէն մեռաւ։

Յե սպարապետան զօրավարքն Հայոց Ա՛նտուէլ նուաճ Ձեաց զաշխարհս, և զնա՛մ մեծամեծս և զնախարարսն Հայոց առ ինքն ժողովէր, և էր նա առաջնորդ և գլուխ նոցա. և վարէր զիւր իշխանութիւնն, և տայր հրամանս աշխարհի փոխանակ Թագաւորի. և ունէր զաշխարհ ի չինութեան։ Յե զկինն Պապայ արքայի զՕ արմանդուխտ տիկին, հանդերձ որդւովք աբ֊շակունովք, առեալ զնոսա՝ ի տեղի Թագաւորի կա֊լեալ ի պատիւ շրջեցուցանէր։ Ա՛եծաւ իմաստութիւն և բազում յաջողութիւն աշխարհին Հայոց մեծապէս առաջնորդէր, որչափ եկաց ժամանակս։ Հայց ա֊նուանք պատանեկացն արշակունեացն, անուն երի֊ցուն՝ Ա՛րշակ, և կրտսերուն՝ Վաղարշակ։ Օ՛չոսա առեալ Ա՛նտուէլն սպարապետն իբրև զսան մուցա֊նէր, և զմայրն նոցա զՕ արմանդուխտ ի մեծի շքի տիկնուէ պատուէր։ Հայց յորժամ տեսանէր Ա՛ա֊նուէլն զոր ինչ գործեացն ընդդէմ էր հրամանաց Թագաւորին Յունաց, ածեալ զմտաւ իւրով Թէ արժան է նմա գէթ զմի օք Թիկունս առնել նմա, ապա խորհեցան խորհուրդ ընդ տիկնոջն, և կամե֊ցաւ Թիկունս առնել զարքայն Յունաց։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Յաղագս եթէ զինչդ սպարապետն Հայոց Մանուէլ, հանգերձ ամ՛ աշխարհաւն Հայոց, ձեռն էտ ի Թագաւորն Պարսից. և մարզպան և աշխարհակալ աշխարհին Հայոց զառաքինն ած ի Թագաւորէն Պարսից զՄուբէն, և մեծաւ պարգևօք մեծարեցաւ ի նմանէ. և թէ որպէս յետոյ խորամանկութիւ Մերուժանայ արծրունւոյ եղև ապստամբութիւն, և պատերազմունք յուզեցան:

Ապա յետ այսորիկ առաքեցին Օ արմանդուխտ տիկինն Հայոց և սպարապետն Մանուէլ զԱրջայլ Աղխազ, և ընդ նմա զբազումն ի նախարարացն Հայոց, հրովարտակօք ընձայիւք և պատարագօք առ Թագաւորն Պարսից, զի ի նա ձեռս տայցեն և զնա պաշտիցեն, և նմա միամտութիւ ծառայեսցեն, և տայցեն նմա զաշխարհս Հայոց: Եւ ջոգան հասին Պարջոյլն, և որք ընդ նմայն էին, ի դուռն Թագաւորին Պարսից. մատուցին նմա զհրովարտակն զտիկնոջն և զսպարապետին Հայոց, և ետուն նմա զյղեալ պատգամն հնազանդութիւ: Եւ յորժամ ետես զնոսա Թագաւորն Պարսից, մեծաւ խնդութիւ ընկալեալ զնոսա, և մեծապէս մեծարանօք պատուեաց զնոսա, և մեծաւ պարգևաւ առնէր զԱրջայլն:

Եւ ընդ նմա առաքեր յերկիրն Հայոց զՄուբէն պարսիկ մի ձոխ ի նախարարացն իւրոց. և ընդ նմա յղեաց տասն հազար հեծեալս վառեալս սպառազէնս, զի երթիցէ Մուբէն յաշխարհն Հայոց ի Թիկունս օգնականութիւ զօրավարին Մանուէլի, և պահել ի Թշնամեաց զտիկինն զՕ արմանդուխտ: Եւ ետ Թագաւորն Պարսից տանել ի ձեռն Մուբենայ Թագ և պատմուճան, և զվառ Թագաւորացն տիկնոջն Օ արմանդուխտոյ, և Թագս մանկանցն որդւոցն երկոցունց Աբշակայ և Վաղարշակայն: Օ սոյն և սպարապետին Մանուէլն սոյնպէս ետ տանել զԹագաւորական պատմուճանն, սամոյր մ՛ և զգլխոյ պատիս գարզմանակ ոսկի արծաթ, ու ի պատիս գլխոյ ի վերայ գագաթանն ի Թիկանց արծուոյն՝ հանգոյցք Թագի

կապեալ աշխարաւանդ Հանգոյց, և լանջաց պատիւ՝ ասիզակ, որպէս օրէնք են ունել Թագաւորաց. և չիկակարմիր խորան, և 'ի վերայ խորանին արծուի-նշան և սրահակս մեծամեծ և կապուտակ երկնագոյն հովանոցս: Եւ ոսկի սպաս տաճարին առաքեր սպասրապետին Մանուէլի. և տայր նմա չիւրմէ ձեռանէ իշխանութեի մեծ 'ի վերայ աշխարհին Հայոց:

Եւ եկն եհաս Պարջոյն խորխոռունի յերկիրն Հայոց. և էած զՈւրէն պարսիկ, տան Հազարաւն: Նկին բերին զպարզևան տիկնոջն և մանկանց նր. սոյնպէս սպարապետին Մանուէլի ունէին պարգևս իւրաքանչիւր աւագացն, և տանուտէրացն իւրաքանչիւր մեծամեծացն Հայոց: Եւ յորժամ տեսանէին զմեծարանսն[1] և զսէր Թագաւորին Պարսից, տիկինն Օ արմանդուխտ և սպարապետն զօրավարն Հայոց Մանուէլ մեծաւ խնդութէ մեծարէին զՈւրէն: Տային զաշխարհն Հայոց 'ի ձեռն Ուրէնայ, և հնազանդէին հրամանաց Թագաւորին Պարսից. և կարգէին Թագաւորին Պարսից յաշխարհին Հայոց հարկս՝ տալ ընձայս և պատարագս: Սոյնպէս և մարզպանին Ուրէնայ հասս և կօշիկս և զգեստոյս[2] զոռձկացն. սոյնպէս և տան հազարացն դարման և կերակուր ըստ պիտոյիցն: Եւ սրտի մնաք արարին իւրեանց Թիկունս. և տէր գտեալ իւրեանց զարքայն Պարսից, և կային 'ի ծառայութէ նորա. և ամէն ամէն զեստանք Թագաւորին Պարսից երթային և գային յերկիրն Հայոց. և մեծապէս զմտերմութէի միամտութէին, որ էրն, ցուցանէին Թագաւորին. և ամէն առաքեր պարգևս տիկնոջն Օ արմանդխտայ. սոյնպէս և զօրավարին Հայոց Մանուէլի: Յոյժ մտէ լիմ և սիրելի լինէր Մանուէլ Թագաւորին Պարսից և մեծապէս փառաւորեալ աւագանայր 'ի նմանէն: Եւ Մերուժանն արծրունի իբրև տեսանէր զայն ամ փառս աւագուէ, որովք չքեղացոյց զՄանուէլ արքայն Պարսից, զի որպէս զեղբայր կամ զորդի այնպէս

1 'Ի չորս օրինակս վեցաբանն, 'ի միումն վեցհամբան. մեզ այս կացն: 2 Յայմ օրինակս զգիտոյս ասէ պէս ուղղելի թուեցաւ:

պատուեաց զնա. յոյժ նախանձէր նա ընդ փառս Ա՛նուէլի. և խնդրէր նա հնարս հնարել, հանել զնա յաչաց Թագաւորին Պարսից. զի փոխանակ նո՛ր ինքն լինցի սիրելի: Եւ իբրև այլ հնարս ինչ ոչ կա՛րէր գտանել դուրս նենգութեցն առ Պարսիկս, ընդ որ մտցէ, ապա խորհեցաւ նա ընդ միտս իւր զնենգութիւն չար, և կեղծաւորութեբն իւրով զպործ իւր յառաջացոյց: Օ՛ի իբրև նա յեցաւ ՚ի միամտութիւն զօրավարին Ա՛նուէլի, սկսաւ նախ հպատակութիւբ զմիտս գողանալ. նախ մտերմութիւբ հաստ՛ել զմիտս նորա. ապա զանձն իւր հոգածու և խնամակալ երևեր ցուցանէր նմա. ապա եկեալ գուշակութիւն առնէր նմա սուտ ՚ի բմաց իւրոց՝ թէ գիտասջիր դու, ո՛ Ա՛նուէլ, զի զեսպան լեալ ե յաղքային Պարսից. յա՛ զագս քո բերեալ ունիմ հրաման առ Աւրիէնն, զի զքեզ կալցին կապեսցեն. կամ սատկէն սպանցեն, կամ ոտիւք և ձեռօք և պարանոցաւ կապելով մեծաւ ըզ գուշակբ տանել առ Թագաւորն Պարսից: Ա՛յդ դուն գիտա՛, տե՛ս խորհեաց ընդ միտս քո թէ զի՛նչ գործեա ցես: Եւ եղև յորժամ լուաւ զայս Ա՛նուէլ, կայր զարմացեալ հիացեալ ընդ միտս իւր. և ասէր թէ չիք իմ յանցուցեալ առ պարսիկս, կո՛ր աղագաւ զայն առնիցէ ընդ մեզ: Եւ ասէ Ա՛երուժանն ցա՛նուէլ. Եա՛ ձշգրտեցի և հաստատեցի, զի իբրդ այդ ստոյգ են. ես մեծաւ սիրով և հոգաբարձուբ գուշակ եղէ քեզ: Ա՛սկ իբրև հաւատաց բանին Ա՛երուժանայ Ա՛անուէլն. և կարծեաց ՚ի միտս իւր թէ ստոյգ են բանքն այն զոր լուաւ, ապա գունդ կազմեաց, և զօր բազմաւ ինքն կուտեաց զօրավարն Հայոց Ա՛անուէլ: Եւ մինչ դեռ խաղաղութբ Աւրիէնն իւրով քանակաւն բանակեալ էր յանհոգս յանկարծս և աննենգ խաղաղութբ, իբրև ոչ ինչ գոյր ի մէջ նոցա նենգութի՛ դաւաճանութե՛ ըստ համբաւահան չարագործն Ա՛երուժանայ, յանկարծօրէն յեղակարծութի՛ զօրավարն Հայոց Ա՛անուէլ հասանէր անկանէր՚ի վերայ բանակին Աւրիէնայ, և զտան հազարսն զպարսիկսն միանգամայն կոտորեր: Ա՛յլ զմարզպան Աւրիէնն միաձի արձակէր, հնորհել զարևն իւր՝ պարգև արարեալ: Եւ զարմացեալ Աւրիէն ընդ իրսն ընդ այնոսիկ թէ

ընդհէր, եր աղագաւ նա զայս արդեւք գործեաց. և ասէ Ա՛նուհէլ Յուրէն. Օ՞ քեզ վասն բարեկամուէ սիրոյն արձակեալ, ողջանդամ երթիջիր զձանապարհս քո. այլ ես ՚ի պարսկաց ՚ի խափս այլ ոչ անկայց։ Նա ինքն Ա՛նուհէլ Հայոց զգունդն կազմէր, և զարս սրն պատրաստեր. և գիտաց այնուհետեւ թէ մեծ թշնամութիւն յարոյց և մեծ գրգռութիւն ընդ Թագաւորին Պարսից։ Նա յայնմ հետէ զօրավարն Հայոց Ա՛նուհէլ հանդերձ ամ գնդաւն զօրիկին Օ՞արմանդուխտ զկին Թագաւորին Պապայ ՚ի գլուխս առեալ, ՚ի տեղի Թագաւորացն շրջեցուցանէին. և ինքեանք կային ՚ի մարտի պատերազմին յաղագս չինութեանն աշխարհին Հայոց յամ կողմանց ընդ թշնամիս և ընդ սահմանակիցս, որ շուրջ զնուրբամբք էին, և աւելի զօրքն Պարսից զամ աւուրս կենցաղ իւրոց. բայց Ա՛ն բուժանն գնայր անդր առ Թագաւորն Պարսից ամ բաստան զԱ՛նուհէլէ։

ԳԼՈՒԽ ԼԹ.

Յաղագս Գումանդ Ըապհոյ՝ որ առաքեցաւ ՚ի Թագաւորէն Պարսից տալ պատերազմ ընդ Հայս, և սատակեցաւ ՚ի Ա՛նուհէլէ զօրագ իւրով հանդերձ։

Ա՛յն Թագաւորն Պարսից արձակեաց ՚ի վերայ Հայոց զԳումանդ Ըապուհ քառասուն և ութ հազարաւ, զալ առնուլ առերեւ զերկիրն. և եկին հասին նոքա, մինչև ՚ի սահմանսն Հայոց որ յատրպայական կոչեն կուսէն երբ։ Նայս իբրև զայն լսեր զօրավարն Հայոց Ա՛նուհէլ, և գումարեր զգօրսն իւր ըստ բազում ժամանակին որչափ և եկին ՚ի ձեռն իւր՝ քսան հազար, և ձեպեաց Ա՛նուհէլ և եհաս ընդդէմ գլնդին, և արկաներ ՚ի սուր զգօրսն Պարսից. և զԳումանդ Ըապուհն սպանաներ. և դարձեալ ելաներ մեծաւ յաղթութեբ։

Գ Լ Ո Ւ Խ Խ·

Յաղագս Վարազայ Թէ սրպէս կամ զնարդ առաքեցաւ ի Թագաւորէն Պարսից, և սատակեցաւ ի Մանուէլէ իբրև զառաջինն։

Ապա յետ այսորիկ Վարազ ոմն զօրավար Թագաւորին Պարսից գայր հասանէր ուխտուտասն բիւրու յերկիրն Հայոց, տալ պատերազմ ընդ Մանուէլի ընդ սպարապետին, և ընդ ամ դնդին Հայոց։ Ապա կազմեր պատրաստեր սպարապետն զօրավարին Հայոց Մանուել հեծեալս սպառազէնս տասն հազար, և եկեալ տայր պատերազմ ընդ Վարազայ։ Հարկանէր և սատակէր, ընկէր զնա ի միջոյ։ և գլխովին զՎարազն սպանանէր։ Թափեր զկապուտ սատիկ, զզարդ և զզէնս զօրացն, և դառնայր մեծաւ խաղաղութ։

Գ Լ Ո Ւ Խ ԽԱ·

Յաղագս Մուկանայ՝ զոր առաքեաց դարձեալ Թագաւորն Պարսից ի վերայ երկրին Հայոց և ի վերայ Մանուէլի զօրօք բազմօք, և սատակեր ի Մանուէլէ իբրև զառաջինն։

Այ եղև յետ այսր ամենայնի առաքեաց Թագաւորն Պարսից զՄուկանն քառասուն բիւրու ի վերայ երկրին Հայոց։ Նմին եհաս հանդերձ ամ բազմութեք զօրաց իւրոց յերկիրն Հայոց, և էառ զկողմն մի զերկիրն Հայոց։ և բանակեալ էր յԱրտանդան դաշտին։ Նմանէր ի վերայ բանակին Մանուէլն ի գիշերի, և անդէն առ հասարակ ընդ սուր հանէր զամենեսեան ի դակիչն, և զՄուկանն սպանանէր, և Թափեր աւար բազում։ և ոչ զմի ոչ ապրեցուցանէր ի նոցանէն։

Գ Լ Ո Ւ Խ ԽԲ.

Յաղագս խաղաղութեանն ամն եւթն։

Եւ յետ այսորիկ ամն եւթն, և այլ ոչ ևս յա-
ւելին զօրքն Պարսից ժողովել մնանել՝ի սահմանս
Հայոց. և եղև խաղաղութիւն երկրին։ Եւ ժողովեցան
առ զօրավարն Մանուէլ ամենայն զորուեալք երկրին. և
կին անգան այր յայր, և էին բանակեալ յանհոգս.
և զօրավարն Հայոց Մանուէլ առաջնորդեր նոցա։
Եկին ապա և մնացորդք՝ի տանէն Աիւնեաց պատա-
նեակ երեք մնացեալք՝ի կոտորածէն Պարսից առ
զօրավարն Հայոց Մանուէլ. և անուանք նոցա մի-
սումն Խաբիկ, և միսումն Ամամ, միսումն Ալ աղի-
նակ։ Եւ ընկալաւ զնոսա զօրավարն Հայոց Մանուէլ.
և եղև նոցա օգնական, և զարձ արար նոցա յերկիրն
իւրեանց. և կացոյց տէր զԽաբիկ՝ի վերայ երկրին, և
զերկուսեան ևս ըստ իւրաքանչիւր չափու. և էր Խաբիկ
նիզակակից զամ աւուրս կենաց նորա։ Զոյնպէս յամ
գաւառս կացուցանէր սպարապետն Հայոց Մանուէլ
նահապետս և տեառս գաւառաց գաւառաց. և ա-
ռաջնորդեր ամենեցուն խաղաղութիւն։ Եւ ամ երկիրն
Հայոց՝ի խաղաղութեան ընդ հովանեաւն Մանուէլի
զամ աւուրս կենաց նորա, ամ մարդիկ երկրին Հայ-
ոց վայելէին յաւուրս իւրեանց. ուտէին և ըմպէին
և ուրախ լինէին զայն ամն եւթն տերութեանն Մա-
նուէլի, մինչև՝ի բաժանումն երկրին Հայոց և՝ի
քակտումն թագաւորութեանն։

Գ Լ Ո Ւ Խ ԽԳ.

Յաղագս Մերուժանայ արծրունւոյ, որ հանգերձ զօրօք եկն՝ի վերայ Մանուէլի, և սատակեցաւ՝ի նմանէ։

Ոմն Մերուժանն արծրունի վաղուց ևս յա-
ւուրսն Աշոտակայ արքայի լեալ էր ապստամբ՝ի թա-
գաւորէն Հայոց, ինքնակամ ձեռս տուեալ յարքայն
Պարսից, և զօրինս Մազդեզանցոյն յանձն առեալ էր,

և ուրացեալ զՀաւատսն քրիստոնէութեանն Հաւատոյ, և բաղում անգամ լեալ էր առաջնորդ զօրացն Պարսից, և մեծամեծ չարիս անցուցեալ էր ընդ երկիրն Հայոց. և տակաւին էր նա առ Թագաւորին Պարսից: Ապա զրգռեաց Աերուժանս այս զԹագաւորն Պարսից, և առեալ զօրս բազումս ի նմանէ, և եկն ետ յերկիրս Հայոց: Նա էր տորա մեծաւ պարծանօք պարծեցեալ առ Թագաւորին Պարսից, զի կամ կալեալ կապեալ տարցի զԱտուէնն առ Թագաւորն Պարսից, և կամ զգլուխն հատեալ՝ զառաջեաւ բերէ Թագաւորին Պարսից:

Այլ Հասանէր ամ բազմութեն զօրացն Պարսից յերկիրն Հայոց, և Թողեալ զբանակ զօրացն Պարսից ի գաւառին Կորճէից, և ինքն իւրով սեփհականաւն գնդաւն Հրոսիւն ժողովեալով մեհեանք զատանէր յԱրեաց գնդէն: Կամէր յանպատրաստից գալ անկանել ի վերայ Աանուէլի, միայն անձամբ անուն առնուլ, և ինքեան միայն կատարել զանայր, զի ի պարծանս իւրոյ անձամբ վճարել զգործ պատերազմին: Ա՛ան այսորիկ այսպիսի բանս խօսեր ընդ զօրավարսն Աղեաց գնդին, և ասէր՝ եթէ ես նախ երթայց լըրտեսեցից, և զձեզ տարեալ արարից ի վերայ, զի այսպէս դիւրաւ լինի ի բուռն արկանել ըմբռնել: Նա ինքն զիւր գունդն առեալ, խաղայր գայր Հասանէր յերկիրն Կոգ գաւառի. և ինքն զաեղն առեալ, առնէր տես ի բանակին Աանուէլի:

Նա գայլին Հասանէին լըտեսքն, և դիտէին զԱնուէլ, զի էր բանակ նոցա ի Խազբատանդ գաւառի ի Խազուան ասանի, որ է մօտ յաւերակսն Օ՛արեհատանդ քաղաքի: Նմին դիտեցին դէտքն զբանակն Աանուէլի, և զերամակ ձիոց բանակին յորում վայրի կային. և չոգան տարան զրոյց նմա: Նա խորհեցաւ նա առնուլ զերամակ բանակին. այնմ ուշ առնէր, և խնդալից եղեալ՝ ասէր պարծելով առաջի իւրոց զօրացն, Թէ վաղիւ յայս ժամ իմ կալեալ կապեալ ընկեցեալ զԱնուէնն, և յանդիման նմին զկին նորա Ա արդանոյշ խայտառակեալ իցէ: Նա չու արա՛ բեալ կատարել զգործն՝ յոր փութացեալ կամէր հասանել, և եկն ի վայրն՝ ընդ որ գալ էր գնդին

ընդ Ճանապարհն՝ լերինք ինչ, որում ՚ի բնակչացն Նղլերք կոչեն։ Նա մինչ դեռ գայր Վերուժանն ՚ի Ճանապարհի գնդաւն իւրով, դիպեցան նմա ուղևորք. յորս հարցաներ Վերուժանն և ասէր, եթէ Ճանապարհս ՚ի Խադրաւանդ ընդ ո՞ր երթայ։ Նա ուղևորացն տուեալ պատասխանի, ասացին. Ճանապարհ ընդ Նղլերս է։ Նա մեծապէս խորեաց Վերուժանն ընդ միտս իւր. տրտմեցաւ ընդ բանսն, սակայն տայր հրաման չարաչար քարշել զուղևորան և ծեծել։ Նա ինքն անցեալ ըստ ուղին՝ իջանէր ՚ի հմայս քաղդէուէթ, զքուէս հարցաներ. և ոչ գայր նմա յաջողակ յուռուէթ կախարդանացն՝ յոր յուսայն։

Նպա սրտմտուէթ մեծաւ զնւր դէտն առաջն արկեալ՝ յերամակակայն արշաւէր, զի հնար լեցի նմա նախ ըմբռնել։ Նա հասեալ ՚ի տեղին, զերամակ ձիոց ոչ գտանէր. վասն զի յայ այնպէս իմն եղև իրաւունք պատրաստուէթ Հայոց գնդին, զի սպառազէնքն Վանուէլի ամ Հայոց գնդին տուեալ էր ժամ յորս երթալոյ. վասն այսորիկ դիպեցաւ, զի զամ երամակն ՚ի շէն էր ածեալ. և նոքա դեռ որոշ պատրաստեալ էին ՚ի հեծանել։ Նա անտի գուժաւոր հասանէր առ զօրավարն Հայոց Վանուէլ, թէ գիտա տես, զի Վերուժանն արծրունի հասեալ է բազում գնդաւ ՚ի վերայ քո։

Նպա կազմեցան ըստ նմին պատրաստեցան ամ զօրքն Հայոց գնդին, և Վանուէլ սպարապետն. և մտին առաջի սուրբ ոսկերացն Յովաննու, որ կայր յայնմ գեղ. ուխտաւոր լինէին և խնդրէին յայ, զարդար դատաւորն յօգնականուէթ կոչէին, լինել նոցա այցելու օգնական։ Նա անտի՚ի դուրս ելեալք, զտիկինն արշակունի հանդերձ մանկամբն Նշրակաւ և Նաղաշակաւ գնացա և զնւրեանց կանանէն ընդ նոսա արձակեալ, յամուր յուղարկէին ՚ի լեառնն մեծ՝ որ անուանեալ կոչի Նարագ։ Նա զմանուկն Նշրաւագդ, որդի Նաչէի, ընդ կանանէն տայր հրամանն երթալ Վանուէլ. իսկ նա ոչ հաւաներ, չառնոյր յանձն։ Նա էր նա ՚ի տիոց տղայ. և ըստ մանկուէթէն օրինի, ըստ կրօնից Հայոց՝ որպէս օրէն էր՝ զգլուխ մանկտոյն սոյնպէս ՚ի ժամանակին գերծեալ

էր զգլուխ մանկանն Աբրահամեայ, և ցցուն էր
թողեալ և գէս արձակեալ: Այսպէս իբրև ոչ հաւանե-
ցաւ նա ընդ կանանչին երթալ, մարակ՝ի վեր առեալ
Անուէլի տանջէր զմերկ գլուխ Աբրահամեայ. սաս-
տէր նմա չերթալ՝ի պատերազմ վասն մանկուլթեան
ժամանակին տիոց: Իսկ նա առ նորա ականէ գնայ
ընդ նոսա. բայց ապա յետոյ վառեալ կազմեալ պատ-
րաստեալ զինի պատերազմին:

Ա.յլ յորժամ զտիկինն Ամ աղախնիւն իբրեանց
յուղարկեցին յամուրն, և ինքեանք վառեալք կար-
գեալք կազմեալք՝ի պատերազմին, ՝ի մի վայր գու-
մարեալք, նշանս արձակեալք դրօշս փողփողեալս,
ըստ Վէրէնն աւան՝ի դուրս ելանէր ընդ կողմն արև-
մտից. և անդէն ընդ առաջ եղեալ նոցա Երուժա
նայ իւրով գնդաւն՝ որ եկեալ էր՝ի վերայ նոցա: Այս
չարագործն մեղաւորն Երուժանն զիւր զգէնն և
զզրահ և զնշանն սաղաւարտին բազմայ եղեալ էր ըզ-
նոյն օրինակ, և զզազուման չիւր կերպարանեալ էր՝ի
մէջ իւրոյ գնդին, և ինքն զիւր նշան ոչ ունէր: Այս
կայն Անուէլ իբրև տեսանէր զնոցա գունդն հան-
դերձ իւրով գընդաւն, առաւծաբար վարագօրէն յար
ձակեալ՝ի նոցա գունդն խառնեցաւ. ուշ եղեալ
այնոցիկ՝ որ զԵրուժանայ նշանն ունէին, համա-
րեր եթէ զԵրուժանն սպանանիցէ: Այս զզազուման
խոյենից հատանէին զգլուխս, որք զնոյն զնորին Ե-
րուժանայ ունէին զնշանս. և տեսանէին զի չէր նա:
Այսպա խօսել սկսանէր սպարապետն Անուէլ ընդ
իւրում նիզակակցին Խաբկան, և ասէր. Տեսանե՞ս,
քանի՞ խաբեաց զմեզ կախարդն Երուժանն. այլ
իմ և նորա յառաջու շատ լեալ՝ի միջ վայրի՝ի հաշ
տութեէ ժամանակի, նշանս մի գիտեմ ես զնորա. զի
յորժամ՝ի ձի հեծեալ էր, երան բարձի նորա ոչ
յանձին և՝ի ծունկն ոչ հասանէր, այլ՝ի բացեայ
կայ՝ի ձիոյ անտի: Այրդ եկ զայդ հասարակ այսմ նշա-
նի ուշ դիցուք, թերևս Ճանաչել կարասցուք զդիւթ
քաւչիցն զևախարդն: Այսպա զայդ միտ եդեալ երկո-
ցունցն, և տեսեալ զԵրուժանն, այնու նշանաւ
ծանեան տեսին. զի յայլակերպս լեալ էր, զի զիւր նը-
շանսն ոչ ունէր: Այսպա ձայն տուեալ յառաջ կոչեաց

զԱՐուժանն Ա՛նուէր, և ասէ ցնա՝ Թէ՛ այ կախարդ, ցէրբ խաբես զՄեզ, և վասն քո և զայլս եւս տաս ջարդել. այլ մեք ծանեաք զքեզ զի աւադիկ կաս, և ապրել քեզ չէք Հնար այսօր ի ձեռաց մերոց. զի այսօր հաճ կատարեաց զբաբիս քո Տէր Աճ ի գլուխ քո, և մահնեաց Տէր ի ձեռս մեր: Իսկ յորժամ զայն լսեր ԱՐուժանն, անդէն վաղվաղակի նիզակ առեալ, յառաջ խազացեալ, ախոյեան ելանէր Ա՛նուէրն: Ապայն յորժամ հարկանէին նիզակօքն, քանզի երկաբեան արքն յաղթք էին, երկաբեան ի ձիոյն յերկիր անկանէին, և անդէն նիզակակիցն Ա՛նուէրն Իաբիկ տէր գաւառին Իշնեաց Հասանէր, նիզակաւ ի վերուստ ի վայր ի կողն կարէր ընդ գետինն, և ոչ կարէր յառնել: Իսկ զապարպահան Ա՛նուէրն իւր վարաւանդաստաքն յերիվարն հանէին, և զԱՐուժանայ զգլուխն ի բաց Հատանէին. և Տէր զօրացն լինէր փախուստ, իբրև տեսին Թէ ԱՐուժանն մեռաւ:

Եւ ատի գունդն մանուէլեան խրախոյս առեալ յարձակեցան զՀետ մերուժանեան զնդին. Հարկանէին սատակէին զնոսա, և զմի ի նոցանէն ոչ ապրել ցուցանէին: Եւ մանուկն Ա՛բտաւազդ ի Ա՛նուէրն գաղտ եկեալ էր ի Ձախատն. սակայն վաեցաւ կազմեցաւ և եմուտ, զանխուսալ ի մանուէլեան զնդէն, առ աջն Ա՛փրատ գետոյն. Եհար սատակեաց ի մերուժանեան զնդէ անտի անթիւ բազում սպառազինս կոտորեաց: Եւ նշանակիր մի ի ԱՐուժայ նայ իբրև եռես զԱ՛բտաւազդն, յընչացք եբաց. զի տեսանէր զնա պատանեակ մի կայտառ անմնուրուս, երեսաք գեղեցիկ. ապա զնշանն զնիզակաւն պատեալ, յարձակեցաւ ի վերայ Նորա: Իսկ նա ընդ գնիկս մտեալ, Հարկանէր զայրն նեռիւ. և կարծանէ ի կաբան Թափ Հանեալ զնեռն ցամաք ընկենոյր զնա: Եւ առեալ զնիզակն զՀետ մտեալ փախստեից, ընդ սուր Հանեալ զզօրս ԱՐուժանայ, աւելի քան զամենեսեան Ա՛բտաւազդ որդի Ա՛ւ աչէին մանուկն կոտորէր. և ինքն մեծաւ անուամբ, և բազում աւարաւ՝ զոր կապուտն Թափէին ի զօրաց Թշնամեացն:

Այլ յաւուր յայնմիկ լինէր մեծ զնաս անՀնա-

բին. զի Ա աչէ երկրորդն Յանուէլի, ձին զուլամբ երթեալ, սպանանէր: Այնպէս և զԿարջոյլ Յաղխաղ ձին տարեալ սատակեաց. վասն զի տրմուղ՝ի Թերաւարժ ձիոյ հեծեալ էին երկոքեքին:

Իսկ դառնայր Յանուէլ երթայր՝ի քանակն տիկնոջն հասանէր. տանէին ընդ ինքեանս զգլուխն Յեւ բուժանայ. և Յամուէլ որդի Ա ահանայ ոչ դիպեցաւ ընդ Յանուէլի, զի դարձաւ նա՝ի քանակն: Յակայն յորժամ տեսին զգլուխն Յերուժանայ կանայք քանակին Յանուէլի, մեծաւ աղաղակաւ ձիչ բառնային. զի նոքա այսպէս համարեցան Թէ այն գլուխ Յամուէլի որդւոյ Ա ահանայ էր, վասն զի նման միմեանց էին երկոքեան, Յերուժանն և Յամուէլ: Ապա տեսին զգլուխն Յերուժանայ, զի զգիջն երկայն կախեալ էր, յայնմ ծանեան եթէ չէ Յամուէլայ, այլ Յերուժանայ արծրունոյ. այլ ասացին. Յակայն դա մեր եղբայր է: Ապա եկին բերին զմարմին Ա աչէի՝ի քանակ անդր հօրն Ապատաւաղայ, և զմարմինն Կարջուլայ Յախազու խոռխոռունոյ. եդին աշխար մեծապէս, և լացին զնոսա: Իկին բերին զայրն նշանակիւրն Յերուժանայ, զոր եհարն Ապատաւաղն նետիւն. և Ամ որ զարմանայր ընդ այն, զի նետն Թափ կարանէ՝ի կարան անցեալ էր, իբրև տեսին զնա՝ասպրեցաւ՝ի մահուանէ: Ապ իբրև լուան զօրքն Պարսից՝ զոր Թողեալ էր Յերուժանայ՝ի դաւառն Կորձենից՝ Թէ սատակեցաւ Յերուժանն, և կորեաւ գունդն որ ընդ նմա, և ինքեանք՝ի Պարսից երկիրն փախստական գնացին. և Հայոց երկրին լինէր խաղաղութիւն բազում:

ԳԼՈՒԽ ԽԴ.

Ցաղագս Թէ զնարդ Թագաւորեցոյց Ա անուէլ սպարապետն զմանուկն Արշակ, և ապա ինքն Ա անուէլն մահու մեռանէր:

Ապա յետ այսր ամենայնի, զօր արարեալ զօրավարին սպարապետան Յանուէլ, հանդերձ արշակունի տիկնաւն, և մանկամբքն երկոքեումբք՝ Ապշակաւն և

Ա աղաղշակաւն, հանդերձ ամ բանակաւն Հայոց մեծամեծ աւագայնովն նախարարօքն երևեալ հատանեն ի գաւառն Այրնոյ. և ամ տանուտեարք ընդ նմա։ Եւ տայր սպարապետն Ա՛նուէլ զդուստր իւր Ա արդանդուխտ կին Ա՛րշակայ մանկանն արշակունոյ, և փեսայ իւր առնէր զնա։ Ա՛նէնը հարանիս և եղբօր նորին Ա աղաղշակայ, և տայր նմա զդուստր ասպետին բագրատունոյ ի Սպեր գաւառէ, որ Թա գաւորքն Թագակապքն լեալ կին ի քմէ ազգին Թա գաւորութեն արշակունոյ. և մեծապէս արարեալ զհարսանիսն ամ երկիրն Հայոց, ցնծացեալք խրն դայեալք էին ընդ այն մեծ խնդութեն ուրախութեն։ Ա՛պա յետ այսորիկ գարձեալ ի մի վայր ժողովեալ զաշխարհ ամ զմարզպիկ երկրին Հայոց, և Թագաւո րեցոյց զմանուկն զԱ՛րշակ երկրին Հայոց, և զԱ աղաղշակ երկրորդ նմին։ Եւ ընդ այն ևս ցնծացեալ առնէին մեծապէս ուրախութեն և ցնծութեն ամ երկրին Հայոց։

Ա՛պա յետ այսորիկ հիւանդացաւ սպարապետն զբաւարն Հայոց Ա՛նուէլ զախտ հիւանդութեն մահու. և կոչեաց զորդի իւր զԱ՛րտաշէր, և ետ նմա զտէրութեն իւր և զսպարապետութեն զօրավարութեն իւրոյ։ Եւ պատուիրեր նմա հնազանդ հպատակ կալ արքային Ա՛րշակայ, և լինել միամիտ. ջանալ և վաստակել, և տալ պատերազմ փոխանակ աշխարհին Հայոց զանձն քո, որպէս քալ նախնիքն ի վերայ աշխարհին մտադիւր մեռանել։ Օ՛ի, ասէ, առ ածծ այն արդարութեն մեծ է և ընդունելի. և ոչ ածծ թողու ի ձեռաց, յորժամ այնպէս լինիք։ Ա՛նուն քաջութեն յերկրի թողցուք, և զարդարուն յերկինս ընծայեցուցանիցք. և ամենևին ի մնհուանէ մի երկնչիք, այլ յուսացեալք յայն, որ զամ արար և հաստատեաց։ Եւ զնենգութեն և զպղծութեն և զչարութիւն յանձանց ձերոց ի բաց արարէք. և զնոր ածծ սրբութեք և միամտութեք պաշտեցէք. և ի վերայ ածծապաշտ աշխարհի համարձակութեք մեռարուք, զի այն ինքն մահ վասն ալ է, փոխանակ եկեղեցեաց նորա և ուխտի նորա, և ի վերայ բնակ տերանց աշխարհիս արշակունոյ։

Այլ յետ այսորիկ գրեաց Հրովարտակ առ Թագաւորն Յունաց, և նմա յանձն արար զաշխարհս Հայոց և զԱրշակ արքայ։ Այլ յետ այսորիկ իբրև միահամուռ ժողովեաւ կայէն շուրջ զնովաւ, և իբրև կայր հիւանդ ի մահիճս իւր, անդ Թագաւորն Արշակ և անդ Արդանդուխտ կինն Թագաւորին, և անդ ամ աւագք և մեծամեծք և նախարարքն Հայոց այր և կին առ հասարակ ամ երևելի մարդիկ, ասա եթաց Ա՛ն նուէր զամ զանդամն իւր առ հասարակ առաջի ամենեցուն, մերկացաւ և եցոյց զի քան զդրամ խայծ ոչ գտանէր ողջ ի մարմնի նորա՝ զոր խոցեալ էր ի պատերազմի. զի յառնի յանդամին աւելի քան զյիսուն սպի կայր վերաց, և զայն անգամ բացեալ առաջի ամենեցուն ցուցանէր։ Ասկառ լալ, և ասել՝ Թէ ես ի մանկութէ համակ մնայ ի պատերազմունս, և մեծաւ քաջութեաբ զամ վերս յանձն իմ առի. և ընդէր ոչ էհաս ինձ մեռանել ի պատերազմի, քան զօրէն անամօթ մեռեալ եղէ։ Օ՛ի լաւ էր ինձ եթէ ի պատերազմի մեռեաւ էի ի վերայ աշխարհի, զի մի զեկեղեցիս և մի զուխտ Այ առ ոտն կոխիցեն։ Ասկայն և ի վերայ արշակունեաց բնիկ տերանց աշխարհիս, և ի վերայ կանանց և ի վերայ որդւոց մերոց, և ի վերայ ամենայն մարդկանս և ի վերայ եղբայր, բուէթ ընկերուէթ և մտերիմ բարեկամուէն զի էր Թէ հասեալ էր ինձ մեռանել. Թէպէտ շատ զանձնս յանդուգն վարեցի, զվատթար մահս մահճացս ես հաս ինձ մեռանել։

Օ՛այս և բազում և աւելի քան զոյնս խօսեցաւ առաջի Արշակայ արքայի և առաջի ամենեցուն. և աղաչեաց ևս զԹագաւորն Արշակ, և ասէ. Իմ Այ տուածով կեցեալ և ջերմ քրիստոնէուէթ, մի յանկարգ իբրև հեթանոսս կոծ կամ աշխարհանս որ անյուսութէթ դնիցէ ինձ։ Օ՛ի որ միանգամ յուսոյ յարուէթ ակն ունին միանգամ կենդանուէթեան և գալստեանն Քրիստի, չէ պարտ լալ զնոսա։ Ա՛յլ իմ յայժմ յուսով երկիւղիս կեցեալ, բայց դուք մի Թիւրիցիք ի պատուիրանացն Այ. աւելի զարդարուէթենէ փոյթ արասջիք, ևս առաւել զողորմուէթենէ։ Օ՛ի մեզ մեծ հայրապետն Ներսէս զայս համակ պատուի-

րեր. և ինքն յամ ժամ ի կենդանութեանն զսոյն գործեր, և այլոց ուսուցանէր առնել. զի ողորմիր աղքատաց, տնանպաց, գերեաց, ամայեաց, օտարաց, պանդխտաց. զի այսպէս ասէր նա. Ուր զողորմութեն առնել, կամ քան զտուրս տալ, այլ ինչ մեծ և պատուական առաջի ոչ ունիք: Եւ զաշխար կամ զկոճ գնել մեռելոց՝ դառն մեղս համարէր, և յամն իւր եհատ զայս յերկրեսն Հայոց. զի յաւուրս նորա ոչ ոք իշխէր գնել կոճ կամ աշխարհանս. այլ յետ մահու նորա անմիտ մարդիկ համարձակեցան զայս գործել: Ասէր վասն իմ ոք կոճ մի դիցէ. եթէ գնէ ոք, նա լիցի դատապարտ. այլ ոչ եթէ յետ մահուն իմոյ իմ իշխանութեն ինչ է սաստել, զի զոր ոչն կամիմ՝ մի արասցեն. այլ ինձ յիշատակ արասցէ որ զիս սիրէ: Ի պատերազմի ի մահուանէ մի երկնչիք, ուր ես ոչ մեռայ. զի առանց ոչ ինչ ոչ լինի:

Ոչ այս և զայսպիսի, և որ ինչ այս բանից նման են բանք, խօսեցաւ: Ազգում և անչափ գանձս աղքատաց և կարօտելոց բաշխէր, իւրովք ձեռօք մատակարարէր. և բազում մասունս յընչից իւրոց տայր յեկեղեցիս և ի վկայանոցս, և բազում գանձս տայր ցքահանայապետսն. և ապա ինքն մեռանէր: Ամէն իբրև մեռաւ մեծ սպարապետն Վահանուէլ, հրամանն զոր տայր յաղագս կոճոյն չգնելոյ՝ այնմ ինչ ոք ոչ անսաց. այլ ամ մարդ երկրին Հայոց կոճ եդեալ, մեծաւ աշխարանօք լայնն զնա առ հասարակ ազատք և չինականք: Ոչ ի մարդ իբրև զհօրէ ի կարի առնէին գնմանէ վասն քաղցրութեն մարդասիրութեն հեզութեն հանդարտութեն խնամոտ բարերարութեն՝ բարենշան զաշխարհաշէնն անձն Վահանուէլի: Ամենեք քեան բերանաբաց հառաչէին զինի նորա, կղկղալի կաթոգի լինէին զիւրեանց քաջ զօրավարէն, զիրկէն իւրեանց, զյաղթական զանուանէն զարգասուէն[1], յայնպիսոյն հեռացեալ գնացեալ ի յանջատեն ի մեհենէրն:

1 Յամ օրինակս պղծասուէն:

ԲԻՒՋԱՆԴԱԿԱՑ

ՎԵՑԵՐՈՐԴ ԽՈՍՏԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ԿԱՆՈՆԱԿ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ ՄԱՏԵՆԻՑ

Ա· Յաղագս ընդ երկու բաժանելոյ աշխարհին Հայոց, զի կէս ազգին Հայոց Թագաւորեալ Արշակ հրամանաւ Թագաւորին Յունաց, և կէս ազգին Թագաւորեալ Խոսրով հրամանաւ Թագաւորին Պարսից, եթէ որպէս զաշխարհն Հայոց ընդ երկուս բաժանեալ՝ սահմանս ի մէջ արկանէին իւրեանց, և որպէս այլ աշխարհքն և գաւառքն ցրուեցան, և սահմանք նոցա կրծեցան յամ կողմանց երկոցուն կուսաց։

Բ· Յաղագս եպիսկոպոսաց, որ երևելիքն էին յայնմ ժամանակի ի բաժնի մասին յաշխարհին Խոսրովու յերկրին Հայոց. նախ վասն վարուց Զաւենայ։

Գ· Յաղագս Շահակայ կորճէի, որ եկաց յետ Զաւենայ գլուխ եպիսկոպոսաց։

Դ· Յաղագս Ապուրակայ մանաւկերտացւոյ, որ եկաց գլուխ եպիսկոպոսաց յետ Շահակայ։

Ե· Յաղագս Փաւստեայ և Զորէժայ եպիսկոպոսաց։

Զ· Յաղագս Առաւօտամեայ եղբօր Փաւստեայ եպիսկոպոսի։

Է· Յաղագս Աբրոթայ եպիսկոպոսի բարենացւոյ։

Ը· Յաղագս Յոհաննու եպիսկոպոսի և վարուց նորա և ա-գահութիե սորա և անմոռութե, և շաղաշուտ խօսից և գործոցն, և նշանացն՝ որ յայ ի վերայ նորա եղեն երբեմն, եթէ որպէս մեղաք հայցէր և առնոյր զագահուի ի Թագաւորաց։

Թ· Յաղագս նորին Յոհաննու։

Ժ· Յաղագս նորին Յոհաննու։

ԺԱ· Յաղագս Կիւրակոսի եպիսկոպոսին։

ԺԲ· Յաղագս Զորէթուաղայ եպիսկոպոսի Վանանդայ գաւառին։

ԺԳ· Յաղագս Տէրկան և Մովսէսի եպիսկոպոսաց Բասենոյ գաւառին։

ԺԴ· Յաղագս Աբշարունայ եպիսկոպոսի։

ԺԵ· Յաղագս գլխաւորին եպիսկոպոսացն որ էրն Ասպուրակայ։

ԹԼ. Յաղագս Գնդայ սրբոյ և առաքինոյ, որ յայնմ ժամանակի գլխաւոր էր աբեղայից Հայոց անապատաւորաց Մինակեցաց վաներայոց [1].

Ստորոտ ամ պատմուԹեց յաղագս իմ տեղեկուԹեան, որք միանգամ զմատեանս ընԹեռնոյք, տունք տան՝ Համարական Թուոք:

1 Յերիս օրինակս վանէցոյ. յօրինակի միում վանէցայի, և յայլում վանորէից:

ԲՈՒԶԱՆԴԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ՎԵՑԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋ, ԱՒԱՂԱՆՈՒԹԵԱՆ ՎՃԱՐՈՒՄՆ
ՄՆԱՑՈՒԱԾՈՑ ԲԱՆԻՑ Ի ԾԱՅՐԻ

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս ընդ երկուս բաժանելոյն աշխարհին Հայոց, և Թագաւորելոյն Արշակայ հրամանաւ Թագաւորին Յունաց, և կէս աղգին Թագաւորեալ Խոսրով հրամանաւ Թագաւորին Պարսից, Թէ որպէս զաշխարհն ընդ երկուս բաժանեալ՝ սահման ի մէջ իւրեանց արկանէին, և որպէս աշխարհն հատան յիւրաքանչիւր յերկոցունց կուսաց:

Ապա յետ մահուան Արտաշէսի զօրավարին Հայոց ոչ իմն կարաց հաստատել ի վերայ աշխարհի Թագաւորութեն Արշակայ. այլ բազումք ի Հայոց նախարարացն անտի ելին զատեան գնացին առ Թագաւորն Պարսից, և մատնեցին նմա զաշխարհն Հայոց. և խնդրեցին ի նմանէ Թագաւոր արշակունի: Եւ նորա յանձին կալեալ մեծաւ խնդութեամբ ընդ իւր ձեռն տալ իւրով բանիւ ի նմին տոհմէ ի Թագաւորութենէն Հայոց արշակունի, և նոքաւ չինքն գրաւել զաշխարհն Հայոց: Ապա գտաներ ի նմին տոհմէ մանուկ մի անուն Խոսրով, և կապեաց Թագ ի գլուխ նորա. և ետ նմա կին զքոյր իւր զՕրտանդուխտ, և արար ընդ նմա զամ զօրս զօրութեան իւրոյ. և Օ ևս նուիրակ դաստիարակ ետ արքային Խոսրովայ. և եկին հասին յաշխարհն Հայոց: Իբրև ետես Արշակ արքայ զնոսա, մերժեցաւ տեղի ետ չոգալ

գնաց ՚ի սահմանս Յունաց. և էին Թիկունք Ա.ըշակայ Թագաւորին Հայոց. և Խոսրովու՝ Թագաւորն Պարսից։

Ապա եկին զօրքն Յունաց Թագաւորին ՚ի Թիկունս. և Թագաւորն Ա.ըշակ զՀայկազեաց գաւառաւ, և զօրքն Պարսից և զօրքն Խոսրով Ա.յրայրատ գաւառին։ Ապա դեսպանք և հրեշտակք երկուց Թագաւորացն, Յունացն և Պարսից, միմեանց[1] առ միմեանս երթևեկէին։ Եւ այնուհետեւ առնէ խորհուրդ միաբանութեամբ հաւանութեամբ ընդ միմեանս Թագաւորն Յունաց և Թագաւորն Պարսից. և լաւ հաստատեցան զաշխարհն Հայոց նախ ընդ երկուս ՚ի մէջ իւրեանց բաժանել. զի ասէին՝ Թէ ՚ի միջի մերում բնակեալ է այս հզօր և հարուստ Թագաւորութիւն, լաւ է զի այսու եղծանել և խանգարել կարասցուք զայս Թագաւորութիւն. նախ ընդ երկու բաժանել երկու Թագաւորաց արշակունեաց՝ զորս կացուցաք, ապա և ընդ նոսա կրճել զանասցուք, աղքատացուցանել, ՚ի մէջ արկանել ՚ի ծառայութիւն, զի մի կարասցեն ՚ի մէջ մեր ամբառնալ զգլուխս։

Եւ հաստատեցին զայս խորհուրդ. ընդ երկու զաշխարհն բաժանեցին։ Բաժին կողմանն Պարսից էր Թագաւորին Խոսրովու, և բաժին մասինն Յունաց էր Թագաւորին Ա.ըշակայ։ Բայց և ՚ի նոցանէ բազում գաւառք կրճեալք հատեալք այսր անդր, և միայ սակաւ մասն յաշխարհայ երկոցունց առ էր կոսեան Թագաւորն։ Բայց սակայն երկոքեան Թագաւորքն Հայոց՝ Ա.ըշակ և Խոսրով, որ Արիւնքն գաւառքն միացին Թագաւորութեանն Հայոց երկոցուն կողմանց ՚ի մէջ իւրեանց, և երկոքեան Թագաւորքն արշակունիքն ՚ի մէջ երկու բաժնացն սահմանս արկեալ հաստատեին խաղաղութիւն, և երկիրն Հայոց երկոքեան բաժինքն, երկուց Թագաւորացն հնազանդեին իւրաքանչիւր բաժնի իւրաքանչիւր Թագաւորի. բայց սակայն մեծ էր Խոսրովու բաժին նորա քան զԱ.ըշակայ։ Եւ բազում գաւառք յերկոցունցն հատան. նուաղեաց բաժանեցաւ ցրուեցաւ Թագա-

1 Յօրինակի միւսմ դիպ։

տորութիւն Հայոց, պակասեաց յիւրմէ մեծութենէն յայն ժամանակն և յապայ։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս եպիսկոպոսացն, որ երևելիք էին յայնմ ժամանակի՝ ի մա- սին յաշխարհին Խոսրովու յերկրին Հայոց՝ որ ընդ Պարսից ձեռամբ էին. նախ վասն վարուց Զաւինայ։

Եւ էր Օաւէնս այս անուանի զաւակ Պզբիանոս եպիսկոպոսի՝ ի գեղջէ Մանաւազկերտոյ. էր սա բա- րեյիւք այր չարաչար խիստ և նախանձոտ։ Բայց սա կայն կրօնս մի, զոր եդ յիւրում ժամանակի. զի՝ամ քահանայից ուսոյց առնել հանդերձ զինուորաց։ Օ՝ի թողէն զկրօն առաքելական եկեղեցեացն, սկսան գը- նալ ըստ իւրեանց մտաց. զի ոչ ըստ կրօնիցն ագանէ- ին քահանայքն զպՀնաւորն, որպէս օրէնն էր՝ի քնէ, այլ սկսան զնոտորկտուրսն՝ի վերայ ծնգացն ունել։ Եւ զարդարէին զՀանդերձս իւրեանց պէսպէս նա- րօտաք, և սիգայինն որպէս ոչ վայել էր. և զմորթ մե- ռելոտիս գազանացն քահանայքն անխտիր ագանէին, որ ոչ վայել էր։ Եւ ինքն Օաւէնն աթխնեալ և և զտապակեալ զժապաւինեալ նարօտաք ագանէր, զսամուբենիս և զինգմենիս և զպայլենիս ագանէր. և աղուեսենիս զանձամբ արկեալ, անխտիր՝ի բեմ եղեալ նստէին։ Արկորստութիւն ագահութիւն անառա- կութիւն կայր Օաւէն զՀամ աւուրս կենաց իւրոց. և սա կալաւ զտեղի զՀամ աւուրս կենաց իւր ամն երիս։

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս Շահակայ կորձէի, որ եկաց ի տեղի Զաւէնայ գլուխ եպիսկոպոսաց։

Զոր Շահակ կորձեայ եկաց գլուխ եպիսկոպոսաց փոխանակ Զաւէնայ յետ մահու նորա ամս երկուս։ Նա էր սա այր քրիստոնեայ, բայց ոչ ինչ զջաբեցաւ ընդ կարգս Զաւէնայ՝ զոր եգեալն էր նորա՝ փոխել. սակայն առաքինորդեաց սա ամս երկուս, և փոխեցաւ յաշխարհէ։

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս Աթոռակայ մանազկերտացոյ, որ եկաց գլուխ եպիսկոպոսաց յետ Շահակայ։

Զոր յետ մահուն Շահակայ եպիսկոպոսի եկաց գլուխ եպիսկոպոսաց Աթոռակ ոմն ի զաւակէ Աբիանոսի եպիսկոպոսի, այր քրիստոնէամիտ ճգնապաշտ արդար. և առաքինորդեաց դրամն Խոսրովու։ Նայց միայն վասն կրօնիցն Հանդերձոյն զեղեալ կարգն ըստ կրօնիցն Զաւէնայ գնայրէն սոքա։

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս Փաւստեայ և Զորէթայ եպիսկոպոսաց։

Էր առ այնմ ժամանակաւ Փաւստոս եպիսկոպոս։ սա ի ժամանակս Վերսէսի եպիսկոպոսապետին՝ էր ի տան նորին իբրև Թէլեակալ։ Այնպէս Զորէթ այր նեղբլխի ընդ նոսին. քանզի էին ի նեղբնի Հայրապետին ի տան իւրում ընդ նորա ձեռամբ երկոտասան եպիսկոպոսք, աթոռակիցք իւր գործա-

կիցք և խորհրդակիցք : Ամէն զայլոց գաւառաց ՚ամ եպիսկոպոսեանն , որ ընդ նովաւ . այլ երկոքեան սո- քա յայնց երկոտասանիցն : Նա էին սոքա ՚ի տեսչուն աղքատանոցացն հաւատացեալք , և յամենայնի էին հաւատարիմք նորա ՚ի ժամանակս նորա , և յամն Խոսրովու և Ա.ըշակայ երկուց Թագաւորացն բաժա- նաւորացն , մինչ դեռ ևս կային սոքա կենդանիք :

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս Աւոտոմայ եղբօր Փաւստեայ եպիսկոպոսին :

Այն էր եղբայր մի Փաւստեայ եպիսկոպոսի , կրօ- նադգեաց մենակեաց անապատակեաց լեառնական սքանչելի : Նա էին լեալ սոքա աղգաւ Հոռոմ . այլ այրս այս մեծաւ վարեօք շրջեր ՚ամ աւուրս կենաց իւրոց : Նա էր սա բնակեալ յարայրատեան գաւա- ռին , և վարէր նա Հոգւով սրբով . շրջեր սա յանա- պատս մերկահանդերձ Ճարակաւոր ՚ի լերինն մինչև յօր հանգստեան իւրոյ : Ա.պա հանկեաւ սա . և բե- րին յանապատէն զմարմին սորա , Թաղեցին ՚ի քուն ՚ի գեղջն Հայրապետին Ա.երսէսի , որում անուն Ա.մքն կոչի . և ամի ամի զյիշատակ նորա կատարէին :

ԳԼՈՒԽ Է.

Յաղագս Արտեմայ եպիսկոպոսին Բասենոյ :

Յաջմ ժամանակի երևեցաւ էր յեպիսկոպոսան , որ էին , Ա.րտեմ եպիսկոպոս Բասենոյ , այր ծերու- նի պատուական և պիտանի : Արբուք և Ճշմարտուք էր վարեալ . իբրև արժանի եղեալ սա Հոգւոյն սրբ- բոյ՝ մեծաւ զօրուք շրջեր , առնէր նշանս մեծամեծս առն քաջումն : Ա.ա աշակերտեալ մեծին Դանիէլի՝ որ էրն յամն Տիրանայ արքայի , և կենդանի կայր

յամին Խոսրովու արքայի և Բ. ըշակայ, երկուց Թա գաւորացն Հայոց։

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս Ցոհաննու եպիսկոպոսի, և վարուց նորա, և անմաուրենն և շաղաշուտ խօսիցն և գործոցն, և նշանացն՝ որ յայ՝ի վերայ նո րա եղեն։

Ա՚յլ Ցոհան եպիսկոպոս, որդի Փառնեայ Հայ րապետի, հինաւուրց. Թէ արժան իցէ զնա կոչել եպիսկոպոս։ Նա էր սա այր կեղծաւոր, և երևեցու ցանէր ինքն զանձն իւր մարդկան պահող և խորգա հանդերձս. մինչ զի մոգս անգամ ոչ ագանէր, այլ զամառն հեակով պատէր, և զձմեռն կեմով։ Նա յա գահութե առանց չափոյ էր հեղեալ, և ոչ կարէր տալ զագահութիւն իւր ընդ երկիւղին Այ. այնչափ ինչ, զի զերս անարժանս և չհաւատալիս գործէր։

Օ՚ի էր երբեմն դիպեալ՚ի Ձանապարհի ուրեմն, զի նստէր նա՚ի գրաստու վերայ և գայր. եկ դիպե ցաւ սմա օտար պատանի մի աշխարհական հեծեալ՚ի ձի, սուսեր ընդ մէջ, Թուր զգօտւոյ, աղեղնա կապարճ զմիջոցին. լուացեալ զհերս իւր օծեալ մեր ձեալ, վարսակալ եդեալ՚ի գլուխ իւր, և օդիկ[1] արկեալ զուսովք իւր. և գայր զձանապարհս իւր. Թերևս յաւազակութէ։ Նակ ձին՝ յորում հեծեալ մեծ հասակաւ, և էր գունաւոր, գնացող, մինչ զի՚ի բացէ տեսանէր եպիսկոպոսն Ցոհան զձին, մեծա պէս զարմացեալ՝ ակնկառոյց լինէր։ Նպա երբէք եկն մերձեցաւ հեծեալն մօտ՚ի նա անդր, ապա սպա սեալ Ցոհաննու՝ բուռն հարկանէր զերասանակաց ձիոյն, և ասէր. Նչ դու վաղվաղակի՚ի ձիոյ այսի, զի բանք են ինձ ընդ քեզ։ Նսէ այրն. Օ՚ի ոչ դու զիս գիտես, և ոչ ես զքեզ, զի՞նչ այն բանք իցեն, զոր դու ընդ իս իցես խօսելոյ։ Նանաւանդ զի այրն

1 Յօրինակի միւսմ յօդիկ։

արբեալ ևս դիպեցաւ, և շատ յամառեաց այրն իջա-
նել ՚ի ձիոյն: Ապա բռնադատեաց զնա Յոհան, ի-
ջոյց ՚ի ձիոյ անտի. և առ տարաւ զնա մեկուսի ՚ի
Ճանապարհէն: Եւ առնն խոնարհել հրամայեր և
ասէր. Օ՜ երիցուքե՛ ձեռն դնեմ ՚ի վերայ քո: Իսկ
նա տայր պատասխանի զանձնէն, եթէ այր աւազակ
սպանող չարագործ և խառնաջնաց լեալ ՚ի մանկու-
թենէ իմմէ, ես ոչ ինչ եմ արժանի այդպիսի իրաց.
և այժմ գեռ ՚ի նմին գործ կամ: Եւ շատ ՚ի վեղ ե-
կեալ յամառեր այրն, և նա ևս չար քան զնա: Ապա
բռնաթափ զգեստեալ զայրն, զներ Յոհան զձեռն
իւր՝ առնել զնա երէց. և յարուցեալ հրամայեր լու-
ծանել զհանգոյցս մեհենոցին, և արկանել նմա աղա-
բողն: Եւ ասէր. Երթ ՚ի գեղդ քո, և լիջիր դու
անդ երէց գեղջն՝ ուստի ես: Եւ անգամ ոչ դիտեր
զայրն թէ յորմէ՛ գեղջէ էր. ինքն Յոհան մատու-
ցեալ բուռն հարկաներ զձիոյն, և ասէր. Ա՛յս ինձ
կօշիկք լիցին, փոխանակ զի երէց արարի զքեզ: Իսկ
այրն յամառեալ ՚ի վերայ ձիոյն չառնոյր յանձն տալ.
ապա բռնաթափ յինքն հանեալ զձին, և զայրն արձա-
կեաց: Եւ այս ՝ամ իրքս վասն ձիոյն եղեն:

Ապա այրն թէ ոչ կամ՚ք՝ աղերսողն արկեալ, գը-
նայր ՚ի տուն իւր, և երթեալ մտանէր ՚ի մէջ ընդա-
նեաց իւրոց, ասէ ցկին իւր և ցընդանիս. Ա՛րիք յա
ղօթս կամք: Եւ նոքա ասեն. Ա՞ուլիս դու, դե՛ւ ու-
լեմն հարաւ ՚ի քեզ: Իսկ նա ասէ. Ա՛րիք կամք յա
ղօթս, վասն զի երէց եմ: Իսկ նոքա զարմացեալ,
մերթ չհինկին, մերթ ծիծաղէին. մինչև բազում ան-
գամ յամառեալք, ապա ուրեմն հաւանեցան կալ
յաղօթս ընդ նմա: Ապա ասէ կինն ցայրն իւր. Ո՞չ
դու երախայ էիր, և չէիր մկրտեալ: Ասէ այրն ցկինն
իւր. Ա՛յո՛ւ ցոյց, չէա յիշել, և ոչ ես յիշեցի զայդ
ասել ցնա. զիս երէց արար, և զձին սանձաւ թամ-
բաւ առ և անց: Եւ ասեն ցայրն ընդանիքն իւր.
Յարիցես անդրէն գնասցես առ եպիսկոպոսն, և ա-
սասցես. Ա՝կրտեալ չէի, զի՛ արարեր զիս երէց: Իսկ
նորա յարուցեալ գնացեալ առ եպիսկոպոսն, ասէ
ցնա. Ես մկրտեալ չէի, զի՛ արարեր զիս երէց: Եւ
ասէ Յոհան. Ա՝ափորով միով ջուր բերէք: Եւ ա-

ռեալ զջուրն էարկ զգլխով նորա , և ասէ . Լրե՛ , մկրտեցի զքեզ : Նա արձակեր զայրն վաղվաղակի յիւրմէ :

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս նորին Յոհաննու :

Այրեմն սոյն Յոհան անցանէր առ այգեօք ուրումն . և էր ժամանակն զայգիսն յատելոյ : Ըզաղաչական առ նա այր մի յայգւոյն , և ասէ . Օրհնեա , տէր եպիսկոպոս , զմեզ և զայգիս : Ըսէ Յոհան . Փուշ և տատասկ բուսցէ : Ըսէ այրն . Ի մարմինդ քո բուսցի փուշ և տատասկ , փոխանակ զի տարապարտուց անիծանես զմեզ : Նա եղեն նշանք չայ . զի իբրև ջրգաւ եպիսկոպոսն ի վանս իւր , հասին հարուածք ի վերայ նորա , սկսաւ ընդ ամ անդամս մարմնոյ նորա որպէս զփուշ հարկանել : Նա մեծապէս շտապեալ անկեալ ի տանջանս չարաչարս հարուածոց , և ի մեծ տագնապի կայր աւուրս բազումս : Ըպա յղեաց կոչեաց առ ինքն զայգուորդն , աղաչեաց զնա առնել ի վերայ նորա աղօթս , զի փրկեսցի նա ի ցաւոցն : Ասէ գուրդն ասէր . Ոսկ ես ոչ եմ , զի կարեմ զոք օրհնել կամ անիծանել . Թող Թէ զայր եպիսկոպոս : Ոսկ նա բռնադատեր զնա չայնժամ . մինչև յառնէր այգուրդն կայր յաղօթս և ասէր . Տէր ած , դու գիտես՝ զի ես այր մեղաւոր եմ և անարժան , ոչ գիտեմ զաղմուկս՝ յորում ըմբռնեցայս . դու փրկեա զիս չայս ի չարէս , զի ասեն՝ Թէ զայր եպիսկոպոս դու անիծեր , և ասեն՝ քո բանիւ եղև : Օ ի լաւ էր ինձ մահ . քանզի չգիտեմ զայս՝ զոր ինչ զինէն ասեն : Նա զայս ասացեալ՝ անդէն բժշկեցաւ եպիսկոպոսն , և սկսաւ չամենայն մարմնոյն փուշն ի բաց Թափել . և էր իբրև զփուշ խոտոց . վաղվաղակի չարուցեալ ողջացաւ չախտէն :

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագս նորին Յովհաննու։

Սոցն Յովհան եպիսկոպոս որդի Փառնայ յոր- ժամ երթայր առ Թագաւորն Հայոց, խաղակատակ լինէր նոցա. որպէս խաղալովն զանձն իւր կրթէր յա- գահութե, որում ծարաւեալ պաղեալ փափաքէր, սակայն միհանեսք այն էին նորա։ Ի չորք անկեալ յոտս և ի ձեռս սողեր առաջի Թագաւորացն, և զուղտու զձայն ածէր կառաչելով, զօրէն ուղտու այն պէս փարելով։ Ինդ կառաչելն ապա մի մի բան խառ- նելով առնէր ի ձայն կառաչելոյն, ասելով՝ Թէ ուղտ եմ, ուղտ եմ, և զարքայի զմեղս բառնամ. դիք ի վե- րայ իմ զմեղս արքայի, Թող բառնամ։ Նոյնպէս Թագա- ւորքն զմուրհակս գիւղաց կամ զաղարակաց գրեալ և հնձեալ դնէին ի վերայ ողնին Յովհաննու փոխա- նակ ընդ մեղաց իւրեանց. և ի Թագաւորացն Հայոց ստացաւ իւր գեղջ և ագարակ և գանձս յուղտն լինելոյ և զմեղսն բառնալոյ ըստ բանիցն։ Նմայսիսի էր այրս Յովհաննս կապեալ յըրաժդութե և յագա- հութե զամ աւուրս կենաց իւրոց. զայսպիսի գործս գործեր վասն ագահութե, որ չէր արժան։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս Կիւրակոսի եպիսկոպոսի։

Այն էր եպիսկոպոսն Տայոց Կիւրակոս, որ Շա- հապ անուն կոչէր, այր ճշմարիտ ածապաշտ ըստ կա- մացն այ, և ուղիղ ճշմարտութե առաջնորդէր ժո- ղովրդեանն իւրում. և վարէր զեպիսկոպոսութե իւր ըստ կամացն այ զամ աւուրս կենաց իւրոց։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Ցաղագս Ջորթուազու եպիսկոպոսի Վանանդայ։

Այր Ջորթուազ եպիսկոպոս Վանանդայ գաւառին, այր՝ որ պարկեշտ արժանի ՚այ, արբեալ Աստուծով սրբով. քրիստոնէութիւնն գնայր գործէր, առաջնորդէր իւրում ժողովրդեանն ըստ կամացն ՚այ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Ցաղագս Տիրկան և Մովսէսի եպիսկոպոսաց։

Այս երկու եպիսկոպոսք Խաչենայ գաւառին, Մովսէս և Տիրկ արք լուք հրեշտակակրօնք, որ, հաւատացեալք, հրաւիրմանն արժանիք։ Ընդ նորդէին իւրաքանչիւր ժողովրդոց ՚ի Ճանապարհն ՚այ զնամ աւուրս կենաց իւրեանց։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Ցաղագս Ահարոնի եպիսկոպոսի։

Այր զայնու ժամանակաւ Ահարոն եպիսկոպոս ՚ի միջ Հայոց աշխարհի. այր երևելի և անուանի, քաջ առաքինի. առաջնորդ իւրոց ժողովրդոց լուսաւորապէս զնամ աւուրս կենաց իւրոց։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Ցաղագս գլխաւորին եպիսկոպոսին Ասպուրակայ։

Այր էր գլխաւոր եպիսկոպոսաց Հայոց Ասպուրակ. այր որ և բարեպաշտօն, երկիւղած յ՚այ և ՚ի մարդկանէ։ Հայց ոչ ինչ կարէր յանդիմանութիւք խօսել ընդ ումեք. այլ ինքն ՚ի լռութիւն էր և ՚ի համես-

տուԹԵ՛ի զգաստուԹԵ՛ի պարկեշտուԹԵ՛, ՛ի պահս և յաղօԹս յաւմ ժամ աղաչէր զՅԾ։ Բայց ՛ի հանդերձն զգեհլոյ՝ ըստ կրօնիցն Օ աւինայ գնայր նա. ագանէր զամձայեալս և ժապաւինեալս։ Բայց էր սա այր քաղցր և խոնարհ, բարեբար և մարդասէր զՅամ աւուրս կենաց իւրոց։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Յաղագս Գնդայ սրբոյ և առաքինոյ, որ էր գլխաւոր յայնմ ժամանակի յամ աբեղայիցն Հայոց անապատաւորացն մենակեցացն և վաներայիցն։

Այս էր Գինդա այս ՛ի Տարօն գաւառէ, և լեալ սա աշակերտ մեծին Գանիէլի. և յետ նորա էր գլուխ աբեղայից, և վարդապետ միանձանց, և առաջնորդ մենակեցաց, և վերակացու վաներայից, և ուսուցիչ յամ անապատաւորաց. և տեսուչ ամենեցուն՝ որք միանգամ վանս սիրոյն Յայ յաշխարհէ էին մեկնեալ, ՛ի յանապատս բնակեալ, ՛ի քարանձաւս ամպացեալք յայրս և ՛ի քարածերպս երկրի, և միաՀանդերձք բոկագնացք զգաստացեալք խոտաՃարակք ընդաբուժք արմատակերք, զօրէն գաղանաց ՛ի լերինս շրջելին՝ լեշկամաշկօք և մորթօք այծենեօք, նեղեալք տառապեալք և տարակուսեալք, յանապատի մնալոբեալք, ՛ի ցուրտ և ՛ի տօթ, ՛ի քաղց և ՛ի ծարաւ վանս սիրոյն Յայ։

Օ այսպիսի ինչ համբերուԹԵ՛ առեալ կրելին յանձինս իւրեանց զՅամ աւուրս կենաց իւրեանց. զի ոչ արժէ աշխարհս բնաւ գնոսա, որպէս և գրեալ է. զորս էին երամով Թռչնոց բնակեալ էին սոքա ՛ի ծագս[1] վիմաց, ՛ի սորս քարանձաւաց, անինչ և անստացուածք անխնամք, առանց դարմանոյ՝ ամենևին չտանել մարմնոյ։ Այս էր նոցա բուն գլխաւոր գործն Գինդ, զի առՀասարակ Յամ մարդիկ երկրին Հայոց անուանեալ կոչէին սմա վարդապետ։ Բայց էին և ՛ի նոցունց

1 Յերկուս օրինակս ՛ի ծակս։

այլք աշակերտք, որք նմանեին իւրեանց վարդապետին և նորա ձեռնին, որոց անուանք այս են. Վաչակ, Ղրտոյտ, Մարախ. և Տրդատ լեալ էր սոցա ընդեր: Իսկ որ առ մեծիւն քահանայապետիւն Կեր սեսի էր լեալ սարկաւագապետ, և յետ մահուն Կերսեսի ի նոյն յառաջին վարդապետոն յանապատ տաւորաց դասս թևակոխեաց: Ղևոնդիոս ասէն Վինդ և զՄուշէ մանուկ ձեռասուն, հաղորդեր վարուցն մեծին Վռդայ. և այլք բազումք էին նոցա աշակերտք հրեշտակակրօնք, զորոց զվարս ոք պատմել ոչ բաւեսցէ:

Եւ էր ասէն Վինդ լի Հոգւովն Ա. և այք ընդ նմա, ըստ նմին օրինակի առնէին սոքա նշանս մեծամեծս և զօրութիւս բազումս և բժշկութիս հիւանդաց յանուն նոն Յեսի Քրիստոսի: Եւ ընդ բազում հեթանոս տեղիս շրջէին յաշխարհս հեռաւորս, և ի սփիւռս հեթանոսաց դարձուցանէին զմոլորութիւն բազմաց, և զբազում մարդիկ ածէին ի գիտութիւն կենաց և ի ճանապարհն ճշմարտութեանն: Եւ ասէն Վինդ ընդոր զամ անապատս մեհենակեցօք, և զամ շէնս վաներաս, և բազում յաշխարհին ուղղեալ կացուցանէր կարգս մարդկան զճեղքեալն կրօնիցն: Բայց սակայն ինքն առեալ վիճակ բնակութեանն ունէր զանապատն, ուստի բխեալ հոսեն ակունք Եփրատ գետոյն: Ընդէն բնակեալ ընդ ծագս [1] վիմացն, ուր յառաջոյս կայեանքն էին մեծին Վրիգորի առաջնոյ, որում տեղեացն Ասկիք կոչեն, ի նոյն ծագս էր բնակեալ մեծն անապատաւորացն Վինդ: Իսկ ասէն Մուշէ առ նմա հանապազորդեալ էր. բայց այլքն զայլ գաւառս շրջէին հրամանաւ իւրեանց գլխաւորին Վռդայ: Եւ որբոյն Տրդատայ կայեանք բնակութեանն էր ի գաւառն Տարօնոյ շինեալ գիւղ եղբարց:

1 Ծօրինակի միւսմ ընդ ծախս:



ՅՈՆԿ ԲԱՌԱՐԱՆ

Աբա 29։
Ագարակ 48։
Ագէ կոմս 185. 187. 232։
Ալէքանդրիոյ որդի Յուսկան 11. 35. 43. 47։
Ալանք 17. 144։
Անծուղ, փէ՝ Դալարիք։
Անարան Արշարունեայ եպիսկոպոս 270։
Արանայողղ 152։
Աղբիանոս 9. 45. 226. 263. 264։
Աղթամար 20։
Ալիտրաք 51։
Աղջնիք 21. 38. 42. 123. 130. 141. 142. 146. 159. 211. 212. 221։
Աղէք 144։
Ալոյհովիա 172։
Ալուանք 10. 13. 192. 193. 198. 210. 236։
Ամատունեաց տոհմ 17. 38։
Ամարաղ 15։
Ամիացիք 26։
Ամբ գեղ 265։
Ա յծեւիվիկ 77։
Ա յրարատ, Ա յրայրատ, փէ՝ Արարատ։
Անակ 6։
Անահիտ 219։
Անգեղ բերդ 142. 206։
Անգեղ տուն 140. 141. 142. 212։
Անդիկան 137. 138. 144։
Անդկան, փէ՝ Անդիկան։
Անդմըշ, փէ՝ Անյուշ բերդ։
Անդոյկ, փէ՝ Անդովկ։
Անդուկ, փէ՝ Անդովկ։
Անդովկ սիւնի 28. 44. 54. 56. 72. 116. 133. 161. 177։
Անի բերդ 142։
Անի քաղաք 28։
Անձեւացեաց տոհմ 29. 202. 233։
Անձիտ 29. 141. 160. 212։
Անյուշ բերդ 168. 169. 202. 205—208։
Անուշ բերդ, փէ՝ Անյուշ բերդ։
Աշտիշատ 8. 37. 48. 114։
Ապահունիք 51. 52։
Առաւելտոյ գեղ 117։
Առաւստոմ, փէ՝ Առուստոմ։
Առաքելարան հինաշակերտացն, փէ՝ Հանգիստ առաքելոցն։
Առեստ 19. 138։
Առեւծ լեառն 73. 218. 219։
Առլեզք 238։
Առուստոմ 265։
Արեւստան 133։
Արուբկ 109։
Արտաբակ 264. 270։
Արտամ 29։
Արտայական, Արտաշատական } 13. 16. 50. 124. 137. 141. 143. 144. 154. 160. 177. 187. 189. 192. 198. 200. 208։
Արտաշատայ գաւառ, փէ՝ Արտաշատական։
Արագած 144։
Արարատ 114. 144. 204. 262։
Արդհանիք 204։
Արիանոս 25։
Արիստակէս 6. 25։
Արձախ 210։
Արշակ որդի Տիրանայ 47. 52. 57. 66—70. 73. 90. 103. 106. 107. 110. 113. 117. 120—169. 191. 201—208։
Արշակ որդի Պապայ 244. 245. 252. 255—257. 261. 262. 265. 266։
Արշակաւան 107. 110. 112։
Արշակունիք 90. 117. 120. 142. 170։
Արշամունիք 123։
Արշարունիք 28. 54. 72. 105. 129։
Արշաւիր կամսարական 28. 44. 54. 56. 72։
Արուեստան 136։
Արտագերք 129. 170. 171։
Արտանեցան 249։
Արտաշատ 18. 30. 171. 172։

Արտաշէս մամիկոնեան որդի Մա-
նուէլի 242։
Արտաշէն 239։
Արտաշէր որդի Մանուէլի 256։
Արտաթագէրք, փե՛ս Արտագէրք։
Արտաւազդ մամիկոնեան 28. 47։
Արտաւազդ մանուկ որդի Վաչէի
մամիկոնենի 252–255։
Արտաւան իշխան Վանանդայ 38։
Արտեւան 167։
Արտիթ 265։
Արտոյտ 272։

Բաբիկ սիւնի 250. 253. 254։
Բագաս, փե՛ս Բագոս։
Բագասեր 110։
Բագաւան 192. 251։
Բագէնք 104։
Բագոս 138. 139։
Բագուան, փե՛ս Բագաւան։
Բագրատ բագրատունի 17. 71։
Բագրատունդ 105. 172. 176. 232.
251. 252։
Բագրեւանդ, փե՛ս Բագրատունդ։
Բախիշն 188. 192։
Բակուր 21։
Բալասաճէք 15. 17։
Բաղկ 239։
Բամբիշն 43. 48. 68։
Բառաէջ 38։
Բասեան 10։
Բասէն 21. 55. 139. 142. 265. 270։
Բատ 235. 237. 238. 243։
Բարսեղ երիցապետ Կեսարիոյ 72.
94–103։
Բարսխլիոս. փե՛ս Բարսեղ։
Բարսիղիոս. փե՛ս Բարսեղ։
Բզնունիք 19. 114։
Բնաբեղ 32. 206։
Բոյեկան 152։

Գաթէք 15։
Գամիլք 30. 44. 45. 68. 72. 94.
104։
Գայիանէ 37։
Գանձակ 16. 137. 187. 198. 200.
203. 235։
Գառնի 18։
Գարդմանաձոր 45. 159. 210։
Գարդմանայ ձոր, փե՛ս Գարդմա-
նաձոր։
Գարեգին Ռշտունի 17. 178. 242. 243։
Գարջայլ Մաղխազ խորխոռունի
104. 245. 255։
Գինդ 271. 272։
Գղուարք 15։
Գնէլ 70. 104. 116–122. 133. 155.
187. 203. 233։
Գնիճ 29։
Գնձոնիք 104։
Գնունիք 29. 66։
Գոգոլք կամ Գուգոլք, փե՛ս Գու-
գալք։
Գոլճն 19։
Գորուճ 29։
Գուգալք 15. 211։
Գուգալք 159։
Գումանդ Ճապուհ 148. 248։
Գրիգոր լուսաւորիչ 1. 5. 15. 29. 32.
35–38. 40. 42. 48. 73. 114. 117.
230. 272։
Գրիգորիս 10. 13. 14. 17. 37։

Դալարիք 52. 53։
Դանիէլ իշխան 72։
Դանիէլ եպիսկոպոս 36. 38. 42. 219.
221. 265. 271։
Դանուն 243։
Դասպետարէ 159։
Դատ 21։
Դատաբէ, Դատաբէն 19. 20։
Դարանաղէ, Դարանաղեաց գա-
ւառ 6. 28. 29. 32. 36. 114. 142.
187։
Դարեւնից բերդ 16. 153. 187։
Դարխլնայ բերդ, փե՛ս Դարևնից։
Դարօնից բերդ, փե՛ս Դարևնից։
Դգղակ փե՛ս Դղակ։
Դեհկան 149։
Դեմետ գնձոնի 104։
Դիմաքսենից առեմ 38։
Դղակ 191. 203–205։
Դմաւոնդ վսեմական 147։
Դուին 18։
Դրաստամատ 205–208։
Դրաստամատ, փե՛ս Դրաստամատ։

Եգերսուանք 15։
Եգիպտոս 25։
Եկեղեցի գաւառ, Եկեղեցեայ գա-
ւառ 6. 36. 38. 48. 114. 142. 216.
219. 262։

Եպիփան աշակերտ Դանիէլի 42. 218. 221–224:
Եռանդ 188. 192:
Երուանդաշատ 172:
Եւսեբիոս եպիսկոպոս Կեսարիոյ 72. 94–98:
Եփրատ 115. 191. 192. 254. 272:

Զարաւանդ 18:
Զարեհ 29:
Զարեհաւան, Զարեհաւանդ 172. 176. 251:
Զարեհվան, տե՛ս Զարեհաւան:
Զարիշատ 172:
Զարմանդուխտ 244. 245. 246. 248:
Զաւէն 263. 264. 270:
Զիկ 150. 151. 169. 177. 187. 261:
Զինդկապետ 154:
Զնդակապետ, Զնդակապետ, տե՛ս Զինդկապետ:
Զոմն 38:
Զորթ 264:
Զորթուազ 270:
Զուխթ 172. 174. 175:
Զրուանդուխտ 261:

Ընդհիշ, տե՛ս Աչյուշ բերդ:
Ընձաքեարս 24:
Ըռըշտունիք, տե՛ս Ռշտունիք:

Թադէոս 5. 30. 40. 71:
Թաւաստաղք 15:
Թաւրիժ, Թաւրէշ 144. 152. 189:
Թեկղ. Թեկղէ 101:
Թէոդոտոս 102:
Թիլէն 6. 38. 219. 219:
Թոդան 6. 29. 32. 36:

Ժամակք 15:
Ժարայէլ 41:

Լսին 120:

Խադ 105–109. 118. 214:
Խաս 216. 218:
Խաղաղիք 179:
Խորխոռունիք 29. 104:
Խորով Ա. 1. 6:
Խորով Բ. 6. 15. 18. 26. 28. 29:
Խորով արշակունի 261. 262. 264. 265. 266.
Խորովակերտ 18:
Խուժաստան 205:

Ծովիք մեծ 6. 21. 32. 42. 72. 114. 141. 160 206. 212. 221. 222:
Ծովիք Շահէի կամ Շահունոց 21. 141:

Կաղդք 160:
Կամիենական տոհմ 17. 29:
Կամսարական տոհմ 129:
Կարէն իշխան ամատունեաց 38. 169. 177. 187:
Կարին 105. 241. 256:
Կաւոսական տոհմ 145:
Կեսարիա 30. 44. 45. 68. 72. 99. 226. 231:
Կեշկէն 104:
Կիրակոս կամ Կիւրակոս Շահապ 269:
Կոգ, տե՛ս Կովկ:
Կողբացիք 29:
Կողթ 210:
Կոմս մամիկոնեան 239:
Կոստանդիանոս 25. 55:
Կովկ 16. 106. 187. 251:
Կոտակ, տե՛ս Խորով Բ:
Կորդիք 159. 209:
Կորդուք 21. 22. 42. 123. 159. 209. 219. 220:
Կորճէք 158. 251. 255:
Կուր 15. 210. 211:

Հաբանդ 15:
Հաբուժինք 104:
Հազարաւուխտ 137. 138. 746:
Համազասպ, Համազասպեան 243:
Համազասպուհի 178. 242. 243:
Հայ 171. 172. 173:
Հայոց մարզպանք 45. 46. 71. 113. 114. 115. 171. 191. 217. 218. 233.
Հանդիստ առաքելոցն 7. 36:
Հաշտէնիք 21. 29:
Հայեաց դրախտ 38. 43:
Հայեաց կամ Հայեկայ գետ 48. 49:
Հնձմատակք 15:
Հերակլ, տե՛ս Վահագն:
Հէր 18:
Հիւրկանոս 173:

Հմայեակ մամիկոնեան որդի Մա-
նուէլի 242։
Հոնք 14. 15. 17. 144։
Հոտոտք 25. 187. 202։
Հոգեխմիմ 37։
Հրեայ 171. 172. 173։
Հրեշտղուամ, ել Հրեշտղուամ։
Հրեշտղուամ 151. 152։
Հրսխտոր 104։

Զինատեսանէն տղքունի 19. 138։
Զինատեսանք, ել Զինատեսանք։
Զորայ գաւառ, ել Զորոց աշ-
խարհ։
Զորոց աշխարհ 29. 159։

Ճնինք 199. 240. 241։
Ճղիք 15։

Մազդեղունք 177—179. 188. ել Ե
Պարսք։
Մազքուէթք 10. 14. 16. 17։
Մակաբէ 28։
Մակեդոնիա 78։
Մախազեան, Մախխազեան 147.
157։
Մախխազ. ել Գարջոյլ։
Մաղխազունեան տուն 29։
Մամբրէ 221. 222։
Մամուշեղ 221։
Մանազկերտ 226. 263։
Մանակ 21։
Մանաճիհր, Մանաճերհ 24։
Մանասպ 29։
Մանաւազ 29։
Մանաւազեան տոհմ 9։
Մանաւազկերտ. ել Մանազկերտ։
Մանուէլ մամիկոնեան 239—258. 261։
Մասեաց լեառն 51։
Մատաթիէ 28։
Մարաթա 272։
Մարգարէանցն Յոհաննու. ել Յո-
հաննու Կարապետի մատուռն։
Մարիամ 81։
Մարի երէց 125. 126. 165։
Մարիճ 154։
Մարուճան, ել Մարիճ։
Մարք 143. 160. 209։
Մեծամորի 18։
Մեհատ անձեւացի 104։
Մեհենն Ուրշտունի 104։
Մեհանդակ. ել Մեհենդակ։
Մեհենդակ Ուրշտունի 17. 44.
47. 72։
Մեհընդակ. ել Մեհենդակ։
Մեհունդակ. ել Մեհենդակ։
Մերուժան արծրունի 140—142.
148—160. 176. 177. 178. 189. 193.
247. 250. 255։
Մղուր 141։
Մէջաշխարհն Հայոց 136. 143. 160։
Մինջագեաք Ասորոց 136։
Մինջաշխարհն Հայոց. ել Մէջ-
աշխարհն Հայոց։
Մծբին 23։
Մծբնացիք 23. 26։
Մծուրք 115։
Մշկան 153. 154։
Մոգաց անդերձապետ 157։
Մովսէս մարգարէ 23։
Մովսէս եպիսկոպոս 270։
Մուշեղ մամիկոնեան 170. 185-192.
193—195. 198—202. 203. 209—213.
218. 228. 231. 233. 235—238. 240.
241։
Մուշ 272։
Մուշկ սահառունի 104։
Մուրիկ 118։
Մռիկան 158. 249։
Մռկան, ել Մռիկան։
Մրջևնիկ 123։

Յակոբ Մծբնայ. 22—26։
Յակոբայ ալբեւր 24։
Յոհան եպիսկոպոս 266—269։
Յոհաննու Կարապետի մատուռն
7. 36. 44. 117. 252։
Յուդա մակաբէ 28։
Յուսիկ Լծոն լուսաւորչին 10.
29—32. 35. 71։
Յուսիկ եպիսկոպոս 266։

Վահճաւան 173։
Վերսէհ ալքայ Պարսից 50. 55. 59.
177։
Վերսէս մեծն 43. 48. 68—95. 98.
99. 104. 106. 108—114. 117—123.
129. 161. 175. 186—188. 193—200.
211—219. 227—231. 257. 264. 265։
Վեհիա 25։
Վծբին, ել Մծբին։
Վոյ իշխան 72։

Նոշիրական 159. 209.
Նորշիրական, փե՛ս Նոշիրական:
Նպատ լեառն 192. 193. 195:

Շահաշէն 210:
Շահակ յայորդի Փառնայ 45:
Շահակ կորձեայ 264:
Շահապ, փե՛ս Կիրակոս:
Շահապիվան 117:
Շահէի կամ Շահունոց Դուիք. փե՛ս Դուիք Շահէի:
Շահէն իշխան 29:
Շաղնատ 42. 218. 219. 220:
Շապուհ արքայ Պարսից 124—126. 177. 192. 193. 200—208. 236. 243:
Շապուհ Գուժանդ, փե՛ս Գուժանդ Շապուհ:
Շապուհ Վարազ. փե՛ս Վարազ Շապուհ:
Շապուհան անգերձապետ 157:
Շաւասպ արծրունի 47. 115:
Շիրակ 28. 129:
Շղթիք 15:

Ոխաս, փե՛ս Ոսխաս:
Ողական բերդ 191:
Ողոմպէ 122:
Ոսխաս 55. 139:
Ոսկիք 272:
Որդորու 10:
Որդանիք 9. 10:
Որմիզդուխտ 160. 179:
Ուռհա 231:
Ուռնայր 192. 193. 198. 199. 200. 236:
Ուտի 210:

Չունակ, Չոնակ 123

Պաղեստինացիք 171. 173:
Պապ որդի Յուսկան 11. 35. 43. 47:
Պապ որդի Արշակայ 122. 155. 156. 170. 185. 193—205. 212. 214—216. 226—234. 241. 244. 248:
Պարգեւ իշխան 72:
Պարսք 18. 20. 21. 26. 36. 50. 55—58. 187:

Ջանջանակ 18.
Ջրն 71:
Ջրաբաշխիք 18:

Ռաստոմ 91.
Ռշտունիք 29. 24. 46. 104. 178:

Սակաւան անգերձապետ 156:
Սահառունիք 29. 38. 235. 238:
Սահառունիք, փե՛ս Սահառունիք:
Սաղամաս 153:
Սաղամուա 160:
Սամ սիւնի 250:
Սամուէլ մամիկոնեան 179. 255:
Սանատրուկ 5. 115. 142:
Սանէսան 14. 15. 16. 17:
Սատաղ 16. 55:
Սասան 50:
Սարարադ նոյն ընդ Աւրարատ 22. 24:
Սարգիս 101.
Սիւնիք 21. 117. 133. 177. 249. 250:
Սիւս 119. 120:
Սուրէն Պահլաւ 149. 150. 151. 245—248:
Սուրիկ 104:
Սպանդարատ կամսարական 129:
Սպէր 256:
Ստեփաննոս 77:

Վահագն 37. 38:
Վահան ամատունի 17. 20:
Վահան մամիկոնեան 160. 176. 177. 178. 179:
Վահրիճ 147. 148:
Վաղարշ 29:
Վաղարշակ որդի Պապայ 244. 245. 252. 256:
Վաղարշապատ 16. 172:
Վաղէս 57. 80. 90. 95. 98. 99. 100—104:
Վաղինակ սիւնի 21. 250:
Վան 172. 178. 243:
Վանանդ 29. 270:
Վասակ 272:
Վասական նախարար Պարսից 153:
Վասէ մամիկոնեան որդի Արտաւազդայ 9. 16. 18. 20. 21. 26:
Վասէ մամիկոնեան 238. 240. 255:
Վասէ արծրունի 47.
Վասակ մամիկոնեան 44. 47. 66. 104. 124. 125. 160—162 168. 169. 170. 185. 189. 240:
Վասնեայ դաշտ 14:

Վ. Թրագ կամինեական 17։
Վ. Թրագ շահունի 29։
Վ. Թրագ իշխան գիմաքսենից 38։
Վ. Թրագ Շապուհ 49. 50. 51—53. 56։
Վ. Թրագ իշխան պարսիկ 249։
Վ. Թրագ լեառն 252։
Վ. Թրագդատ 234—237. 238. 240—244։
Վ. Թրագդուխտ 43։
Վ. Թրդան մամիկոնեան 66. 104. 117։ 126—128. 178։
Վ. Թրդան որդի մամիկոնենին 128։
Վ. Թրդանգուխտ 256. 257։
Վ. Թրդանոյշ 251։
Վ. Ին 145։
Վ. Իրք 10. 13. 211։
Վ. Որոթ 29։
Վ. Սեմական, պէս Դմաւունդ և Ապահան։
Վ. Յեթանէս 1. 6—13. 16. 19. 26. 30։
Վ. Յիկ 49։
Վ. Յիկէն 104։

Տաճատ ըռշտունի 47։
Տաճար մայրի 18։
Տայք 66. 128. 269։
Տարօն 7. 36. 42. 44. 48. 113. 114. 123. 191. 271։
Տափեր կամուրջ 30. 172։
Տերէնտ սպրատեզատ 185. 187. 201. 203. 232։
Տիգրան 171. 173։
Տիգրանակերտ 142. 221։
Տիզոն 125. 132. 165։
Տիկնունի ասպատակ 18։
Տիսպոն կամ Տիսփոն, պէս Տիզբոն։
Տիրան 11. 29—32. 34. 38. 42. 46. 49. 51. 52. 57. 66. 68. 113. 192. 206. 465։
Տիրանամ 91։
Տիրիկ եպիսկոպոս 270։
Տիրիթ 90. 104. 116—122։
Տիրիք 159. 209։
Տոզբ, Տոսբ, Տոսպ 173. 178. 243։
Տրդած 218. 272։
Տրդատ 1. 6. 36. 45. 55. 114. 117. 230։
Տրդատ. պէս Տրդած։

Ցլու գլուխ լեառն, պէս Ցուլ։
Ցուլ 16. 18. 38։

Փայտակարան 210.
Փառանձեմ 116. 120—123. 133. 155. 169—174. 191. 214։
Փառաւազեանք 211։
Փառէն 44. 45. 266. 269։
Փաւստոս 70. 218. 264. 265։
Փիսակ 49. 50։
Փոխք 15։

Քուշանք 206. 239։

Օշական 17։